Երեւանի Պետական Համալսարան
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ

Շուշան Դոյդոյան

# ԶԼՄ եւ օրենսդրություն

## Ուսումնական ձեռնարկ

ԱՍՈՂԻԿ

«Ասողիկ» հրատարակչություն
Երեւան
2007

ՀՏԴ 070 : 342 (07)
ԳՄԴ 76.1+67.99 (2) y7
Դ 738

Ուսումնական ձեռնարկը տպագրության են երաշխավորել ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի խորհուրդը եւ Երեւանի մամուլի ակումբը

**Հեղինակ՝ Դոյդոյան Շ. Մ., բան. գիտ. թեկնածու, դոցենտ**
**Խմբագիր՝ Անանյան Գ.Գ., բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

Դ 738 Դոյդոյան Շուշան. ԶԼՄ եւ օրենսդրություն: Ուս. ձեռնարկ.- Եր.: Ասողիկ, 2007.- 250 էջ

Ուսումնական ձեռնարկը «ԶԼՄ եւ օրենսդրություն» դասընթացի շարադրանքն է: Նպատակն է ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողներին ծանոթացնել խոսքի եւ մամուլի ազատության սահմանադրական երաշխիքներին, խոսքի ազատության ազգային եւ միջազգային իրավական կարգավորման առանձնահատկություններին, ինչպես նաեւ «տեղեկատվության ազատություն» հասկացությանն ու նշանակությանը, տեղեկություն ստանալու կարգին, խոսքի եւ տեղեկատվության ազատության իրավունքի խախտման իրավական պատասխանատվությանը: Հատուկ ուշադրության են արժանացել ընտրական գործընթացների եւ դատավարությունների լուսաբանման իրավական կարգավորման առանձնահատկությունները: Ուղեցույցը օգտակար կարող է լինել ինչպես ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողների, լրագրողների, այնպես էլ մամուլի տեսաբանների, իրավաբանների եւ փաստաբանների համար:

Տպագրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մոսկվայի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:
Published with the financial support of the UNESCO Moscow Office.

Հեղինակը պատասխանատու է սույն հրատարակության մեջ ներկայացված փաստերի ընտրության, ինչպես նաեւ արտահայտած կարծիքների համար, որոնք կարող են չհամընկնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեսակետին: Ներկայացված տեղեկատվության համար պատասխանատու են հեղինակները:

The authors are responsible for the choice and the presentation of the facts contained in this publication and for the opinions expressed therein, which are not necessarily those UNESCO and do not commit the Organization.

Դ $\frac{4502020000}{0136(01)07}$ 2007թ. ԳՄԴ 76.1+67.99 (2) y7

ISBN 978-99-39-50-014-0

© Շուշան Դոյդոյան
© UNESCO

# Բովանդակություն

Ձեռնարկի նպատակը եւ խնդիրները ....................................4

Մեթոդական ցուցումներ....................................5

Արտահայտվելու ազատության իրավունք ....................................7

Արտահայտվելու ազատության սահմանադրական երաշխիքներ ....................................10

Արտահայտվելու ազատության երաշխիքները միջազգային փաստաթղթերում....................................15

Անձի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը....................................20

Մարդու պատվի եւ արժանապատվության պաշտպանությունը ....................................34

Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը ....................................48

Լրագրողների հավատարմագրման իրավական կարգավորումը....................................103

Տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը պահպանելու՝ լրագրողի իրավունքը....................................113

Առեւտրային գովազդի իրավական կարգավորումը ՀՀ-ում....................................128

Դատավարությունների լուսաբանման կարգը ՀՀ-ում ....................................147

Ընտրությունների լուսաբանման իրավական կարգավորումը....................................166

Երաշխավորվող գրականության ցանկ ....................................201

Հավելվածներ ....................................205

# Ձեռնարկի նպատակը եւ խնդիրները

Իրավական գիտելիքը լրագրողի մասնագիտական գործունեության հիմքն է: Առանց իր իրավունքների եւ պարտականությունների իմացության լրագրողը չի կարող կատարել իր մասնագիտական պարտքը: Այս իմացությամբ է մեծիմասամբ պայմանավորված, թե որքանով է լրագրողը պատրաստ պաշտպանել կամ վերականգնել իր խախտված իրավունքները՝ մի կողմից, եւ արդյոք նա հաշվի նստու՞մ է հասարակության մյուս անդամների իրավունքների, պետության եւ հասարակության կենսական շահերի հետ՝ մյուս կողմից: Իր պարտականությունները չիմացող լրագրողը կարող է անդառնալի վնաս հասցնել հասարակության, պետության եւ անհատի շահերին: Մինչդեռ, դրանք գիտակցող լրագրողը լավագույնս կծառայի հասարակության շահին: Ներկայացվող դասախոսությունների շարքը «ԶԼՄ եւ օրենսդրություն» դասընթացի ուսումնական ձեռնարկի մի մասն է: Հիմնական նպատակը ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողներին ծանոթացնել խոսքի եւ մամուլի ազատության սահմանադրական երաշխիքների, խոսքի ազատության ազգային եւ միջազգային իրավական կարգավորման առանձնահատկությունների, խոսքի ազատության չարաշահման համար նախատեսվող պատասխանատվության, ինչպես նաեւ «տեղեկատվության ազատություն» հասկացության եւ նշանակության, տեղեկություն ստանալու կարգերի, պայմանների, իրավունքի խախտման բողոքարկման մեխանիզմների եւ իրավական պատասխանատվության մասին հիմնավոր գիտելիքներ հաղորդելն է:

Յուրացնելով դասընթացը՝ ժուռնալիստիկայի ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանող.

- կհասկանա պատասխանատու խոսքի արժեքը, արտահայտվելու ազատության էությունը եւ դրա իրավական երաշխիքները,
- կիմանա խոսքի եւ մամուլի ազատության օրինական սահմանափակումները եւ դրանց կիրառման հիմքերը,
- կհասկանա արտահայտվելու ազատության չարաշահման համար գոյություն ունեցող պատասխանատվությունը,
- կծանոթանա լրագրողների հավատարմագրման կարգին,
- կհասկանա ՏԱ նշանակությունը եւ արժեքը,
- կկարողանա բացատրել ՏԱ մասին ՀՀ օրենքի հիմնական խնդիրները եւ սկզբունքները,

- կկարողանա բացատրել եւ պրակտիկայում կիրառել տեղեկություն ստանալու` օրենքով սահմանված կարգը եւ պայմանները, իմանալ ում եւ ինչպես պետք է դիմել անհրաժեշտ տեղեկությունը ձեռք բերելու համար,
- կկարողանա բողոքարկել տեղեկատվության անհիմն մերժումները` վերականգնելով իր խախտված իրավունքը,
- կկարողանա տեղեկություն ստանալու իրավունքը լավագույնս օգտագործել ընտրական գործընթացներում, ինչպես նաեւ դատական գործերը լուսաբանելիս,
- կկարողանա պատասխանատվության կանչել օրինազանց պաշտոնյաներին իր` լրագրողի տեղեկություն ստանալու իրավունքը ոտնահարելու դեպքերում:

# Մեթոդական ցուցումներ

«ԶԼՄ եւ օրենսդրություն» դասընթացի ուսուցումը դասախոսություններից բացի ներառում է գործնական պարապմունքներ, որոնք իրականացվում են տարբեր մեթոդներով` լսարանային քննարկումներ, ազգային եւ միջազգային պրակտիկայից վերցված գործնական օրինակների ուսումնասիրում եւ քննարկում, ՀՀ եւ այլ երկրների դատարանների, ինչպես նաեւ մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննած խոսքի եւ մամուլի ազատությանն առնչվող դատական գործերի ուսումնասիրում, վերլուծություն եւ քննարկում:

Յուրաքանչյուր ուսանող ազատ է արտահայտելու իր մոտեցումը, կարծիքը քննարկվող հարցի մասին. որպես սկսնակ լրագրող ինչպես կվարվեր կոնկրետ պարագայում, ինչպես կլուծեր ստեղծված իրավիճակը, «Զանգվածային լրատվության մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքների ո՞ր հոդվածին կդիմեր, իրավական ո՞ր մեխանիզմը կփորձեր կիրառել տվյալ հանգամանքներում եւ այլն: Տեղական օրինակների համար աղբյուր է ծառայում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 2001-2007 թվականների ընթացքում ստեղծված տեղեկատվական բազան, որն ամփոփում է լրագրողների, հասարակական կազմակերպությունների եւ քաղաքացիների խոսքի ազատության եւ տեղեկություն ստանալու իրավունքների խախտման ավելի քան 920 դեպք, ներառյալ տեղեկատվության ազատության դատական նախադեպերը: Միջազգային փորձից օրինակներ կարելի է վերցնել հետեւյալ էլեկտրոնային տեղեկատվական պաշարներից.

«Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպություն **www.rsf.org,**

«Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանց» **www.foiadvocates.net**,

«ԱՐՏԻԿԼ 19» միջազգային կազմակերպություն **www.article19.org**:

Դեպքերի համար աղբյուր են ծառայում նաեւ մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած այն որոշումները, որոնք առնչվում են խոսքի ազատության եւ տեղեկատվություն ստանալու իրավունքներին՝ **www.medialaw.ru**:

Ձեռնարկում յուրաքանչյուր թեմա ուղեկցվում է հարցերով եւ առաջադրանքներով, որոնց նպատակն է նպաստել դասընթացի արդյունավետ յուրացմանը: Ուսանողներին տրվում է հարց-առաջադրանք, որի շուրջ յուրաքանչյուրն ազատ է արտահայտել իր կարծիքը, դիտարկումը: Բոլոր դիտարկումները գրանցվում են գրատախտակին: Այսպիսով, հավաքվում է տարբեր կարծիքների, մտքերի շտեմարան: Այնուհետեւ յուրաքանչյուր միտք քննարկվում է առանձին-առանձին, ինչի միջոցով պետք է լսարանը փորձի ինքնուրույն գտնել առաջադրված հարցերի պատասխանները: Դասախոսը կատարում է առաջնորդողի եւ համակարգողի դեր:

# Արտահայտվելու ազատության իրավունք

Խոսքի ազատությունն ընկալվում է որպես մարդուն ի ծնե տրված հիմնական, անօտարելի իրավունքներից մեկը: Այն քաղաքացու սահմանադրական իրավունքներից է եւ կազմում է ժողովրդավարության ապահովման համակարգի մի մասը: Մարդու կարծիքն ու համոզմունքները նրա ներաշխարհի մի մասն են: Դրանք արտահայտելու հնարավորությունը մարդու ազատությունն է, որի վրա ոչ ոք չպետք է բռնանա` ո՛չ պետությունը, ո՛չ հասարակությունը, ո՛չ այլ մարդ: Մարդը կարող է չհայտնել իր կարծիքը, ոչ ոք չի կարող նրան ստիպել հակառակը: Նա կարող է պնդել իր կարծիքը: Կրկին նրա իրավունքն է:

Խոսքի ազատությունը արտահայտվելու ազատության բաղկացուցիչ մասն է: Մարդն իր համոզմունքները, զգացմունքները, կարծիքը կարող է արտահայտել բազմաթիվ ձեւերով` արվեստի (կինո, երաժշտություն, նկար եւ այլ ստեղծագործություններ), ժեստերով, լռությամբ, ինչպես նաեւ` խոսքով: Այդ է պատճառը, որ միջազգային իրավունքում աստիճանաբար «խոսքի ազատություն» եզրույթն իր տեղը զիջում է «արտահայտվելու ազատություն» հասկացությանը, քանի որ վերջինս առավել ընդգրկուն է եւ ներառում է արտահայտվելու բոլոր ձեւերի ազատությունը` ներառյալ խոսքը:

Արտահայտվելու ազատության գաղափարը ներառում է մարդու այլ իրավունքներ, որոնցից յուրաքանչյուրը խոսքի ազատության մի մասն է կազմում.

- կարծիք ունենալու իրավունք,
- ազատ հաղորդակցվելու իրավունք,
- սեփական համոզմունքներ ունենալու իրավունք,
- լուռ մնալու իրավունք,
- բոլոր աղբյուրներից տեղեկություն պահանջելու եւ ստանալու իրավունք,
- մյուսների հետ միավորվելու իրավունք:

Արտահայտվելու ազատության պաշտպանության շնորհիվ հաստատվել են չորս առանձին արժեքներ.

- ճշմարտության բացահայտում,

- մասնակցություն ժողովրդավարությանը,
- գաղափարների շուկա, որը հնարավորություն է տալիս կոնֆլիկտները լուծել առանց բռնության,
- անհատի ինքնարտահայտում եւ ինքնիրացում:

**1.** Առանց խոսքի ազատության անհնար կլինի ճշմարտության բացահայտումը: Այս տեսակետը զարգացրեց ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Օլիվեր Հոլմսը: 1918թ. նա նշում է, որ ճշմարտության լավագույն փորձությունը կլինի այն, եթե նրան հաջողվի իր համար հաղթանակ ապահովել գաղափարների ազատ շուկայի մրցակցության մեջ: Յուրաքանչյուրը պետք է տարբեր կարծիքներ, դատողություններ լսելու հնարավորություն ունենա: Իրավական համակարգը պետք է ապահովի բոլոր տեսակի գաղափարների ազատ արտահայտումը եւ փոխանակումը՝ հնարավորություն ստեղծելով անարգել, առողջ եւ բաց երկխոսության համար: Բոլոր ժամանակներում պետությունը փորձել է միջամտել խոսքի ազատության իրավունքի իրականացմանը եւ իր գործողություններն արդարացրել նրանով, որ խոսքը կարող է վնասաբեր լինել, գաղափարները՝ վտանգավոր, եւ որ պետությունը այս պարագայում պարտավոր է միջոցներ ձեռնարկել համընդհանուր բարօրությունը եւ ազգային անվտանգությունն ապահովելու նպատակով: «Վատ», «սխալ», կամ «վնասակար» գաղափարները ճնշելը ավելի մեծ վնաս է հասցնում, քան բուն «վնասակար» համարվող գաղափարը: Չէ՞ որ ժամանակին բոլորի կողմից անժխտելի թվացող այն ճշմարտությունը, թե աշխարհը տափակ է, եւ արեւը պտտվում է երկրի շուրջը, այսօր արդեն զավեշտ է թվում: Այն, ինչ անառարկելիորեն ճշմարիտ էր թվում երեկ, այսօր արդեն կարող է անհեթեթություն լինել: Խոսքը երբեմն կարող է սխալ կամ անտրամաբանական լինել, սակայն Սահմանադրությունները նշում են, որ դա որոշելը պետության խնդիրը չէ:

**2.** Խոսքի ազատության իրավունքը նաեւ խիստ կարեւոր է որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցությունն ապահովելու համար: Խոսքի ազատությունը վճռորոշ է պետական պաշտոնյաների կողմից չարաշահումները բացահայտելու կամ կանխելու համար: Այն պետական չինովնիկներին ստիպում է պատասխանատու լինել հասարակության առաջ եւ միշտ հաշվետու լինել իրենց գործողությունների համար:

**3.** Այս իրավունքը նաեւ կայունություն է ապահովում հասարակության ներսում: Պատմությունը ցույց է տալիս, որ մարդիկ իրենց նպատակներին հասնելու համար ավելի հազվադեպ կդիմեն բռնության, եթե նրանք հնարավորություն ունենան ազատ արտահայտել իրենց դժգոհությունը եւ տեսակետ-

ները: Յեյլի իրավունքի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Թոմաս Էմերսոնը այսպես է բացատրում. «Քննարկումն արգելելը առաջ է բերում անհաշտվողականություն, հասարակությանը հնարավորություն չի տալիս հարմարվել փոփոխվող հանգամանքներին կամ նոր գաղափարներ զարգացնել: Խոսքի ազատությունը հենց է ապահովում, որի շնորհիվ հասարակության առաջընթացի անհրաժեշտ բախումները տեղի են ունենում առանց հասարակությունը կործանելու: Սա է կայունության եւ փոփոխությունների միջեւ հաշվեկշիռ պահպանելու հիմնական մեխանիզմը»[1]: Այսպիսով, խոսքի ազատությունը ապահովում է հասարակության ներսում փոփոխությունների սահուն իրականացումը` առանց հեղաշրջումների, արյունալի իրադարձությունների: Դժգոհ մարդը, ուժը պետք է միշտ հնարավորություն ունենան իրենց կարծիքներն ու համոզմունքներն արտահայտելու եւ փոխանակելու: Ազատ մամուլը պետք է ստեղծի այդ հնարավորությունը:

**4.** Եվ վերջապես, խոսքն ազատ արտահայտելու իրավունքը կարեւորվում է նրանով, որ այն հասարակության յուրաքանչյուր անդամի համար ինքնարտահայտվելու եւ ինքնիրացման կարեւորագույն միջոց է:

## Հարցեր լսարանին

**1.** Ի՞նչ է խոսքի ազատությունը: Արտահայտվելո՞ւ, թե՞ խոսքի ազատություն

**2.** Ինչու՞ է արտահայտվելու ազատությունը կարեւոր ժողովրդավարության համար: Փորձեք հիմնավորել փաստարկներով:

**3.** Ինչու՞ են կարեւոր արտահայտվելու ազատության իրավական երաշխիքները:

1. Concept Paper on Media Law, ABA CEELI, 1996, p. 6.

# Արտահայտվելու ազատության սահմանադրական երաշխիքներ

Խոսքի ազատության իրավունքն ամրագրվել է աշխարհի գրեթե բոլոր սահմանադրություններում՝ հռչակելով իր կենսական անհրաժեշտությունը ժողովրդավարության պահպանման համար: ՀՀ-ում խոսքի ազատության իրավական երաշխիքներից առանցքայինը Սահմանադրության 27-րդ հոդվածն է, որն ամփոփված է Սահմանադրության երկրորդ գլխում՝ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները»: Այն ամրագրում է անհատի իրավական կարգավիճակի հիմքերը: «Այս գլխի հիմնական գաղափարը հենվում է մարդու բնական եւ անօտարելի իրավունքների առաջնության, յուրաքանչյուր անհատի անկրկնելիության վրա: Մարդը, նրա կյանքն ու առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները, անձնական անձեռնմխելիությունն ու անվտանգությունը ճանաչվում, պահպանվում են պետության կողմից, օրենքով եւ արդարադատությամբ: Սահմանադրությունը հաստատագրում է, որ ոչինչ չի կարող հիմք հանդիսանալ մարդու արժանապատվության ոտնահարման համար»[2]: Այս գլխում, փաստորեն, Հայաստանի Հանրապետությունն ամրագրել է մարդու քաղաքացիական իրավունքների ողջ համալիրը՝ դրանց տալով բարձրագույն իրավաբանական ուժ[3]:

Անհատի խոսքի ազատության իրավունքն այսպիսի ձեւակերպում է ստացել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում.

**«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքը պնդելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:**

**Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:**

**Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:**

**Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական,**

2. Հենրիկ Խաչատրյան, ՀՀ առաջին Սահմանադրությունը, Երեւան, 1997, էջ 54:

3. Ֆելիքս Թոխյան, Պետության եւ Իրավունքի հիմունքներ, Երեւան, 1997, էջ 63:

**մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը»**:

Յոդվածն ունի հինգ բաղադրատարր. առաջին՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքը պնդելու իրավունք», երկրորդ՝ «Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն», երրորդ՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»: Չորրորդ բաղադրատարրը սահմանում է. «Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխա-վորվում է»: Եւ հինգերորդ. «Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայու-թյունը եւ գործունեությունը»: 2005թ.ին կատարված սահմանադրական բարեփոխումներով, փաստորեն, ՅՅ-ում երաշխավորվեց ոչ միայն խոսքի, այլեւ արտահայտվելու ազատությունը, ինչն առավել ընդգրկուն է եւ ներառում է արտահայտվելու բոլոր ձեւերի ազատության պաշտպա-նությունը, ներառյալ խոսքի ազատությունը: Բարեփոխումների շնորհիվ ամրագրվեց նաեւ լրատվամիջոցների ազատության գաղափարը: Եթե նախկին Սահմանադրության մեջ խոսք անգամ չկար մամուլի մասին, ապա այս փոփոխությունների շնորհիվ սահմանադրական մակարդակով երաշխավորվեց լրատվամիջոցների ազատությունը: Միաժամանակ երաշխավորվեց նաեւ տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն ապահովող հանրային լրատվամիջոցների առկայությունը եւ գործունեությունը:

27-րդ հոդվածի երրորդ մասում սահմանվում է յուրաքանչյուրի խոսքի ազատության իրավունքը: Ավելին, խոսքի ազատության իրավունքի հետ միասին երաշխավորում է նաեւ տեղեկատվության ազատության գաղափարը՝ յուրաքանչյուրին հնարավորություն եւ իրավունք տալով տեղեկություններ եւ գաղափարներ փնտրել, ստանալ ու տարածել տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Փաստորեն, այս ձեւակերպումը ներառում է խոսքի ազատության իրավունքի ածանցյալ բոլոր բաղադրատարրերը՝ ինչպիսին, օրինակ, մյուսներից տեղեկություն ստանալն է, ցանկացած միջոցով տեղեկատվություն տարածելը, ազատ հաղորդակցվելու, սեփական համոզմունքներ ունենալու, բոլոր աղբյուրներից տեղեկատվություն պահանջելու եւ ստանալու իրավունքները, նույնիսկ անձի լուռ մնալու իրավունքը: Տեղեկատվության ազատության իրավունքը հատուկ սահմանադրական պաշտպանության արժանացավ 27.1 հոդվածով: Այն սահմանում է.

**«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկու-թյուններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:**

23-րդ հոդվածի երրորդ մասը եւս տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիք է.

**«Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակա-ռավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք»:**

Սահմանադրության 33.2 հոդվածով պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Արտահայտվելու ազատության իրավունքը լիարժեք չէր լինի, եթե բացի 27-րդ հոդվածից ՀՀ Սահմանադրությունն ամրագրած չլիներ հավելյալ, լրացուցիչ երաշխիքներ, ինչպես, օրինակ, գաղափարախոսական բազմակարծության (հոդված 7), մտքի, խղճի եւ դավանանքի ազատության իրավունքը (հոդված 26-րդ), այլ անձանց հետ միավորումներ կազմելու (հոդված 28-րդ) եւ խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու իրավունքները (հոդված 29-րդ) որպես քաղաքական, ընդդիմադիր միտքն ազատ արտահայտելու երաշխիքներ: Աժ նիստերի թափանցիկության սկզբունքը (հոդված 69-րդ) եւ դատական նիստերի հրապարակայնության սկզբունքը (հոդված 19-րդ) ապահովում են օրենսդիր եւ դատական մարմինների բաց գործունեությունը, առանց որի անհնար է բանիմաց քաղաքացիների մասնակցությունը երկրի կառավարմանը եւ որոշումների կայացման գործընթացին: Մարդու ստեղծագործելու ազատության իրավունքը երաշխավորում է 40-րդ հոդվածը, որով պաշտպանվում է անհատի մտավոր սեփականությունը:

Գործող Սահմանադրության բացթողումներից է այն, որ այն թեեւ ուղղակիորեն երաշխավորում է լրատվամիջոցների ազատությունը, սակայն չի արգելում գրաքննությունը: Գրաքննությունը կառավարության գործողությունն է՝ ուղղված կարծիքներ, գաղափարներ, տեղեկատվություն ստանալու եւ տարածելու ազատությունը սահմանափակելուն: Գրաքննության նպատակն է ղեկավարել մարդկանց՝ ազդելով նրանց գործողությունների եւ մտածողության վրա: Ակնհայտ է, որ մարդկանց մտքերն ու գործողությունները ձեւավոր-

վում են նրանց ունեցած տեղեկատվությամբ: Սահմանափակելով մարդկանց մատչելի տեղեկատվությունը՝ հնարավոր է դառնում կառավարել նրանց: Մեր Սահմանադրությամբ, սակայն, գրաքննությունն արգելված չէ:

Դիտարկելով խոսքի ազատության սահմանադրական երաշխիքները, չի կարելի անտեսել հետեւյալ սկզբունքները, որոնք խիստ կենսական նշանակություն ունեն այս իրավունքի իրականացման համար:

**1.** Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն,

**2.** դատական իշխանության անկախությունը,

**3.** միջազգային իրավունքի նորմերի ուղղակի կիրառումը եւ դրանց առաջնահերթությունը ներքին օրենսդրության նկատմամբ:

**1.** Սահմանադրությունը քաղաքական ազատության հիմքն է: Նրա անմիջական կիրառումն ամրագրված է Սահմանադրության 6-րդ հոդվածում: Այս դրույթը թույլ է տալիս իրավակիրառ եւ դատական պրակտիկայում հղումներ անել սահմանադրական նորմերին, ինչն էականորեն հարստացնում է պաշտպանության իրավական միջոցների զինանոցը: Սահմանադրությունը գործում է անմիջականորեն՝ այսպես ասած, «առանց միջնորդների» կարգավորելով հասարակական հարաբերությունները:

**2.** Երկրորդ սկզբունքը դատական համակարգի անկախությունն է, որը բխում է Սահմանադրության 1-ին հոդվածից: Այն ՀՀ-ն հռչակում է որպես իրավական պետություն: Բոլորը հավասար են օրենքի առջեւ: Դատավորներն անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին: Դատական պրոցեսները դռնբաց են ու հրապարակային, գործում են կողմերի իրավահավասարության եւ մրցակցության, դատավարական խիստ կանոնակարգի սկզբունքները, կայացված որոշումները բողոքարկելու հնարավորությունը: ԶԼՄ-ի ազատությունը ապահովելու համար բացառիկ կարեւոր է, որ իշխանությունների գործողությունների եւ ընդունած որոշումների օրինականությունը լինի անկախ դատավորների վերահսկողության տակ: ԶԼՄ-ի գործունեությանն առնչվող ցանկացած վեճ (հավատարմագրում, տեղեկատվության ազատության սահմանափակում, լրատվամիջոցի գործունեության կասեցում եւ այլն) պետք է լուծվի դատարանում: Լրատվամիջոցները, սակայն, իրենց պաշտպանությունն առայժմ չեն վստահում դատարաններին:

**3.** Մյուս կարեւոր սկզբունքը միջազգային իրավունքի նորմերի ուղղակի կիրառումն է եւ դրանց առաջնահերթությունը ներքին օրենսդրության նկատմամբ: Սա ամրագրված է Սահմանադրության 6-րդ հոդվածում, որի համաձայն՝ միջազգային իրավունքի համընդհանուր նորմերն ու սկզբունքները եւ

ՀՀ-ի ստորագրած միջազգային պայմանագրերը երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: «Եթե պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային նորմերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո»: Այս սկզբունքն իր զարգացումն է ստանում Սահմանադրության 4-րդ հոդվածում. «Պետությունը ապահովում է մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության եւ օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: Այս սահմանադրական նորմերը նշանակում են ՀՀ տարածքում տեղեկատվության ոլորտում Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի, Եվրոպական համաձայնագրի 10-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եւ ազատությունների Հռչակագրի 19-րդ հոդվածի անմիջական կիրառում:

## Հարցեր լսարանին

**1.** Դիտարկենք ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը: Ձեր կարծիքով, հոդվածում ի՞նչ թերություններ կան: Ի՞նչ փոփոխություններ կառաջարկեիք կատարել ՀՀ Սահմանադրության մեջ մամուլի ազատության պաշտպանությունն առավել իրական դարձնելու նպատակով: Կազմել առաջարկների փաթեթ:

**2.** Ինչու՞ արտահայտվելու ազատությունը բացարձակ լինել չի կարող:

**3.** Ինչպիսի՞ն է սահմանափակումների՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ցանկը: Ձեր կարծիքով, այն կարիք ունի՞ կրճատման կամ ընդլայնման: Համեմատեք այս սահմանադրական նորմը Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումների հիմքերի հետ: Համապատասխանու՞մ են դրանք իրար: Հիմնավորե՛ք:

**4.** Դիտարկենք խոսքի ազատության սահմանափակման գործնական օրինակներ (աղբյուրը՝ «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության եւ Երեւանի մամուլի ակումբի տարեկան զեկույցները մամուլի ազատության ոտնահարման վերաբերյալ՝ www.rsf.org, www.ypc.am):

# Արտահայտվելու ազատության երաշխիքները միջազգային փաստաթղթերում

Միջազգային իրավական նորմերը հռչակում են, որ խոսքի եւ արտահայտվելու ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է: Այն ամրագրվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրում, մարդու իրավունքներին առնչվող միջազգային այլ փաստաթղթերում:

1948 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունում է Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության եւ դրանք ազատ արտահայտելու իրավունք. այս իրավունքը ներառում է իրենց համոզմունքներին հավատարիմ մնալու եւ անկախ պետական սահմաններից տեղեկատվություն եւ գաղափարներ փնտրելու, լրատվության ցանկացած միջոցով ստանալու եւ տարածելու ազատությունը» (19-րդ հոդված):

1950 թվականի նոյեմբերի 4-ին ընդունվում եւ 1953 թվականի սեպտեմբերի 3-ին ուժի մեջ է մտնում Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիրը, որի 10-րդ հոդվածը հռչակում է.

«**1.** Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը` առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ պետական սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ընկերությունների արտոնագրում:

**2.** Այս ազատությունների իրականացումը, քանի որ կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության համար` ի

4. «Մարդու իրավունքները եւ դատավարությունը», միջազգային փաստաթղթերի ժողովածու, Երեւան, 1996, էջ 6:

շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, առողջությունն ու բարոյականությունը պաշտպանելու, ինչպես նաեւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության հրապարակումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը ապահովելու նպատակով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ինքնարտահայտման ազատությունն անվանել է «ժողովրդավարական հասարակության առաջընթացի եւ յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկը»: 1997 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ դատարանը մեկ անգամ եւս շեշտեց այն, որ պետք է կշեռքի նժարի վրա դրվեն մամուլի ազատության սահմանափակումները՝ մի կողմից, եւ մյուս կողմից՝ քաղաքական խնդիրների բաց քննարկման անհրաժեշտությունը[5]: Եվրոդատարանը որոշել է, որ մամուլի ազատությունը պահանջում է առանձնահատուկ պաշտպանություն, որպեսզի այն կարողանա խաղալ հասարակական պաշտպանի խիստ կարեւոր դերը եւ տարածել համընդհանուր հետաքրքրություն եւ կարեւորություն ներկայացնող տեղեկատվություն:

Եվրոպական կոնվենցիան պաշտպանում է մամուլի ազատությունը ոտնձգություններից, միաժամանակ, այս փաստաթղթի հաջողությունը պայմանավորված է մամուլի ազատությամբ, բազմակարծությամբ եւ ժողովրդավարությամբ: Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրին միանալու առավելությունն այն է, որ խոսքի ազատության երաշխիքների եւ սահմանափակումների՝ Եվրոպական դատարանի մեկնաբանությունները որոշակի են, հստակ եւ բոլորին հայտնի: Եվրոդատարանի մեկնաբանություններում սահմանափակումների շրջանակը բավականին նեղ է, հետեւաբար Համաձայնագրին միացած երկրներում խոսքի ազատության սահմանափակումները պետք է համապատասխանեն դրան: Բոլոր այն պետությունները, որոնք միացել են Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրին, պարտավոր են հարգել համաձայնագրի պահանջներն ու Եվրոդատարանի կայացրած որոշումները: Եվրոպական համաձայնագրի առանձնահատկությունն այն է, որ լայնորեն կիրառվում է նաեւ նախադեպային իրավունքը: Սա նշանակում է, որ Համաձայնագրին միացած երկրի համար ուղենշային են դառնում ոչ միայն Համաձայնագրի դրույթները, այլեւ Եվրոպական դատարանի՝ Համաձայնագրի հիման վրա կայացրած որոշումները:

5. Media and Democracy, Council of Europe Publishing, 1998, p. 57.

# 10-րդ հոդվածի 2-րդ մաս. սահմանափակման իրավական հիմքերը

Համաձայնագիրը նախատեսում է խոսքի ազատության անհրաժեշտ սահմանափակումների հիմքերը: Համաձայն 10-րդ հոդվածի՝ ինքնարտահայտման ազատությունը բացարձակ չէ: Հոդվածի առաջին պարբերության 3-րդ նախադասությամբ նշվում է. «Այս հոդվածը չի խանգարում պետություններին արտոնագրում պահանջել հաղորդակցական, հեռուստատեսային կամ կինոմատոգրաֆիական ընկերություններից»: Այս նախադասությունը, ինչպես սահմանել է Դատարանը, գրվել է, ընդգծելու համար, որ «պետություններին թույլատրվում է կարգավորիչ մեխանիզմների օգնությամբ կարգավորել այն միջոցները, որոնցով իրենց տարածքում իրականացվում է հեռահաղորդակցումը…»: Վտանգ է առաջանում, որ սա իր հերթին կարող է հանգեցնել պետության կողմից անթույլատրելի միջամտության: Բայց Հռչակագիրը սահմանում է նաեւ, որ ցանկացած սահմանափակման պահանջ պետք է անպայմանորեն բխի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ ամրագրված նպատակներից որեւէ մեկից: Պետությունն իրավունք ունի միջամտել ազատությանը միայն այս պարբերությամբ սահմանված դեպքերում (անկախ նրանից, թե ինչ միջոցներով են արտահայտված կարծիքները, գաղափարները, տեղեկատվությունը):

Այս հոդվածի 2-րդ մասով խոսքի եւ տեղեկատվության ազատության թույլատրելի սահմանափակումների հիմքերը բաժանվում են 3 խմբի.

**1.** Հասարակական շահերի պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության, հասարակական անվտանգության, առողջության կամ բարոյականության պաշտպանության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու համար):

**2.** Այլոց իրավունքների պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (հեղինակության կամ այլոց իրավունքների պաշտպանության համար):

**3.** Դատական իշխանության հեղինակության եւ անկողմնակալության համար անհրաժեշտ սահմանափակումներ:

Սահմանափակումների այս շարքը կարող է խիստ երկար թվալ: Բայց պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր սահմանափակում գործադրելու համար պետք է առկա լինի 3 կարեւորագույն հանգամանք: Եթե դրանցից թեկուզ մեկը խախտվում է, ապա խոսքի ազատության սահմանափակման կի-

րառումը կհանգեցնի 10-րդ հոդվածի խախտման: Այսպիսով, յուրաքանչյուր սահմանափակում պետք է.

- նախատեսված լինի օրենքով,
- ունենա օրինական նպատակ, մասնավորապես 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նշված նպատակներից մեկը,
- անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությանը վերը նշված նպատակներն իրագործելու համար: Բացարձակ սահմանափակումն անընդունելի է:

Անդրադառնանք նախ առաջին հանգամանքին: Սահմանափակումը նախատեսված է օրենքով, եթե այն ***ձեւակերպված է հստակ եւ մատչելի է քաղաքացիներին:***

Օրենքը պետք է հստակ ձեւակերպված լինի, որպեսզի հնարավորություն ընձեռի կանխատեսել այն հետեւանքները, որոնք կարող է առաջացնել կոնկրետ գործողությունը: Օրենքը պետք է հավասարապես մատչելի լինի բոլոր քաղաքացիներին, որպեսզի նրանք հնարավորություն ունենան կողմնորոշվել, թե նման դեպքերում ինչ իրավական նորմեր են գործում: (Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության 1976թ. կետ 49*)*: Սահմանափակումները պետք է «համոզիչ կերպով հիմնավորված» լինեն: Յուրաքանչյուր երկիր իր ներքին օրենսդրությամբ հստակ եւ հասկանալի պետք է սահմանի խոսքի ազատության սահմանափակումները, որպեսզի բացառվեն երկակի մեկնաբանությունները: Այսպիսով, առաջին պահանջի դեպքում յուրաքանչյուր սահմանափակում պետք է սահմանվի օրենքով, որպեսզի լրագրողն իմանա, որ այս կամ այն կոնկրետ դեպքում ինքն անցնում է սահմանը, եւ որի համար կարող է պատասխանատվության ենթարկվել:

Երկրորդ անհրաժեշտ պայմանն է, որ սահմանափակումը նաեւ պետք է ունենա իրավաչափ նպատակ: Այս նպատակները թվարկված են 10-րդ հոդվածի 2-րդ մասում: Եթե, օրինակ, որեւէ իրավական ակտում նշված է, որ լրագրողներն իրավունք չունեն քննադատել նախագահին, Ստրասբուրգի դատարանը կհամաձայնի, որ սահմանափակումն իրոք նախատեսված է օրենքով, բայց եւ կնշի, որ այն արդարացված չէ: Դրանով իսկ Դատարանը կորոշի, որ նախագահի քննադատությունն արգելող իրավական ակտը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրին: Հետեւաբար, լրագրողը ենթակա չէ պատասխանատվության:

Եվ վերջապես, երրորդ եւ ամենակարեւոր պայմանն ասում է, որ խոսքի ազատության սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարա-

կան հասարակության համար: Սա վերջնական եւ որոշիչ նշանակություն ունեցող չափանիշ է, որը ենթադրում է, որ սահմանափակումը կիրառելու համար պետք է.

- Առկա լինի սոցիալական սուր պահանջ:
- Պետության միջամտությունը համաչափ լինի իրավաչափ նպատակին հասնելու համար:
- Պետության միջամտությունը արդյունավետ է եւ արդարացված:

## Հարցեր լսարանին

**1.** Համեմատեք ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ: Համապատասխանու՞մ է արդյոք այն կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջներին:

**2.** Ներկայացնել խոսքի ազատության սահմանափակման ինչպես տեղական, այնպես էլ միջազգային օրինակներ եւ դրանք դիտարկել Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի տեսանկյունից: Որքանո՞վ են կոնկրետ դեպքում կիրառված սահմանափակումները համապատասխանում 10-րդ հոդվածի չափանիշներին:

**3.** Ուսումնասիրեք խոսքի ազատության պաշտպանությանն առնչվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած որոշումները: Քննարկել լսարանում:

# Անձի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը

Խոսքի եւ տեղեկատվության ազատությունը պետք է հավասարակշռվի եւ որոշ դեպքերում անհրաժեշտորեն սահմանափակվի մարդու անձնական կյանքի իրավունքով: Այս իրավունքները հիմնարար են, հավասարժեք եւ մարդուն տրվում են ի ծնե: Դրանք սահմանված են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերով:

Մարդու անձնական կյանքի իրավունքը սահմանվում է որպես «ինքն իր հետ մենակ մնալու իրավունք»: Այն մարդու կարեւորագույն բնական իրավունքներից է, որը ձեռք է բերում ծննդյան պահից: Մասնավոր կյանքը մարդու անձնական կյանքի այն կողմն է, որին նա չի ուզում հաղորդակից դարձնել ուրիշներին: Մարդու կյանքի անձնական գաղտնիքը իր անձի եւ ընտանիքի մասին այն բոլոր տեղեկություններն են, որոնք նա ցանկանում է գաղտնի պահել բոլորից (երբեմն նաեւ իր ընտանիքի անդամներից): Անձնական կյանքի գաղտնիության իրավունք ունեն բոլորն առանց բացառության՝ երեխաները, հաշմանդամները, բանտարկյալները, զինծառայողները: Այս իրավունքը ենթադրում է, որ առանց մարդու գիտության, համաձայնության կամ թույլտվության ոչ ոք իրավունք չունի նրա կյանքի մասին տեղեկություններ հավաքել, տարածել, հրապարակել:

Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի 428(1970) հանձնարարականի համաձայն՝ անձնական կյանքի իրավունքը նշանակում է իր կյանքով ապրելու իրավունք՝ նվազագույն միջա-մտությամբ: Սա ներառում է անձնական, ընտանեկան կյանքով ապրելու իրավունք, ֆիզիկական եւ բարոյական պաշտպանվածություն, իր անձը աղավաղված տեսքով ներկայացնելուց խուսափելը, անձին վիրավորող եւ ոչ պատշաճ տեղեկատվություն հրապարակելուց խուսափելը, ինչպես նաեւ առանց թույլտվության անձնական լուսա-նկարներ հրապարակելը, չարդարացված եւ ոչ անհրաժեշտ գաղտնալսումները, կապի եւ հաղորդակցության միջոցների անօրինական օգտագործումը, գաղտնիության պայմաններում ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելը»: Այս իրավունքը փաստորեն տարածվում է նաեւ ընտանիքի, տան, անձնական կյանքի մասնավոր հաղորդակցության վրա:

Անձնական կյանքի իրավունքը սահմանվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով.

**«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական եւ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի, բնակարանի անձեռնմխելիության եւ նամակագրության գաղտնիության իրավունք:**

**Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունը այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաեւ՝ անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով»:**

Այսպիսով, առաջին պարբերությամբ սահմանվում է անձի կյանքի անձեռնմխելիության իրավունքը, իսկ երկրորդ պարբերությամբ հստակ եւ որոշակի սահմանվում են այն հիմքերը, որոնցով անհրաժեշտորեն կարող է սահմանափակվել այս իրավունքը:

ՀՀ-ում անձնական կյանքի մասին օրենք չի գործում, որն ավելի է դժվարացնում անձնական կյանք հասկացության մեկնաբանությունը եւ այդ իրավունքի սահմանները որոշելը: Անձնական կյանքի իրավունքը պաշտպանող եւ այդ իրավունքը որպես ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակման հիմք ամրագրող դրույթներ են պարունակում ՀՀ Սահմանադրությունը եւ մի շարք օրենքներ:

ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը: Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Այս հոդվածն արգելում է նաեւ խախտել անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը: Այն կարող է սահմանափակվել բացառապես դատարանի որոշմամբ:

Մարդու անձնական կյանքի տվյալների որոշակի, թեեւ ոչ լիարժեք սահմանում է տրված 2002թ. հոկտեմբերի 8-ին ընդունված «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ անհատական տվյալ է «նյութական կրիչի վրա գրավոր կամ այլ կերպ ամրագրված՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը»: Մարդու անհատական տվյալ կարող են լինել, օրինակ, նրա կենսագրությանը, առողջությանը, նյութական դրությանն առնչվող տեղեկությունները, նրա արարքների, աշխարհայացքի, դատողությունների, համոզմունքների, ընտանիքում եւ այլոց հետ նրա հարաբերությունների մասին տեղեկությունները եւ այլն:

Անձնական կյանքի գաղտնիության երաշխիքներ են պարունակում նաեւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը. «...կողմերի անձնական կյանքի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների եւ հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ նրա մի մասում կարող է արգելվել օրենքով», իսկ ՀՀ Քաղ. դատ. օրենսգրքի 8 հոդվածը, լրացնելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, նշում է. «Գործի քննությունը դռնփակ նիստում թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու..» համար:

2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը նույնպես սահմանափակում է տեղեկություն ստանալու իրավունքը՝ մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքի պաշտպանության նկատառումով: Սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշվում է. «Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա **խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը»**:

2003թ դեկտեմբերի 13-ին ընդունված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի («Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները») առաջին կետով «արգելվում է այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը»: Նախկինում գործող «Մամուլի մասին» օրենքը նաեւ նշում էր, որ մարդու մասին անձնական տվյալներ հրապարակելը թույլատրվում է միայն անձի թույլտվությամբ, համա-

ձայնությամբ, մի կարեւոր հանգամանք, որը գործող օրենքում բացակայում է: Մինչդեռ, այն պաշտպանում էր լրագրողներին անցանկալի հետեւանքներից, երբ մարդիկ նախապես տալով իրենց համաձայնությունը՝ հետագայում չէին կարող լրագրողին մեղադրել անձնական կյանք ներխուժելու մեջ:

Լրագրողի աշխատանքն օբյեկտիվորեն հակասում է անձնական կյանքի իրավունքին: Անձի մասին ցանկացած լրատվության տարածում կարող է համարվել միջամտություն անձնական կյանքին: Գործնականում լրագրողները մարդու անձնական կյանքի իրավունքը կարող են ոտնահարել մասնավորապես հետեւյալ չորս եղանակով:

**1.** Մարդու անձնական կյանքի մանրամասներ հրապարակելով, որը կարող է բարոյական վնաս հասցնել, անգամ եթե այդ ինֆորմացիան հավաստի է:

**2.** Անձին ներկայացնել վատ լույսի տակ, անգամ եթե տեղեկությունները հավաստի են, սակայն ներկայացվել են միայն բացասական փաստերը:

**3.** Մարդկանց անունները եւ ինքնությունը օգտագործել կոմերցիոն նպատակներով:

**4.** Ներխուժելով այն տարածքը, որը մասնավոր սեփականություն է: Ներխուժումը հաճախ ֆիզիկական բնույթ է կրում. ձայնագրիչների օգտագործում, լուսանկարչական ապարատով, տեսախցիկով եւ այլ էլեկտրոնային սարքերով լրտեսել մարդկանց, օրինակ՝ նրանց բնակարանում կամ աշխատատեղում[6]: Խախտումն ի հայտ է գալիս ներխուժելու պահին, այդպիսով այն կարող է չհասնել ինֆորմացիայի փաստացի հրապարակման: Գործնականում ներխուժման դեպքերի մեծ մասը չի հասնում հրապարակման: «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետն արգելում է գաղտնի տեսաձայնագրումը: Հետաքրքիր է, որ օրենքը ոչինչ չի ասում գաղտնի լուսանկարահանման արգելքի մասին: ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ լրագրողները չեն կարող նաեւ գաղտնի լսել, արձանագրել, ձայնագրել մարդկանց հեռախոսային կամ այլ խոսակցությունները:

6. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի՝ «բնակարան» հասկացությունը ենթադրում է շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է անձի կամ որոշակի անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, պատշգամբները, դրանց հարող տարածքը, նկուղը, ձեղնահարկը: «Բնակարան»-ը ներառում է նաեւ մասնավոր ավտոմեքենան, ծառայողական անձնական աշխատասենյակը եւ ավտոմեքենան, արվեստանոցը:

## Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը եւ հասարակական շահը

Առանցքային է այն հարցը, թե արդյոք մամուլում հրապարակվող տեղեկատվությունը ծառայում է հասարակության շահի՞ն, թե պարզապես բավարարում է նրա հետաքրքրասիրությունը: Վերջին պարագայում լրագրողներն առավել զգույշ պետք է լինեն մարդկանց անձնական կյանքի տվյալները հրապարակելիս, որպեսզի տուրք չտան էժանագին սենսացիային:

Հասարակական շահի պաշտպանության կարեւորագույն գործոնը հաշվի առնելով՝ մասնավոր կյանքի, ինչպես եւ մարդու պատվի, արժանապատվության գործերում պետք է տարբերակել հասարակ քաղաքացի եւ հանրային-պետական գործիչ հասկացությունները: Վերջիններս պետք է առավել հանդուրժող լինեն իրենց հասցեին հնչող քննադատություններին եւ համակերպվեն այն մտքի հետ, որ իրենց կյանքը պետք է ավելի բաց լինի մամուլի եւ հասարակության զննող հայացքի առաջ: Մամուլի ազատությունը եւ մարդու անձնական կյանքի իրավունքը հավասարակշռելու առումով կարեւոր երաշխիք է պարունակում «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, որի համաձայն՝ գաղտնի տեսաձայնագրմամբ ձեռք բերված, ինչպես նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկությունների տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է ***հանրային շահերի պաշտպանության համար***»:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1998թ. ընդունած **«Անձնական կյանքի իրավունքի մասին» 1165 բանաձեւը** որոշակիացնում է պետական-հանրային գործիչների անձնական կյանքի սահմանները: Բանաձեւի 5-րդ կետը նշում է.

> «...մարդկանց անձնական կյանքի մանրամասները ԶԼՄ-ի որոշ հատվածների համար դարձել են շահութաբեր վաճառքի առարկա: Նրանց զոհերը հիմնականում հանրային գործիչներն են, քանի որ որոշ ԶԼՄ-ի համար նրանց կյանքի մանրամասները խթան են վաճառքի համար: Միեւնույն ժամանակ, հանրային գործիչները պետք է ընդունեն, որ իրենք հատուկ դիրք են գրավում հասարակության մեջ, շատ դեպքերում իրենց ընտրությամբ, որն ինքնաբերաբար հանգեցնում է հանրության կողմից իրենց անձնական կյանքի հանդեպ ունեցած ճնշման ավելացմանը»:

Բանաձեւի 6-րդ կետում տրվում է «պետական գործիչ» եզրույթի սահմանումը.

**«Պետական գործիչներն այն անձինք են, ովքեր զբաղեցնում են պետական պաշտոն, եւ/կամ օգտագործում են պետական ռե-**

**սուրսներ, ավելի ընդարձակ իմաստով, դեր են խաղում հանրության կյանքում՝ քաղաքականության, տնտեսության, արվեստի, սպորտի, սոցիալական կամ որեւէ այլ բնագավառում»:**

Այնուհետեւ, շարունակելով 6-րդ կետի տրամաբանությունը, 9-րդ կետը նշում է.

**«Պետական եւ հատկապես քաղաքական գործիչների մասնավոր կյանքի որոշ փաստեր, իհարկե, կարող են հետաքրքրություն ներկայացնել քաղաքացիների համար, որոնք նաեւ ընտրողներ են եւ, հետեւաբար, ընթերցողներն իրավունք ունեն տեղյակ լինել այդ փաստերի մասին»:**

Օրինակ, եթե ժողովրդի կողմից ընտրված պատգամավորը, որն օգտագործում է պետական ռեսուրսներ եւ աշխատավարձ ստանում հարկատուի գումարներից, նախընտրում է իր հանգիստն անցկացնել մարմնավաճառների հետ կամ խաղատանը, լրագրողները եւ հասարակությունն իրավունք ունե՞ն ԶԼՄ-ի միջոցով քննադատական հայտարարություններ անել նրա՝ որպես կառավարող վերնախավի ներկայացուցչի բարոյականության վերաբերյալ, թե՞ դա նրա անձնական գաղտնիքը կհամարվի, եւ հրապարակողը կենթարկվի պատասխանատվության: Կամ, եթե պաշտոնյան հայտարարում է, որ իր առաջնային խնդիրներից է ընտանիքի ամրությանն ուղղված միջոցառումներ իրականացնելը, սակայն լրագրողները պարզում են, որ նա ունի սիրուհիներ եւ ապրում է ցոփ ու շվայտ կյանքով, պե՞տք է այս մասին հրապարակել, թե՞ ոչ: Սրանք հարցեր են, որոնց լրագրողը պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում լուծում տա:

Կանադայի Գերագույն դատարանը նույնպես մեկնաբանել է **«հանրային հետաքրքրություն ներկայացնող անձ»** հասկացությունը: Քանի որ քաղաքական, պետական գործիչները, հանրային գործիչները, հատկապես շոու բիզնեսի ներկայացուցիչները օգտագործում են ամեն հարմար առիթ՝ ևս մեկ անգամ ԶԼՄ-ի միջոցով ցուցադրել իրենց, արտահայտել իրենց գաղափարներն ու առաջարկներ անել հանրությանը, անել սկանդալային ու ցնցող հայտարարություններ, ցուցադրել իրենց կամ կամավոր բացահայտել իրենց բնավորության գծերը, նախասիրությունները եւ նաեւ անձնական այնպիսի իրադարձությունները, ինչպիսին են իրենց ամուսնություններն ու ամուսնալուծությունները, սեռական նախասիրությունները կամ առողջական խնդիրները, նյութական վիճակը, խելամիտ է, որ նրանք պետք է ԶԼՄ-ից ակնկալեն իրենց կյանքի ավելի խոր ուսումնասիրություն, անձնական կյանքի մանրամասների լուսաբանում, լուսանկարների հրապարակում, քննադատություն: ԶԼՄ-ը չեն կարող գուշակել, թե երբ եւ ինչ պայմաններում հան-

րային եւ քաղաքական գործիչները կուզենան լուսաբանվել. ենթադրվում է, ինչպես նշվել է Կրոնե Վերլագս Ընկ. ընդդեմ Ավստրիայի գործում, քանի դեռ անձը գտնվում է հանրային «բեմահարթակում», նա պետք է ավելի հանդուրժող լինի իր նկատմամբ հանրության ցուցաբերած հետաքրքրության նկատմամբ: Սակայն ոչ միշտ:

Ի հակադրություն վերոնշյալի՝ Ֆրանսիայի դատարանները զարգացրել են մի սկզբունք, որի համաձայն, եթե նույնիսկ անձը հանրության համար հետաքրքրություն է ներկայացնում, դեռ չի նշանակում, թե նրան կարելի է առանց իր համաձայնության լուսանկարել ցանկացած վայրում: Նման բողոք էր ներկայացրել հայտնի ֆրանսիացի կինոդերասանուհի, որին ֆրանսիական ամսագրի մի լուսանկարիչ նկարահանել էր իր նավակում՝ ջրի վրա: Լուսանկարի տպագրումից ամսագիրը մեծ շահույթ էր ստացել: Ֆրանսիական դատարաններն ընդունել են, որ լուսանկարի սուբյեկտը հանրությանը բավականաչափ հայտնի է եղել, սակայն այն փաստը, որ նկարահանումը կատարվել է այն ժամանակ, երբ ամենայն հավանականությամբ անձը համոզված էր, որ ինքն այդ պահին միայնակ է եւ վայելում է իր անձնական մթնոլորտը, քանի որ նավակը բավականին հեռու էր ափից, եւ հանրային կյանքի ոչ մի հատկանիշ առկա չէր: Դատարանը որոշում կայացրեց ընդդեմ ամսագրի[7]:

Այստեղ ից բխում է մեկ այլ կարեւոր հարց. արդյո՞ք լրագրողը կարող է հրապարակել պետական պաշտոնյայի մասին տեղեկատվությունը միայն նրա հանրային գործառույթների ընթացքում իրականացված գործողությունների մասին, երբ նա հանդես է գալիս որպես հանրային գործիչ, թե՞ նաեւ քննարկման առարկա դարձնել այն, թե պաշտոնյան ինչպիսին է աշխատանքից հետո, եւ արդյոք աշխատանքից հետո պետական պաշտոնյայի գործողությունների մասին ցանկացած հրապարակում կդիտվի՞ որպես նրա անձնական կյանքին միջամտություն: Օրինակ, եթե պետական պաշտոնյան սրճարան է ապօրինի կառուցել Երեւանի հանրային զբոսայգում՝ ծախսելով հսկայական գումար, կամ պարբերաբար այցելում է խաղատներ, պե՞տք է արդյոք լրագրողը հրապարակի այս փաստերը: Անկասկած, այո, թեեւ դրանք նաեւ բացահայտում են պաշտոնյայի անձնական կյանքի մանրամասներ, եւ այդ գործողությունները կատարելիս նա հանդես չի եկել որպես պաշտոնյա, այլ իրականացրել է, օրինակ, իր հանգստի իրավունքը:

Բոլոր դեպքերում, մարդու մասին անձնական տվյալներ հավաքելուց առաջ լրագրողը պետք է ունենա նրա նախնական համաձայնությունը, ինչպես

7. Տես՝ Արման Զրվանդյան, «Ազատ արտահայտվելու իրավունքը եւ անձնական կյանքի իրավունքի պաշտպանությունը», «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիր, Դ9, 2003թ. նոյեմբեր:

նաեւ նրան հայտնի, թե ինչ քանակությամբ տվյալներ եւ ինչ նպատակով պետք է դրանք օգտագործի: Սակայն այս պահանջները եւս երբեմն կարող են հակասության մեջ մտնել լրագրողի, մասնավորապես հետաքննող լրագրողի աշխատանքի հետ: Իր աշխատանքի ընթացքում լրագրողը ստիպված է շարունակ փնտրել եւ գտնել, թե որտեղ է վերջանում խոսքի ազատությունը եւ որտեղ սկսվում անձնական կյանքի իրավունքը: Լրագրողը յուրաքանչյուր դեպքում պետք է որոնի բաժանման գիծը եւ հավասարակշռի այս երկու իրավունքները:

Անհրաժեշտ է նշել, որ անձնական կյանքի իրավունքը տարածվում է նաեւ թվային, մասնավորապես համակարգչային տեխնոլոգիաների վրա, այսինքն` խնդիրն աստիճանաբար դուրս է գալիս իր ավանդական շրջանակներից:

Հարկ ենք համարում կանգ առնել մարդու անձնական լուսանկարների ապօրինի օգտագործման խնդրի վրա, որը գործնականում հաճախ հանդիպող իրավախախտումներից է:

ԱՄՆ-ում անձնական կյանքի պաշտպանության առաջին դատական գործը քննվեց 1901 թվականին: Նյու Յորք նահանգի մի բնակչուհի իր հայրենի քաղաքի փողոցներում զբոսնելիս հանկարծ շենքերի պատերին նկատեց իր լուսանկարը ալյուր արտադրող ընկերության գովազդային վահանակների վրա: Այս կինը ո՛չ հայտնի գործիչ էր, ո՛չ դերասանուհի, պարզապես հրապուրիչ արտաքին ուներ: Կինը դիմեց ընկերությանը` պահանջելով հանել այդ վահանակները: Վերջիններս հրաժարվեցին, եւ նա դիմեց դատարան` պահանջելով արգելել իր լուսանկարի օգտագործումն այդ գովազդային վահանակների վրա եւ փոխհատուցել պատճառված բարոյական վնասը` 15 հազար դոլար: Սկզբում հայցը բավարարվեց, սակայն հետագայում վերաքննիչ դատարանն այն բեկանեց, քանի որ, նախեւառաջ, մինչ այդ չէր եղել որեւէ նախադեպ, որի վրա կարողանար հենվել դատարանը, եւ երկրորդ, չկար նաեւ օրենք, որի հիման վրա դատարանը որոշում կայացներ եւ նախադեպ ստեղծեր: Օրենսդրորեն ամրագրված չէր մարդու իրավունքը սեփական լուսանկարի նկատմամբ (Հայաստանում մինչ օրս չկա այս իրավունքն ամրագրող իրավական ակտ): Վերաքննիչ դատարանը մերժելով հայցը` միաժամանակ դիմեց Նյու Յորք նահանգի օրենսդիր մարմնին` ուշադրություն հրավիրելով օրենքի բացակայության փաստի վրա: Եւ ահա այս նահանգում էլ 1903 թվականին ընդունվեց ԱՄՆ-ում առաջին օրենքը մասնավոր կյանքի պաշտպանության մասին: Օրենքով արգելվեց առանց անձի թույլտվության նրա լուսանկարի, անվան, պատկերի օգտագործումը կոմերցիոն նպատակներով: Ինչպես նաեւ մասնավոր կյանք ներխուժելը համարվեց իրավախախտում:

Հետաքրքիր դատական գործ քննվեց 2002 թվականի փետրվարի 14-ին Մեծ Բրիտանիայում: Բրիտանացի հայտնի հեռուստալրագրողներից մեկն ընկերների հետ զվարճանալուց հետո երեկոն ավարտեց հասարակաց տանը: Նրան սպասարկող հասարակաց տան աշխատակիցը լուսանկարեց լրագրողին հարբած եւ կիսամերկ վիճակում: Աղջիկը հաջորդ օրը լուսանկարները կից նյութով առաջարկում է տեղական թերթերից մեկին: Հրապարակելուց առաջ թերթը դիմում է հեռուստալրագրողին՝ պարզելու նրա վերաբերմունքը: Վերջինս դիմում է դատարան՝ հրապարակման վրա նախնական արգելք դնելու պահանջով՝ հիմնավորելով, որ խախտվել է իր մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը: Գերագույն դատարանը բավարարեց հայցվորի պահանջը՝ չհրապարակել լուսանկարը, սակայն թույլատրեց հրապարակել աղջկա նյութը: Այս դեպքում իրար էին բախվել երկու հիմնարար իրավունքներ՝ ԶԼՄ-ի խոսքի ազատության իրավունքը եւ աղջկա՝ մամուլում լուսաբանման արժանի տեւ եկատվություն տարածելու իրավունքը՝ մի կողմից եւ անձի մասնավոր կյանք ունենալու իրավունքը՝ մյուս կողմից:

Դատարանը որոշեց, որ հեռուստալրագրողի՝ հասարակաց տուն այցելության մանրամասների հրապարակումը չպետք է արգելել վերը նշված կարեւոր իրավունքների պաշտպանության նպատակով, սակայն դատարանը որոշեց, որ ամենեւին անհրաժեշտ չէ հրապարակել լրագրողի ինտիմ կյանքի մանրամասները պատկերող լուսանկարները, որոնք արվել են առանց նրա համաձայնության, ինչպես նաեւ դրանցում չկա հասարակական շահ: Իհարկե, մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը տարածվում է մարդու սեքսուալ հարաբերությունների վրա, սակայն դատարանը միաժամանակ նշեց, որ այն չի տարածվում «ցանկացած» ֆիզիկական մերձեցման վրա: Տվյալ դեպքում սեքսուալ հարաբերությունները դժվար թե հնարավոր է հասկանալ բառի ավանդական իմաստով: Բացի այդ, «հասարակաց տունը» չի համարվում «մասնավոր տարածք»: Այդ իսկ պատճառով պոռնկուհու եւ նրա ծառայություններից օգտվող հեռուստալրագրողի հարաբերությունները կոնֆիդենցիալ չէին:

Մեկ այլ գործում՝ Les Editions Vice-Versa Inc and another v. Aubry հայցվոր կողմը առանց անձի համաձայնության լուսանկարել էր մեկին մի շինության կողքին՝ հիմնավորելով նրանով, որ ազատ արտահայտվելու իրավունքը ներառում է նաեւ արվեստի գործերը, օրինակ՝ լուսանկարչական արվեստը: Կանադայի Գերագույն դատարանն ընդունել է, որ արվեստը նույնպես արտահայտվելու միջոց է եւ պետք է պաշտպանվի, սակայն նշել է նաեւ , որ.

«…հանրային գործունեությամբ զբաղվող կամ որոշակի հանրային հռչակ ձեռք բերած անձի անձնական կյանքի որոշ ոլորտներ կարող են հանրության

հետաքրքրության առարկա լինել, օրինակ՝ քաղաքական գործչի կամ դերասանի, իսկ ավելի լայն ասած՝ բոլոր նրանց, ում **մասնագիտական հաջողությունը կախված է հանրային կարծիքից եւ հանրության աչքին հաճախ երեւալուց,** ինչը չի կարելի ասել լուսանկարահանված անձի մասին»:

Մեկ այլ՝ Կրոնե Վերլագս Ընկ. ընդդեմ Ավստրիայի գործում վիճարկվում էր բարձրաստիճան պաշտոնյայի՝ պարոն Պոշի լուսանկարը հոդվածի հետ միասին առանց նրա համաձայնության թերթում տպագրելու փաստը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այս գործում որոշում կայացնելով հօգուտ դիմող լրագրողական կազմակերպության՝ ընդունել է այն փաստը, որ առաջին հերթին տպված հոդվածը չի վերաբերում պարոն Պոշի անձնական կյանքին, որտեղ Կրոնե Վերլագս ընկերության լրագրողը հարցեր էր հնչեցրել պարոն Պոշի ֆինանսական աղբյուրների մասին, մեղադրելով նրան ավստրիական օրենքով արգելված եկամուտներ ունենալու մեջ, քանի որ պարոն Պոշը, որն Ավստրիայի Խորհրդարանի, ինչպես նաեւ Եվրոպական Պառլամենտի անդամ էր, աշխատավարձ էր ստանում նաեւ ավստրիական համալսարաններից մեկից՝ դասախոսությունների համար, որն արգելված էր Ավստրիայի օրենքներով:

Հետեւաբար. «Հանրությանը նմանատիպ տեկություններ հաղորդելը մամուլի հիմնական գործառույթներից է եւ այս համատեքստում քաղաքական գործիչը պետք է հանդուրժի իր լուսանկարի հրապարակումը»:

Այնուհետեւ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է. «...այնքան էլ կարեւոր չէ, թե տվյալ անձն իրականում որքանով է հայտնի հանրությանը: Կարեւորն այն է, որ այդ մարդն արդեն մտած լինի հանրային «բեմահարթակ» եւ պատրաստ լինի կրել դրա հետեւանքները: Այստեղ խոսքը գնում է գործող քաղաքական հանրահայտ գործչի մասին, որը մասնակցում է հանրային քննարկմանը», ինչպես նաեւ «հրապարակված լուսանկարը չի բացահայտել պարոն Պոշի անձնական կյանքի որեւիցե դրվագ»: Բացի այդ՝ «նրա նկարը կարելի էր տեսնել այլ ԶԼՄ-ի միջոցով, օրինակ՝ Եվրոպական պառլամենտի ինտերնետային էջում»:

# Պատասխանատվություն անձնական կյանքի գաղտնիության իրավունքը խախտելու համար

Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1165 (1998) բանաձեւում[8] կոչ է արվում անդամ երկրներին ընդունել համապատասխան օրենսդրություն՝ ներառելով հետեւյալ դրույթները.

**1.** պետք է երաշխավորվի քաղաքացիական իրավունքի շրջանակներում հայց ներկայացնելու հնարավորությունը, որը հնարավորություն կտա տուժողին վնասի հատուցում պահանջել անձնական կյանքի իրավունքը խախտվելու դեպքում,

**2.** խմբագիրները եւ լրագրողները պետք է պատասխանատվություն կրեն անձնական կյանքի պաշտպանվածության իրավունքը խախտելու համար, եթե դա կատարվել է իրենց հրապարակումներով, այնպես, ինչպես զրպարտության դեպքում,

**3.** Եթե հրապարակված տեղեկության կեղծ լինելը ապացուցվում է, ապա խմբագիրները պարտավոր են համապատասխան ուղղում տպագրել այն անձանց խնդրանքով, ում շահերը շոշափվում են,

**4.** տնտեսական տույժեր պետք է նախատեսված լինեն տեղեկատվություն տարածող այն խմբերի նկատմամբ, որոնք շարունակաբար խախտում են անձանց մասնավոր կյանքի իրավունքը,

**5.** պետք է արգելվի անձանց հետեւելը կամ հետապնդելը լուսանկարելու, նկարահանելու կամ ձայնագրելու նպատակով եւ այնպիսի եղանակով, որի արդյունքում անձը զրկվում է իր հանգիստն ու խաղաղությունը վայելելու հնարավորությունից,

**6.** պետք է ներառել իրավական նորմ այն մասին, որ եթե անձը տեղյակ է, որ իր անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություն կամ լուսանկարներ են հրապարակվելու, նա պետք է իրավունք ունենա հայցով դիմել դատարան արագացված դատաքննության կարգով միջանկյալ որոշում կամ դատական արգելքի որոշում ստանալու համար, որը կարող է հետաձգել տեղեկատվության տարածումը, մինչ դատարանը ըստ էության քննի իրավախախտման վերաբերյալ հայցը:

Ցավոք, այս դրույթներից առայժմ ոչ մեկն իր ամրագրումը չի ստացել ՀՀ օրենսդրության մեջ: Մինչդեռ որոշ պահանջներ նույնիսկ խեղաթյուրված են

8. Ընդունվել է Վեհաժողովի կողմից 1998 թվականի հունիսի 26-ին (24-րդ նիստ):

կանոնակարգվում ՀՀ օրենսդրությամբ՝ հակասելով միջազգային չափանիշներին: Այսպես, թեեւ Վեհաժողովի 1165 բանաձեւում կոչ է արվում նախատեսել մարդու անձնական կյանքի պաշտպանության քաղաքացիական ընթացակարգեր, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է հիմնականում քրեական պատասխանատվություն:

ՀՀ Քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներ պատասխանատվություն են նախատեսում անձի մասնավոր կյանքի իրավունքը ոտնահարելու համար: Օրենսգրքի 144-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում հետեւյալ հանցագործությունների դեպքում.

**«Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը առանց մարդու համաձայնության հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 500-ապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով 1-2 ամիս ժամկետով»**:

145-րդ հոդվածն արգելում է բժշկական գաղտնիք հրապարակելը:

Տեղեկություններն ապօրինի հավաքելու տակ պետք է հասկանալ նաեւ առանց մարդու համաձայնության նրա նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիքը խախտելը, ինչպես նաեւ դրանք հրապարակելու նպատակով հավաքելը: ՀՀ Քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածը նշում է.

**«Քաղաքացու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելը պատժվում է 100-ապատիկից մինչեւ 300-ապատիկի չափով տուգանքով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով 2-5 տարի ժամանակով, կամ կալանքով 1-2 ամիս ժամկետով»**:

Առանց մարդու համաձայնության վերը նշված հաղորդումները կարող են լսել եւ արձանագրել միայն իրավապահ մարմինները կատարված հանցագործության բացահայտման, հանցագործին հայտնաբերելու կամ բռնելու նպատակով, որի համար, սակայն, անհրաժեշտ է դատարանի համապատասխան որոշումը (ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդված): 147-րդ հոդ-

ված արգելում է բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը՝ մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելը պատժվում է տուգանքով, ուղղիչ աշխատանքներով կամ կալանքով առավելագույնը 2 ամիս ժամկետով եւ այլն: Խիստ կարեւոր է այն, որ նոր տեխնոլոգիաների ի հայտ գալուն զուգահեռ այս խնդիրը ավանդական շրջանակներից դուրս է գալիս՝ մասնավորապես ազատ մասնագիտությունների տեր անձնանց պարագայում: Օրինակ՝ ինտերնետը ազատ լրագրողին (freelancer) հնարավորություն է տալիս աշխատել իր բնակարանում: Այս դեպքում հարց է ծագում՝ եթե ոստիկանությունը ցանկանում է խուզարկել նրա «աշխատատեղը» (տվյալ դեպքում՝ բնակարանը), կարո՞ղ է արդյոք լրագրողը պաշտպանվել անձնական կյանքի իրավունքով:

Որդեգրման գաղտնիքի հրապարակումը որդեգրողի կամքին հակառակ արգելվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 169-րդ հոդվածով: Կարծում ենք, որ այս հոդվածը թերի է այն իմաստով, որ որոշակի տարիքից սկսած անհրաժեշտ է նաեւ ստանալ որդեգրի համաձայնությունը՝ նախքան տեղեկությունները հրապարակելը:

Նշենք, որ անձնական կյանքի ոտնձգությանն առնչվող դատավարություններում ճշմարտությունը բավարար չէ լրագրողի պաշտպանության համար: Այնուամենայնիվ, անձնական կյանքի ոտն-ձգության համար դատի տրված լրագրողները կարող են իրենց պաշտպանել՝ ապացուցելով, որ նյութը արժեքավոր է կամ հայցվորը տվել է իր համաձայնությունը տեղեկությունը հրապարակելու համար: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «գաղտնի տեսաձայնագրմամբ ձեռք բերված, ինչպես նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկությունների տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»:

Այսինքն, եթե նյութն արժեքավոր է եւ պաշտպանում է հասարակական կարեւոր շահ, ապա սա կարող է լավ պաշտպանություն լինել լրագրողների համար: Դատարանները չեն կարող պատասխանատվության ենթարկել լրագրողներին, եթե նրանք ճշմարտությունն են հաղորդել, որը ծառայում է հասարակության կենսական շահին: Այսպիսով, սովորաբար լրագրերը ազատ են հրապարակել մարդկանց մասին անձնական տվյալներ, եթե կարողանան հետագայում ապացուցել, որ նյութը կարեւոր է հասարակության համար: Լրագրերը նաեւ ազատ են հրապարակել պետական պաշտոնյաների եւ հասարակական դեմքերի անուններ եւ լուսանկարներ, նույնիսկ քննարկել նրանց անձնական կյանքերը: Մասնավոր քաղաքացիները, որոնք հայտնվել են հասարակական հետաքրքրություն ներկայացնող իրադար-

ծություններում, անկախ նրանից՝ ցանկանում են, թե՝ ոչ, որոշակիորեն զրկվում են անձնական կյանք ունենալու իրավունքից:

Նշենք նաեւ, որ մարդու անձնական կյանքի ոտնձգության գործերում կարեւոր հանգամանք չէ այն, թե մարդու մասին տարածված տեղեկությունները համապատասխանու՞մ են իրականությանը, թե ոչ: Կարեւոր չէ նաեւ, թե արդյոք դրանք արատավորու՞մ են մարդու պատիվն ու արժանապատվությունը, թե ոչ: Կարեւոր է միայն այն, թե այդ տեղեկությունների հրապարակմամբ տեղի ունեցե՞լ է անձնական կյանքի ներխուժում:

Վերջապես, մարդիկ, որոնք նախապես տվել են իրենց համաձայնությունը իրենց անձնական կյանքի մանրամասներ հրապարակելու համար, հետագայում չեն կարող դատի տալ լրագրողին այդ մեղադրանքով: Այնուամենայնիվ, լրատվամիջոցի համար դժվար է լինում ձեռք բերել անհատի թույլտվությունը կամ ապացուցել, որ նա տվել է իր համաձայնությունը:

## Հարցեր լսարանին

**1.** Ի՞նչ է ներառում անձի մասնավոր կյանքը:

**2.** Որո՞նք են մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանադրական երաշխիքները:

**3.** Հանրային եւ պետական գործիչների եւ մասնավոր մարդկանց անձնական կյանքի սահմանները որոշակիացրեք կոնկրետ օրինակներով:

**4.** Ինչպե՞ս կարող է լրագրողը մարդկանց անձնական կյանքի գաղտնիության իրավունքը խախտել: Ի՞նչ միջոցներով կարող են մարդիկ պաշտպանել իրենց իրավունքը:

**5.** Ներկայացնել խոսքի ազատության եւ մասնավոր կյանքի իրավունքների բախման գործնական եւ տեսական օրինակներ: Վերլուծել յուրաքանչյուր իրավիճակ՝ հաշվի առնելով հասարակական շահը:

# Մարդու պատվի եւ արժանապատվության պաշտպանությունը

Երաշխավորելով խոսքի ազատությունը՝ մարդու իրավունքները պաշտպանող միջազգային իրավունքի նորմերը միաժամանակ նշում են, որ այս ազատությունը բացարձակ չէ եւ կարող է սահմանափակվել մարդու պատվի եւ արժանապատվության պաշտպանության նպատակով: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում են, որ խոսքի ազատությունը ենթակա է սահմանափակման այլոց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու նպատակով:

ՀՀ-ում մարդու արժանապատվությունը հռչակվում է որպես բարձրագույն արժեք եւ մարդու իրավունքների հիմք, որի երաշխավորը պետությունն ինքն է: Պատահական չէ, որ մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանող 2-րդ գլուխը բացվում է հենց մարդու արժանապատվությունը ամրագրող 14-րդ հոդվածով.

**«Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում եւ պաշտպանվում է պետության կողմից»:**

Հայաստանում գործում է պատվի եւ արժանապատվության պաշտպանության քաղաքացիաիրավական եւ քրեաիրավական կարգ: Ներկայացնելով այս հարցի իրավական կարգավորման առանձնահատկությունները՝ անդրադառնանք նաեւ օրենսդրական այն թերություններին, որոնք բացասաբար են անդրադառնում Հայաստանում խոսքի եւ մամուլի ազատության վրա:

# Քաղաքացիաիրավական պաշտպանություն

Որպես անձի պատվի եւ արժանապատվության պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման երաշխիք՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

**«Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերքել իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը»**:

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

**«Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը»**:

Այս հոդվածներից բխում է, որ Հայաստանում մարդու պատվի, արժանապատվության ու գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանության առաջին եւ հիմնական ձեւն է հերքումը:

Հոդվածներից բխում է նաեւ, որ տարածված տեղեկատվության հերքում անձը կարող է պահանջել, իսկ նրա պահանջը կարող է բավարարվել, եթե առկա են հետեւյալ հանգամանքները.

- տեղեկություններն արատավորել են անձի պատիվն ու արժանապատվությունը կամ խախտել են նրա իրավունքները,
- տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը (փաստացի անճշտություններ),
- այդ տեղեկությունները տարածվել են մասնավորապես լրատվական գործունեություն իրականացնողի կողմից:

Այսպիսով, առաջին կարեւոր պայմանն այն է, որ տարածված տեղեկատվությունը պետք է արատավորի մարդու պատիվն ու արժանապատվությունը, խախտի նրա իրավունքները: Տեղեկություններն արատավորող ճանաչելու չափանիշները, սակայն, բացակայում են օրենսդրության մեջ: Այդ դեպ-

քում ի՞նչը պետք է հիմք ընդունի դատարանը՝ դրանք արատավորող ճանաչելու համար: Յուրաքանչյուր դեպքում դատարանը հիմքում ընդունում է այն, թե արդյոք տարածված տեղեկությունները հասարակության մեջ ընկալվու՞մ են որպես արատավորող, դատապարտելի, ինչպես, օրինակ՝ գող, ապուշ եւ այլ արտահայտությունները:

Մյուս կողմից, սակայն, խոսքի եւ արտահայտվելու ազատության իրավունքը պարտադրում է նկատի ունենալ մի կարեւոր հանգամանք եւս. եթե հրապարակվածը պարզապես լրագրողի կարծիքն է եւ կոնկրետ մեղադրանք չի պարունակում, ինչպես, օրինակ՝ վատ դատավոր, թույլ դասախոս բառակապակցությունները, դատարանը չպետք է դրանք արատավորող ճանաչի: Տարածված տեղեկություններն անպայման պետք է վերաբերեն փաստերին եւ ոչ թե լինեն դատողություններ, կարծիք: Լինելով Եվրախորհրդի անդամ պետություն՝ Հայաստանը չի կարող հաշվի չնստել Եվրոպական դատարանի կայացրած մի շարք որոշումների հետ, որոնք պաշտպանության տակ են առնում կարծիք արտահայտելու ազատությունը: 1999թ. Դալբանի գործով Եվրոպական դատարանը որոշել է, որ մամուլը պարտավոր է տեղեկություններ եւ գաղափարներ հաղորդել հասարակական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ, եւ մերժել է այն գաղափարը, թե մամուլը չպետք է տեսակետներ արտահայտի, քանի դեռ չի կարող ապացուցել դրանց ճշմարտացիությունը: Պատվի, արժանապատվության գործեր քննելիս դատարանը պետք է փաստերը տարբերակի գնահատական-դատողություններից, վերջիններս ենթակա չեն ապացուցման: 2001 թվականի փետրվարի 27-ին «Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի» գործով դատարանը որոշեց, որ գնահատող դատողությունների հավաստիությունն ապացուցելու պահանջն անհնար է կատարել, եւ որ այն ոտնահարում է կարծիք արտահայտելու ազատությունը՝ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը: Սակայն մյուս կողմից՝ գնահատող դատողությունը պետք է համոզիչ եւ փաստացի հիմքեր ունենա:

Այսպիսով, պատվի եւ արժանապատվության հայցը կարող է բավարարվել, եթե տեղեկությունները լինեն եւ՛ արատավորող, եւ՛ ոչ հավաստի: Տեղեկությունները համարվում են ոչ հավաստի, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:

Համաձայն ՀՀ Քաղ. օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապացուցման պարտականությունը դրված է պատասխանող կողմի, այսինքն՝ լրատվամիջոցի վրա: Սա, մեր կարծիքով, ՀՀ օրենսդրության լուրջ թերություններից է: Միջազգային չափանիշները սահմանում են, որ ապացուցման բեռը պետք է դրվի ոչ թե լրատվամիջոցի, այլ հայցվոր կողմի վրա:

Արտիկլ 19 կազմակերպության «Սահմանել զրպարտությունը» հրապարակման 7-րդ սկզբունքում նշվում է, որ հանրային նշանակության խնդիրների դեպքում հայցվորը պետք է կրի տեղեկությունների կեղծ լինելը ապացուցելու բեռը: Լայնորեն ընդունված է, որ որոշակի հանգամանքներում նույնիսկ կեղծ, արատավորող տեղեկությունները պետք է պաշտպանված լինեն հատկապես մամուլի դեպքում, որի պարտքն է ծառայել հասարակական նշանակության խնդիրներին հասարակության տեղյակ լինելու իրավունքին: Եվրոպական դատարանը 1999 թվականի մայիսին «Բլադեթ Տրոմզո եւ Սթենսաասն ընդդեմ Նորվեգիայի» գործով կայացրած որոշմամբ լրագրողի առաջ ոչ թե դնում է տարածած տեղեկատվության հավաստիությունն ապացուցելու պարտականություն, այլ միայն նշում է, որ լրագրողական նյութերը պետք է «հիմնականում հավասարակշռված լինեն»:

Պատվի, արժանապատվության պաշտպանության քաղաքացիական գործերում դիտավորությունը անհրաժեշտ հանգամանք չի համարվում: Հնարավոր է՝ լրագրողն արատավորող տեղեկությունները տարածել է ոչ թե դիտավորությամբ, այլ անփութությամբ: Սա նրան պատասխանատվությունից չի ազատում:

# Քաղաքացիաիրավական պատասխանատվություն

## Հերքում

ՀՀ Քաղացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ կետը նշում է, որ եթե քաղաքացու պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, ապա դրանք պետք է հերքվեն զանգվածային լրատվության նույն միջոցներով: Ի տարբերություն նախկինում գործող «ԶԼՄ» օրենքի, որտեղ չէր սահմանափակվում լրատվամիջոցին հերքման պահանջ ներկայացնելու ժամկետը՝ գործող Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հերքման պահանջը կարող է ներկայացվել տվյալ տեղեկատվության տարածման օրվանից հետո **մեկամսյա ժամկետում**: Լրատվամիջոցը հերքման պահանջն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնողին տեղեկացնել հերքումը տարածելու ժամանակի մասին կամ գրավոր հայտնել հերքման տարածումը մերժելու մասին:

Հերքումը հրապարակվում է անվճար՝ դրա պահանջն ստանալու օրվանից հետո մեկշաբաթյա ժամկետում, լրատվության նույն միջոցում, իսկ եթե դա

հնարավոր չէ, ապա հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով: Հերքումն իրականացվում է «Հերքում» խորագրի ներքո: Եթե նախկին օրենքը սահմանում էր, որ հերքման ծավալը կարող էր նույնիսկ լինել հերքվող լրատվության ծավալի կրկնակի չափով, ապա նոր Օրենքը պարզապես նշում է, որ հերքումը չպետք է զիջի հերքվող տեղեկատվությանը տեղի, ձեւավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով:

Օրենքը հերքման առանձնահատուկ կարգ է նախատեսում ընտրությունների ժամանակ: Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուի մասին տարածված տեղեկատվության հերքումը կատարվում է 24 ժամվա ընթացքում: Եթե մինչեւ քվեարկության սկիզբը մնացել է ոչ ավելի, քան 24 ժամ, ապա հերքումը կատարվում է անհապաղ հերքման պահանջն ստանալուն պես: Օրենքը նաեւ նշում է, որ նշված ժամկետում հերքման տարածումը հնարավոր չլինելու դեպքում լրատվամիջոցը այն կարող է հրապարակել օրենքով սահմանված 1 շաբաթյա ժամկետում:

## Պատասխանի իրավունք

Ի տարբերություն նախկին օրենսդրության, որը պատասխան հրապարակելը թողել էր լրատվամիջոցի հայեցողությանը եւ չէր կարգավորում՝ նոր Օրենքը սահմանում է պատասխանի իրավունքը եւ դրա իրացման կարգը:

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ հերքման հետ միասին անձը իրավունք ունի պահանջել հրապարակել իր պատասխանը: Ընդ որում լրատվամիջոցին հնարավորություն է տրվում ընտրելու՝ հրապարակել հերքու՞մը, պատասխա՞նը, թե՞ երկուսը միասին: Ի դեպ, պատասխանի հրապարակումով բավարարված է համարվում հերքման պահանջը: Պատասխանը հրապարակվում է հերքման համար նախատեսված կարգով եւ ժամկետներում: Օրենքը որոշակիորեն սահմանափակում է ներկայացնում պատասխանի բովանդակությանը՝ նշելով, որ այն պետք է վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին: Այն նաեւ չպետք է պարունակի տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած անձի կամ այլ անձանց, նրանց գործունեության հասցեին քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ (հոդված 8, կետ 6-րդ):

Հերքման նման, պատասխանը եւս պետք է հրապարակվի անվճար եւ չգերազանցի պատասխանի առարկա տեղեկատվության ծավալը:

Այսպիսով, եւ՛ հերքումը, եւ՛ պատասխանը պետք է առնչվեն միայն հրապա-

րակված փաստացի անճշտություններին, եւ ոչ երբեք կարծիքին, ինչպես նաեւ հրապարակված տեղեկատվությանը չառնչվող որեւէ այլ խնդրի:

Հերքման եւ պատասխանի կարգավորման հարցում Օրենքում առկա են որոշ բացթողումներ: Օրենքում չի նշվում, թե արդյոք հերքման եւ պատասխանի պահանջ կարո՞ղ են քաղաքացու փոխարեն ներկայացնել այլ անձինք, ասենք՝ հարազատները, ընկերները եւ այլոք: Այստեղ կարելի է ենթադրել, որ վերջիններս կարող են հայց ներկայացնել միայն համապատասխան լիազորագրի հիման վրա: Եթե հրապարակված տեղեկություններն արատավորում են անչափահասի կամ անգործունակի պատիվը, ապա նրանց իրավունքների պաշտպանությունը կարող են իրականացնել նրանց ծնողները կամ օրինական այլ ներկայացուցիչներ: Օրենքում բաց է մնում նաեւ այն հարցը, թե հնարավո՞ր է մարդու պատվի, արժանապատվության պաշտպանության հայց ներկայացնել անձի մահից հետո: Ենթադրվում է, որ հայց կարող են ներկայացնել նրա իրավահաջորդները:

Վիճարկման ենթակա հարց է նաեւ այն, որ եթե անձը բաց է թողել հերքում պահանջելու օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, նա կարո՞ղ է դիմել դատարան հերքում պահանջելու հայցով: Չէ՞ որ լրատվամիջոցը կարող է իրավացիորեն առարկել, որ եթե անձը դիմեր օրենքով սահմանված ժամկետում, ինչը չի արել, իրենք կտպագրեին հերքումը: Սակայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին կետը նշում է, որ անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա հայցային վաղեմություն չի տարածվում: Ուստի անձի պատվի եւ արժանապատվության պաշտպանության դեպքերում անձը կարող է ցանկացած ժամանակ դիմել դատարան՝ իր խախտված իրավունքները վերականգնելու պահանջով:

Եթե տեղեկությունները հրապարակվել են անանուն կամ կեղծ անունով, եւ լրատվամիջոցը կամ լրագրողը չի ցանկանում բացահայտել իր լրատվության աղբյուրը, ապա տվյալ դեպքում գործով պատասխանող է ճանաչվում լրատվամիջոցը: Ի դեպ, լրագրողն Օրենքով լիովին իրավունք ունի չբացահայտել իր լրատվության աղբյուրը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պարտադրվում է դատարանի որոշմամբ՝ միայն քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով (Օրենքի 5-րդ հոդված):

## Մերժման հիմքերը

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերը տալիս են հերքման եւ պատասխանի հրապարակման պահանջը մերժելու հիմքերը: Պահանջը բոլոր դեպքերում պետք է մերժվի, եթե՝

- տվյալ պահանջն անանուն է,
- այն հակասում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտին:

Հերքման կամ պատասխանի պահանջը կարող է մերժվել, եթե՝

- Չի պահպանվել պահանջը ներկայացնելու օրենքով սահմանված մե կամսյա ժամկետը,
- պահանջը վերաբերում է այնպիսի տեղեկատվությանը, որը տարածվել է հրապարակային ելույթին, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերին, լրատվության այլ միջոցին կամ հեղինակային որեւէ ստեղծագործությանը կատարված հղումով, եւ սկզբնաղբյուրը հերքում չի տարածել:

Հերքման կամ պատասխանի հրապարակումը մերժելու դեպքում անձը իրավունք ունի դատարանի միջոցով պահանջել դրանց հրապարակումը:

Ինչպես արդեն նշվեց, պատվի, արժանապատվության պաշտպանության քաղաքացիական գործերում դիտավորությունը անհրաժեշտ հանգամանք չի համարվում: Հնարավոր է՝ լրագրողն արատավորող տեղեկությունները տարածել է ոչ թե դիտավորությամբ, այլ անփութությամբ: Սա նրան հերքում կամ պատասխան տպագրելու պարտականությունից չի ազատում:

Կարեւոր երաշխիք է, որ լրատվամիջոցն ազատվում է տվյալ տեղեկատվությունը տարածելու համար պատասխանատվությունից, եթե այդ տեղեկությունները նա ստացել է լրատվական գործակալությունից, դրանք բխում են վիճարկող կողմի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից, ինչպես նաեւ, եթե այդ տեղեկությունները հրապարակային ելույթի, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, եւ դրանք տարածելիս լրատվամիջոցը հղում է կատարել այդ աղբյուրին: Հղումը սկզբնաղբյուրին բոլոր դեպքերում պարտադիր է, հակառակ դեպքում լրատվամիջոցը չի կարող ազատվել հերքում կամ պատասխան տպագրելու պարտականությունից:

## Վնասի փոխհատուցում

Հայաստանում մարդու պատվի, արժանապատվության ու գործարար համբավի քաղաքացիա-իրավական պաշտպանության մյուս ձեւն է նյութական վնասի փոխհատուցումը: ՀՀ Քաղ. օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի տեղեկությունները հերքելու հետ միասին պահանջել դրանց տարածմամբ պատճառված վնասների հատուցում: Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի.

**1.** Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

**2.** Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաեւ չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

**3.** Եթե իրավունքը խախտած անձը դրա հետեւանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտի հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով:

Կարեւոր է, որ վնասի փոխհատուցման չափը չպետք է այնքան բարձր լինի, որ սպառնա լրատվամիջոցի գոյությանը: Մամուլի ազատության պաշտպանության առումով Հայաստանում ձեւավորվել է նյութական վնասի փոխհատուցման բացասական դատական պրակտիկա: 1999 թվականին «Միկա Արմենիա» ՍՊԸ-ի հայցի բավարարման արդյունքում «Օրագիր» թերթը պարզապես փակվեց: «Միկա Արմենիա»-ն դիմել էր դատարան՝ պահանջելով 25.000 ԱՄՆ դոլլար նյութական վնասի փոխհատուցում: Ըստ հայցվորի՝ թերթում հրապարակված «Sergiks’ Airways», «Բաղդասարովը գնում է Երեւան հյուրանոցը» եւ «Սերժ Սարգսյանի բարեկամները խոշոր հարկատու չեն» նյութերով արատավորվել է «Միկա Արմենիա» ՍՊԸ-ի գործարար համբավը: Դատարանն ամբողջությամբ բավարարեց «Միկա Արմենիա»-ի հայցը, իսկ թերթը, բնականաբար, չկարողանալով վճարել փոխհատուցման գումարը՝ փակվեց:

Պատվի, արժանապատվության ոտնահարումը մարդուն կարող է պատճառել ինչպես նյութական, այնպես էլ բարոյական վնաս: Արատավորող տեղե-

կություններըը մարդուն կարող են պատճառել հոգեկան տառապանքներ: Սակայն, ի տարբերություն ՀՀ նախկին Քաղ. օրենսգրքի, ինչպես նաեւ Ռուսաստանի դաշնության համանուն օրենսգրքի (վերջինս, ի դեպ, հիմք է ծառայել ՀՀ Քաղ. օրենսգրքի համար), ՀՀ Քաղ. օրենսգիրքը բարոյական վնասի փոխհատուցում չի նախատեսում: Մինչդեռ մարդու կրած հոգեկան տառապանքները երբեմն ավելի ծանր կարող են լինել, քան պատճառված նյութական վնասը: Քաղաքացիական օրենսգրքի հեղինակները բարոյական վնասի կարգավորման բացակայությունը հիմնավորում էին նրանով, որ սկզբունքորեն անհնար է պարզել մարդու կրած բարոյական վնասի չափը դրամական տեսքով: 2002 թ. հոկտեմբերին ՀՀ Արդարադատության նախարարությունը «Զանգվածային լրատվության մասին» օրենքի նախագծի հետ միասին շրջանառության մեջ էր դրել նաեւ Քաղ. օրենսգրքում առաջարկվող փոփոխություններ, որոնցով փորձ էր արվել սահմանել «բարոյական վնասը» եւ այն փոխհատուցելու կարգը: Այն նախատեսում էր. «Քաղաքացու պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորող տեղեկությունների տարածմամբ հասցված բարոյական վնասի (հոգեկան տառապանքների) դեպքում, որն իրականացվել է զանգվածային լրատվության միջոցով, կարող է կիրառվել դրամական փոխհատուցում՝ դատարանի կողմից որոշված չափով»: Նախագիծը նշում էր նաեւ, որ բարոյական վնասի փոխհատուցման պահանջի չափը պետք է լինի խելամիտ ու արդարացի եւ չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Նախագիծը, սակայն, հետագայում հանվեց շրջանառությունից:

Մեր կարծիքով, ՀՀ օրենսդրությունը պետք է ներառի բարոյական վնասի հասկացությունը, միաժամանակ սահմանելով, որ այն ենթակա է փոխհատուցման, անկախ նրանից՝ մարդը կրել է նյութական վնաս, թե ոչ: Սա կարող է ունենալ միայն դրական ազդեցություն՝ կատարելով իրավախախտումների կանխարգելման գործառույթ:

## Զրպարտության եւ վիրավորանքի քրեաիրավական կարգավորումը

ՀՀ-ում զրպարտությունը եւ վիրավորանքը քրեորեն պատժելի արարք են համարվում: Զրպարտությանը եւ վիրավորանքին կարգավորվում են նոր Քրեական օրենսգրքի 135-րդ, 136-րդ եւ 318-րդ հոդվածներով:

Համաձայն 135-րդ հոդվածի՝ զրպարտություն է

**«Ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող կամ բարի համբավն արատավորող ակնհայտ սուտ տեղեկություններ տարածելը», որի համար նախատեսվում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով: Նույն հոդվածի երկրորդ կետով սահմանվում է, որ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ, պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:**

Զրպարտության դեպքում պետք է առկա լինեն հետեւյալ հանգամանքները.

**1.** Հանցավորը մեկ ուրիշին մեղադրում է կոնկրետ փաստ, արարք կամ արարքներ կատարելու մեջ: Օրինակ՝ նախարարը կաշառք է վերցրել, վատնել է վարկային գումարները եւ այլն: Ընդ որում՝ անհրաժեշտ է, որ այդ փաստերը կամ արարքները, որոնցում մեղադրվում է տուժողը, լինեն արատավորող:

**2.** Տեղեկությունները պետք է չհամապատասխանեն իրականությանը: Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե տարածված տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, նույնիսկ եթե դրանք ստորացնում են մարդու պատիվն ու արժանապատվությունը: Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից նաեւ այն դեպքում, եթե տեղեկություններն արատավորող չեն, բայց նաեւ չեն համապատասխանում իրականությանը:

**3.** Արատավորող տեղեկությունների կեղծ, սուտ լինելը պետք է ակնհայտ լինեն տարածողի համար: Զրպարտության հանցակազմի առկայության համար պարտադիր է, որ արատավորող տեղեկություններ տարածողը գիտակցած լինի, որ դրանք կեղծ են, չեն համապատասխանում իրականությանը: Այսինքն՝ նա պետք է գործած լինի դիտավորությամբ: Իսկ եթե դրանց կեղծ լինելը ակնհայտ չի եղել իր համար, ուրեմն տարածողը ենթակա չի կարող լինել քրեական պատասխանատվության:

**4.** Արատավորող տեղեկությունները պետք է վերաբերեն կոնկրետ անձի կամ անձանց:

**5.** Տեղեկությունները պետք է տարածված լինեն որեւէ եղանակով:

Նախկինում ՀՀ քրեական օրենսգիրքը զրպարտության որակյալ տեսակ էր դիտում հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ ԶԼՄ-ով դրսեւորված զրպարտությունը՝ նախատեսելով առավել խիստ պատիժ: Նախկինում նաեւ սահմանվում էր կալանք առավելագույնը 2 ամիս ժամկետով, իսկ առանձին դեպքերում, եթե զրպարտությունը զուգորդված էր անձին ծանր հանցանք կատարելու մեջ մեղադրելու հետ, պատժվում էր ազատազրկմամբ առավելագույնը 3 տարի ժամանակով: ՀՀ Քրեական օրենսգրքում 2004 հունիսին կատարված փոփոխությունների շնորհիվ այս պատժատեսակները վերացվեցին:

ՀՀ Քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը սահմանում է վիրավորանքը.

**«Ուրիշի պատիվն ու արժանապատվությունը անպարկեշտ ձեւով ստորացնելը»: Այս գործողությունները պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:**

**Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով:**

Վիրավորանքի էությունն այն է, որ հանցավորը տուժողին տալիս է այնպիսի բացասական գնահատական, կպցնում է այնպիսի պիտակ, որը նսեմացնում է նրա պատիվն ու արժանապատվությունը: Վիրավորանք հասցնողի դիտավորությունն է հասարակության աչքում նսեմացնել տուժողի հեղինակությունը: Պետք է նկատի ունենալ, որ վիրավորանքի դեպքում ամենեւին կարեւոր չէ՝ տուժողին ուղղված բացասական գնահատականը համապատասխանու՞մ է իրականությանը, թե՞ ոչ:

Դիտավորությունը պարտադիր հանգամանք է վիրավորանքի հանցակազմի համար: Հանցավորը պետք է տվյալ դեպքում ոչ միայն գիտակցի, որ իր կատարած գործողությունները ոտնահարում են ուրիշի հեղինակությունը, այլեւ ցանկանա ոտնահարել, ստորացնել: Այս դեպքում միայն կարող է առաջանալ քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտություն: Իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Գաբուզյանը իր վերլուծություններից մեկում նշում է. «Վիրավորանքի համար քրեական պա-

տասխանատվություն կարող է կիրառվել միայն, երբ վիրավորանքն իրականացվել է անպարկեշտ ձեւով, այսինքն հակասում է տվյալ հասարակությունում սահմանված վարքագծի նորմերին: Հակառակ դեպքում վիրավորանքի համար պատասխանատվություն պետք է իրականացվի քաղաքացիաիրավական կարգով»: Վիրավորանքի պարտադիր հատկանիշ է պատվի, արժանապատվության ստորացման անպարկեշտ ձեւը: Այսինքն, եթե մարդուն անվանում են, օրինակ, անգրագետ, սա թեպետ արատավորում է մարդու պատիվն ու արժանապատվությունը, սակայն անպարկեշտ ձեւով չի արտահայտված: Իսկ, օրինակ, «դեգեներատ» բառն իր մեջ անպարկեշտ տարր ունի:

Նշենք նաեւ, որ վիրավորանքը կարող է արտահայտվել ոչ միայն տպագիր եղանակով, այլեւ գործողությամբ, օրինակ՝ ապտակով, տարբեր ժեստերով եւ այլն: Կարեւոր է նշել նաեւ, որ ե՛ւ զրպարտության, ե՛ւ վիրավորանքի համար անհրաժեշտ է, որ արատավորող արտահայտություններն արված լինեն կոնկրետ անձի կամ անձանց հասցեին: Ընդհանուր բնույթի, անորոշ անձանց հասցեին արված արտահայտությունները չեն կարող զրպարտչական կամ վիրավորական համարվել: Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքից՝ զրպարտության եւ վիրավորանքի գործերում մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Այսինքն՝ մեղադրող կողմի վրա է դրված լրագրողի մեղավորությունն ապացուցելու պարտականությունը: Ի տարբերություն քաղաքացիական գործերի, որտեղ լրագրողը պետք է ապացուցի իր տարածած տեղեկությունների համապատասխանությունն իրականությանը, քրեական գործերում մեղադրողը պետք է ապացուցի, որ տարածված տեղեկություններն արատավորող բնույթ ունեն եւ չեն համապատասխանում իրականությանը, ինչպես նաեւ, որ դրանք հրապարակվել են վնասելու դիտավորությամբ:

Մեր համոզմամբ, վիրավորանքն ու զրպարտությունը չպետք է դիտել որպես քրեորեն պատժելի արարքներ, առավել եւս պետք է բացառվի սրանց դեպքում ազատազրկումը որպես պատժատեսակ կիրառելը: Արտահայտվելու ազատությունը չի կարող գոյություն ունենալ ազատազրկման վախի առկայության դեպքում: Ճիշտ է՝ չնայած վերջին տարիներին որեւէ լրագրող չի բանտարկվել (թեպետ 1999-2000 թթ դատարանի դատավճռով ազատազրկման դատապարտվեց «Օրագիր» թերթի խմբագիր Նիկոլ Փաշինյանը, բայց պատժամիջոցը չկիրառվեց. լրագրողը պայմանական ազատ արձակվեց), սակայն սա դեռ չի նշանակում, թե այն երբեք չի կիրառվի: «Արտիկլ 19» միջազգային կազմակերպության իրավական ծրագրի ղեկավար Թոբի Մենդելը նշում է. «Երկիրը չի կարող համարվել ժողովրդավարական, եթե այստեղ ազատազրկում են վիրավորանքի եւ զրպարտության համար: Եթե ես Ձեզ վիրավորում եմ, եթե կեղտոտ կարծիք եմ հայտնում Ձեր մասին, սա իմ եւ

ձեր միջեւ խիստ մասնավոր հարց է: Դուք կարող եք փոխհատուցում ստանալ ինձնից: Սակայն այստեղ չկա վտանգված հասարակական շահ»[9]:

ՀՀ քրեական օրենսգիրքը մեկ այլ վտանգ էլ է պարունակում: Օրենսգրքի 318-րդ հոդվածում՝ «Իշխանության ներկայացուցչին վիրավորելը», նշվում է.

> **1.** Իշխանության ներկայացուցչին հրապարակայնորեն վիրավորելը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:
>
> **2.** Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ՝պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Փաստորեն, Քրեական օրենսգիրքը վիրավորանքի դեպքում պետական իշխանության ներկայացուցիչներին առավել մեծ պաշտպանությամբ է ապահովում, քան սովորական քաղաքացիներին, մի բան, որ անընդունելի է եւ ուղղակի հակասում է Եվրոպական դատարանի մի շարք այլ որոշումներին: «Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» գործով 1986թ.-ին Դատարանը նշել է, որ «քաղաքական գործիչների առնչությամբ քննադատության սահմաններն ավելի ընդարձակ են, քան մասնավոր անձի առնչությամբ: Ի տարբերություն վերջինիս, առաջինը պետք է մեծագույն հանդուրժողականություն ցուցաբերի իր յուրաքանչյուր խոսքի ու գործողության հանդեպ լրագրողների լուրջ ուշադրության նկատմամբ»: Այս սկզբունքն ամրապնդվել է մի շարք որոշումներում, ինչպես, օրինակ՝ «Լոպես Գոմես դե Սիլվան ընդդեմ Պորտուգալիայի», 2000թ., «Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի», 2001թ., «Թոման ընդդեմ Լյուքսեմբուրգի», 2001թ., «Կոլոմբանին ընդդեմ Ֆրանսիայի», 2002 թ. եւ այլն:

Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1998թ. ընդունած «Անձնական կյանքի իրավունքի մասին» 1165 բանաձեւի 6-րդ կետում տրվում է «պետական գործիչ» եզրույթի սահմանումը.

> «Պետական գործիչներն այն անձինք են, որոնք ունեն պետական պաշտոն եւ/կամ օգտագործում են պետական ռեսուրսներ եւ, ավելի լայն առած, բոլոր նրանք, ովքեր որոշակի դեր ունեն հանրային կյանքում՝ քաղաքականության, տնտեսության, արվեստի, սոցիալական, սպորտի կամ այլ բնագավառներում»:

9. Հարցազրույցը՝ Շ. Դոյդոյանի, Երեւան 2002թ., հոկտեմբեր:

Իշխանավորների, պետական պաշտոնյաների մասին կարծիքներ արտահայտելու ազատությունը (որքան էլ դրանք տհաճ, ոչ ճիշտ, վատ ձեւակերպված լինեն) ժողովրդավարական սկզբունքների անկյունաքարն է: «Արտիկլ 19» կազմակեպությունն իր մեկնաբանություններում նշում է. «Պետական պաշտոնյաներն ավելի մեծ հանդուրժողականությամբ պետք է վերաբերվեն քննադատությանը: Այստեղից բխում է, որ պետական պաշտոնյաներին հատուկ պաշտպանվածություն տրամադրելով խախտվում է այս սկզբունքը»: Այսպիսով՝ քրեական օրենսգիրքը ոչ միայն չի ապահովում խոսքի ազատության պաշտպանություն, այլեւ առավել լուրջ խոչընդոտներ է պարունակում խոսքի եւ մամուլի ազատության համար:

Ընդգծենք նաեւ, որ վիրավորված մարդը միշտ պետք է իր պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու ձեւերի ընտրության հնարավորություն ունենա՝ հատկապես մինչեւ դատարան դիմելը՝ էթիկայի հանձնաժողովներում, մամուլի խորհուրդներում, խմբագրություններում: Էթիկական կանոնագրերի ընդունումը մամուլի ինքնակարգավորման, նաեւ ինքնապաշտպանության լավագույն ձեւն է, որը, ցավոք, հայաստանյան ԶԼՄ-ը դեռեւս չեն գիտակցում:

## Հարցեր լսարանին

**1.** Ուսումնասիրել մամուլը եւ գտնել պատվի եւ արժանապատվության ոտնահարման օրինակներ: Հիմնավորել՝ ինչու՞ եք օրինակը համարում իրավախախտում:

**2.** Շարադրել հերքման եւ/կամ պատասխանի տեքստ: Քննարկել լսարանում, թե որքանով է հերքումը կամ պատասխանը համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին:

**3.** Քննարկել. բերված յուրաքանչյուր օրինակում տուժողի խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության քրեակա՞ն, թե՞ քաղաքացիաիրավական կարգով:

**4.** Քննարկել դատական պրակտիկայից օրինակներ, երբ լրագրողին կամ լրատվամիջոցին դատի են տվել մարդու պատիվն ու արժանապատվությունը ոտնահարելու համար: Վերլուծել գործի մանրամասները, այնուհետեւ ուսանողներին հանձնարարել կայացնել դատական որոշում: Քննարկել առաջարկներն ու փաստարկները, արդյունքները գրառել գրատախտակին, ապա ներկայացնել գործով կայացված դատական որոշումը: Համեմատել ուսանողների առաջարկները դատական ակտի հետ:

# Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը

Տեղյակ լինելու իրավունքն ապրելու իրավունք է:
Ռիչարդ Գալլանդ[10]

## «Տեղեկատվության ազատություն» հասկացությունն ու նրա նշանակությունը

Կառավարությանը հսկելու եւ երկրի կառավարմանն ակտիվորեն մասնակցելու համար քաղաքացիներն անհրաժեշտ տեղեկատվության կարիք ունեն: Նրանք իրավունք ունեն ստանալ հասարակական հետաքրքրություն ներկայացնող կամ իրենց անձնական շահերը շոշափող տեղեկություններ, պետական մարմինների գործողությունների մասին տեղեկություններ, ինչպես նաեւ տեղեկացվել նախատեսվող կամ ընդունված որոշումների մասին: Միայն այս կերպ քաղաքացիները կարող են պատշաճ վերահսկողություն իրականացնել պետական իշխանության գործունեության վրա: Այս իսկ հիմնավորմամբ մարդու իրավունքների միջազգային հասարակական կազմակերպություն ԱՐՏԻԿԼ 19-ը տեղեկատվությունը բնութագրել է որպես **«ժողովրդավարության թթվածին»**:[11]

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1992թ. ապրիլի 29-ի «Կարծիք հայտնելու եւ տեղեկատվության ազատության մասին Հռչակագրում» առաջ է քաշվում հետեւյալ գաղափարը. «Տեղեկատվության եւ ԶԼՄ-ի ոլորտում պետության առջեւ դրված են հետեւյալ խնդիրները՝ պետական սեկտորում բաց տեղեկատվական քաղաքականությունը (ներառյալ՝ տեղեկատվության մատչելիությունը, որն անհրաժեշտ է քաղաքացիների կողմից քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային հարցերի ընկալման ունակության բարձրացման համար) եւ այդպիսի հարցերի ազատ քննարկման հնարավորությունը»:

Եվրախորհրդի մեկ այլ փաստաթղթում՝ նախարարների կոմիտեի 2002թ. ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականում նշվում է, որ տեղեկատվության ազատությունը՝

10. The Right to Know, The Right to live, Edited by Richard Calland, Alison Tilley, ODAC, 2002, էջ 15: Ռիչարդ Գալլանդը Հարավ-Աֆրիկյան Հանրապետության Բաց ժողովրդավարության աջակցության կենտրոնի ղեկավարն է (Շ. Դ.):

11. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003 p. 3: Թոբի Մենդելը ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպության իրավական ծրագրերի ղեկավարն է (Շ. Դ.):

- հանրությանը հնարավորություն է ընձեռում ճիշտ ընկալել եւ առանցքային կարծիք կազմել այն հասարակության վերաբերյալ, որում ինքն ապրում է, եւ այն իշխանությունների վերաբերյալ, որոնք ղեկավարում են իրեն՝ միեւնույն ժամանակ խթանելով հասարակության շահերին առնչվող խնդիրների լուծմանը քաղաքացիների մասնակցությունը,
- խթանում է պետական կառավարման մարմինների արդյունավետությունը եւ օգտակարությունն ու օգնում վերջիններիս պահպանել իրենց ամբողջականությունը՝ խուսափելով կոռուպցիայի վտանգից,
- նպաստում է պետական կառավարման մարմինների օրինականության հաստատմանը՝ իբրեւ հանրային ծառայություններ մատուցողների, եւ պետական իշխանության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը:[12]

Տեղեկատվության ազատությունը կարեւորվում է նաեւ կոռուպցիայի դեմ պայքարում:

ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդեի հայտնի արտահայտությունը հիմնավորում է այս միտքը. «Մի փոքր արեւի լույսը լավագույն ախտահանումն է»:[13] Սա է թերեւս պատճառը, որ ԱՄՆ-ի որոշ նահանգներում տեղեկատվության ազատության օրենքները պարզապես անվանվում են արեւի լույսի օրենքներ, դրանք թափանցում են իշխանական մութ միջանցքներ եւ կանխում կառավարության «մութ» գործողությունները:

Տեղեկատվության ազատության մասին առաջին իրավական ակտն ընդունվել է Շվեդիայում դեռեւս 1766 թվականին: Սակայն տեղեկատվության ազատության դասական ձեւակերպումը մարդու իրավունքների ժամանակակից կոնտեքստով հիմնադրվում է Մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագրում: 1946 թվականին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի որոշմամբ ընդունվում է. «Տեղեկատվության ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է եւ մյուս բոլոր ազատությունների անկյունաքարը: Այն կենսական նշանակություն ունի աշխարհում խաղաղություն եւ առաջընթաց ապահովելու համար: Պետությունների միջեւ փոխըմբռնումը եւ համագործակցությունն անհնար է առանց արթուն եւ առողջ հասարակական կարծիքի, որն էլ, իր հերթին, ամբողջովին կախված է տեղեկատվության մատչելիությունից: Տեղեկատվության ազատությունը ներառում է անարգել կերպով տե-

12. Զանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում, Երևան, 2003, էջ 210:

13. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003, p. 4:

ղեկատվություն հավաքելու, փոխանցելու եւ տարածելու իրավունքը այլուր եւ ամենուր»:[14]

**Այսպիսով, տեղեկատվության ազատությունը տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ այն պետական մարմիններից ստանալու իրավունքի իրականացումն է:**

Մարդու իրավունքների ժառանգությունը դիտարկելով՝ պարզ է դառնում, որ տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է եւ պատկանում է քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների թվին: Այս իրավունքի իրավական պաշտպանությունը քաղաքացիներին ոչ միայն հնարավորություն է տալիս ազատորեն փնտրել եւ ստանալ տեղեկություն, այլեւ լիարժեք գործադրել իրենց քաղաքական մյուս իրավունքներն ու ազատությունները: Այսինքն, առանց այս իրավունքի անհնար է իրականացնել ընտրելու եւ ընտրվելու, միավորվելու, պետության կառավարմանը մասնակցելու եւ մյուս քաղաքական, ինչպես նաեւ տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքները (բնակարանի իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, առողջության պահպանման, կրթության իրավունքներ եւ այլն): Այն ծառայում է նաեւ սոցիալական, քաղաքական եւ տնտեսական հավասարության հասնելու համընդհանուր ձգտումին:

Տեղեկություն փնտրելու եւ ստանալու իրավունքը հռչակվում է նաեւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի ինֆորմացիա եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ հաղորդելու իրավունք տեղեկատվության ցանկացած միջոցներով եւ անկախ պետական սահմաններից: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածը եւս ամրագրում է այս սկզբունքը: Այս իրավունքը սահմանվում է նաեւ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության եւ բնապահպանական խնդիրների արդարացի լուծումների մատչելիության մասին Օրհուսի կոնվենցիայով,[15] 1982թ. ապրիլի 29-ին ընդունված խոսքի եւ տեղեկատվության ազատության մասին հռչակագրով, ինչպես նաեւ հասարակական իշխանության մարմինների մոտ առկա տեղեկատվության մատչելիության վերաբերյալ NR (81)19 Հանձնարարականով, Արխիվների մատչելիության վերա-

14. International Law Governing Communications and Information (A Collection of Basic Documents), Edward W. Ploman, Greenwood Press, 1982, p. 127.

15. Ընդունվել է 1998թ.-ի հունիսի 25-ին Դանիայի Օրհուս քաղաքում:

բերյալ եվրոպական քաղաքականության մասին N՛ R (2000) 13 Յանձնարարականով:

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի 10-րդ հոդվածը խոսում է այն մասին, որ այդ իրավունքը չի կարող սահմանափակվել իշխանության մարմինների կողմից: Այս հոդվածը քաղաքացիներին ապահովում է պաշտոնական ինֆորմացիա ձեռք բերելու իրավունքով: 1981 թվականին Եվրահանձնաժողովն այն կարծիքն է հայտնում, որ չնայած 10-րդ հոդվածով երաշխավորված տեղեկատվություն ստանալու իրավունքը «հիմնականում երաշխավորում է տեղեկատվության ընդհանուր աղբյուրների մատչելիությունը, չի կարելի բացառել, որ որոշակի հանգամանքներում այն ներառում է այնպիսի փաստաթղթեր ձեռք բերելու իրավունքը, որոնք մատչելի չեն բոլորին»:[16]

Այսպիսով, հանձնաժողովը ծայրահեղ դեպքում «in abstracto» ընդունել է, որ պաշտոնական տեղեկատվության մատչելիության իրավունքը որոշակի հանգամանքներում կամ որոշակի տեղեկատվության դեպքում պաշտպանվում է 10-րդ հոդվածով:

1982 թ. ապրիլի 29-ին տեղեկատվության եւ կարծիքների արտահայտման ազատության մասին հռչակագրի մասնակից պետությունները հռչակեցին սկզբունքներ, որոնց հետեւելու են մասնավորապես տեղեկատվության ազատության եւ լրատվության ոլորտում: «Պետական սեկտորում իրականացնել բաց տեղեկատվական քաղաքականություն՝ ներառյալ ինֆորմացիայի մատչելիության ապահովումը քաղաքական, սոցիալական, տնտեսական եւ մշակութային հարցերն ազատորեն քննարկելու՝ քաղաքացիների հնարավորությունները զարգացնելու նպատակով: Եվրոպական հանձնաժողովն ընդունել է «Կանաչ փաստաթուղթ» (Green Paper) տեղեկություն ստանալու իրավունքի մասին, որը հաստատում է, որ եվրոպական եւ ազգային օրենքները պետք է ապահովեն պաշտոնական տեղեկատվություն ստանալու օրինական իրավունքը, որի սահմանափակումները եւս պետք է հստակ որոշարկված լինեն: Այս կարեւորագույն փաստաթղթերը անդամ պետություններին պարտավորեցնում են հարգել տեղեկատվության ազատությունը, իրենց օրենսդրությամբ ապահովել այս իրավունքի պաշտպանությունը, դրական մեխանիզմներ կիրառել պաշտոնական տեղեկատվության մատչելիության համար:

16. Законодательство о СМИ, Учебно-практические материалы, 1999, стр. 33-35.

## Հարցեր լսարանին

**1.** Ի՞նչ եք հասկանում տեղեկատվության ազատություն ասելով:

**2.** Ինչու՞ է այն կարեւոր:

**3.** Ինչո՞վ է բարելավում մեր կյանքը տեղեկատվության ազատության ապահովումը: Դիտարկեք հետեւյալ ցանկը.

Այն օգնում է՝

- կոռուպցիան նվազեցնելուն,
- աղքատության մակարդակի կրճատմանը,
- շրջակա միջավայրի պահպանման ապահովմանը,
- մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը,
- անձնական կյանքի անձեռնմխելիության ապահովմանը,
- երկրի անվտանգությունը պաշտպանելուն,
- արդյունավետ է դարձնում երկրի կառավարումը,
- բարձացնում է որոշումներ ընդունելու արդյունավետությունը,
- նպաստում է տնտեսության մակարդակի բարձացմանը:

Լսարանի հետ քննարկվում է յուրաքանչյուր կետ, ցանկը լրացվում է ուսանողների առաջարկներով: Այնուհետեւ ուսանողները պետք է բերեն գործնական կոնկրետ օրինակներ՝ յուրաքանչյուր կետին առնչվող, ինչի միջոցով ավելի հստակ է դառնում ՏԱ գործնական ազդեցությունը:

## Տեղեկատվության ազատության զարգացումը. միջազգային փորձը

Տեղեկատվության ազատության ծագման եւ զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ այն սկիզբ է առել արեւմտյան երկրներում՝ հարուստ հասարակություններում՝ Շվեդիայում, ԱՄՆ-ում, Կանադայում եւ Ավստրալիայում՝ դառնալով իշխանությունից անհատ քաղաքացուն պաշտպանելու միջոց: Այսօր աշխարհի ավելի քան 50 պետություններում[17] ընդունված է Տեղեկատվության ազատության մասին օրենք: Տեղեկատվության ազատության մասին առաջին օրենքը Շվեդիայի 1766թ. Մամուլի ազատության մասին օրենքն է: Սակայն երկրորդ օրենքն աշխարհում ընդունվեց միայն երկու դար անց՝ 1966թ. Միացյալ Նահանգներում: Տեղեկատվության ազատության գաղափարը փաստորեն լայն ճանաչում ստացավ միայն վերջին տասնամյակում: Դրա վկայությունն է այն իրողությունը, որ աշխարհում ընդունված 50 օրենքներից 27-ն ընդունվել է 1989թ. Բեռլինի պատի փլուզումից հետո: Այսօր արդեն ավելի քան 30 երկիր այդպիսի օրենք մշակելու կամ ընդունելու գործընթացում է:[18] ՏԱ գաղափարի տարածմանը մեծապես նպաստեց նաեւ այն, որ շատ միջազգային կառույցներ, ներառյալ ՄԱԿ-ը, ճանաչեցին այս իրավունքի, ինչպես նաեւ այս իրավունքը երաշխավորող օրենսդրության հիմնարար կարեւորությունը:

Շատ երկրներում տեղեկատվության ազատությունն առաջ մղվեց «սկանդալների» հետեւանքով: Այսպես՝ Կանադայում օրենքն ընդունվեց 1982-ին, երբ հասարակությունը աղմուկ բարձրացրեց արդյունաբերության ոլորտում ոստիկանության ուժեղ հսկողության եւ պետական կարգավորման դեմ: Այդպես եղավ նաեւ Ճապոնիայում, որտեղ օրենքն ընդունվեց 1999-ին՝ երկու տասնամյա գաղտնիությունից հետո:

Այս միտումը նկատվում է գրեթե բոլոր զարգացած ժողովրդավարական երկրներում: Ի հակադրություն՝ նորանկախ երկրներում, հատկապես, որոնք ձեւավորվել են սառը պատերազմից հետո նոր ժողովրդավարության ալիքի վրա, տեղեկատվության մատչելիության օրենքների շարժիչ ուժը մասնակիորեն կախված է ժողովրդավարական կառավարության կամքից՝ լույս սփռել նախկին վարչակազմի գործունեության վրա՝ նրանց փաստաթղթերը բացելով հանրության առաջ: Օրինակ՝ Հունգարիայում տեղեկատվության մատչելիության մասին օրենքն ընդունվեց 1992-ի սկզբին: Ավելի ուշ արդեն 1990-

---

17. 2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

18. Դեյվիդ Բենիսարի ուսումնասիրության համաձայն՝ 2004թ. մայիսի տվյալներով: Տես՝ Ինտերնետային հետևյալ էջում http://www.freedominfo.org:

ականների վերջին եւ 2000-ի սկզբին հետեւեցին Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Չեխիան, Ալբանիան, Սլովակիան եւ Բուլղարիան:

Գործընթացն անշեղորեն հասավ նաեւ աշխարհի ամենագաղտնի համարվող պետությունները: 2001-ին Մեծ Բրիտանիայի միացյալ թագավորությունը ընդունեց տեղեկատվության մատչելիության մասին օրենք, որի կիրառումը, սակայն, հետաձգվեց մինչեւ 2005թ. հունվարի 1-ը: 2003թ. հոկտեմբերին Թուրքիան եւս ընդունեց տեղեկատվության ազատության մասին օրենք: Գերմանիայում 2004թ. դեկտեմբերի 17-ին Բունդեսթագն առաջին ընթերցմամբ ընդունեց Տեղեկատվության ազատության մասին Ֆեդերալ օրենքը: Ի դեպ, Գերմանիան եւ Լյուքսեմբուրգը վերջին երկու եվրոպական երկրներն են, որտեղ չկա ՏԱ մասին ազգային օրենք:

Բոլոր այս երկրներում տեղեկատվության թափանցիկությունը դարձավ օրենքով ամրագրված սկզբունք, իսկ գաղտնիությունը՝ բացառություն: Հատկանշական է, որ 90-ականների վերջին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «տեղեկատվության ազատությունը» կամ «թափանցիկությունը» բացակայում էին եվրոպական ժողովրդավարական երկրների իրավաբանական տերմինաբանությունում, ներառյալ՝ դատարանների որոշումներում: Հետագա տասնամյակում տեղեկատվության ազատությունը Եվրոպայում սկսվեց ընկալվել որպես անձի անկախության երաշխիքների հիմքերից մեկը: Ինչպես նշում է Ռիչարդ Գալլանդը իր «The Right to Know, The Right to live» ուսումնասիրության մեջ, այդ գործընթացի վրա ուժեղ ներգործություն ունեցան հետեւյալ գործոնները՝

- Ժողովրդավարական երկրներում խոսքի ազատության լիակատար երաշխավորվածություն, պետության կողմից տեղեկատվության ազատության սահմանափակման նկատմամբ հասարակական բացասական վերաբերմունք,
- «սառը պատերազմի» ավարտ, որն իշխանություններին զրկեց տեղեկատվության ազատությունը սահմանափակելու բազմաթիվ փաստարկներից,
- տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխական զարգացում, պետական մարմիններում, հիմնարկներում, կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում եւ բնակարաններում ի հայտ եկած միլիոնավոր համակարգիչներ եւ ինտերնետ կապի մատչելիություն, որի շնորհիվ հնարավոր դարձավ առանց հսկողության կամ վերահսկողության փնտրել, ստանալ եւ տարածել ցանկացած տեղեկատվություն ողջ աշխարհով մեկ:

Նշենք, որ տեղեկատվության մատչելիության օրենքներ ունեցող պետություններից ճնշող մեծամասնությունը կա՛մ հյուսիսամերիկյան են, կա՛մ եվրոպական՝ Դեյվիդ Բանիսարի վերջին աշխատությունում թվարկված 45 երկրներից 31-ը: Եթե մնացած 14-ից հանենք Իռլանդիան, Նոր Զելանդիան, Ավստրալիան, Իսրայելը եւ Ճապոնիան, կմնա եւս 9 երկիր՝ Ասիա, Լատինական Ամերիկա եւ Աֆրիկա մայրցամաքներից: Այս մայրցամաքներում բաց կառավարմանն ուղղված առաջընթացը շատ ավելի դանդաղ է ընթացել:

Ասիայում Ճապոնիայից բացի միայն Թաիլանդն ունի առանձին տեղեկատվության մատչելիության օրենք, որն ընդունվել է 1997թ., չնայած Ֆիլիպինների սահմանադրական իրավունքը եւ 1987թ. ընդունված Հանրային ծառայողների եւ պաշտոնյաների վարքագծի եւ էթիկական չափանիշների կանոնագիրը հանրային փաստաթղթերի մատչելիության առավել բարձր մակարդակ են ապահովում:

Լատինական Ամերիկայում դանդաղ ձեւավորումից հետո սկիզբ առավ մեծ շարժում: Բելիզում տեղեկատվության մատչելիության օրենքն ընդունվեց 1994-ին, Թրինիդադում ու Թոբագոյում՝ 1999-ին, Մեքսիկայում եւ Յամայկայում՝ 2002-ի կեսերին, Պերուում՝ 2002-ի հուլիսին:

Բացառություն է միայն Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը՝ աֆրիկյան միակ երկիրը, որի օրենքը միտված է քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը:

Գործընթացը բավականին դանդաղ է ընթանում նախկին խորհրդային երկրներում: Առաջիններից էին Էստոնիան, Լատվիան, Լիտվան, այնուհետեւ՝ Հայաստանն ու Վրաստանը: Ռուսաստանում թեեւ տեղեկատվության ազատության մասին օրենքի առաջին նախագծերն ի հայտ եկան դեռեւս 1996 թվականին, սակայն մինչ օրս օրենքը դեռեւս ընդունված չէ: Նույնպիսի իրավիճակ է նաեւ Ադրբեջանում, որտեղ 2005թ. հունվարի 1-ի դրությամբ օրենքն ընդունված չէր:

Հայաստանի հանրապետությունը ԱՊՀ երկրներից առաջիններից էր, որ նախաձեռնեց եւ ընդունեց տեղեկատվության ազատության մասին առանձին իրավական ակտ: Որպես երկրում ընթացող ժողովրդավարական բարեփոխումների մի մաս՝ 2003 թվականի սեպտեմբերի 23-ին ընդունվեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ նոյեմբերի 15-ին: Եթե նորանկախ երկրների մեծ մասում այս օրենքի ընդունումը պետության վրա արտաքին ճնշման արդյունք էր, ապա Հայաստանի պարագայում օրենքի ընդունումը ներքին պահանջով եւ հասարակական այն գիտակցությամբ էր պայմանավորված, որ օրենքն անհրաժեշտ է այս երկրում

իրական ժողովրդավարական կառավարում ապահովելու համար: Օրենքի ընդունումը Հայաստանի մի խումբ հասարակական կազմակերպություննե-րի կոալիցիայի եւ խորհրդարանի միջեւ երկու տարվա արդյունավետ համա-գործակցության եւ համառ աշխատանքի արդյունք էր: Հատկապես մեծ էր Տեղեկատվության ազատության քաղաքացիական նախաձեռնութան ներդ-րումը, որը միավորում է երեք հասարակական կազմակերպություններ՝ Ին-ֆորմացիայի ազատության կենտրոն (նախագահ՝ Շուշան Դոյդոյան), Տեղե-կատվական իրավունքի ինստիտուտ (նախագահ՝ Կարեն Անդրեասյան) եւ Քաղաքացիական հասարակության ինստիտուտ (նախագահ՝ Արտակ Կիրա-կոսյան): Այս կազմակերպությունները 2001թ. նախաձեռնեցին ոչ միայն օ-րենքի ընդունումը, այլեւ օրենքի ընդունումից հետո 2003թ. սեպտեմբերից սկսեցին իրականացնել չորսամյա ռազմավարական ծրագիր՝ ուղղված օ-րենքի պատշաճ կատարման ապահովմանը:

## «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիմնական սկզբունքները

Քաղաքացիների իրական մասնակցությունը, կոռուպցիայի դեմ արդյունա-վետ պայքարը եւ իշխանության գործողությունները վերահսկելը որպես ժո-ղովրդավարության հիմքեր հնարավոր չէ իրականացնել առանց տեղեկութ-յուններ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատության ապահովման եւ առանց տեղեկություն ստանալու իրավունքի իրավական պաշտպանության: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) կարգավորվում են տեղեկություն տնօրինողներից մարդկանց տեղեկություն ստանալու հետ կապված իրավահարաբերությունները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հիմնական խնդիր-ներն են.

- սահմանում է տեղեկություն ստանալու սահմանադրական իրավուն-քի իրականացման հստակ մեխանիզմ,
- սահմանում է պետական մարմիններից եւ կազմակերպություննե-րից, ինչպես նաեւ հանրային նշանակության մարմիններից տեղե-կություններ պահանջելու եւ ստանալու կարգը: Նաեւ մարմինների կողմից մարդկանց տեղեկություն ստանալու դիմումները բավարա-րելու կարգը,
- փոխում է կառավարման համակարգում արմատավորված գաղտնի-ությունը,

- ապահովում է ոչ միայն տեղեկատվության, այլեւ պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը,
- սահմանում է ՏԱ բացառությունները,
- սահմանում է տեղեկություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման եւ պատասխանատվության մեխանիզմներ,
- ⌘սահմանում է վերահսկողության մեխանիզմ (օրինակ՝ օմբուդսմենի՝ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի միջոցով):

Սկզբունքներն այն ելակետային եւ հիմնարար դրույթներն են, որոնք արտահայտում են տեղեկատվության ազատության առավել ընդհանուր հատկանիշները եւ օրինաչափությունները: Սկզբունքները, որպես համընդհանուր գաղափարներ, ձեւավորվում եւ զարգանում են հասարակական հարաբերություններին զուգընթաց եւ ստանում են իրենց օրենսդրական ամրագրումը: Օրենսդրական ամրագրման միջոցով սկզբունքները ձեռք են բերում իշխանական բնույթ եւ դառնում պարտադիր: Նշենք, որ գլխավորը ոչ միայն սկզբունքների օրենսդրական ամրագրումն է, այլ նաեւ դրանց իրականացման համար հասարակական, քաղաքական համապատասխան նախադրյալների առկայությունը: Կարեւոր է նաեւ, որ սկզբունքները կրեն ոչ թե դեկլարատիվ բնույթ, այլ կենսագործվեն կյանքում:

**Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝**

**1. տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանումը,**

**2. տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը,**

**3. տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը,**

**4. հրապարակայնությունը**:

Այս սկզբունքներից յուրաքանչյուրն ունի իր որույն տեղը եւ կոչված է ապահովելու տեղեկատվության ազատության խնդիրների իրականացումը: Սրանք գործում են միասնական համակարգում եւ իրենց էությամբ ու նշանակությամբ միասնական են: ՏԱ բոլոր սկզբունքները բխում են միմյանցից, պայմանավորված են մեկը մյուսով, եւ ցանկացած սկզբունքի խախտում հանգեցնում է մեկ այլ սկզբունքի խախտման: Սա նշանակում է, որ ամեն

սկզբունք երաշխիք է մյուսի իրականացման համար, եւ այն միջոցները, որոնք ապահովում են որեւէ կոնկրետ սկզբունքի կիրառումը, միաժամանակ երաշխիք են սկզբունքների ամբողջ համակարգի համար: Անդրադառնանք ՏԱ սկզբունքներից երեքին՝ հրապարակայնությանը, տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովմանը եւ տեղեկատվության ազատության սահմանափակումների սպառիչ ցանկի սահմանմանը:

## Հրապարակայնության սկզբունքը

Այս սկզբունքն ապահովում է իշխանության բոլոր թեւերի թափանցիկ գործունեությունը եւ մարդկանց մասնակցությունը երկրի կառավարմանը: Իսկ առանց բավարար տեղեկատվության մարդիկ չեն կարող հսկել պետական մարմինների գործողությունները, ազդել որոշումների կայացման գործընթացի վրա:

ՏԱ հրապարակայնության սկզբունքի էությունը հետեւյալն է.

**վերջինս հաստատում է այն կանխավարկածը, որ պաշտոնական փաստաթղթերը հասարակական բնույթ ունեն եւ պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարեւոր հանրային կամ պետական շահ տեղեկությունը չհրապարակելու համար**:

Անգամ եթե քաղաքացին դիմում է գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից հասարակության հետաքրքրությունը, տեղյակ լինելու իրավունքը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը: Քաղաքացիների առջեւ պետք է բաց լինեն ոչ միայն պաշտոնական փաստաթղթերը, այլեւ օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների գործունեությունը: Որոշ երկրներ ընդունել են նաեւ բաց նիստերի մասին հատուկ օրենքներ, որոնք ապահովում են օրենսդիր եւ դատական մարմինների նիստերի թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Օրենսդիր եւ դատական իշխանությունների թափանցիկության, հրապարակայնության եւ հասարակության առջեւ բաց լինելու սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածով. «Ազգային ժողովի նիստերը դռնբաց են», 19-րդ հոդվածով.

**«Յուրաքանչյուր ոք ունի ....անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:**

Սահմանադրական այս նորմը ամրագրվել է նաեւ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում: Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

**«Գործերի դատական քննությունը դռնբաց է»:**

Սրան հավելում է նաեւ «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը.

**«Դատարանների վճիռներն ու դատավճիռները բոլոր դեպքերում հրապարակվում են դռնբաց նիստում»:**

Նմանապես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածում նշվում է.

**«Դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է»:**

Սահմանադրական դատարանի գործունեության հրապարակայնության սկզբունքն ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 6-րդ հոդվածում: Նույն օրենքի 2-րդ հոդվածը նշում է, որ Սահմանադրական դատարանի նիստերը դռնբաց են, իսկ ՍԴ որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն:

Այս ամենը կենսականորեն անհրաժեշտ է, որպեսզի հասարակական խնդիրները բոլորի կողմից քննարկման առարկա դառնան, իշխանությունների համար անօրինական գործողությունները թաքցնելու հնարավորությունները հասնեն նվազագույնի, որպեսզի պետական մարմինները հաշվետու լինեն հասարակության առջեւ յուրաքանչյուր որոշման ու գործողության համար, իսկ մարդիկ հասկանան, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ պետական մարմինների կողմից ընդունված որոշումների վրա, եւ վերջապես, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամ ակտիվորեն մասնակցի երկրի կառավարմանը:

Նկատելի է նաեւ, որ չափից ավելի հրապարակայնությունը կարող է խանգարել պետական պաշտոնյաների միջեւ կարծիքների ազատ եւ անկեղծ փոխանակմանը, եւ որ պաշտոնյաները չեն կարող արդյունավետ գործել թափանցիկ «ակվարիումում»: Այս փաստարկը կարեւոր է, սակայն այն պետք է հաշվեկշռել գաղտնապահության եւ հաշվետվության բացակայության հետ: Կարո՞ղ է արդյոք որեւէ մեկը լրջորեն պնդել, որ առանց հաշվետու լինելու որոշումներ ընդունելն առավել արդյունավետ է: Մի բան ակնհայտ է, որ հրապարակայնությունն իրական կարող է լինել միայն, եթե առկա է քաղաքական եւ սոցիալական կայունություն, քանի որ այս պարագայում կառավարության համար ավելի հեշտ է վստահել ինքն իրեն եւ իր ժողովրդին:

## Տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը

Այս սկզբունքից բխում է, որ պետական իշխանության մարմինները ՏԱ ապահովման նպատակով պարտավոր են հանրությանն ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ: Այս սկզբունքի իրականացմանն աջակցող միջոցներն են պետական մարմինների կողմից տեղեկությունների պարտադիր հրապարակումը, ՏԱ համար պատասխանատու անձի նշանակումը, փաստաթղթերի՝ մեկ միասնական կարգով հավաքումը եւ պահպանումը, պաշտոնատար անձանց իրազեկումը եւ կրթումը եւ այլն:

Այսպիսով, պետական մարմինները պարտավոր են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկատվության մատչելիությունը հեշտացնելու ուղղությամբ: Այս նպատակով ՏԱ մասին ՀՀ օրենքը սահմանում է, որ

**տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է պարբերաբար, սակայն առնվազն տարին մեկ անգամ պարտադիր հրապարակել որոշակի խումբ տեղեկություններ:**

Հրապարակում ասելով՝ օրենսդիրը հասկանում է տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, Ինտերնետով, ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը:

Սովորաբար իշխանությունները տարածում են այնպիսի տեղեկատվություն, որն իրե՛նց կարծիքով է կարեւոր, որ հասարակությունն իմանա: Որոշակի տեղեկատվություն տարածելու կառավարության պարտականությունը չպետք է շփոթել հասարակության կամ լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու կառավարության պարտավորության հետ, մի բան, որ շատ հաճախ է պատահում պրակտիկայում:

Եվրախորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականում նշվում է. «Պետական իշխանությունը պետք է իր սեփական նախաձեռնությամբ իրականացնի անհրաժեշտ միջոցառումներ իր մոտ պահվող պետական տեղեկատվության հրապարակման ուղղությամբ, երբ նշված տեղեկությունների տրամադրումը հանրային կառավարման թափանցիկությանը կամ վարչակարգերի ներսում արդյունավետությանը նպաստելու համար կարեւոր նշանակություն ունի, կամ խրախուսական

կլինի հանրային նշանակության խնդիրների լուծմանը հասարակության գիտակցված մասնակցությունը խթանելու համար»: Նման մասնակցությունը ժողովրդավարության եւ արդյունավետ կառավարման համար կարեւոր գործոն է: Ավելին, տեղեկատվության հրապարակումը, նախքան դրա տրամադրման վերաբերյալ դիմում-խնդրանքի ստացումը, ունի այն առավելությունը, որ պետական իշխանության մարմինը ստիպված չի լինի արձագանքել լրացուցիչ դիմումների, քանի որ պահանջվող տեղեկատվությունն արդեն մատչելի կլինի բոլորին: Ի դեպ, պետական իշխանության մարմինն ազատ է ընտրելու տեղեկատվության հրապարակման առավել հարմար տարբերակը (ցուցատախտակներ, պաշտոնական հրատարակություններ, ինտերնետային էջեր կամ այլ հանրամատչելի միջոցներ):

Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանվում է օրենքով: ՏԱ մասին ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

- հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
- բյուջեները,
- հաստիքացուցակները,
- պաշտոնատար անձանց անուն-ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
- մարմնի/կազմակերպության կողմից տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տրամադրման կարգը,
- տվյալ մարմնի՝ շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
- հասարակական միջոցառումների ծրագրերը,
- քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
- աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
- տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
- ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը եւ այլն:

Ի դեպ, պարտադիր եւ անհապաղ հրապարակման են ենթակա նաեւ դրանցում կատարվող փոփոխությունները:

Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է նաեւ իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

Օրենքի նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը անհապաղ հրապարակում է կամ այլ մատչելի միջոցով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

Տարբեր երկրներում օրենսդրությունը պետական մարմիններին պարտավորեցնում է հրապարակել նաեւ այլ տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ ԱՄՆ-ում Տեղեկատվության ազատության մասին ակտով ԱՄՆ-ի պետական մարմինները պարտավոր են «Federal Register»-ում հրապարակել իրենց ընդունած կամ պատրաստած յուրաքանչյուր փաստաթուղթ՝ քաղաքացիներին հնարավորություն տալով ծանոթանալ դրանց, անհրաժեշտության դեպքում պատճենել: Բացի այդ ԱՄՆ պետական հաստատությունները պետք է կանոնավոր կերպով հրապարակեն տեղեկատուներ անհրաժեշտ փաստաթղթերը հեշտությամբ գտնելու համար: Այս պահանջները մեր օրենսդրության մեջ ներառելը բխում է ՏԱ ապահովման շահերից:

Բացի անհրաժեշտ տեղեկատվություն հրապարակելու պահանջից, օրենսդրությունը մատչելիությունն ապահովելու եւս մեկ միջոց է նախատեսում: Տեղեկատվություն տրամադրելու գործընթացն արդյունավետ իրականացնելու համար յուրաքանչյուր պետական մարմնում պետք է նշանակվի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ: Վերջինս տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը, անհրաժեշտության դեպքում օգնում է նաեւ դիմում գրել: Պատասխանատու անձը նաեւ մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

## Հարցեր լսարանին

**1.** Եթե դուք լինեիք ՏԱ մասին օրենքի հեղինակը, ի՞նչ հիմնական կետեր կներառեիք օրենքում: Գործող օրենքի ո՞ր դրույթները կշտկեիք, ո՞ր դրույթները կհանեիք եւ այլն: Օգտագործեք Տեղեկատվության ազատության մոդելային օրենքը՝ www.article19.org:

**2.** Դասախոսությունում նշված երկու սկզբունքներից բացի նշեք այլ սկզբունքներ, որոնք կարեւոր են տեղեկատվության մատչելիության առումով:

**3.** Պետական մարմիններում առկա տեղեկատվության որոշ տեսակներ ուղղակիորեն ազդում են անհատների վրա: Դրանք կարող են առնչվել հետեւյալ ոլորտներին.

- քաղաքականություն,
- սոցիալական ապահովություն,
- առողջապահություն,
- կրթություն,
- շրջակա միջավայր,
- ներդրումների քաղաքականություն,
- անվտանգություն,
- արդարադատություն,
- շարունակեք այս ցանկը:

Հաշվի առնելով այս ցանկը՝ նշեք այն տեղեկությունները, որոնք առկա են պետական մարմիններում եւ հասարակությունը շահագրգռված է իմանալ:

## ՏԱ սահմանափակումների սպառիչ ցանկի սահմանումը

Ինչպես սահմանում են ՏԱ միջազգային չափանիշները՝ տեղեկատվության մատչելիությունը պետք է լինի կանոն, իսկ գաղտնիությունը՝ բացառություն այն դեպքերում, երբ գերակայում են այլ օրինական շահեր: Սահմանափակումները պետք է հստակ ամրագրվեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակարգում եւ ուղղված լինեն օրինական շահ(եր)ի պաշտպանությանը: Խոսքի եւ տեղեկատվության ազատությունը հռչակող Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում բերվում են այս իրավունքների սահմանափակման հիմքերը, որոնք են.

**1.** Հասարակական շահերի պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության, հասարակական անվտանգության, առողջության կամ բարոյականության պաշտպանության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու նպատակ):

**2.** Այլոց իրավունքների պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ:

**3.** Դատական իշխանության հեղինակության եւ անկողմնակալության համար անհրաժեշտ սահմանափակումներ:

Ինչպես արդեն նշվեց, տեղեկատվության ազատության ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով: Այն պետք է անհրաժեշտ լինի հոդվածում տեղ գտած նպատակներից որեւէ մեկի պաշտպանության համար, այսինքն լինի արդարացված: Եվ, վերջապես, սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավար հասարակության համար: **Բացարձակ սահմանափակումն անընդունելի է**:

Որպեսզի ճիշտ կիրառվեն վերը նշված սահմանափակումների հիմքերը, ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպությունն իր մշակած ՏԱ մոդելային օրենքում առաջարկում է երեք մասից բաղկացած ստուգում, որը պետք է կատարի պետական մարմինը տեղեկատվության տրամադրումը մերժելուց առաջ: Ըստ այդ ստուգման թեսթի՝ տեղեկատվությունը կարող է դասվել սահմանափակումների շարքը, եթե՝

- **տեղեկատվությունը վերաբերում է օրենքում շարադրված նպատակներին,**
- **բացահայտումը կարող է զգալի վնաս հասցնել այդ նպատակին,**
- **նպատակին հասցված վնասը կարող է շատ ավելի մեծ լինել, քան հասարակության հետաքրքրվածությունն այդ տեղեկատվության նկատմամբ:**

Երկրի պաշտպանությունը, ազգային անվտանգությունը, արտաքին հարաբերությունները, օրինականությունը եւ անձնական կյանքի անձեռնմխելիությունը եւ, ինչ-որ չափով, պետական մարմնի ներքին գործընթացները կարող են ՏԱ օրենսդրության բացառություն լինել: Օրինակ՝ Շվեդիայի Գաղտնիության մասին օրենքում նախատեսված են 250-ի հասնող բացառություններ, որոնց մի մասն առնչվում է օրենքով պաշտպանվող շահերին, իսկ մյուսները՝ փաստաթղթերի որոշակի խմբերի: Բացառությունների մեծ մասը սահմանվում է որոշակի ժամկետով՝ 70-ից մինչեւ երկու տարի: Որոշ այլ բացառություններ իրենց ուժը պահպանում են մինչեւ որոշակի դեպքի երեւան գալը: Տարբերակները շատ են եւ բազմազան, սակայն խնդրի կարեւորությունը աստիճանաբար մեծանում է քաղաքացիական հասարակություններում եւ տարածվում աշխարհով մեկ:

Ըստ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը

**«կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»**:

Սահմանափակումների սահմանադրական հիմքերն իրենց կարգավորումն են ստացել առանձին օրենքներում, ինչպես, օրինակ՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում:

ՏԱ կարեւորագույն սկզբունքներից է այն, որ այս սահմանափակումների շրջանակը պետք է սահմանված լինի օրենքում եւ լինի սպառիչ: Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են բոլոր ՏԱ սահմանափակումները: Դա այն տեղեկությունն է, որը՝

**1.** պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,

**2.** խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

**3.** պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,

**4.** բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

**5.** խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

Օրենքը նաեւ նշում է, որ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ: Ըստ վերը նշված հանձնարարականի՝ եթե սահմանափակումը վերաբերում է միայն տվյալ փաստաթղթում պարունակվող տեղեկատվության մի հատվածին, ապա մնացած հատվածը պետք է տրամադրվի սովորական կարգով: Անհրաժեշտ է պարզ մատնանշել, թե որ հատվածում եւ որքան տեղեկատվություն է ջնջվել: Եթե փաստաթուղթը տպագիր է, ապա ջնջումները կարելի է կատարել պատճենելիս սահմանափակման ենթակա հատվածը սպիտակ թղթով ծածկելու միջոցով: Էլեկտրոնային փաստաթղթի դեպքում պատճենի վրա պետք է հստակ նշվի, թե փաստաթղթի որ հատվածներն են ջնջվել, օրինակ՝ այդ հատվածները բաց (չգրված) թողնելով: Բացի այդ, փաստաթղթի տրամադրման ժամանակ չպետք է ընտրել այնպիսի ձեւ, որը կբացահայտի գաղտնի տեղեկատվությունը:[19]

19. Սահմանափակումների կիրառման տեղական դատական պրակտիկային ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ Շուշան Դոյդոյանի «Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը եւ «ՀՀԸ-ն ընդդեմ Մաքսային պետական կոմիտեի» դատական նախադեպը» հոդվածում, Ժուռնալիստիկա պրակ Գ, ԵՊՀ, 2002, 21-26 էջեր:

## Հարցեր լսարանին

**1.** Օգտագործելով սահմանափակումների՝ օրենքում նշված ցանկը, բերեք կոնկրետ օրինակներ այնպիսի տեղեկատվության, որը, ձեր կարծիքով, չպետք է տրամադրվի լրագրողին:

**2.** Ինչպիսի՞ն է սահմանափակումների՝ օրենքում ներկայացված ցանկը: Ձեր կարծիքով, այն կարիք ունի՞ կրճատման կամ ընդլայնման:

**3.** Ձեր կարծիքով կարո՞ղ են լինել դեպքեր, երբ այդ ցանկի մեջ մտնող տեղեկատվությունը անհրաժեշտ է գաղտնազերծել: Եթե այո, ապա ո՞ր դեպքերում: Դուք կարող եք ընտրություն կատարել հետեւյալ ցանկից.

- հանցագործության կատարում,
- կոռուպցիա,
- ազգային անվտանգությանը սպառնացող վտանգ,
- էկոլոգիական անվտանգություն,
- առողջապահական անվտանգություն,
- ցանկացած այլ վտանգ, որը սպառնում է տեղեկատվության ազատության օրինական սահմանափակումներով պաշտպանվող արժեքներին:

**4.** Տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշտոնյայի իրավական պաշտպանությունը:

Բերեք իշխանության վատ աշխատանքի օրինակներ, որոնք կարող են իրավունք տալ պաշտոնյաներին հանրությանն ասել ճշմարտությունը, նույնիսկ եթե դա դեմ է իր գերատեսչության շահին կամ կարող է բացահայտել պետական գաղտնիք: Քննարկեք կոնկրետ դեպքեր (ջրի աղտոտվածություն, օդային ավազանի աղտոտվածություն, կոռուպցիայի օրինակ, համաճարակների բռնկում եւ այլն):

## Տեղեկություն ստանալու կարգը. տեղեկություն ստանալու հարցում

Առանցքային է այն հարցը, թե ովքեր ունեն տեղեկություն ստանալու եւ տեղեկություն ստանալու հարցում ներկայացնելու իրավունք: Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությամբ տեղեկություն ստանալու իրավունքը յուրաքանչյուրի՝ ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց իրավունքն է՝ անկախ նրանից՝ քաղաքացի է, օտարերկրացի, թե քաղաքացիություն չունեցող անձ: Այս իմաստով հետաքրքիր է Կանադայի ՏԱ մասին օրենքի ձեւակերպումը, որի համաձայն տեղեկություն ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, ով ֆիզիկապես գտնվում է Կանադայում: Սա վերաբերում է նաեւ կազմակերպություններին:

**ՀՀ-ում յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմելու եւ տեղեկություն տնօրինողներից պահանջելու տեղեկություններ: «ՏԱ մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:**

Հոդվածից պարզ է դառնում, որ մարդիկ ունեն ոչ միայն տվյալ տեղեկատվությանը ծանոթանալու կամ տվյալ փաստաթղթում առկա տեղեկությունը ստանալու իրավունք, այլեւ տվյալ պաշտոնական փաստաթղթի պատճենը ստանալու իրավունք: Ընդ որում, Օրենքը տեղեկություն հասկացության բավականին ընդգրկուն շրջանակ է ուրվագծում: Ըստ Օրենքի 3-րդ հոդվածի՝

**տեղեկություն են համարվում անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալները՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):**

Կարեւոր է, որ Օրենքը տեղեկություն է դիտում ոչ միայն ավանդական կրիչի վրա առկա տվյալները, այլեւ չի դնում կրիչի որեւէ սահմանափակում՝ էլեկտրոնային, թե ֆիզիկական:

Տեղեկությունը ստանալու համար նախ պետք է հարցումով դիմել տեղեկատվություն տնօրինողին: Հարցումը տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա

ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմումն է: Օրենքի ձեւակերպումից երեւում է, որ հարցումը կարող է լինել գրավոր կամ բանավոր:

Գործնականում նախընտրելի է հարցումի գրավոր տարբերակը, ինչի դեպքում խախտված իրավունքի վերականգնման հնարավորությունները մեծանում են: Օրենքը նշում է, որ դիմողը պարտավոր չէ հիմնավորել իր հարցումը:

Օրենքը տեղեկություն ստանալու գրավոր եւ բանավոր հարցումին մի քանի պահանջներ է ներկայացնում.

**Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի եւ պարունակի դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության կամ աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ նրա անվանումը, գտնվելու վայրը)**:

**Բանավոր հարցումով դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը**:

Հարցումին ներկայացվող՝ վերը նշված պահանջները չբավարարելու դեպքում հարցումը կարող է վերացվել կամ դրան ընդհանրապես ընթացք չի տրվի: Գրավոր եւ անստորագիր հարցումը ենթակա է ոչնչացման:

Մարմինները առանձնահատուկ վերաբերմունք պետք է դրսեւորեն այն դիմողների հանդեպ, որոնք ունեն արատներ, հաշմանդամ են կամ ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված՝ կարող են դժվարություններ ունենալ հարցումը ներկայացնելիս: Եվրախորհրդի հանձնարարականի 4-րդ եւ 5-րդ պարագրաֆներում նշվում է, որ պետական մարմինը հնարավորինս պետք է օգտակար լինի տվյալ դիմողին, օգնի նրան ճիշտ ձեւակերպել իր հարցումը: Բացի այդ, հատուկ դեպքերում (հաշմանդամ կամ անգրագետ մարդիկ, տարիքավորներ, լեզվին չտիրապետող օտարերկրացիներ եւ այլն), երբ դիմողներն առանց օգնության ի վիճակի չեն ընկալել տվյալ փաստաթուղթը, իշխանությունները պետք է հնարավորության եւ տրամաբանության սահմաններում օգնեն նրանց: Իհարկե, տեղեկատվության ընկալման հարցում օգնություն ցուցաբերելը չի ներառում փաստաթղթերը թարգմանելու պարտականություն կամ բարդ տեխնիկական կամ իրավական խորհրդատվության տրամադրում:

## Տեղեկատվություն տնօրինողներ

Տարբեր երկրներում տեղեկատվություն տնօրինողների շրջանակը խիստ բազմազան է: Օրինակ` ԱՄՆ-ում Տեղեկատվության ազատության դաշնային օրենքը վերաբերում է բացառապես դաշնային իշխանության գործադիր թեւին: Մինչդեռ ԱՄՆ-ի շատ նահանգներ դաշնային օրենքը լրացնում են սեփական ՏԱ օրենքներով, որոնցում ՏԱ սկզբունքները տարածվում են նաեւ նահանգային եւ տեղական իշխանությունների վրա: Իռլանդիայում, ինչպես նաեւ մի շարք այլ երկրներում Տեղեկատվության ազատության մասին օրենքը տարածվում է ոչ միայն գործադիր, այլեւ տեղական իշխանության եւ 50 տոկոսից ավելի պետական բաժնեմաս ունեցող եւ նույնիսկ պետական պատվերներ ստացած մասնավոր ընկերությունների վրա (վերջինս կարեւոր է մասնավորապես քաղաքացիական հասարակության այն խմբերի համար, որոնք նպատակ ունեն հսկել պետական գնումները): Օրենքի դրույթները պետական սեփականությամբ ընկերությունների վրա տարածելը հիմնավորվում է նրանով, որ դրանք հանրային սեփականություն են, ունեն «խառը» գործառույթներ եւ հասարակությունում ունեն կարեւոր դեր:

ՀՀ Օրենքի գործողությունը, ըստ 3-րդ հոդվածի, տարածվում է հետեւյալ մարմինների եւ կազմակերպությունների վրա, որոնք եւ դիտվում են որպես տեղեկատվություն տնօրինողներ: Դրանք են`

- պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական հիմնարկները,
- բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները,
- հանրային նշանակության կազմակերպությունները,
- դրանց պաշտոնատար անձինք:

Ինչու՞ է հատկապես կարեւորվում հանրային նշանակության մարմինները սույն օրենքում ներառելը: Ավանդաբար տեղեկություն ստանալու իրավունքը կապվում է վերը նշված առաջին 4 կետերում ընդգրկված մարմիններից տեղեկություն ստանալու խնդրի հետ, քանի որ Տեղեկատվության ազատությունը կոչված է ապահովելու պետական իշխանության թափանցիկությունը: Սակայն աստիճանաբար պետությունը հասարակական մի շարք կարեւոր ոլորտների (էներգետիկա, տրանսպորտ, կապ, ջրամատակարարում եւ այլն) շահագործումն ու կառավարումը փոխանցում է մասնավոր սեկտորին: Սրանով այս ոլորտներին առնչվող տեղեկատվությունն ա-

մենեւին չի կորցնում իր կարեւորությունն ու անհրաժեշտությունը մարդկանց համար: Այդ իսկ պատճառով օրենքի հեղինակները գնացել են համարձակ ճանապարհով՝ օրենքը տարածելով նաեւ հանրային նշանակության մասնավոր ընկերությունների վրա: Ըստ Օրենքի՝ դրանք բաժանվում են 2 խմբի.

**ա)** Հանրային նշանակության մասնավոր ընկերությունների վրա, որոնք են շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերությունները: Որո՞նք են մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող, եթե նա որպես մատակարար կամ սպառող՝

- չունի մրցակից կամ չի հանդիպում որեւէ էական մրցակցության,
- իրացման ծավալներով գրավում է տվյալ ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը»:

**բ)** Երկրորդ խումբն են կազմում առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, առեւտրի, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները: Դրանք են, օրինակ, մասնավոր բուհերը, դպրոցները, հիվանդանոցները, որոնք եւս պարտավոր են տեղեկատվություն տրամադրել մարդկանց:

## Տեղեկություն ստանալու հարցումին պատասխանելու կարգը եւ ժամկետները

Հարցումները պատասխանվում են հետեւյալ ժամկետներում եւ կարգով:

**Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Բանավոր հարցման պատասխանը տրվում է այն դեպքում, երբ՝**

**1.** պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը,

**2.** անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվության տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը,

**3.** անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվության տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

**Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցումում նշված նյութական կրիչով՝ թղթի, տեսաձայնաժապավենի, դիսկետի կամ այլ կրիչի վրա: Եթե հարցումում նշված չէ նյութական կրիչը, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցումին պատասխանելու համար սահմանված ժամկետում, ապա գրավոր հարցումի պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:**

Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

**1.** Եթե գրավոր հարցումում նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում,

**2.** եթե գրավոր դիմումում նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին դիմողին տեղեկացվում է հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում,

**3.** եթե հարցումում նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Սակայն

հետաձգման մասին 5-օրյա ժամկետում անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը: Հետաձգումը հիմնավորելը կարեւոր պայման է, քանի որ բացառում է պատասխանի կամայական հետաձգումը:

Հանձնարարականում նշվում է, որ եթե մարմինը չունի անհրաժեշտ պաշտոնական փաստաթուղթը, ապա պետք է հնարավորության դեպքում դիմողին ուղղություն ցույց տալ դեպի համապատասխան մարմին, որը տիրապետում է տեղեկատվությանը: ՀՀ Օրենքը նշում է, որ այն դեպքերում, երբ տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա 5-օրյա ժամկետում պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այն տեղեկատվություն տնօրինողի, այդ թվում՝ արխիվի գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Եթե տեղեկատվություն տնօրինողն ունի փնտրվող տեղեկատվության միայն մի մասը, ապա նա այն տալիս է դիմողին, միաժամանակ հնարավորության դեպքում նշում է այն տեղեկատվություն տնօրինողի գտնվելու վայրը, որտեղ դիմողը կարող է գտնել իր փնտրած տվյալների մյուս մասը:

Օրենքը նախատեսում է վճարների գանձում տեղեկատվության տրամադրման դեպքում: Վճար չի գանձվում միայն օրենքով սահմանված դեպքերում:[20]

**Տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.**

**1.** բանավոր հարցումներին պատասխանելիս,

**2.** մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս: (Այսպիսով, տպագրված կամ պատճենահանված տեղեկատվության 11 էջից սկսած գանձվում է վճար):

**3.** Տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս,

**4.** օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս: (Դրանք այն տեղեկություններն են, որոնց հրապարակումը կարող է կանխել պետա-

20. Օրինակ՝ ԱՄՆ-ում պետական շատ մարմիններ տեղեկատվության մեծ մասը տրամադրում են անվճար: Ավելի ծավալուն նյութերի դիմաց գանձվում է վճար, սակայն այն սովորաբար չի գերազանցում ծախսածածկումը:

կան եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը):

Եթե մարմինը կամ կազմակերպությունը տրամադրել է ոչ հավաստի կամ ոչ լրիվ տեղեկություններ, ապա նա դիմողի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է անվճար տրամադրել ճշգրտված տեղեկությունը:

## Հարցեր լսարանին

**1.** Նշեք այն պետական եւ հանրային կազմակերպությունների տեսակները, որոնց վրա պետք է տարածվի ՏԱ մասին օրենքը:

**2.** Ո՞վ կարող է դիմել տեղեկատվություն տնօրինողներին տեղեկություն ստանալու համար: Ի՞նչ պատճառով այդ տեղեկությունները կարող են անհրաժեշտ լինել նրանց:

**3.** Ո՞ր դեպքերում կարելի է դիմել բանավոր հարցումով, ո՞ր դեպքերում՝ գրավոր:

**4.** Օգտագործելով հավելված 2-ում բերված հարցման օրինակելի ձեւը՝ դիմեք որեւէ պետական մարմնի տեղեկություն ստանալու հարցումով, եւ ստացված պատասխանի(ների) հիման վրա պատրաստեք լրագրողական նյութ:

**5.** Ո՞ր տեղեկությունները պարտադիր պետք է հրապարակվեն հանրային եւ պետական մարմինների կողմից: Բերեք օրինակներ:

## Տեղեկության տրամադրման մերժումը, մերժման հիմքերը եւ կարգը

Օրենքում հստակ սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերն ու կարգը: Նշենք նաեւ, որ մերժումը հիմնավորելը տեղեկատվություն տնօրինողի պարտականությունն է:

ՏԱ Օրենքում հստակ սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերն ու կարգը` չինովնիկներին զրկելով կամայականորեն մերժելու հնարավորությունից: Հետեւյալ հանգամանքները չեն կարող տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմք լինել.

- անհարմարություն կպատճառի պաշտոնատար անձին կամ գերատեսչությանը,
- գերատեսչությանը կներկայացնի ոչ շահեկան լույսի տակ,
- դիմողի գործը չէ,
- տրամադրվող տեղեկատվությունը կարող է թյուր ընկալվել դիմողի կամ ԶԼՄ-ի կողմից:

**Մերժումը պետք է լինի միայն գրավոր, որում պետք է հստակ հիմնավորված լինի մերժումը` դիմողին տեղեկացնելով մերժման հիմքերը` հղում անելով օրենքով սահմանված այն կոնկրետ բացառությանը, որին առնչվում է պահանջվող տեղեկատվությունը` նշելով, թե օրենքի որ դրույթի համապատասխան է մերժվում տվյալ տեղեկության տրամադրումը**:

Տեղեկատվություն տնօրինողը կարող է նաեւ չպատասխանել բանավոր հարցումին, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է իր հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի (հասարակական անվտանգությանը, մարդու առողջությանը սպառնացող վտանգ):

Գրավոր հարցումով պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողը **5-օրյա ժամկետում** այդ մասին գրավոր հայտնում է դիմողին` նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ` բողոքարկման կարգը:

## Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը

ՏԱ մասին օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տրամադրել տեղեկությունը 2 հիմքով՝

**ա) Օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում,**

**բ) Տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում**:

8-րդ հոդվածով սահմանվում են տեղեկատվության ազատության օրինական սահմանափակումները: Դա այն տեղեկությունն է, որը.

**1.** պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,

**2.** խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

**3.** պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,

**4.** բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

**5.** խախտում է հեղինակային եւ հարակից իրավունքը:

Այսպիսով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել վերոնշյալ կենսական շահերից որեւէ մեկին:

Սակայն այս սկզբունքը եւս բացարձակ չէ, եւ օրենքը նախատեսում է նաեւ այնպիսի դեպքեր, երբ տեղեկության տրամադրումն ընդհանրապես չի կարող մերժվել, նույնիսկ եթե այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք (8-րդ հոդվածի 3-րդ կետ): Դրանք այն դեպքերն են, երբ տեղեկությունը.

**ա)** վերաբերում է քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային աղետներին եւ դրանց հետեւանքներին,

**բ)** ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության, շրջակա միջավայրի պաշտպա-

նության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առեւտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը,

**գ)** տեղեկությունը չտրամադրելը բացասաբար ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

ՏԱ շատ օրենքներ սահմանում են, որ այն դեպքերում, երբ տեղեկատվության միայն մի մասը կարող է տրամադրվել, պետական մարմինները պարտավոր են տալ փաստաթղթի պատճենը, որից հանված է հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը, եւ ոչ թե ընդհանրապես մերժեն դիմումը: ՏԱ մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն տնօրինողը պարտավոր է տեղեկություն տրամադրել մնացած մասի վերաբերյալ:

## Հարցեր լսարանին

**1.** Ձեզ սովորաբար ի՞նչ պատճառաբանություններով են պաշտոնյաները մերժում տեղեկատվություն տալ: Կազմեք ամենահաճախ հանդիպող մերժման հիմքերի մոտավոր ցանկը:

**2.** Ներկայացված հիմքերից որո՞նք են, ձեր կարծիքով, օրինական: Ինչու՞:

**3.** Արդյո՞ք ՏԱ մասին օրենքում նշված տեղեկություն ստանալու հարցումը մերժելու հիմքերը սպառիչ են: Բերեք այլ հիմքեր:

**4.** Ի՞նչ առաջարկություններ ունեք նշված հիմքերն ավելի հստակեցնելու ուղղությամբ:

**5.** Յուրաքանչյուր հիմքի համար բերեք մեկական գործնական օրինակ:

## Տեղեկատվության ազատության արտադատական եւ դատական պաշտպանությունը

«Տեղեկատվութան ազատության մասին» ՀՀ օրենքի կարեւոր դրույթներից մեկը մերժումը բողոքարկելու ընթացակարգն է: Այն նախատեսում է մի մեխանիզմ, որով տեղեկատվություն ստանալու իրավունքի անօրինական սահմանափակումները կամ ՏԱ այլ խախտումները կարող են դառնալ անկախ քննության առարկա: Առանց այս երաշխիքի ՏԱ օրենսդրության արդյունավետությունը խիստ նվազում է:

Ինչպես սահմանվում է Եվրոպայի խորհրդի հանձնարարականի 9-րդ բաժնում՝

**հայցողը, ում պաշտոնական փաստաթղթից օգտվելու հայտը մասամբ կամ ամբողջովին մերժվել է կամ չի ընդունվել կամ չի քննարկվել սահմանված ժամկետում, պետք է հնարավորություն ունենա օգտվել վերանայման կարգից՝ դատարանում կամ օրենքով սահմանված մեկ այլ անկախ եւ անկողմնակալ ատյանում: Ի դեպ, վերանայման ընթացակարգը պետք է լինի արագ եւ ոչ թանկ:**

Այս պահանջներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ ՏԱ օրենսդրության մեջ: Օրենսդրությամբ սահմանվում է պաշտպանության երեք ձեւ՝ վերանայում վերադասության կարգով, դատական, ինչպես նաեւ պետական լիազորված մարմին, որ է՝ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

Որոշ պետական համակարգերում վերանայման ներքին ընթացակարգը համարվում է պարտադիր միջանկյալ քայլ՝ նախքան դատարանում կամ այլ անկախ մարմիններում հարցը բողոքարկելը: Բողոքը հղվում է խախտումը թույլ տված մարմնի վերադասին: Քաղաքացիները կարող են բողոքել՝ մարմնից պահանջելով ներքին կարգով վերանայել մերժումը: Եթե վերադասը ուժի մեջ է թողնում մերժումը, քաղաքացին, որպես հաջորդ քայլ, կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանին կամ ուղղակի դատարան: Ի դեպ, այս մարմիններին կարող է դիմել նաեւ առանց վերադասության կագով բողոքարկելու:

**Այսպիսով, բողոքարկման երկրորդ փուլը պետական լիազորված անկախ մարմնին դիմելն է**: ՀՀ-ում այդ լիազորություններով օժտված է օմբուդսմենը՝ մարդու իրավունքների պաշտպանը, որի լիազորությունների մեջ է մտնում քննել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձնաց կողմից ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված մարդու եւ

քաղաքացու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները՝ համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի: Ի դեպ, պաշտպանն ունի միայն խախտումը թույլ տված մարմնին խախտումը վերացնելու մասին առաջարկությամբ կամ միջնորդությամբ հանդես գալու լիազորություն: Այս առաջարկությունը, սակայն, չունի պարտադիր բնույթ (հոդված 15-րդ):

Մարդու իրավունքների պաշտպանի արդյունավետ գործողության համար պետք է նրան վերապահվի նաեւ մարդու իրավունքների խախտման գործում մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ մեղադրանք առաջադրելու լիազորություն: Ինչպես նաեւ, իր լիազորությունները արդյունավետ կատարելու համար մարդու իրավունքների պաշտպանը պետք է զերծ մնա քաղաքական ու տնտեսական ցանկացած ճնշումներից, ուստի պետք է քաղաքական եւ ֆինանսական իրական անկախություն ունենա: Ի դեպ, որոշ երկրներում մարդու իրավունքների պաշտպանը կամ տեղեկատվության ազատության հանձնակատարը համարվում են տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման միակ եւ վերջնական օղակ: ՏԱ միջազգային պրակտիկան, այնուամենայնիվ, զարգանում է այն գաղափարով, որ տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտի գոյությունն անհրաժեշտ է այս իրավունքի պատշաճ պաշտպանության համար:

**Որպես այլընտրանք, բողոքարկման երկրորդ փուլը կարող է իրացվել դատական համակարգի միջոցով**:

Դատարանի վրա է դրված մարդու իրավունքների պաշպանության առաքելությունը: Ի դեպ, քանի որ ըստ Սահմանադրության մարդիկ ունեն իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունք, հետեւաբար դատարան կարող են դիմել առանց պաշտպանության առաջին երկու ձեւերին դիմելու: Որոշ երկրներում օմբուդսմենն իր հերթին իրավունք ունի բողոքն ուղարկել դատարան:

Նշենք, որ ՏԱ մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ մի քանի դատական նախադեպեր են սկիզբ առել ինչպես Երեւանում, այնպես էլ մարզերում: Ի դեպ, դատարան դիմել են եւ՛ հասարակական կազմակերպությունները, եւ՛ անհատ քաղաքացիները, եւ՛ լրագրողները: Փորձը, սակայն, ցույց է տալիս, որ առայժմ դատական համակարգում այնքան էլ լավ չեն տիրապետում ՏԱ մասին օրենսդրության հիմնական դրույթներին, ինչը հանգեցնում է իրավունքի ոչ պատշաճ պաշտպանության: Դատարանի նկատմամբ վստահությունը եւ արդար դատարանի առկայությունը մարդու իրավունքների պաշտպանության բացառիկ երաշխիք է: Դատական իշխանությունը հատկապես մամուլի ազատության երաշխիքներն ապահովելու նպատակով կա-

րող է դառնալ իշխանության գործադիր եւ օրենսդիր թեւերի միջեւ հակակշիռ, որպեսզի վերջիններս չսահմանափակեն տեղեկատվության ազատությունը կամ մատչելիությունը կախման մեջ չդնեն որեւէ մեկի սուբյեկտիվ ցանկությունից: Դատարանները պետք է թերահավատորեն վերաբերվեն տեղեկատվության մատչելիությունը եւ լրահավաքության իրավունքը սահմանափակելու՝ պետական մարմինների պահանջներին: Ժողովրդավարական հասարակության մեջ դատական համակարգը ստուգող դեր է կատարում գործադիր եւ օրենսդիր մարմինների նկատմամբ, որպեսզի վերջիններս կամայականորեն չզրկեն մարդկանց տեղեկատվություն ստանալու հնարավորությունից եւ ազատությունից:

## Հարցեր լսարանին

**1.** Ինչպե՞ս եք դուք սովորաբար վարվում, երբ խախտում են տեղեկություն ստանալու ձեր իրավունքը (ժամանակին չեն պատասխանում, մերժում են տրամադրել տեղեկություն եւ այլն):

**2.** Ձեր լրագրողական պրակտիկայից բերեք օրինակներ, երբ խախտել են տեղեկություն ստանալու ձեր իրավունքը:

**3.** Ընտրեք այդ դեպքերից մի քանիսը, բողոքարկեք վերադասին եւ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին:

**4.** Ընտրեք մեկ գործ իրավունքի դատական պաշտպանություն սկսելու նպատակով:

## Տեղեկատվության ազատության պաշտպանության արեւմտյան երկրների փորձը

Քանի որ ՀՀ-ում ՏԱ իրավական դաշտը եւ պրատիկան դեռեւս զարգացման վաղ փուլում են, այս իմաստով խիստ կարեւորվում է ՏԱ զարգացած ավանդույթներ ունեցող երկրների փորձի ուսումնասիրումը, մասնավորապես՝ այս իրավունքի պաշտպանության մեխանիզմների ոլորտում: Այդ իսկ նպատակով կանդրադառնանք տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության՝ մի քանի երկրների փորձին:

ՏԱ հանձնակատար կամ հանձնաժողովներ են գործում գրեթե բոլոր արեւմտյան երկրներում: Այդ մարմինները հատուկ ստեղծվել են ՏԱ բողոքներն ուսումնասիրելու նպատակով (Ավստրալիա, Կանադա, Ֆրանսիա, Շվեդիա, ԱՄՆ): Այդ մարմինների որոշումները կարող են բողոքարկվել դատարան: Ֆրանսիայում գոյություն ունի պաշտոնական փաստաթղթերի մատչելիության հատուկ Հանձնաժողով (Commission d'acces aux documents administratifs (CADA): Այն ստեղծվել եւ գործում է Ֆրանսիայում 1978թ. հուլիսի 17-ին ընդունված ՏԱ մասին օրենքի 5-րդ հոդվածով: Հանձնաժողովն արդեն 27 տարի է՝ հետեւում է կառավարության գործունեության թափանցիկությանը: Այն ուսումնասիրում է տեղեկատվության մատչելիության հետ կապված բողոքներն ու դժգոհությունները: Պրոբլեմների մեծ մասը հենց այստեղ էլ լուծում է ստանում: Մերժումը դատարանում գանգատարկելուց առաջ անհրաժեշտ է իմանալ CADA-ի կարծիքը: Սովորաբար պետական մարմինները համաձայնում են CADA-ի հետ, որն անկախ խորհրդատվական մարմին է: Հանձնաժողովը տեղեկություն ստանալու իրավունքը պաշտպանելու երեք մեխանիզմ է կիրառում.

**1.** Խորհրդատվություն՝ այսինքն գործադիր իշխանության ցանկացած մարմին կարող է դիմել հանձնաժողովին՝ այս կամ այն փաստաթղթի մատչելիության վերաբերյալ մեկնաբանություններ խնդրելով: Հանձնաժողովի տված կարծիքը պարտադիր գործողության ուժ չունի, բայց հիմնականում հաշվի է առնվում:

**2.** Յուրաքանչյուր անձ, ում մերժել են տեղեկություն տրամադրել կամ մեկամսյա ժամկետում պատասխան չեն տվել, կարող է դիմել հանձնաժողովին, որպեսզի վերջինս արտահայտի իր կարծիքը պահանջվող փաստաթղթի մատչելիության վերաբերյալ: Ի դեպ, հանձնաժողովին դիմելը պարտադիր է դատարան դիմելուց առաջ: Հանձնաժողովը միջամտելու լայն լիազորություններ ունի: Այն իրավասու է կառավարությունից պահանջել իրեն տրամադրել վիճելի փաստաթղթերը եւ ցանկացած այլ

անհրաժեշտ տեղեկատվություն: Եթե հանձնաժողովը որոշում է, որ տվյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի այն հայցողին, ապա կառավարությունը կարող է, բայց պարտադրված չէ տրամադրել այն: Եթե կառավարությունը հանձնաժողովի դրական կածիքից հետո էլ համառում է, ապա քաղաքացին իր իրավունքը պաշտպանելու համար պետք է դիմի դատարան:

**3.** Հանձնաժողովը հսկող դեր է կատարում կառավարության գործունեությունն ավելի թափանցիկ դարձնելու համար: Տարեկան հաշվետվություններում հրապարակում է այն մարմինների անունները, որոնք խախտում են տեղեկատվության ազատությունը: Միաժամանակ մասնակցում է տեղեկատվության մատչելիությանը վերաբերող օրենքների եւ իրավական ակտերի մշակմանը՝ համագործակցելով ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանության հետ: Նշենք, որ հանձնաժողովը տարեկան քննում է 4500 դիմում:[21]

Կանադայում եւս գործում է Տեղեկատվության հանձնակատարի անկախ ինստիտուտը, որը լուրջ հակակշիռ է կառավարության եւ պետական պաշտոնյաների կամայականությունների դեմ: Այն իրականացնում է քաղաքացիների տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքի պաշտպանությունը եւ գործում է «Տեղեկատվության մատչելիության մասին» ֆեդերալ օրենքի (1983թ.) հիման վրա: Կանադայի Տեղեկատվության հանձնակատարը պետական մարմին է եւ մյուս պետական մարմինների գործողությունները վերահսկելու լիազորություն ունի: Թեեւ այն սահմանափակվում է միայն հանձնարարականներ տալու լիազորությամբ, որոնք չունեն պարտադիր ուժ: Եթե պետական մարմինը չի կատարում հանձնակատարի հանձնարարականը, ապա վերջինս դիմում է դատարան: Ընդ որում, քաղաքացին չի կարող անմիջապես դիմել դատարան: Դրա կարիքը թերեւս չկա էլ, քանի որ, ինչպես ցույց է տալիս հանձնակատարի գրասենյակի վիճակագրությունը, ապա գործերի 99%-ը այստեղ էլ լուծում է ստանում հանձնարարականների միջոցով:

Ի դեպ, քիչ չեն նաեւ այն դեպքերը, երբ պետական մարմիններն են դատի տալիս հանձնակատարին՝ չհամաձայնելով նրա հանձնարարականների հետ:

2002թ., օրինակ, կառավարությունը 35 անգամ հանձնակատարին դատի է տվել՝ վիճարկելու նրա հանձնարարականներն ուղղված վարչապետին,

21.Հարցազրույց Ֆրանսիայի Վարչական փաստաթղթերի մատչելիության հանձնաժողովի (Comission d'acce`s aux documents administratifs) գլխավոր քարտուղար ժան Պատրիկ Լերենդուի հետ, 2002թ. հուլիս, Ֆրանսիա (հարցազրույցը՝ Լիանա Սայադյանի):

պաշտպանության նախարարին, ազգային անվտանգության նախարարին եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաների: Կանադայի Յանձնակատարի կարեւորագույն լիազորությունն այն է, որ նա կարող է հետաքննություն իրականացնել: Նրա պահանջով պաշտոնյաները պետք է ներկայանան եւ ցուցմունք տան, իրենց հետ ներկայացնեն փաստաթղթեր:

Առանցքային նշանակություն ունի նաեւ հանձնակատարի ինստիտուտի քաղաքական եւ ֆինանսական անկախության հարցը: Այս մարմինը ֆինանսավորվում է պետական բյուջեից, բայց հաշվետվություն է ներկայացնում պառլամենտին, ասել է թե՝ հասարակության ընտրյալների առաջ: Կառավարությունը չի կարող վերահսկել հանձնակատարի գործողությունները: Անկախության երաշխիք է նաեւ հանձնակատարի նշանակման կարգը: Նա նշանակվում է Կառավարության կողմից, բայց նրա նշանակումը հաստատում է պառլամենտը: Կառավարության նշանակած անձին պառլամենտը կարող է պարզապես չընդունել: Յանձնակատարը ոչ թե պետական պաշտոնյա է, այլ պառլամենտական: Նա նշանակվում է 7 տարի ժամկետով: Այս ժամանակահատվածում նրան ոչ ոք չի կարող պաշտոնանկ անել: Նրան կարող են վերանշանակել, բայց չեն կարող ազատել պաշտոնից: Յանձնակատարին կարող է ազատել միայն պառլամենտը, այն էլ միայն այն դեպքում, երբ կատարել է քրեորեն պատժելի արարք: Անկախության մեկ այլ կարեւոր երաշխիք է անկախ դատարանը:[22]

Յուրահատուկ է ԱՄՆ-ի Քոննեքթիքութ նահանգի օրինակը: Այստեղ գործում է Միացյալ Նահանգներում ինֆորմացիայի ազատության միակ նահանգային պետական հանձնաժողովը: Նահանգային իշխանություններն են վճարում հանձնաժողովի գործունեության համար, իսկ վերջինս լիազորված է պատժել այն պաշտոնյաներին, որոնք խախտում են հասարակության յուրաքանչյուր անդամի՝ տեղեկություն ստանալու իրավունքը: Այս նահանգային հանձնաժողովը գործում է արդեն 30 տարի[23]՝ տարեկան կայացնելով ավելի քան 700 որոշում, ստանալով 10.000 հեռախոսային բողոք ու 13.000 ինտերնետային ահազանգ ոչ միայն լրատվամիջոցների ներկայացուցիչների, այլեւ հասարակության բոլոր անդամների կողմից (իրականում լրատվամիջոցներից եկած բողոքները կազմում են ընդամենը 15 տոկոսը, 85 տոկոսը գալիս է անհատ քաղաքացիներից »א կազմակերպություններից):

«Մեր նահանգային կառավարիչը բավականին հիմար է եղել, որ

22. Յարցազրույց Կանադայի տեղեկատվության հանձնակատարի ավագ իրավախորհրդատու Լերի Բերենդի հետ: Յարցազրույցը Շ. Դոյդոյանի, 2002թ. մարտ, Օտտավա:

23. Freedom of Information Commission- սա է հանձնաժողովի պաշտոնական անվանումը, որը ստեղծվել է 1975 թ. մայիսի 3-ին:

համաձայնել է ֆինանսավորել մի մարմնի, որն իրեն պետք է վնասի»,- ասում է հանձնաժողովի նախագահ Միտչել Փիըրլմենը:[24] Ի տարբերություն նախորդ երկուսի՝ այս հանձնաժողովի որոշումները պարտադիր բնույթ ունեն եւ կարող են բողոքարկվել միայն դատական կարգով:

## Պատասխանատվություն տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար

Տեղեկություն տրամադրելուց ապօրինի հրաժարվելու կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաեւ տեղեկատվության ազատության օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

**Տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար մեղավոր անձանց նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն**:

2003թ. դեկտեմբերի 1-ին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվություն է սահմանվում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար:

**«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:**

**Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:**

24. Հատված հարցազրույցից, 8 մարտի, 2000, Հարթֆորդ, Քոննեքթիքութ, ԱՄՆ: Հարցազրույցը՝Շ. Դոյդոյանի:

ՀՀ Քրեական նոր օրենսգրքի 148 հոդվածով՝ «Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը» քրեական պատասխանատվություն է նախատեսվում պաշտոնատար անձանց կողմից տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար: Սահմանվում է.

**«Անձին տեղեկություն ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին եւ օրինական շահերին վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից մինչեւ 400-ապատիկի չափով»:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը եւս մեկ կարեւորագույն երաշխիք է ապահովում այս իրավունքի ապահովման համար: Օրենքը թեեւ սահմանում է հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները, սակայն միաժամանակ պաշտպանության տակ է առնում գաղտնիք պարունակող տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշտոնյաներին եւ բացառում է նրանց վարչական կամ քրեական պատասխանատվությունը, եթե այդ տեղեկատվության հրապարակմամբ կարող են կանխվել հասարակությանը սպառնացող վտանգը, մարդկանց անվտանգությանն ու առողջությանը, շրջակա միջավայրին սպառնացող աղետները, մի խոսքով՝ գաղտնիքի հրապարակումն օգուտ է բերում հասարակությանը: Համաձայն ՏԱ մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝ 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունների հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն: Դա այն տեղեկությունն է, որը.

- վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,
- չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Անդրադառնանք նաեւ լրագրողի՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար սահմանվող պատասխանատվությանը, ինչը խիստ կարեւոր է ոչ միայն լրագրողի, այլեւ ողջ հասարակության տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության համար: ՀՀ Քրեական օրենսգրքի 164 հոդվածով՝

**«Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը» պատասխանատվություն է սահմանվում նրա գործունեությանը խոչընդոտելու դեպքում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով: Եթե նույն արարքը կատարել է պաշտոնական անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ ենթակա է պատասխանատվության ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա:**

## Պետական գաղտնիքի իրավական կարգավորումը ՀՀ-ում

Այսօր հատկապես կարեւորվում է այս հարցի ուսումնասիրությունը, քանի որ կառավարությունններն ավելի հաճախ են դիմում ազգային անվտանգության շահին՝ լրագրողների խոսքի եւ տեղեկատվության ազատության իրավունքների սահմանափակումները հիմնավորելու նպատակով: Ամերիկյան լրագրողները բազմիցս իրենց բողոքի ձայն են բարձրացրել նախագահ Բուշի կողմից Հայրենասիրության ակտի ստորագրման փաստի առիթով, որը լրջորեն սահմանափակում է լրագրողների խոսքի ազատության իրավունքը ԱՄՆ-ում՝ արգելելով լուսաբանել ազգային անվտանգությանն ու հասարակական շահին առնչվող կարեւորագույն հարցեր՝ վերահսկելով լրատվամիջոցների կողմից Իրաքյան պատերազմի լուսաբանումը:

Իրաքում զոհված ամերիկացի զինվորների մասին տվյալները՝ մասնավորապես նրանց լուսանկարները երկար ժամանակ գաղտնի էին պահվում մինչ այն օրը, երբ «Ազգային անվտանգության արխիվներ» ՀԿ-ին հաջողվեց շահել դատական գործը[25]՝ հիմնվելով ԱՄՆ Տեղեկատվության ազատության

25. Գործը հարուցվել է Կոլումբիայի օկրուգի ֆեդերալ դատարանում: Գործ հ. 1:04-cv-01697 (EGS).

մասին Ակտի վրա, որով դատարանը պարտավորեցրեց բացահայտել Իրաքից ԱՄՆ բերվող զինվորների՝ ամերիկյան դրոշով ծածկված դիակների լուսանկարները[26]: Դրանից հետո միայն Պենտագոնին այլ բան չէր մնում, քան 2004 թ. ապրիլին հրապարակել զոհված զինվորների իրական տվյալներն ու լուսանկարները: Հայաստանում առայժմ չի եղել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի միջոցով պետական գաղտնիք համարվող տեղեկատվության բացահայտման դեպք, քանի որ ՏԱ մասին օրենքը միայն 2 տարվա կյանք ունի եւ այն դեռ պետք է գործարկել այս նպատակով: Անդրադառնանք ՀՀ-ում հարցի իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Իշխանության գործունեության հրապարակայնության սկզբունքից է բխում պաշտոնական փաստաթղթերի բաց լինելու կանխավարկածը: Դրանք պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարեւոր հանրային կամ պետական շահ տեղեկությունը չհրապարակելու համար: Անգամ եթե լրագրողը, քաղաքացին դիմում է պետական գաղտնիք համարվող տեղեկություն ստանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից այդ տեղեկատվությունը ստանալու հասարակական շահն ու հետաքրքրությունը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը:

26. www.nsarchive.org

## Պետական գաղտնիքի հասկացությունը

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի 10-րդ հոդվածը, ինչպես նաեւ խոսքի ազատությունը սահմանող միջազգային այլ փաստաթղթեր նշում են, որ խոսքի եւ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել պետական անվտանգության պաշտպանության անհրաժեշտությամբ, որը դիտվում է որպես այս հիմնարար իրավունքների սահմանափակման օրինական հիմք:

Պետական գաղտնիքի ինստիտուտն ընդունել են բոլոր երկրները: Սա լիովին հասկանալի եւ տրամաբանական է, քանի որ պետության անվտանգության տեսանկյունից պետական գաղտնիքի հրապարակումը կարող է իրական սպառնալիք դառնալ:

Հայաստանում պետական գաղտնիքի մատչելիության սահմանափակումը ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված խոսքի եւ տեղեկատվության ազատության իրավունքից բացառություն է: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը նշում է, որ

**«իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:**

Ուստի այս սահմանափակումը նախատեսված է նաեւ ՀՀ Սահմանադրությամբ:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը (ընդ. դեկտեմբերի 30, 1996թ) սահմանում է պետական գաղտնիք հասկացությունը, կարգավորում է ՀՀ անվտանգության, քաղաքացիների, հասարակության եւ պետության կենսական շահերի ապահովման նպատակով որոշակի բնագավառի տեղեկություններ պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքը դասելու, դրանք գաղտնազերծելու եւ պաշտպանելու կապակցությամբ ծագող հարաբերությունները եւ այլն: Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է «պետական գաղտնիք» հասկացությունը.

**«Պետական գաղտնիքը ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել ՀՀ անվտանգության համար»: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է ծառայողական գաղտնիք հասկացությունը. դրանք վերը նշված ոլորտների այն տեղեկություններ են, որոնք «պահպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է վնաս հասցնել ՀՀ անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը»**:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն արգելում է պետական գաղտնիքի հրապարակումը՝ որպես քրեորեն պատժելի արարք.

**«Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաեւ այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը»:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասը նույնպես արգելում է հրապարակել այնպիսի տեղեկատվություն, որը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք:

Թեեւ օրենսդրությունն արգելում է պետական գաղտնիքի հրապարակումը, միեւնույն ժամանակ այն չի հստակեցնում «պետական գաղտնիք» հասկացության սահմանները, այլ միայն մեկ հոդվածով (հ. 2-րդ) տալիս է համապատասխան տեղեկությունների ընդհանուր ուրվագիծը: «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությունը «մշակում եւ հաստատում է պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը»:

Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի 173 որոշմամբ: Ցանկը պարունակում է 33 կետ, այնուամենայնիվ, այստեղ եւս որոշակիացված չեն պետական գաղտնիքի սահմանները: Օրինակ՝ վերոհիշյալ ցանկի 3-րդ կետի համաձայն՝ պետական գաղտնիք են համարվում «զորքերի զարգաց-

ման թվի մասին տեղեկությունները»: Հարց է ծագում՝ արդյո՞ք նոր զորակոչ-վածների թվի մասին տեղեկատվությունը մտնում է «պետական գաղտնիք» հասկացության տակ: Եթե այո, ապա ինչո՞ւ ենք այդ մասին տվյալներ հրապարակում ԶԼՄ-ը կամ ոլորտի պաշտոնյաները:

Անհասկանալի է նաեւ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկում տեղ գտած 12-րդ կետի ձեւակերպումը, համաձայն որի՝ պետական գաղտնիք է համարվում «ՀՀ սահմանապահ զորքերի էությունը բացահայտող տեղեկությունները»: «Զորքերի էությունը» չափազանց լայն հասկացություն է: Ցանկացած տեղեկատվություն, որն առնչվում է սահմանապահ զորքերին, կարող է համարվել վերջինիս էությունը բացահայտող: 18-րդ կետի համաձայն՝ պետական գաղտնիք է համարվում նաեւ «հիդրոօդերեւութաբանական եւ գեոֆիզիակայի բնագավառում աշխատանքի արդյունքները բացահայտող տեղեկությունները»: Այստեղ եւս չի որոշակիացվում, թե հատկապես ո՞ր աշխատանքների արդյունքները բացահայտող տեղեկություններն են դասվում պետական գաղտնիքի շարքը:

Գոյություն ունի պետական գաղտնիքի 3 աստիճան՝ **գաղտնի, հույժ գաղտնի եւ հատուկ կարեւորության՝ կախված գաղտնի տեղեկությունների կարեւորությունից, բնույթից եւ դրանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների ծավալից (Օրենքի 4-րդ հոդված)**: Գաղտնիության աստիճաններին համապատասխան գաղտնիք համարվող փաստաթղթերի վրա դրվում են «գաղտնի», «հույժ գաղտնի» եւ «հատուկ կարեւորության» մակագրությունները:

Խոսքի ազատության պաշտպանության միջազգային ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպությունն իր մշակած տեղեկատվության ազատության մասին օրինակելի օրենքում[27] նշում է երեք մասից բաղկացած թեսթի մասին, որն առաջարկվում է պետական պաշտոնյաներին կիրառել այն բոլոր դեպքերում, երբ տվյալ տեղեկատվությունը գաղտնագրելու հարց է ծագում: Թեսթի համաձայն՝ առաջին փուլում պաշտոնյան պետք է պարզի, թե արդյոք տվյալ տեղեկությունն առնչվում է Տեղեկատվության ազատության մասին օրենքով սահմանված օրինական բացառություններին (օրինակ՝ ազգային անվտանգության կամ անձի անձնական կյանքի գաղտնիության պահպանության շահ): Երկրորդ փուլում պետք է պարզել, թե արդյոք տեղեկության բացահայտումն էական վնաս կհասցնի՞ այդ նպատակին: Եվ վերջում, այնուամենայնիվ, պետք է պարզել՝ արդյո՞ք այդ տեղեկության հրապարակումն ավելի մեծ օգուտ չի տա հասարակությանը, քան այն գաղտնի պահելը:

27. www.article19.org

ենթադրենք, պաշտպանության նախարարության պաշտոնյան քաղաքացուց հարցում է ստանում՝ տրամադրել տեղեկություններ բանակի համար ձեռք բերված զինվորական հագուստի որակի եւ գնի մասին: Արդյո՞ք այս տեղեկությունն առնչվում է օրինական նպատակներից որեւէ մեկին: Այո, հարցումն առնչվում է ազգային անվտանգության շահին: Բայց միթե դրա հրապարակումը կվնասի այդ շահին: Այս կոնկրետ օրինակում վստահաբար կարելի է բացասական պատասխան տալ: Հրապարակումը չի կարող վնասել երկրի անվտանգությանը: Վատագույն դեպքում թշնամին կիմանա, որ մեր բանակում զինվորները վատորակ հագուստ են հագնում:

Հիշենք, որ խոսքը գնում է էական, ոչ թե ընդհանրապես վնասի մասին: Կառավարության պարտականությունն է ապացուցել, որ տվյալ տեղեկության հրապարակմամբ իսկապես կարող է պատճառվել էական վնաս: Տեղեկություն ստանալու հարցումով դիմողի պարտականությունը չէ ապացուցել, որ հրապարակումն անվտանգ է: Եթե հարցումով դիմողը խնդրել է տրամադրել զենքի որակի մասին տեղեկություն, ապա սա արդեն կարող է էական վնաս պատճարել անվտանգությանը, հատկապես մեր քաղաքական վիճակում գտնվող երկրի համար, սակայն թեսթի երրորդ փուլի համաձայն՝ դեռ պետք է հստակեցնել, թե արդյոք դրա հրապարակումն ավելի կարեւոր չէ, քան այն գաղտնի պահելը: Ասենք, հրապարակումը կարող է ավելի օգտակար լինել ազգային անվտանգության պաշտպանության համար, կամ դրա շնորհիվ կմեծանա հասարակական ճնշումը անորակ զենքերը փոխարինել որակյալով, կամ ցույց կտա պաշտպանության նպատակով կատարվող գնումների անարդյունավետությունը, որն ի վերջո կհանգեցնի գնումների գործընթացի բարեփոխման: Այս ամենի շնորհիվ ազգային անվտանգությունը ոչ թե կտուժի, այլ միայն կշահի:

Նշենք, որ պետության կողմից հաճախ սխալ է մեկնաբանվում «հանրային հետաքրքրություն» հասկացությունը. հասարակությունը հետաքրքրված է դրանով: սա դեռ ամբողջական մեկնաբանում չէ: Այն պետք է հատկապես տարբերակել հասարակական հետաքրքրասիրությունից: «Հանրային հետաքրքրություն» նշանակում է, որ հանրությունը տեղեկատվության հրապարակման հետեւանքով շահելու է:

Միացյալ նահանգներում, օրինակ, իշխանությունները հրաժարվեցին հանրությանը տրամադրել Համաշխարհային առեւտրի կենտրոնում տեղադրված գաղտնի տեսախցիկների նկարահանած կադրերը Սեպտեմբերի 11-ին՝ դրանք համարելով չափազանց ցավոտ զոհվածների ընտանիքների անդամների համար: Մեկ տարի անց, այնուամենայնիվ, դրանք հրապարակվեցին, քանի որ որոշվեց, որ գերակշռող հանրային շահը պահանջում է իմանալ, թե

ինչպես են մարդիկ տեղահանվել շենքից: Եւ դա հետագայում շենքերը ճիշտ կառուցելու համար լավ դաս եղավ:

Երբ տեղեկատվության միայն մի մասը կարող է տրամադրվել, պետական մարմինները պարտավոր են տալ փաստաթղթի պատճենը, որից հանված է հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը, եւ ոչ թե ընդհանրապես մերժեն տեղ. ստանալու հարցումը: ՏԱ շատ օրենքներ սահմանում են, որ այն դեպքերում, երբ տեղեկատվության միայն մի մասը կարող է տրամադրվել, պետական մարմինները պարտավոր են տալ փաստաթղթի պատճենը, որից հանված է հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը, եւ ոչ թե ընդհանրապես մերժեն դիմումը: ՏԱ մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է պետական գաղտնիք համարվող տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն տնօրինողը պարտավոր է տեղեկություն տրամադրել մնացած մասի վերաբերյալ, ոչ թե ընդհանրապես մերժել տվյալ փաստաթղթի տրամադրումը: ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության պաշտոնական ինտերնետային էջում կարելի է տեսնել նման բազմաթիվ փաստաթղթեր, որոնք մատչելի են հասարակությանը մասնակի: Գաղտնազերծված փաստաթղթերի չգաղտնազերծված հատվածները խնամքով ջնջված են, այնպես որ փաստաթուղթն ստացողը չի կարող կարդալ դրանք[28]:

28. Տես ԿՀՎ-ի պաշտոնական ինտերնետային էջը http://www.foia.cia.gov/records.asp:

## Պետական գաղտնիքի պահպանման ժամկետները

Պետական գաղտնիքն անժամկետ չէ. օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ գաղտնիքների գաղտնազերծման համար: «Պետական գաղտնիքի» մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է, թե որքան ժամանակով կարող է տվյալ տեղեկությունը գաղտնիք համարվել: Այսպես՝

**«հատուկ կարեւորության» եւ «հույժ գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող տեղեկությունները իրենց գաղտնիությունը պահպանում են մինչեւ 30 տարի, ընդ որում՝ անհրաժեշտության դեպքում կառավարությունը կարող է սահմանել գաղտնագրման առավել երկար ժամկետ: «Գաղտնի» գաղտնիության աստիճան ունցող տեղեկություններն իրենց գաղտնիությունը պահպանում են մինչեւ 10 տարի: Պետական մարմինները կարող են երկարացնել գաղտնագրված տեղեկությունների պահպանության՝ նախկինում սահմանված ժամկետները, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամանակով: Կառավարության որոշմամբ դրանք կարող են գաղտնազերծվել նաեւ ժամկետից շուտ:**

Գաղտնազերծումից հետո տեղեկությունները պետք է եռամսյա ժամկետում հանձնվեն ՀՀ պետական արխիվի պահպանությանը, որտեղ արդեն դրանք մատչելի են դառնում հասարակության բոլոր անդամների համար: «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ Արխիվային փաստաթղթերից օգտվողն իրավունք ունի ազատ որոնելու եւ ուսումնասիրության նպատակով պետական եւ համայնքային արխիվներից ստանալու արխիվային փաստաթղթեր:

Անհասկանալի է այն միտքը, թե ինչու պետք է արխիվային փաստաթուղթ փնտրողը հիմնավորի, թե ինչու է իրեն անհրաժեշտ տվյալ արխիվային փաստաթուղթը: Օրենքից բխում է, որ արխիվային փաստաթուղթ կարելի է ձեռք բերել միայն մեկ նպատակով, այն է՝ ուսումնասիրություն կատարելը: Սա միանշանակ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի անհիմն սահմանափակում է:

Նշենք, որ օրինակ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության պաշտոնական ինտերնետային էջում յուրաքանչյուր ոք կարող է գտնել բոլոր այն պետական գաղտնիքները, որոնք արդեն գաղտնազերծվել են (http://www.foia.cia.gov/records.asp): Իսկ, ահա, Ռուսաստանի անվտանգության ֆեդերալ ծառայության ինտերնետային էջում՝ http://www.fsb.ru/ ընդհանրապես տեղակայված չեն գաղտնագրված տեղեկություններ:

## Տեղեկատվություն, որ չի կարող գաղտնագրվել

Պետական գաղտնիքի մասին օրենքները սահմանում են նաեւ այն տեղեկություններիի ցանկը, որոնք չեն կարող գաղտնագրվել եւ համարվել պետական գաղտնիք: Սովորաբար պետական գաղտնիքի կարգավիճակին չեն կարող համապատասխանել. հասարակական բնույթ ունեցող տեղեկությունները, որոնք, ասենք, առնչվում են հասարակության անվտանգությանն ու բարօրությանը սպառնացող աղետներին, շրջակա միջավայրի, առողջապահության, կրթության, մշակույթի եւ գյուղատնտեսության վիճակին, մարդու իրավունքների ոտնահարումներին, պետական հաստատու թյունների եւ պաշտոնատար անձանց անօրինական գործողություններին: Վերջինս (պաշտոնատար անձանց անօրինական գործողություններին առնչվող տեղեկությունները գաղտնագրելու անթույլատրելիությունը) բացակայում է մեր օրենքում, որով խիստ նվազում է իշխանության մարմինների վրա հասարակական հսկողություն իրականացնելու հնարավորությունը:

**«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել՝**

**ա)** քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, աղետների, ինչպես նաեւ տարերային (ներառյալ պաշտոնապես կանխատեսվող) աղետների, դրանց հետեւանքների մասին տեղեկությունները,

**բ)** տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առեւտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկություններ,

**գ)** քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների սահմանափակման փաստերի, իրավախախտումների եւ սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների մասին տեղեկություններ,

**դ)** այն տեղեկությունները, որոնք եթե դասվեն պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական ազդեցություն կունենան Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական եւ ճյուղային ծրագրերի իրականացման վրա:

Օրենսդրությունը ոչ միայն սահմանում է գաղտնագրման ոչ ենթակա տեղեկատվությունը, այլեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի

9-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնյաներին պարտավորեցնում է անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրել հետեւյալ խումբ տեղեկությունները, եթե դրանց համար դիմում են տվյալ պետական մարմնին: Դա այն տեղեկությունն է, որը՝

**1.** վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,

**2.** ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,

**3.** չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

ՏԱ օրենքի 7-րդ հդոդվածի համաձայն էլ Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

Այսինքն, վերոնշյալ տեղեկություններն անհապաղ հրապարակելու պահանջ է դրվում տեղեկություն տնօրինողի վրա՝ անկախ հարցումով դիմողի առկայությունից: Խնդիրը, սակայն, այն է, որ օրենսդրությամբ պատասխանատվություն չի նախատեսվում այս պարտավորությունը չկատարող պաշտոնյայի նկատմամբ: Մեր կարծիքով այս տեղեկությունները թաքցնող պետական պաշտոնյան պետք է կրի քրեական կամ վարչական պատասխանատվություն՝ կախված հասարակությանը եւ առանձին քաղաքացիներին պատճառված նյութական եւ բարոյական վնասի ծավալից:

## Պատասխանատվություն պետական գաղտնիքի հրապարակման համար

Պետական գաղտնիքի հրապարակմամբ կարող է վնաս հասցվել երկրի անվտանգությանը, ուստի **պետական գաղտնիք հրապարակելը ՀՀ-ում քրեորեն պատժելի արարք** է: ՀՀ Քրեական օրենսգրքի 306-րդ հոդվածը՝ «Պետական գաղտնիք հրապարակելը» սահմանում է.

«Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ դիտավորությամբ հրապարակելն այն անձի կողմից, ով պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ուներ, եւ ում դա վստահված է եղել կամ հայտնի է դարձել ծառայության բերմամբ, եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները՝ պատժվում է կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

**2.** Պետական գաղտնիքն անզգուշությամբ հրապարակելը՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

**3.** Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Նախ, պարզենք՝ ինչ է նշանակում պետական գաղտնիքի հրապարակում: Հարցի պատասխանը տրվում է «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում՝

**«պետական գաղտնիքի հրապարակումը օրենքով գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցումն է, տրամադրումը, առաքումը, ինչպես նաեւ որեւէ ձեւով մատչելի դարձնելն է այն անձանց, ովքեր այդպիսի տեղեկություններին իրազեկ լինելու**

**իրավունք կամ սահմանված կարգով ծանոթանալու թույլտվություն չունեն»**:

Քանի որ պետական գաղտնիքի հրապարակումը քրեական պատասխանատվություն է առաջ բերում, հետեւաբար խիստ կարեւորվում է այն հարցը, թե ո՞վ պետք է պատասխանատվություն կրի պետական գաղտնիքի հրապարակման համար՝ լրագրո՞ղը, թե՞ պետական պաշտոնյան:

ՀՀ Քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածը նշում է, որ պետական գաղտնիքի հրապարակման համար պատասխանատվության ենթարկվում է այն անձը, ով պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ուներ, եւ ում դա վստահված է եղել կամ հայտնի է դարձել ծառայության բերմամբ: Որպես հանցագործության սուբյեկտ ու՞մ նկատի ունի օրենսդիրը այս հոդվածով:

Ո՞ւմ են վստահվում պետական գաղտնիք համարվող տեղեկությունները:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքը կարգավորում է պետական գաղտնիք համարվող տեղեկությունների մատչելիության ընթացակարգը: Հրապարակման համար պատասխանատվության կարող է ենթարկվել նա, ում գաղտնիքը հայտնի է դարձել ծառայության կամ աշխատանքի շնորհիվ: Ծառայության շնորհիվ հայտնի է դառնում միայն այն անձին, ով ունի համապատասխան լիազորություն: Խիստ անորոշ է ձեւակերպված «աշխատանքը», քանի որ այն լայն հասկացություն է եւ սկզբունքորեն դրա տակ կարելի է հասկանալ ցանկացած քաղաքացու պրոֆեսիոնալ գործունեության ցանկացած ձեւ, որի ընթացքում նրան հայտնի է դարձել պետական գաղտնիքը:

Սակայն պետք է ուշադրություն դարձնել «Պետական գաղտնիքի» մասին օրենքի 1-ին հոդվածին, որը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց վրա տարածվում է սույն օրենքի գործողությունը: Հոդվածը նշում է, որ օրենքի դրույթները ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների (անկախ սեփականության ձեւից), պաշտոնատար անձանց եւ քաղաքացիների կողմից, որոնք իրենց կարգավիճակով պարտավոր են կամ պարտավորություն են ստանձնել կատարել պետական գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Այս իմաստով կարեւոր է նաեւ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (2001, դեկտ. 4), որի 23-րդ հոդվածը որպես քաղաքացիական ծառայողի հիմնական պարտականություններից մեկը նշում է նաեւ պետական, ծառայողական եւ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը: Այսինքն՝ գաղտնիքը պահպանելը քաղաքացիական ծառա-

յողի պաշտոնական պարտականություններից է, որն անպայման ենթակա է կատարման:

«Պետական գաղտնիքի մասին» օրենքը նաեւ նշում է, որ պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները **«համարվում են ՀՀ սեփականությունը եւ պետական գաղտնիքը պահպանվում է պետության կողմից»:**

Օրենքի 19-րդ հոդվածով՝

**«պետական եւ ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովումն իրականացնում են այդպիսի գաղտնիք կազմող տեղեկություններ տնօրինող, դրանց օգտագործմամբ աշխատանքներ կատարող պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները՝ իրենց իրավասության սահմաններում եւ իրենց առջեւ դրված խնդիրներին համապատասխան»:**

Այս բոլոր նորմերը հիմնավորում են այն, որ պետական գաղտնիքի պաշտպանությունը դրված է պետության, պետական մարմինների ու պաշտոնատար անձանց վրա: Այս ցանկում քաղաքացիները, այդ թվում եւ լրագրողները ընդգրկված չեն: Այնուամենայնիվ, ինչպե՞ս պետք է վարվի լրագրողը, եթե իր մասնագիտական պարտականությունները կատարելիս իրեն հայտնի են դառնում պետական գաղտնիք համարվող տեղեկություններ:

Բավականին թերի ձեւակերպումներ է պարունակում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որը լրագրողներին պարտավորեցնում է չհրապարակել պետական գաղտնիք: «Ռադիոհեռուստատեսության մասին» օրենքի 24-րդ հոդվածի գ կետն արգելում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել «օրենքով պահպանվող պետական եւ այլ գաղտնիքներ հրապարակելու» նպատակով: Այս հոդվածը ԶԼՄ-ի համար երկու վտանգ է ներկայացնում: Նախ, թեպետ պետական գաղտնիքը պահպանելու պարտավորությունը օրենքով դրված է պետության վրա, սակայն վերը նշված դրույթով լրատվամիջոցներին է պարտավորեցվում պահպանել այն:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի 24-րդ հոդվածի մյուս թերությունն այն է, որ անհասկանալի է, թե ինչ ասել է «այլ գաղտնիքներ»: Եթե օրենսդիրը փորձ է արել օրենքով սահմանել խոսքի ազատության բոլոր հնարավոր սահմանափակումները երկիմաստ մեկնաբանությունները հետագայում բացառելու համար, ապա այս դեպքում միանգամայն անորոշ է, թե որոնք են «այլ գաղտնիքները» եւ որքան ընդարձակ կարող են դրանք մեկնաբանվել: Պետք է նշված լիներ «Օրենքով պահպանվող այլ գաղտ-

նիքներ», այսինքն պետք է պահպանվի միմիայն այն գաղտնիքը, որը սահմանվում եւ պահպանվում է օրենքով: Գաղտնիքների սպառիչ ցանկը սահմանվում է «տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում առկա թերի ձեւակերպումները, մեր կարծիքով, շտկվում են: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշվում են այն դեպքերը, երբ լրագրողը կամ լրատվական գործունեություն իրականացնողն ազատվում է պատասխանատվությունից, որոնց թվում նշվում է նաեւ հետեւյալը.

**«Օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով, կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել»:**

Հոդվածը պաշտպանությամբ է ապահովում բոլոր այն լրագրողներին, որոնք եթե պետական գաղտնիքը կամ օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկությունները ձեռք են բերել օրինական ճանապարհով (ասենք, հարցազրույցի ժամանակ, կամ նրանց տրվել է պաշտոնյայի կողմից), ապա դրա հրապարակման համար չեն կարող պատասխանատվություն կրել: Օրենքի պաշտպանությունն ավելի հեռուն է գնում՝ տալով իրական երաշխիքներ: Լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվությունից ազատվում է նույնիսկ այն դեպքում, **երբ տեղեկատվության գաղտնի լինելն ակնհայտ է եղել, եթե. «այդ տեղեկատվության տարածումը բխել է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունից...»** («ԶԼ մասին» օրենք», հոդված 9 կետ 3):

Այսպիսով, պետությունն ինքը պետք է ապահովի պետական գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանությունը: Գաղտնիքը բացահայտելու համար պատասխանատվություն կարող է կրել միայն գաղտնիքը կրողը, ով պաշտոնապես իրավունք է ստացել ձեռք բերել այդ գաղտնի տեղեկությունները եւ պարտավորվել է չբացահայտել:

Լրագրողին պետական գաղտնիք կարող է հայտնի դառնալ, ասենք, պետական ծառայողի հետ զրուցելիս: Վերջինս դիտավորյալ կամ անզգուշորեն կարող է լրագրողին պետական գաղտնիք հայտնել: Գաղտնիքը հետագայում հրապարակելու համար լրագրողը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Սակայն եթե այդ տեղեկությունները լրագրողը ձեռք է

բերել օրինական ճանապարհով, լրագրողի վրա չի դրվում պարտականություն ստուգել ստացված տեղեկատվության կարգավիճակը: Լրագրողը չի դասվում «Պետական գաղտնիքի» մասին օրենքի 1-ին հոդվածով սահմանված անձանց շարքը, որոնց վրա տարածվում է այդ օրենքի գործողությունը: Քաղաքացին, այդ թվում եւ լրագրողը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության պետական գաղտնիքի հրապարակման համար, եթե այն ձեռք է բերել օրինական ճանապարհով:

Պետությունը պարտավոր է պատշաճ պահպանել իր գաղտնիքները, եւ եթե լրագրողին հաջողվում է իմանալ որոշ գաղտնի տեղեկություններ, ապա պատասխանատվության պետք է ենթարկվի ինֆորմացիայի արտահոսքը թույլ տված պետական մարմինը կամ պաշտոնյան:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը լուրջ երաշխիք է պարունակում տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշտոնյաների համար: Արտահոսքը կամ հոսակորուստը, ինչպես սահմանում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքը՝ գաղտնիք կազմող տեղեկություններին իրազեկ լինելու իրավունք ունեցող, ինչպես նաեւ դրանց պահպանության համար պատասխանատու անձանց անփութության հետեւանքով այդպիսի տեղեկությունների արտահոսքն է կամ կորուստը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն նույնիկս եթե տեղեկատվությունը պարունակում է պետական գաղտնիք, այն ենթակա է տրամադրման եւ հրապարակման, եթե այդ տեղեկությունը.

**ա)** վերաբերում է քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային աղետներին եւ դրանց հետեւանքներին,

**բ)** ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առեւտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը,

**գ)** տեղեկությունը չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Միեւնույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ իրավասու պետական մարմինը կամ պաշտոնյան պարտավոր է հրապարակել կամ տրամադրել ինֆորմացիա քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի, ինչպես նաեւ աղետների, շրջակա միջավայրի

պաշտպանության, տնտեսության ընդհանուր վիճակի, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության մասին: Տվյալ դեպքում, նրանք ենթակա չեն պատասխանատվության ըստ օրենքի 14-րդ հոդվածի, քանի որ գործել են` ելնելով պետության եւ հասարակության շահերից:

Այսպիսով, արտահոսք թույլ տված պաշտոնյաները կամ միջազգային եզրաբանությամբ` **whistleblowers** պատշաճ պաշտպանված են ՀՀ օրենսդրությամբ, սակայն հարցն այն է, որ պաշտոնյաները ձեռնպահ են մնում գաղտնիքներ բացահայտելուց բաց աշխատելու մշակույթի բացակայության պատճառով: Օրինակ, եթե պաշտոնյան տեղյակ է, որ իր գերատեսչությունում կատարվել է քրեական հանցագործություն, կամ իր ղեկավարը չի կատարում իր օրինական պարտավորությունները, կամ իր մարմնի գործունեությունը սպառնում է հասարակության առողջությանը կամ շրջակա միջավայրին, պետք է պաշտոնյան բացահայտի՞, թե թաքցնի այս տեղեկությունները, քանի որ դրանք գաղտնիք են: Հարցին հրաշալի պատասխանում է հետեւյալ օրինակը (աղբյուրը` ԱՐՏԻԿԼ 19).

2003թ. սկզբին Քեթրին Գանը` Մեծ Բրիտանիայի կառավարության էլեկտրոնային լսումների կազմակերպության հաղորդակցության բաժանմունքի աշխատակիցը, ամերիկացի մի պաշտոնյայից էլեկտրոնային մի նամակի կրկնօրինակ է ստանում: Նամակում նշվում էր ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ պետությունների դիվանագետներին գաղտնալսելու ծրագրի մասին: Մեծ Բրիտանիան եւ ԱՄՆ-ը խիստ ցանկանում էին ստանալ Իրաք ներխուժելու գործողությունները թույլատրելու մասին Անվտանգության խորհրդի ռեզոլուցիան: Գանը ստանալով այս նամակը` այն տրամադրում է թերթերին` հրապարակման:

Այս պատմությունը լուրջ խնդիրներ էր առաջացնում երկու պետությունների համար: Գանն ընդունեց, որ ինքն է հրապարկել էլեկտրոնային նամակը, նրան մեղադրեցին լրտեսության մեջ: Սակայն 2004թ. փետրվարին նրա դեմ բերված մեղադրանքները հանվեցին: Խնդիրն այն էր, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն ավելի լուրջ խնդիրներ կունենար, եթե դատարանը նրան պարտադրեր ներկայացնել Իրաքի ներխուժման իրավական հիմնավորումներ: Չէ՞ որ Բեծ Բրիտանիայի բնակչության կեսը դեմ էր Իրաքի պատերազմին, հետեւաբար հավանականությունը խիստ փոքր էր, որ ժյուրին Գանին մեղավոր կճանաչեր: Քեթրին Գանը պաշտպանված չէր Անգլիական օրենքներով: Նա կորցրեց իր աշխատանքը եւ խուսափեց քրեական պատասխանատվությունից միայն այն պատճառով, որ կառավարությունը վախեցավ դրանից:

Պետական գաղտնիքի ինստիտուտը շատ հաճախ պարզապես խաղաթուղթ է ծառայում պետական պաշտոնյաների ձեռքին՝ տեղեկատվության մատչելիությունը սահմանափակելու նրանց մշտական ձգտումն իրականացնելու համար: Փաստեր քողարկելու ցանկությունը արդարացնում են ազգային անվտանգության պաշտպանությամբ: Անշուշտ, պետական գաղտնիքի բացահայտումը կարող է վտանգել պետության անվտանգությունը, սակայն վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ պաշտոնյաները դիմում են անվտանգության գործոնին, որպեսզի թաքցնեն տեղեկատվությունը:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությունը պատշաճ պաշտպանում է ինչպես պաշտոնյային, այնպես էլ լրագրողին, որոնք գործել են հասարակական կենսական շահերի պաշտպանության նկատառումով՝ հրապարակելով օրենքով պահպանվող գաղտնի տեղեկություններ:

## Հարցեր լսարանին

**1.** Արդյո՞ք ՀՀ օրենսդրությամբ բավարար չափով պաշտպանված է հասարակական շահի պաշպանության նպատակով տեղեկատվության արտահոսք թույլ տված պետական պաշտոնյան: ՀՀ ՏԱ օրենսդրությունը համեմատել ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպության մշակած ՏԱ մոդելային օրենքով սահմանված սկզբունքների հետ:

**2.** Ներկայացրեք մի իրավիճակ, երբ հանրային շահի պաշտպանության նկատառումով արդարացված է օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակումը:

# Լրագրողների հավատարմագրման իրավական կարգավորումը

Հավատարմագրման նպատակն է աջակցել լրագրողներին կատարել իրենց մասնագիտական գործունեությունը պետական մարմինների աշխատանքը լուսաբանելիս: Սրանից հետեւում է, որ հավատարմագրման գործընթացը ոչ թե լրացուցիչ սահմանափակումներ պետք է ստեղծի ստեղծել լրագրողների գործունեության համար, այլ օժանդակի նրանց կատարել իրենց աշխատանքը: Լրագրողի ազատությունը եւ իրավունքները չեն կարող կախման մեջ դրվել հավատարմագրման կարգերից: Եվրախորհրդի Նախարարների խորհրդի 1996 թ. (96)4 հանձնարարականի[29] 11-րդ սկզբունքի համաձայն՝ հավատարմագրումը չպետք է օգտագործվի լրագրողի տեղեկություն ստանալու իրավունքը սահմանափակելու նպատակով:

**Միջազգային չափանիշները նաեւ նշում են, որ հավատարմագրումը բացառապես տեխնիկական բնույթ պետք է կրի, այն կոչված է հեշտացնելու լրագրողների մուտքը պետական մարմիններ, տվյալ մարմնում լրագրողի աշխատանքը: Այն միայն լրագրողի ինքնությունը ճանաչելուն պետք է ծառայի եւ չպետք է բովանդակային բնույթ ունենա:**

## Հավատարմագրման հիմնական կանոնները

Հավատարմագրման իրավական կարգավորման հիմքերը տրված են «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ նոր օրենքի 6-րդ հոդվածում՝ «Լրագրողի հավատարմագրումը»: Այս հոդվածում տրվում են հավատարմագրման կարգի նվազագույն պայմանները, պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգի հիմնական սկզբունքները:

Կարեւոր է, սակայն, որ լրագրողի հավատարմագրման հիմնական սկզբունքները եւ պայմանները սահմանված են օրենքով եւ չեն թողնվել պետական մարմնի կարգավորմանը, որը կարող էր հանգեցնել անօրինական մերժումների եւ առանձին լրագրողների ու ԶԼՄ-ի հանդեպ խտրականության դրսեւորման: Կարեւոր սկզբունք է նաեւ այն, որ հավատարմագրման կարգ սահմանված չլինելը լրագրողի հավատարմագրումը մերժելու հիմք չի կարող լինել: Օրենքում տրված են հավատարմագրումը մերժելու սպառիչ հիմքերը՝ դրանով իսկ բացառելով հավատարմագրումը մերժելու կամայական

29. http://cm.coe.int/ta/rec/1996/96r4.html

հիմքերի կիրառումը: Հավատարմագրման կարգի սահմանված չլինելը նաեւ հիմք չի կարող դառնալ լրագրողին տեղեկատվության տրամադրումը մերժելու համար:

6-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է հավատարմագրման կարգերի հիմնական սկզբունքները եւ նշում, որ այդ կարգերում չպետք է սահմանվեն, իսկ սահմանվելու դեպքում իրավաբանական ուժ չեն կարող ունենալ այնպիսի դրույթներ, որոնք

**1.** կսահմանափակեն հավատարմագրված լրագրողի իրավունքը՝ մասնակցելու տվյալ մարմնի, դրա ստորաբաժանումների նիստերին, այլ միջոցառումներին, բացառությամբ դրանց դռնփակ լինելու դեպքերի,

**2.** կբացառեն տվյալ մարմնում անցկացվող միջոցառումների մասին լրագրողների՝ ողջամիտ ժամկետում տեղեկացված լինելը,

**3.** անհավասար պայմաններ կստեղծեն հավատարմագրված լրագրողների համար,

**4.** կսահմանափակեն լրագրողի՝ տեղեկատվություն ձեռք բերելու օրենքով սահմանված իրավունքները:

Օրենքը, սակայն, չի կարգավորում պետական մարմինների նիստերին լրագրողների մասնակցության եւ մարմինների գործունեության լուսաբանման հարցերը: Դրանք թողնված են ենթաօրենսդրական ակտով կարգավորմանը: Օրենքը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում հավատարմագրման օրինակելի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հրապարակայնության սկզբունքից է բխում, որ հավատարմագրման կարգերը պետք է հրապարակվեն եւ մատչելի դառնան հանրությանը եւ ԶԼՄ-ին մասնավորապես:

## Հավատարմագրման կարգը, մերժելու հիմքերը

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի համաձայն՝ հավատարմագրվելու համար լրատվական գործունեություն իրականացնողը պետք է դիմի տվյալ պետական մարմին: Պետական մարմինը պարտավոր է հնգօրյա ժամկետում հավատարմագրել լրագրողին:

Ովքե՞ր են համարվում «լրատվական գործունեություն իրականացնողներ»: Ըստ վերոնշյալ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի՝ **լրատվական գործունեություն իրականացնող համարվում են**

**«իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, որն իր անունից տարածում է լրատվության միջոց»:**

Նշենք նաեւ, որ նոր օրենքի համաձայն լրատվության միջոց են համարվում նաեւ ցանցային լրատվամիջոցները, որոնք օրենքով սահմանվում են որպես՝ «հանրային հեռահաղորդակցության ցանցով որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի եւ լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից, պահման ժամանակի տեւողությունից եւ այլ չափանիշներից»: Սրանից բխում է, որ հավատարմագրման համար պետական մարմիններ կարող են դիմել նաեւ ցանցային լրատվամիջոցները: «Լրատվական գործունեություն իրականացնող» հասկացության ձեւակերպումից բխում է նաեւ, որ հավատարմագրում կարող են ստանալ նաեւ «ազատ լրագրողները»՝ որպես լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձիք:

«Պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգի» 9-րդ կետի համաձայն՝ հավատարմագրման ենթակա են յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող ոչ ավելի, քան երկու լրագրող եւ տեսաձայնագրման երկու օպերատոր կամ լուսանկարիչ: Հավատարմագրում ստանալու համար լրատվական գործունեություն իրականացնողը գրությամբ պետք է դիմի տվյալ պետական մարմին՝ նշելով հավատարմագրման ներկայացվող լրագրողի ազգանունը, անունը, հայրանունը, նրա ներկայացրած լրատվության միջոցի անվանումը, ինչպես նաեւ լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի էլեկտրոնային հասցեները, հեռախոսների ու ֆաքսի համարները:

Օրինակելի կարգը այս տեղեկություններից բացի որեւէ այլ լրացուցիչ փաստաթուղթ չի պահանջում ներկայացնել: Լրատվամիջոցին, օրինակ, չի կա-

րող իր գրանցման կամ հաշվառման վկայական ներկայացնելու պահանջ ներկայացվել: Սակայն, օրինակ, Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2002 թվականի օգոստոսից գործող հավատարմագրման կարգը լրատվամիջոցից պահանջում է դիմումի հետ ներկայացնել նաեւ գրանցման վկայականի պատճենը: Կարծում ենք, որ ԿԸՀ-ն պետք է համապատասխան փոփոխություններ կատարի իր կարգում՝ այն օրինակելի Կարգի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Հավատարմագրումը մերժելու հիմքերը տրված են Օրինակելի կարգում, թեեւ դրանք պետք է սահմանվեին օրենքով՝ կամայականությունները բացառելու համար: Կարգը նախատեսում է հավատարմագրումը մերժելու մի շարք հիմքեր:

**Հավատարմագրումը մերժվում է, եթե լրատվական գործունեություն իրականացնողի դիմումը չի բովանդակում սահմանված տեղեկությունները կամ առկա է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու՝ Կարգի 13-րդ կետի 1-ին պարբերության 1-ին, 2-րդ կամ 3-րդ ենթակետերում նշված հիմքերից որեւէ մեկը:** Այսինքն, եթե՝

**1.** լրագրողը անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչվել դատական կարգով,

**2.** դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, եւ նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,

**3.** նա տարածել է պետական մարմնի գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանել իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով:

Կարծում ենք, որ Կարգի բացթողումներից մեկն այն է, որ այն թեեւ պարտավորեցնում է մարմնին հավատարմագրումը մերժելու դեպքում այդ մասին 5-օրյա ժամկետում տեղյակ պահել լրատվամիջոցին, սակայն չի պարտավորեցնում մերժման մասին գրության մեջ պարտադիր նշել մերժման օրինական հիմքը, ինչպես նաեւ բողոքարկման հնարավորության եւ կարգի մասին:

Նշենք նաեւ, որ եթե տվյալ պետական մարմնում հավատարմագրման կարգ սահմանված չէ, ապա դա հիմք չի կարող լինել լրագրողի հավատարմագրումը մերժելու համար:

## Հավատարմագրման ժամկետը

ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպության մշակած սկզբունքներում[30] նշվում է, որ հավատարմագրումը չպետք է խիստ սահմանափակ ժամկետով տրվի: Կարգը հավատարմագրման ժամկետ է սահմանում 1 տարին:

Ըստ Կարգի՝ դրանից պակաս ժամկետով հավատարմագրում կատարվում է միայն, եթե նման պահանջ ներկայացնում է լրատվական գործունեություն իրականացնողը իր դիմումով: Իսկ, օրինակ, Ազգային ժողովի գործող հավատարմագրման կարգի համաձայն՝ այստեղ հավատարմագրումն իրականացվում է ամեն գարնանային եւ աշնանային նստաշրջանը մեկ, ինչը մեր կարծիքով խիստ հաճախակի է: Կարծում ենք՝ գործնականում առավել նախընտրելի է, որ մեկ գումարման նստաշրջանի համար հավատարմագրում իրականացվի միայն մեկ անգամ՝ ավելորդ թղթարարությունից խուսափելու համար:

## Հավատարմագրված լրագրողի իրավունքները

Կարգի 15-րդ կետը սահմանում է հավատարմագրված լրագրողի իրավունքները: Այստեղ եւս առկա են մի քանի խնդիրներ, բացթողումներ: Առանցքային է այն, որ պետք է անպայման նշվի, որ կարգում սահմանվող իրավունքները չեն կարող դիտվել լրագրողի այլ իրավունքների իրացման բացառում, այսինքն՝ իրավունքների ներկայացվող ցանկը չի կարող սպառիչ համարվել:

Ըստ Կարգի՝ հավատարմագրված լրագրողն իրավունք ունի ստանալու լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվություն (սրանից բխու՞մ է, որ լրագրողը իրավունք չունի ստանալ այնպիսի տեղեկատվություն, որը չեն նախատեսել տրամադրել լրագրողներին, ինչն էական սահմանափակում կարող է լինել լրագրողի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման գործում):

Իրավունք ունի նախապես տեղեկացված լինել պետական մարմնի միջոցառումների անցկացման մասին եւ ծանոթանալ առկա տեղեկատու նյութերին, մասնակցելու պետական մարմնի միջոցառումներին, հավատարմագրված այլ լրագրողների հետ համահավասար օգտվելու հավատարմագրված լրագրողների համար ստեղծված պայմաններից:

Դրական է այն, որ կարգը չի անտեսում նաեւ ոչ հավատարմագրված լրագրողների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման հնարավորությունը: Նշվում է.

30. www.article19.org/docimages/1231htm

**«անկախ տվյալ մարմնում հավատարմագրված լինելու հանգամանքից՝ լրագրողներն իրավունք ունեն տեղեկատվության ազատության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել եւ ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկատվություն»**:

Կարգում չեն նշվում հավատարմագրված լրագրողի պարտականությունները: Հավատարմագրման կարգի սահմանված չլինելը տվյալ մարմնում չի կարող հիմք դառնալ օրենքով սահմանված կարգով լրագրողին տեղեկատվության տրամադրումը մերժելու համար: Սա բխում է տեղեկատվության ազատության սկզբունքից, որի համաձայն յուրաքանչյուր ոք՝ անկախ նրանից, դիմողը քաղաքացի է, լրագրող, թե օտարերկրացի, պետական մարմինը պարտավոր է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում դիմողին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

# Խտրականության բացառումը տարբեր ԶԼՄ ներկայացուցիչների նկատմամբ

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետը որոշակիորեն երաշխավորում է ԶԼՄ-ի ներկայացուցիչների նկատմամբ խտրականության դրսեւորումը: Այն նշում է, որ հավատարմագրման կարգում չպետք է սահմանվեն, իսկ սահմանվելու դեպքում իրավաբանական ուժ չունեն այնպիսի դրույթները, որոնք, օրինակ, «անհավասար պայմաններ կստեղծեն հավատարմագրված լրագրողների համար»:

6-րդ հոդվածի 7-րդ կետը եւս երաշխավորում է խտրականության բացառումը:

**«Հավատարմագրված բոլոր լրագրողների համար աշխատանքի պայմանները պետք է լինեն նրանց աշխատանքին նպաստող եւ ոչ խտրական՝ ողջամտության սահմաններում»:**

Նշվում է նաեւ, որ **լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվությունը հավատարմագրված բոլոր լրագրողներին պետք է տրամադրվի միաժամանակ, իսկ նախատեսվող միջոցառումների ճշգրիտ ժամանակի եւ վայրի մասին նրանք պետք է տեղեկացվեն դրանք սկսվելուց առաջ՝ ողջամիտ ժամկետում:**

Կարգի 3-րդ կետում սահմանվում է, որ պետական մարմինը որեւէ ձեւով, որեւէ եղանակով չպետք է իրականացնի հավատարմագրված լրագրողի մասնագիտական գործունեության գրաքննություն եւ պետք է հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովի ոչ խտրական պայմաններ, տեղեկատվությունը հավատարմագրված բոլոր լրագրողներին տրամադրի միաժամանակ: Նշվում է նաեւ, որ պետական մարմինը հավատարմագրված բոլոր լրագրողներին հնարավորին չափ շուտ տեղեկացնում է պետական մարմնի միջոցառումների ժամանակի եւ անցկացման վայրի մասին:

Վերոնշյալ դրույթները խիստ կարեւոր գործնական նշանակություն ունեն, քանի որ պրակտիկայում բազմաթիվ են խտրականության ամենատարբեր դրսեւորումները. երբ ընդդիմադիր մամուլի ներկայացուցիչները դիտավորյալ չեն տեղեկացվում, հրավիրվում այս կամ այն միջոցառմանը, կամ նրանց մուտքը պետական մարմիններ անօրինականորեն արգելվում է, նրանց համար ստեղծվում են ամենատարբեր տեխնիկական խոչընդոտներ:

## Յավատարմագրումից զրկելու, հավատարմագրումը դադարեցնելու հիմքերը եւ կարգը

Յավատարմագրումից զրկելը նշանակում է, որ սահմանափակում են տվյալ լրագրողի՝ տեղեկություն ստանալու իրավունքը: Յետեւաբար սա պետք է տեղի ունենա բացառապես օրենքով նախատեսված հիմքերով եւ կարգով՝ սուբյեկտիվ եւ կամայական դրսեւորումները բացառելու համար: Կարեւոր է, որ օրենքով տրված լինեն մերժման եւ հավատարմագրումից զրկելու բոլոր սպառիչ հիմքերը՝ նույնպես կամայականության տեղ չթողնելու համար:

Տարօրինակ է, որ ո՛չ «Զանգվածային լրատվության մասին» օրենքը եւ ո՛չ Կարգը չեն կարգավորում հավատարմագրումից զրկելու հարցը: Օրինակ՝ արդյո՞ք օրենքի եւ սույն կարգի դրույթները խախտելը կարող է հիմք լինել լրագրողին հավատարմագրումից զրկելու համար: Չկա նաեւ երաշխիք, որ տվյալ մարմնի գործունեության քննադատությունը կամ ոչ ցանկալի հրապարակումը ոչ մի դեպքում չեն կարող դառնալ լրագրողին հավատարմագրումից զրկելու հիմք:

Օրենքը նաեւ չի անդրադարձել այն խնդրին, որ հավատարմագրումից զրկելը պետք է ժամանակավոր բնույթ կրի, կատարվի միմիայն որոշակի ողջամիտ ժամկետով:

Այսպիսով, **հավատարմագրումից զրկում չի կարող կիրառվել, քանի որ այն նախատեսված չէ օրենքով**:

«Զանգվածային լրատվության մասին» օրենքը հավատարմագրումը դադարեցնելու միայն մեկ հիմք է նախատեսում. **լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով** (6-րդ հոդված, 5-րդ կետ): Թվում էր, թե օրենքով ներկայացրած հիմքերը պետք է սպառիչ լինեն, սակայն Կարգում ներկայացվում են հավատարմագրումը դադարեցնելու եւս 4 հիմք[31]:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ դրանք են.

**1.** եթե լրագրողն անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչվել դատական կարգով,

**2.** եթե լրագրողը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության

31. Առաջին երեք հիմքերը կարող են նաեւ հավատարմագրումը մերժելու հիմք լինել:

համար, եւ նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,

**3.** նա տարածել է պետական մարմնի գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանել իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով,

**4.** դադարել է գործել լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը, եւ դադարեցվել է լրագրողի ներկայացրած լրատվության բոլոր միջոցների տարածումը:

Լրագրողի հավատարմագրման դադարեցումն իրականացվում է լրագրողների հավատարմագրման մատյանում համապատասխան գրառում կատարելու միջոցով: Պետական մարմնի պատասխանատուն լրագրողի հավատարմագրման դադարեցման մասին մեկօրյա ժամկետում գրությամբ հայտնում է լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողին: Այստեղ կրկին բացթողումն այն է, որ պետական մարմնի գրության մեջ պարտադիր պետք է նշվի, թե որն է հավատարմագրումը դադարեցնելու հիմքը:

Կարգում նաեւ չի նշվում՝ հավատարմագրումը դադարում է ժամանակավորապե՞ս, թե՞ ընդմիշտ: Օրինակ՝ եթե լրագրողի դատվածությունը մարվում է, կարո՞ղ է նա հավատարմագրվել: Կամ եթե գործունեությունը դադարեցրած լրատվամիջոցը վերսկսում է իր գործունեությունը, ապա նա կրկին կարո՞ղ է դիմել հավատարմագրման:

## Մերժման բողոքարկումը

Եվ, վերջապես, օրենքը պետք է լրագրողին եւ լրատվամիջոցին հնարավորություն տա հավատարմագրման մերժման կամ դադարեցման ցանկացած դեպք բողոքարկել: Հավատարմագրման Կարգով անպայման պետք է նախատեսվեր մերժումը անկախ մարմնին բողոքարկելու մեխանիզմ: Սակայն թե՛ սա եւ թե՛ ընդհանրապես բողոքարկման հնարավորությունն անտեսված են «ԶԼՄ» օրենքում եւ Օրինակելի կարգում, ինչը վտանգում է խոսքի ազատության իրավունքը:

Այստեղից բխում է, որ հավատարմագրման անօրինական մերժման կամ դադարեցման փաստը կարող է բողոքարկվել դատական կարգով, սակայն հայտնի է, որ դատական կարգով բողոքարկմամբ հարցի լուծումը կարող է բավականին երկար ժամանակ խլել, ինչպես նաեւ ծախսատար է, մինչդեռ լրագրողի աշխատանքը պահանջում է խնդրի արագ եւ օպերատիվ լուծում: Ուստի անհրաժեշտ է նախատեսել բողոքարկման արտադատական մեխանիզմ:

### Հարց լսարանին

**1.** Ծանոթանալ տարբեր պետական մարմինների հավատարմագրման կարգերին եւ դրանք ուսումնասիրել հավատարմագրման միջազգային չափանիշների համատեքստում: Քննարկել գործող կարգերի թերությունները եւ մշակել կոնկրետ առաջարկներ՝ դրանք բարելավելու նպատակով:

# Տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը պահպանելու՝ լրագրողի իրավունքը

Լրագրողտեղեկատվության աղբյուր հարաբերությունները կարելի է համեմատել խոստովանահայրխոստովանող հարաբերությունների հետ, երբ մի կողմը պարտավորվում է երբեք չբացահայտել իրեն հայտնի դարձած տեղեկությունները եւ տեղեկություն տրամադրողի ինքնությունը: Տեղեկատվության աղբյուրի բացահայտման հարցը եւ՛ էթիկական, եւ՛ իրավական ոլորտում է. այն նախեւառաջ լրագրողի բարոյական պարտավորությունն է՝ հարգել տված խոստումը՝ չբացահայտել աղբյուրի ինքնությունը, բայց մյուս կողմից՝ խոստումը կատարելու դեպքում լրագրողի համար կարող են առաջ գալ իրավական լուրջ հետեւանքներ՝ բարձր տուգանքներ, նույնիսկ ազատազրկում: Լրագրողները պատրաստ են կրել այս հետեւանքները՝ պահպանելով իրենց աղբյուրների գաղտնիությունը, քանի որ հակառակ դեպքում պետք է հրաժեշտ տան մասնագիտությանն ընդհանրապես: Չէ՞ որ մեկ անգամ չարաշահելով աղբյուրի վստահությունը՝ մեկընդմիշտ կկորցնեն լրագրողի իրենց համբավը: «Լրագրողներ առանց սահմանի» միջազգային կազմակերպության 2005 թվականի տվյալներով՝ միայն ԱՄՆ-ում 10 լրագրողներ են դատական կարգով հետապնդվում իրենց աղբյուրների ինքնությունը չբացահայտելու համար[32]:

1974 թվականի օգոստոսի 9ին ԱՄՆի նախագահ Ռիչարդ Նիքսոնի հրաժարականը կարող էր տեղի չունենալ, եթե չլինեն «Վաշինգտոն Փոստ» թերթի երկու լրագրողների՝ Կարլ Բերնսթեյնի եւ Բոբ Վուդսվորդի գաղտնի եւ հուսալի աղբուրը՝ «Խորը կոկորդ» մականունով, որի տրամադրած տեղեկությունների շնորհիվ էր հիմնականում, որ լրագրողներին հաջողվեց բացահայտել նախագահ Նիքսոնի ապօրինի գործարքները եւ սկիզբ առավ Վոթերգեյթյան սկանդալը: «Խորը կոկորդի» ինքնության մասին 30 տարի այդպես էլ ոչ ոք ոչինչ չիմացավ, քանի որ լրագրողները խոստացել էին չբացահայտել նրա ինքնությունը: Միայն 30 տարի անց՝ 2005թ մայիսի 31ին գաղտնի աղբյուրը՝ 90 տարեկան հասակում որոշեց բացահայտել ինքն իրեն՝ Մարկ Ֆելթ, Հետաքննությունների դաշնային բյուրոյի նախկին աշխատակից[33]:

32. www.rsf.org
33. www.washingtonpost.com

Տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջը կարող է խիստ վտանգավոր ազդեցություն ունենալ մամուլի ազատության եւ մամուլի միջոցով տեղեկատվություն ստանալու՝ հասարակության իրավունքի համար: Ինչպես նշել է մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ աղբյուրի բացահայտման ցանկացած դեպք կարող է վտանգավոր ներգործություն ունենալ ապագայում այլ աղբյուրների կողմից տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամության վրա՝ անկախ աղբյուրի կողմից տրամադրվող տեղեկատվության բնույթից:

Աղբյուրների գաղտնիությունը պահպանելու սկզբունքը պայմանավորված է մի քանի կարեւոր հանգամանքով:

**1.** Լրագրողի գործունեության ընթացքում լինում են դեպքեր, երբ տեղեկություն տրամադրող անձը համաձայնում է խոսել միայն չբացահայտվելու պայմանով: Լրագրողն այս դեպքում, իհարկե, պետք է պարզի աղբյուրի գաղտնի մնալու շարժառիթը եւ միայն դրանից հետո խոստանա չբացահայտել:

**2.** Լրագրողներն իրենց գործունեության ընթացքում շատ հաճախ օգտվում են տեղեկատվության այնպիսի աղբյուրներից, որոնք ցանկանում են գաղտնի մնալ՝ ահազանգելով իրենց հաստատություններում տեղի ունեցող ապօրինությունների մասին:

Արտահոսված տեղեկությունն օգտագործելը, այսպիսով, կարեւոր նշանակություն կարող է ունենալ լրագրողի աշխատանքի արդյունավետության համար, եթե լրագրողը երաշխավորի աղբյուրի գաղտնիությունը: Այս միտքն արտահայտվել է Գուդվինի գործով Եվրոպական դատարանի կայացրած որոշման մեջ.

**«Նման պաշտպանության բացակայության պարագայում տեղեկատվության աղբյուրները կդադարեն մամուլին աջակցելուց, ինչն էլ բացասաբար կանդրադառնա... ստույգ եւ վստահելի տեղեկատվություն տրամադրելու մամուլի հնարավորության վրա: Արդյունքում կխաթարվի մամուլի՝ որպես հասարակության շահերի պաշտպանի կենսականորեն կարեւոր դերը»**[34]:

Սակայն լրագրողական աղբյուրների պաշտպանության սկզբունքի ամենակարեւոր հիմնավորումն այն բացասական տպավորությունն է, որ կարող է առաջանալ հանրության, եւ մասնավորապես տեղեկատվության աղբյուրնե-

34. Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորությանը, 1996թ., կետ 39: Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.) /Վ. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան, Երեւան, Տիգրան Մեծ, 2002թ.:

րի մոտ. «...մամուլը եւ լրագրողները կարող են հեշտությամբ ներգրավվել ոստիկանության կամ դատական համակարգի գործունեության մեջ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Գուդվինն ընդդեմ Միացյալ թագավորության» գործով կայացրած որոշմամբ սահմանել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10րդ հոդվածը ներառում է նաեւ լրագրողների իրավունքը տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու վերաբերյալ.

> **«Տեղեկատվության լրագրողական աղբյուրների պաշտպանությունը մամուլի ազատության հիմնարար պայմաններից է....»:**

Դատարանը շարունակում է այս միտքը՝ նշելով.

> **«Նման պաշտպանության բացակայության պարագայում տեղեկատվության աղբյուրները կդադարեն մամուլին աջակցելուց, ինչն էլ բացասաբար կանդրադառնա հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ ստույգ եւ վստահելի տեղեկատվություն տրամադրելու մամուլի հնարավորության վրա: Արդյունքում կխաթարվի մամուլի, որպես հասարակական շահերի պաշտպանի, կենսականորեն կարեւոր դերը: Նկատի ունենալով ժողովրդավարական հասարակությունում տեղեկատվության աղբյուրների պաշտպանության կարեւորությունը մամուլի ազատության համար եւ այն վտանգավոր ներգործությունը, որով աղբյուրի բացահայտման մասին դատական կարգադրությունը կարող է ունենալ մամուլի ազատության վրա, նման միջոցը չի կարող համարվել համատեղելի Կոնվենցիայի 10րդ հոդվածի հետ, եթե դա արդարացված չէ ավելի կարեւոր հասարակական շահի առկայության անհրաժեշտությամբ»:**

Տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը պաշտպանելու՝ լրագրողի իրավունքը երաշխավորելու նպատակով Եվրոպայի խորհրդի նախարարների խորհուրդը 2004 թվականի մարտի 8-ին հատուկ հանձնարարական է ընդունել՝ համ. 2000(7), որը հիմնված է եվրոպական կոնվենցիայի 10րդ հոդվածի դրույթների վրա:

Հանձնարարականում ձեւակերպվում է «տեղեկատվության աղբյուրը բացահայտող տեղեկություն» հասկացությունը: Այս հասկացության մեջ մտնում են տեղեկության հետեւյալ տեսակները.

**1.** տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձի անունը, հասցեն, հեռախոսի/ֆաքսի համարը, գործատուի անունը եւ այլ անձնական տվյալներ, ինչպես նաեւ անձի ձայնը եւ պատկերը,

**2.** տեղեկության ստացման փաստացի հանգամանքներ, օրինակ, աղբյուրի հետ հանդիպման տեղի եւ ժամանակի, հաղորդակցության ձեւերի կամ լրագրողի եւ աղբյուրի միջեւ կայացած համաձայնության մանրամասների մասին տեղեկություն,

**3.** տեղեկություն չհրատարակված նյութի բովանդակության մասին, օրինակ, փաստեր, տվյալներ, ձայնային ազդանշաններ կամ պատկերներ, որոնք կարող են բացահայտել աղբյուրի ինքնությունը եւ որոնք դեռ չեն հրապարակվել լրագրողի կողմից,

**4.** լրագրողի կամ նրա գործատուի մասնագիտական պարտականությունների վերաբերյալ տվյալներ, օրինակ, լրագրողի աշխատանքից բխող անձնական տվյալներ, որոնք կարելի է գտնել, օրինակ, հասցեների, հեռախոսազանգերի ցուցակում, համակարգչային հաղորդակցության գրանցումներում, բանկային եւ ճանապարհորդելու վերաբերյալ տվյալներում:

Ընդ որում, Հանձնարարականը նշում է, որ այս ցանկը սպառիչ չէ:

Կարեւոր է այն հանգամանքը, որ Հանձնարարականը վերաբերում է ոչ միայն աղբյուրի հայտնած փաստերին, այլ նաեւ կարծիքներին կամ գաղափարներին: Ինչպես նաեւ, այս աղբյուրի գաղտնիությունը պահպանելու իրավունքը ոչ միայն լրագրողինն է, այլեւ խմբագրինը: Սա հաստատվել է եվրոպական դատարանի Դե Հաեսը եւ Գիյսելսը ընդդեմ Բելգիայի 1997 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ: Խիստ կարեւոր է նաեւ լրագրող տերմինի ընդգրկուն մեկնաբանությունը:

Ըստ հանձնարարականի, **լրագրող է համարվում**

**«Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը պարբերաբար կամ իր մասնագիտական պարտականությունների կատարման բերումով զբաղվում է տեղեկատվություն հավաքելով եւ դրանք զանգվածային լրատվության ցանկացած միջոցով հասարակությանը տարածելով»:**

Այսպիսով, լրագրող հասկացության մեջ են մտնում նաեւ ազատ լրագրողները, որոնք չեն համարվում որեւէ կոնկրետ ԶԼՄի ներկայացուցիչ եւ աշխատանքային պայմանագրային հարաբերությունների մեջ չեն գտնվում որեւէ գործատուի հետ:

ՀՀ օրենսդրությամբ այս իրավունքը երաշխավորվում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով.

**«1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ սույն հոդվածի 2րդ մասով նախատեսված դեպքերի**:

**2. Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաեւ լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, եւ սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ»**:

Հոդվածի առաջին մասի ձեւակերպումից հստակ է, որ այս իրավունքն ունեն ինչպես լրատվական գործունեություն իրականացնողը, այնպես էլ լրագրողը, ինչպես դա սահմանված է Հանձնարարականում:

ՀՀ օրենսդրությունը ներառում է եւս մի կարեւոր երաշխիք. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը պաշտպանության տակ է առնում տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշտոնյաներին: Այս պաշտոնյաների իրավական պաշտպանությունը նշանակում է, որ նրանք պաշտպանված են, նույնիսկ եթե տեղեկատվության տարածմամբ խախտել են իրենց

պայմանագրային կամ օրենքով սահմանված պարտականությունները, եթե դա արել են՝ համոզված լինելով, որ պաշտպանում են հանրային շահերը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը բացառում է պաշտոնյայի գործողությունների մասին ահազանգած (արտահոսք թույլ տված) պաշտոնյաների վարչական կամ քրեական պատասխանատվությունը, եթե այդ տեղեկատվության հրապարակմամբ կարող են կանխվել հասարակությանը սպառնացող վտանգը, մարդկանց անվտանգությանն ու առողջությանը, շրջակա միջավայրին սպառնացող աղետները, մի խոսքով՝ գաղտնիքի հրապարկումն օգուտ է բերում հասարակությանը (ՏԱ մասին օրենքի 14 հոդվածի 2-րդ մաս):

Հայաստանում աղբյուրը բացահայտելու պահանջ լրագրողական պրակտիկայում հաճախ է հանդիպում, սակայն դատական նախադեպ տեղի է ունեցել մեկ անգամ՝ 2002 թվականին: Դատարանում որպես պատասխանող հանդես էր գալիս «Տարեգիր» էլեկտրոնային պարբերականը: Հայցվորը՝ Անդրանիկ Պողոսյանը՝ «Առագաստ» սրճարանում սպանված Պողոս Պողոսյանի եղբայրը, պահանջում էր հերքել 9 ամիս առաջ (22.01.2002թ.) տպագրված «Արյան գինը» հոդվածում առկա տեղեկությունները (հեղինակ՝ Լիլիթ Սեյրանյան): Հոդվածում լրագրողը գրել էր. «ՀՅԴ ԳՄ անդամ մեր զրուցակիցը, որը չցանկացավ բացահայտված մնալ, տեղեկացրեց, որ եթե գործով ամբաստանյալ Կուկուն, նույն ինքը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի թիկնապահ Աղամալ Հարությունյանը, 90 հազար դոլար է փոխանցել Անդրանիկ Պողոսյանին՝ դատավարության ընթացքում ներկայացվող սցենարին չընդդիմադրելու համար»:

Դատավարության ընթացքում հայցվորը հայտարարել էր, որ հոդվածն ամբողջությամբ զրպարտություն է՝ նշելով, որ իրեն ոչ այնքան տեղեկությունների անճշտությունն է հետաքրքրում, որքան այն, թե ով է լրագրողի տեղեկատվության աղբյուրը: Լիլիթ Սեյրանյանը հրաժարվել է բացահայտել աղբյուրը՝ դրա համար, իր իսկ ասելով, ունենալով հիմնավոր պատճառներ: Դատարանի որոշմամբ թերթին պարտադրվեց հերքել հրապարակված տեղեկությունները, եւ ոչ թե բացահայտել լրատվության աղբյուրը: Այսպիսով, դատարանը պաշտպանեց լրագրողի՝ աղբյուրի ինքնության գաղտնիությունը պահպանելու իրավունքը:

Այս իրավունքը մեծ կարեւորություն ունի հատկապես հետաքննող լրագրողների համար: Եթե նրանք հղում կատարեն միայն պաշտոնական տվյալներին կամ հենվեն միայն սովորական ճանապարհներով ստացված տեղեկությունների վրա, ապա երբեք չեն կարողանա կատարել իրենց գործը: 2004 թվականին ՀՀ ՆԳ աշխատակիցների կողմից աղբյուրը բացահայտելու պա-

հանջ էր ներկայացվել Հետաքննող լրագրողներ կազմակերպության նախագահ Էդիկ Բաղդասարյանին: Է. Բաղդասարյանը «Առավոտ» օրաթերթում նյութ էր հրապարակել քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարյանի նկատմամբ իրականացված բռնարարքի մասին` հրապարակելով այն սափրագլուխի լուսանկարը, որին Ա. Մանուչարյանը ճանաչել էր որպես հանցագործ: Մինչդեռ նախաքննության մարմինը մինչ այդ հայտարարել էր, թե հանցագործի անձը հայտնի չէ: Հոդվածի եւ լուսանկարի հրապարակումից հետո լրագրողը հրավիրվել էր քննչական բաժանմունք` ցուցմունք տալու, որից նա հրաժարվել էր: Ավագ քննիչ Արսեն Այվազյանը 2004թ. սեպտեմբերի 15ից լրագրողին գործով ներգրավում է որպես վկա Աշոտ Մանուչարյանի նկատմամբ իրականացված բռնարարքի առթիվ հարուցված քր. գործում:

Է. Բաղդասարյանը բողոքարկել է քննիչի որոշումը` իրեն որպես վկա ներգրավելու վերաբերյալ. «Հրաժարվում եմ ինֆորմացիայի աղբյուրները բացահայտել: Այդ մասին ես տեղեկացրել եմ նաեւ քննիչին` ասելով, որ ես որեւէ աղբյուր չեմ նշի` նախ եւ առաջ այդ մարդկանց անվտանգությունը հաշվի առնելով: Քննիչի բոլոր հարցերը վերաբերում են հենց տեղեկատվության աղբյուրների բացահայտմանը», պատմում է լրագրողը: Սակայն «Քրեական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքի 86 հոդվածով չի նախատեսվում, թե որպես վկա չեն կարող կանչվել եւ հարցաքննվել լրագրողները: Ընդհանրապես` ցուցմունքներ տալուց հրաժարվել կարելի է միայն այն պարագայում, երբ խոսքն ամուսնու կամ մերձավոր ազգականների մասին է: Մնացած բոլոր դեպքերում ցուցմունք տալը վկայի պարտականությունն է, որը չկատարելու դեպքում ենթակա է պատասխանատվության: Սա հետաքրքիր դեպք է նրանով, որ ՆԳ աշխատակիցները` չկարողանալով ստիպել լրագրողին բացահայտել աղբյուրը` նրան գործով ներգրավում են որպես վկա` շատ լավ իմանալով, որ վկայի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը առաջ է բերում քրեական պատասխանատվություն: Իսկ լրագրողները նման դեպքերից ապահովագրված չեն:

Փաստորեն, եթե լրագրողին հայտնի են դառնում քրեական գործով մանրամասներ, նրան կարող են ճանաչել որպես վկա եւ ներգրավել գործում, ինչը բխում է վկա հասկացության օրենսդրական ձեւակերպումից:

**«Վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող են հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որեւէ հանգամանք»:** (ՀՀ Քր. դատ. օրենսգիրք, հոդված 86):

Տեղեկություններ տրամադրող աղբյուրին վերաբերող տվյալները քր. գործով պարզելու ենթակա հանգամանք են, ինչը չբացահայտող լրագրողը կեն-

թարկվի պատասխանատվության՝ համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի 339 հոդվածի՝

**ցուցմունք տալուց հրաժարվող վկան «պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 50100ապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով:**

Թերեւս նման հանգամանքներում լրագրողը կարող է դիմել «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 5-րդ հոդվածի պաշտպանությանը, համաձայն որի՝

**տեղեկատվության աղբյուրի բացահայտում լրագրողին կարող է պարտադրվել միայն դատարանի որոշմամբ (եւ ոչ նախաքննության կամ հետաքննության մարմինների կողմից), այն էլ միայն քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով: Այս դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ:**

Ներկայացնենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քննած շրջադարձային գործը՝ «Գուդվինն ընդդեմ Միացյալ թագավորության», որով դատական որոշումը կայացվել է 27.03.1996թ.: Գուդվինի գործով որոշման հրապարակումից անմիջապես հետո ընդունվեց Նախարարների խորհրդի N 2000(7) Հանձնարարականը:

1990 թվականին լրագրող Ուիլյամ Գուդվինը, որն աշխատում էր Լոնդոնի «Էնջինիեր» ամսագրում որպես լրագրողստաժոր, մեղավոր ճանաչվեց Լորդերի պալատի կողմից դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար: Դատավճռի համար հիմք էր հանդիսացել այն հանգամանքը, որ Գուդվինը հրաժարվել էր բացահայտել այն անձի ինքնությունը, որը նրան ֆինանսական տեղեկատվություն էր տվել «Տետրա» մասնավոր ձեռնարկության գաղտնի կորպորատիվ ծրագրերի մասին: Բացահայտման պահանջը համարվեց օրինական. բացահայտումը անհրաժեշտ էր արդարադատության շահերից ելնելով:

1989 թվականին նոյեմբերի 2ին լրագրողին զանգահարում է մի մարդ եւ տեղեկություն հայտնում այն մասին, որ «Տետրա» մասնավոր ընկերությունը այդ պահին զբաղված է 5 միլիոն ֆունտ ստերլինգ վարկ վերցնելով, քանի որ ունի ֆինանսական պրոբլեմներ: Լրագրողը զանգահարում է «Տետրա»՝ ստուգելու իրեն տրամադրված տեղեկությունները եւ պարզելու, թե ինչ պրոբլեմներ ունի ընկերությունը: Լրագրողին հայտնի դարձած տեղեկատ-

վությունը առկա էր միայն ընկերության առաջիկա ծրագրերի փաքեթում, որից գոյություն ուներ ընդամենը 8 օրինակ, որոնք պահվում էին հույժ գաղտնի պայմաններում: 1989 թվականի նոյեմբերի 1-ին կորել էր 8 օրինակներից մեկը: «Տետրան» դիմեց դատարան՝ պահանջելով արգելել որեւէ ԶԼՄ-ի, այդ թվում «էնջինիերին», տպագրելու հայտնի դարձած տեղեկությունները: Նոյեմբերի 22ին ընկերությանը նաեւ հաջողվեց դատարանին համոզել ընդունել եւս մեկ որոշում՝ պարտադրել լրագրող Գուդվինին բացահայտել, թե ով է իրեն տրամադրել այդ տեղեկությունները՝ հիմնավորելով, որ բացահայտումով կկարողանան գտնել փաթեթի կորած օրինակը: Անգլիայի Բարձր դատարանը 1990 թվականի ապրիլի 10-ին Գուդվինին տուգանեց 5000 ֆունտ ստերլինգ՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար: Անգլիայի դատարանները գտնում էին, որ սրանով հետապնդվում էր իրավաչափ նպատակ. պարզել գաղտնի փաստաթղթի անհետացման համար մեղավոր անձի ինքնությունը, որպեսզի վերադարձվի այդ փաստաթուղթը եւ նրա նկատմամբ դատական հետապնդում հարուցվի (փաստաթղթերը լրագրողին էր հանձնել ընկերության աշխատակիցներից մեկը):

Գուդվինը դիմեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պարզելու՝ արդյոք Անգլիայի դատարանի պահանջը տեղեկատվության աղբյուրը բացահայտելու մասին արդարացի էր՝ ըստ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջների:

Ակնհայտ է, որ Անգլիայի դատարանների պահանջը տեղեկատվական աղբյուրը բացահայտելու մասին հետապնդում էր 10 (2) հոդվածում նշված իրավաչափ նպատակներից մեկը՝ «այլ անձանց իրավունքները պաշտպանելը», տվյալ դեպքում՝ Տետրայի ֆինանսական շահը:

Սակայն, Դատարանը նաեւ պետք է պարզեր, թե արդյո՞ք ազգային դատարանի պահանջը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությանը»: Սա որոշվում է երեք չափորոշիչով. արդյո՞ք նման միջամտությունը պայմանավորված էր սուր հասարակական պահանջով, արդյոք միջամտությունը համաչափ էր նշված իրավական նպատակին հասնելու համար, եւ արդյո՞ք միջամտության ընտրված ձեւը բավարար միջոց էր: Դատարանի խնդիրն էր նաեւ պարզել, թե տվյալ հանգամանքներում ո՞ր շահն էր գերակշռում. լրատվության աղբյուրների գաղտնիության պաշտպանության հասարակական շա՞հը, թե՞ «Տետրա» ընկերության իրավունքները՝ գաղտնի պահել իր ֆինանսական դրությանն առնչվող տեղեկությունները:

Դատարանը հանգեց այն կարեւոր համոզման, որ տեղեկատվության աղբյուրների բացահայտումը կախված չէ տվյալ տեղեկատվությունը ստանալու

հասարակական հետաքրքրության աստիճանից: Նույնիսկ եթե տվյալ տեղեկատվությունը ստանալու հասարակական հետաքրքրությունը փոքր է, աղբյուրի բացահայտումը չի կարող արդարացված լինել, որովհետեւ դա խիստ «…բացասաբար կանդրադառնա հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ ստույգ եւ վստահելի տեղեկատվություն տրամադրելու՝ մամուլի հնարավորության վրա: Արդյունքում, կխաթարվի մամուլի, որպես հասարակության շահերի պաշտպանի, կենսականորեն կարեւոր դերը», կետ 39: Դատարանը որոշեց, որ տեղեկատվական աղբյուրների բացահայտումը կարող է լրջորեն վնաս հասցնել լրագրողների եւ նրանց աղբյուրների միջեւ փոխհարաբերություններին, եւ ապագայում լրագրողներին տեղեկատվություն տրամադրելու՝ աղբյուրների պատրաստակամությանը:

Դատարանը գտավ նաեւ, որ աղբյուրի գաղտնիությունը բացահայտելու պահանջը համաչափ չէ հետապնդվող իրավական նպատակին: «Տետրա» ընկերությունն արդեն ստացել էր հոդվածների հրապարակումը կասեցնող դատական արգելք, որով իրականացրել էր ֆինանսական գաղտնիությունը պահպանելու իր իրավունքը: Աղբյուրի բացահայտման լրացուցիչ իրավունք ստանալով խախտվում է հասարակական շահի եւ «Տետրայի» իրավունքների միջեւ հավասարակշռությունը. մամուլի ազատության լրացուցիչ սահմանափակումը, որն առաջացնում էր տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը բացահայտելու պահանջը, ըստ Կոնվենցիայի 10րդ հոդվածի 2րդ կետի նպատակների, չուներ բավարար հիմք:

Այսպիսով, Դատարանը գտավ, որ **«չկա ողջամիտ համաչափություն տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջով հետապնդվող իրավաչափ նպատակի եւ դրան հասնելու համար օգտագործված միջոցների միջեւ»:**

Տվյալ դեպքում պետությունն օգտագործել էր երկու միջոց. լրագրողից պահանջելով բացահայտել գաղտնի տեղեկությունը հայտնող անձի ինքնությունը եւ տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու համար լրագրողի վրա դրված տուգանքը: Երկու միջոցներն էլ Դատարանի կողմից համարվեցին ոչ համաչափ, ուստի, տեղի էր ունեցել Կոնվենցիայի 10րդ հոդվածի խախտում: Եվրոպական դատարանը այն կարծիքը հայտնեց, որ բացահայտելու պահանջը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 10րդ հոդվածի հետ, քանի դեռ դա պայմանավորված չէ գերակշռող հասարակական շահով:

## Իրավունքը բացարձակ չէ. սահմանափակումներ

Լրագրողի՝ աղբյուրի ինքնությունը չբացահայտելու իրավունքը բացարձակ չէ եւ ենթակա է սահմանափակման: Այս իրավունքի սահմանափակման հիմքերը տրված են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասում, որը նշում է «պարտավորությունների» եւ «պարտականությունների» մասին, որոնք կարող են լրագրողի իրավունքը սահմանափակել աղբյուրների գաղտնիությունը պահպանելու առումով: Եթե նման պարտավորությունները եւ պարտականությունները բախվում են 10-րդ հոդվածի երկրորդ մասում տրված շահերին, ապա այստեղ վճռորոշ դեր է խաղում այն շահը, որը գերակշռում է ազատ խոսքի իրավունքին: Եվրոպական դատարանը որոշել է, որ **լրագրողական աղբյուրը բացահայտելու դատարանի պահանջը «...արդարացված է, եթե դա է պահանջում կենսական նշանակություն ունեցող հասարակական շահը»**[35]**:**

Համաձայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լրագրողին կամ լրատվական գործունեություն իրականացնողին, աղբյուրը բացահայտելու պահանջ կարող է ներկայացվել հետեւյալ հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում այս հանգամանքները պետք է առկա լինեն միաժամանակ.

**1.** տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ,

**2.** պահանջը կարող է ներկայացվել քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով,

**3.** սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները,

**4.** հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ պետք է լինի, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը:

Առաջին պայմանը նշում է, որ դատարանից բացի որեւէ պետական կամ այլ մարմին չի կարող աղբյուրը բացահայտելու պահանջ ներկայացնել (օր. ոստիկան, քննիչ, դատախազ եւ այլն): Միայն դատարանի որոշմամբ կարող է պարտադրվել բացահայտում:

35. Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1996թ., կետ 40: www.echr.coe.int

Տվյալ պահանջը դատարանը կարող է ներկայացնել միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն բացահայտելու նպատակով:

Համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի՝

**ծանր հանցագործություն են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Քր. օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը:**

**Առանձնապես ծանր հանցագործություններ են դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար նախատեսվում է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում:**

Երրորդ եւ չորրորդ պայմաններից բխում է, որ դատավորը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է նժարի վրա դնի մի կողմից՝ հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը: Եթե առաջինն ավելի ծանրակշիռ է, ապա դատավորը կարող է բացահայտում պահանջող որոշում կայացնել: Կարեւոր երաշխիք է այն, որ աղբյուրի բացահայտման ժամանակ, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ:

Վերոնշյալ պայմանները բխում են Հանձնարարականի պահանջներից, որտեղ նշվում է, որ տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է համարվել անհրաժեշտ, երբ համոզիչ կերպով հաստատված է.

**ա. տեղեկատվության աղբյուրի բացահայտում պահանջող անձանց կամ պետական մարմինների մոտ սպառվել են այլընտրանքային միջոցները,**

**բ. աղբյուրի բացահայտման իրավաչափ նպատակը գերակշռում է հասարակական շահը:**

Լրատվության աղբյուրի բացահայտումը կարող է համարվել արդարացված, եթե դատավարության երկու կողմերը **սպառել են բոլոր այլ միջոցները**: Այդպիսի միջոցներն են, օրինակ, գաղտնի տեղեկության տարածման կապակցությամբ ընկերության ներսում ներքին քննության վարումը, գաղտնի տեղեկություն ստանալու սահմանափակումների ուժեղացումը կամ որպես հակազդող քայլ հակառակ տեղեկության տարածումը եւ այլն: Մինչ լրագրողին աղբյուրը բացահայտելու պահանջ ներկայացնելը, դատավարության կողմերը պետք է սպառեն նաեւ այլ ոչ-լրագրողական աղբյուրները: Այդպի-

սի աղբյուրներ կարող են համարվել, օրինակ, աշխատակիցները, գործըն-կերները, պայմանագրային կարգով աշխատողները եւ այլն: Այն անձինք կամ պետական իշխանությունները, որոնք պահանջում են բացահայտել տեղեկատվության աղբյուրը, պետք է նախեւառաջ որոնեն եւ կիրառեն հա-մաչափ այլընտրանքային միջոցներ, որոնք պատշաճ կերպով կարող են պաշտպանել իրենց իրավունքները եւ շահերը: Այլընտրանքային միջոցների առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրը բացահայտելու անհ-րաժեշտությունը վերանում է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ խոսքի ազատության սահմանափակման անհրաժեշտությունը պետք է հստակ սահ-մանված լինի: Այս իմաստով (բ) ենթակետը պահանջում է հստակորեն ցույց տալ, որ աղբյուրը բացահայտելու պահանջը պայմանավորված է իրավա-չափ նպատակի առկայությամբ, որը գերակշռում է աղբյուրը բացահայտելու հասարակական շահը: «Հստակ կերպով ցույց տալ» այս պարագայում նշա-նակում է ուսումնասիրել տվյալ գործի բոլոր փաստերը, ինչպես նաեւ օգ-տագործել հայտեցողության իրավունքը այնպես, որպեսզի հետագայում հնա-րավոր լինի դա ստուգել: Առաջարկվում է, որ համապատասխան իշխանու-թյունները նշեն բոլոր այն պատճառները, ըստ որոնց հասարակական շահը գերակշռում է աղբյուրը չբացահայտելու իրավունքին:

Դատարանը բազմիցս նշել է, որ լրատվության միջոցների պարտականու-թյունն է տեղեկատվության եւ գաղափարների տարածումը, իսկ հասարա-կության իրավունքն է դրանք ստանալը[36]: Լրագրողի կողմից աղբյուրը բա-ցահայտելու երեւույթի վտանգավոր ներգործությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ լրատվության միջոցների համար: Այդ պատճառով ազգային դատարանները եւ իշխանությունները առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողական իրա-վունքի կարեւորության վրա:

Լրագրողի կողմից տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է կատարվել միայն ելնելով բացառիկ հանգամանքներից, որոնք սպառնում են կենսականորեն կարեւոր հասարակական եւ անձնական շահերին, որոնց առկայությունը կարելի է հստակորեն ցույց տալ[37]: Միայն այն դեպքերում, երբ հասարակական շահը գերակշռում է եւ հանգամանքները խիստ եւ կեն-սական կարեւորություն են ներկայացնում, աղբյուրի բացահայտումը կարող է համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակության համար՝

36. Ֆրեսսոզը եւ Ռուարն ընդդեմ Ֆրանսիայի, 21 հունվար 1999թ., կետ 51:
37. Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության դատավճիռը, կետ 37:

ըստ Եվրոպական Կոնվենցիայի 10(2) հոդվածի:

Այնուամենայնիվ, մարդու իրավունքների եւ մամուլի հարցերով փորձագետների աշխատախումբը եկել է այն եզրակացության, որ 10-րդ հոդվածի 2-րդ մասում նշված իրավաչափ նպատակներից մի քանիսը կարող են հիմք լինել տեղեկատվության աղբյուրի բացահայտման անհրաժեշտության համար:

Այսպիսով, աղբյուրի գաղտնիության հասարակական շահը չի կարող գերակշռել, եթե բացահայտումը անհրաժեշտ է.

- **մարդու կյանքի պաշտպանության համար,**
- **ծանր հանցագործության կանխման համար,**
- **ծանր հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանության համար**:

Մարդու կյանքի իրավունքը ամենակարեւոր իրավունքն է: Մյուս բոլոր իրավունքները ստորադաս են կյանքի իրավունքին: Այս իրավունքի պաշտպանությունը արդարացնում է տեղեկատվության աղբյուրի բացահայտումը:

Ծանր հանցագործությունների թվում են սպանությունը, անչափահասի բռնաբարությունը, ահաբեկչությունը, բանդիտիզմը, ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները եւ այլն: Նման հանցագործությունների կանխման նպատակով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է արդարացված լինել:

Եւ, վերջապես, ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքը կարող է արդարացված հիմք համարվել լրագրողական աղբյուրի բացահայտման համար: Սա բխում է Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածից, որը սահմանում է մեղադրյալի արդար դատավարության իրավունքը:

Վերջին հաշվով լրագրողն ինքն է որոշում՝ բացահայտե՞լ տեղեկատվության աղբյուրը, թե՝ ոչ, նույնիսկ եթե խոսքը գնում է դատարանի պահանջը կատարելու մասին:

Հարց է առաջանում, եթե լրագրողը հրաժարվում է կատարել դատարանի որոշումը՝ բացահայտելու աղբյուրը, ի՞նչ պատասխանատվության կենթարկվի: Քրեական օրենսգրքի 353 հոդվածը «Դատական ակտը չկատարելը» վերաբերում է միայն պաշտոնատար անձանց կողմից դատական ակտը չկատարելուն, իսկ լրագրողը պաշտոնատար անձ չի կարող համարվել, հետեւաբար լրագրողը չի կարող դատական ակտը չկատարելու համար ենթարկվել քրեական պատասխանատվության: Կարող էր կիրառվել օրենսգր-

քի մեկ այլ հոդված՝ 343-ը՝ «Անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ», սակայն հոդվածի բովանդակությունից բխում է, որ այս հանցակազմը կարող է դրսեւորվել միայն դատաքննության մասնակիցներին կամ դատավորին վիրավորելով, մինչդեռ դատական ակտը կատարելուց հրաժարվելը չի կարող համարվել վիրավորանք՝ համաձայն «Վիրավորանք» հասկացության (Քր. օրենսգիրք, 135-րդ հոդված): Այսպիսով, լրագրողը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության: Միեւնույն ժամանակ, դատական ակտի կատարումն ապահովում են դատական ակտերի հարկադիր կատարողները: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 206.5 հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու համար՝ տուգանք նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 200-ապատիկի չափով: Տեղեկատվության աղբյուրը բացահայտելու մասին դատարանի որոշումը լրագրողին կպարտադրվի կատարել հարկադիր կատարողի կողմից, որի որոշումը չկատարելու դեպքում լրագրողը ենթակա է վարչական պատասխանատվության վերը նշված հոդվածով:

Մեր կարծիքով լրագրողի համար լավագույն ելքը կարող է լինել աղբյուրի կամ աղբյուրների հետ համաձայնության գալը, որ գաղտնիության խոստումը պահպանվի մինչեւ դատական փուլ հասնելը: Նման համաձայնության դեպքում լրագրողն ավելի պաշտպանված կլինի: Աղբյուրի ինքնության գաղտնիությունը պաշտպանելը լրագրողի համար եւ՛ իրավական, եւ՛ էթիկական պարտականություն է՝ կատարել տրված խոստումը, որից եւ կախված է լրագրողի նկատմամբ վստահությունը եւ՛ աղբյուրների հետ փոխհարաբերություններում, եւ՛ հասարակության մեջ ընդհանրապես:

## Հարցեր լսարանին

**1.** Ներկայացրեք տեսական կամ գործնական իրավիճակներ, երբ լրատվության աղբյուրը բացահայտելու հասարակական շահը գերակա է աղբյուրը գաղտնի պահելու իրավունքի նկատմամբ:

**2.** Մամուլից ներկայացրեք անանուն աղբյուրների օգտագործման օրինակներ: Ձեր կարծիքով, ո՞րն է եղել աղբյուրը գաղտնի պահելու՝ լրագրողի շարժառիթը:

# Առեւտրային գովազդի իրավական կարգավորումը Հայաստանում

Գովազդը ԶԼՄ-ի եկամտի հիմնական աղբյուրն է, ուստիեւ կարեւոր է առեւտրային գովազդի իրավական կարգավորման հիմնահարցերի քննարկումը ԶԼՄ-ի ֆինանսական անկախության ապահովման նպատակով: Գիտակցելով ԶԼՄ-ի գոյության համար գովազդի կենսական նշանակությունը, գովազդատուն կարող է գովազդի միջոցով ուղղակի եւ անուղղակի գրաքննություն իրականացնել ԶԼՄ-ի վրա, ազդել լրատվամիջոցի հրապարակումների բովանդակության եւ խմբագրական անկախության վրա: Պրակտիկայում անխուսափելի են այնպիսի դեպքերը, երբ գովազդատուն սպառնում է խմբագրությանը հրաժարվել գովազդի հետագա տեղադրումից, եթե լրատվամիջոցը հրապարակի գովազդատուին ոչ ձեռնտու բովանդակությամբ հոդված:

Հարցի կարգավորումը կարեւոր է նաեւ այն պատճառով, որ ԶԼՄ-ը հեռարձակելով կամ հրապարակելով գովազդ, այն հասցնում են հազարավոր սպառողների, եւ գովազդի` օրենքին հակասելու դեպքում կարող են լուրջ վնաս հասցնել սպառողի շահերին, ասենք եթե գովազդը պարունակում է կեղծ, մարդու առողջության համար վտանգավոր տեղեկություններ: Ուստի լրատվամիջոցը պետք է լավ հասկանա, թե նման դեպքերում իրավական ինչպիսի հետեւանքներ կարող են առաջ գալ:

**Հայաստանում առեւտրային գովազդային հարաբերությունները կարգավորվում են չորս հիմնական ակտերով` «Գովազդի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» եւ «Լեզվի մասին» ՀՀ օրենքներով**:

Դրանցից հիմնականն այնուամենայնիվ 1996թ. ընդունված «Գովազդի մասին» ՀՀ օրենքն է, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գովազդի ստեղծման եւ տարածման իրավական հիմքերը` ներառյալ ԶԼՄ-ում գովազդի տարածման կարգը: Այն չի կարգավորում միայն քաղաքական գովազդը, որին մենք կանդրադառնանք «Ընտրությունները եւ ԶԼՄ-ը» բաժնում: Սույն բաժնում կանդրադառնանք միայն ԶԼՄ-ում առեւտրային գովազդի իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Օրենքը ընդունվել է տասը տարի առաջ, հետեւաբար վաղուց արդեն այն վերանայելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ գովազդային հարաբերությունները զարգացել են, նոր ձեւեր ընդունել, փոխվել են գովազդի մի-

ջոցներն ու ձեւերը, եւ օրենքն այլեւս չի բավարարում դրանց պահանջները եւ լիարժեքորեն չի ապահովում սպառողի շահերի պաշտպանությունը:

## Ի՞նչ է կարգավորում օրենքը

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) կարգավորման առարկան են Հայաստանի Հանրապետության տարածքում գովազդի ստեղծման եւ տարածման իրավական հիմքերը: Օրենքի հիմնական նպատակն է անհրաժեշտ պայմաններ ապահովել հասարակության, գովազդ սպառողների, գովազդատուների, գովազդ արտադրողների, գովազդակիրների շահերին համապատասխանող գովազդի ստեղծման եւ տարածման համար:

### *Ի՞նչ է գովազդը.*

ըստ օրենքի 2-րդ հոդվածի՝

**գովազդը տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձեւավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական եւ իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ**:

Հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ գովազդը տարածվում է միայն հետեւյալ օբյեկտների վրա.

- իրավաբանական անձինք,
- ֆիզիկական անձինք,
- ապրանքներ,
- գաղափարներ,
- նախաձեռնություններ:

Միայն այս օբյեկտների մասին տեղեկությունների տարածումն է համարվում գովազդ: Արդեն պարզորոշ է, թե որքան սահմանափակ եւ այսօրվա պահանջներին չբավարարող է Օրենքով տրված գովազդի սահմանումը: Գովազդի մի հսկայական մաս առնչվում է, օրինակ, մատուցվող ծառայություններին, որոնց մասին Օրենքն ընդհանրապես ոչինչ չի ասում: Թերեւս «նախաձեռնություններ» բառը կարող էր ընկալվել որպես այդպիսին, սակայն միշտ չէ, որ գովազդվող ծառայությունը նախաձեռնություն է: Օրենքում բա-

ցակայում է նաեւ «միջոցառումներ» հասկացությունը, ինչն այսօր լայնորեն գովազդվում է ԶԼՄ-ով (համերգ, թատրոն, սպորտային խաղ, մրցույթ, խաղեր եւ այլն):

Մյուս կողմից, անհասկանալի է «գաղափարներ» հասկացությունն օբյեկտների շարքում ներառելը: Ռուսաստանի Դաշնությունում 2006թ. ընդունված «Գովազդի մասին» նոր օրենքից հանվեց «գաղափարներ» հասկացությունը, քանի որ այն առնչվում է քաղաքական գովազդին եւ չի կարող կոմերցիոն գովազդի օբյեկտ լինել: Ռուսաստանի դաշնությունում գովազդի մասին օրենսդրության հիմնավոր բարեփոխմանը, կարծում ենք, շուտով կարձագանքեն նաեւ ՀՀ օրենսդիրները:

Խիստ անորոշ է նաեւ գովազդի վերը տրված ձեւակերպման տարբերությունը լուրերից. օրինակ՝ թատրոնի նոր ներկայացման մասին պատմող լուրը կարելի է հեշտությամբ անվանել նաեւ գովազդ, քանի որ այն եւս **տեղեկատվական միջոցների օգնությամբ տվյալ իրավաբանական անձի (թատրոնի) մասին տեղեկությունների տարածումն է անորոշ թվով անձանց շրջանում եւ կոչված է ձեւավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ իրավաբանական անձի (թատրոնի) նկատմամբ**:

Ուրեմն, այս լուրը եւս կարող է համարվել գովազդ եւ չհեռարձակվել լրատվական բլոկում (նմանապես, ասենք, նկարչի ցուցահանդեսը, համերգը եւ այլն):

Օրենքն անդրադառնում է նաեւ սոցիալական գովազդին:

13-րդ հոդվածը նշում է, որ

**գովազդակիրը պարտավոր է բնակչության առողջության եւ առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող եւ առեւտրային բնույթ չկրող սոցիալական գովազդների համար առաջնահերթ տրամադրել գովազդին հատկացվող տարեկան եթերային ժամանակի /տպագրական մակերեսի/ ոչ պակաս, քան 5 տոկոսը**:

Այսինքն, Օրենքով հստակ սահմանված պարտականություն է սոցիալական գովազդ տպագրելը կամ հեռարձակելը, եւ այն չի կարող ԶԼՄ-ի հայեցողությամբ մերժվել: Ընդ որում, սոցիալական գովազդի տեղաբաշխման պատվերները կարող են տալ ինչպես ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունները: Այսօր հե-

ռուստաընկերություններից միայն «Երկիր մեդիա» եւ «Շողակաթ» հեռուստաընկերություններն են հիմնականում հեռարձակում սոցիալական գովազդ՝ ունենալով սոցիալական գովազդային հատուկ բլոկներ: Հանրային հեռուստատեսությունը շատ պասիվ է հանրության համար օգտակար եւ առեւտրային բնույթ չկրող սոցիալական գովազդների հեռարձակման խնդրում, մինչդեռ դա բխում է հենց այս լրատվամիջոցի բնույթից եւ բովանդակությունից: Ընդ որում, Օրենքը գովազդակրի՝ տվյալ դեպքում ԶԼՄ-ի վրա է դնում նաեւ սոցիալական գովազդի արտադրության պարտականությունը: Օրենքը, սակայն, չի անդրադառնում այն հարցին, որ եթե գովազդակիրը հրաժարվում է ոչ միայն արտադրել, այլ նաեւ տարածել սոցիալական գովազդ, ապա ինչպիսի պատասխանատության նա կարող է ենթարկվել:

Օրենքը չի կարգավորում նաեւ «հեռուստախանութների» հեռարձակումը: Դրանց թիվն օր օրի ավելանում է մասնավոր հեռուստաընկերություններում, երբեմն դրանց տեւողությունը գերազանցում է մեկ ժամը՝ գովազդելով ամենատարբեր ապրանքներ եւ ծառայություններ: Մինդեռ «հեռուստախանութները» պետք է որոշակի եւ խիստ չափանիշների ենթարկվեն:

Գործող Օրենքը չի տարածվում ֆիզիկական անձանց հայտարարությունների վրա, որոնք կապված չեն ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ: Ստացվում է, որ Օրենքը չի տարածվում վազող տողերով տրվող հայտարարությունների վրա, որոնց մեծ մասը տրվում է ֆիզիկական անձանց կողմից եւ կապված չէ ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ (օրինակ՝ քաղաքացին վաճառում կամ վարձով է տալիս բնակարան): Նշանակում է, որ սույն Օրենքով սահմանվող սահմանափակումները եւս չեն առնչվում այդ հայտարարություններին, եւ դրանք դուրս են Օրենքի կարգավորման շրջանակից:

Այնուհանդերձ, հաշվի առնելով դրանց առեւտրային բնույթը, դրանց վրա եւս պետք է տարածվեն գովազդին վերաբերող բոլոր սահմանափակումներն ու պահանջները: Վազող տողով տրվող հայտարարություններն հատկապես շատ են մարզային հեռուստաընկերություններում, քանի որ դրանք համեմատաբար ավելի էժան են (1000-1500 դրամ մեկ հայտարարությունը):

«Հովանավորչություն» հասկացությունը եւս Օրենքով չի սահմանվում: Այսօր հեռարձակվում են բազմաթիվ հաղորդումներ, որոնց բնույթը թեեւ գովազդային չէ, սակայն հաղորդումն ունի հովանավոր, որի մասին ասվում է հաղորդման մեջ մի քանի անգամ, նշվում կամ ցուցադրվում է տվյալ կազմակերպության արտադրանքը խոշոր պլանով: Լինում է նաեւ, որ հովանավորող կազմակերպությունն Օրենքով գովազդման ոչ ենթակա ապրանք արտադրող ընկերություն է, օրինակ, ծխախոտ: Այս դեպքում բախում է առաջա-

նում օրենսդրական բացի հետեւանքով` մի կողմից հաղորդումների հովանավորչությունը չի սահմանվում Օրենքով, հետեւաբար դրանց վրա չեն կարող տարածվել գովազդին ներկայացվող Օրենքով սահմանված սահմանափակումները:

Մյուս կողմից, պրակտիկայում հաղորդման հովանավորի դերում հաճախ հանդես են գալիս հենց ծխախոտ կամ ալկոհոլային խմիչքներ արտադրող ընկերությունները: Գովազդատուն, փաստորեն, հնարավորություն է ստանում շրջանցել օրենքով սահմանված սահմանափակումը եւ ազատորեն գովազդել իրեն, ասենք` «Գրանդ Տոբակո», «Ֆիլիպ մորիս» եւ ծխախոտ արտադրող այլ ընկերությունները: Եվրոպական որոշ երկրներում արգելվում է հովանավորչական հաղորդումներում խթանել հովանավորի ապրանքի, ծառայության վաճառքը, գնումը կամ վարձակալությունը: Նման սահմանափակումներ մեր Օրենքը չի նախատեսում:

Օրենքի բացթողումներից մեկն էլ այն է, որ այն չի արգելում լրատվական թողարկումներում կամ մամուլում թաքնված գովազդային նյութերի հեռարձակումը կամ տպագրումը: Հեռուստադիտողն, այսպիսով, ընկնում է թյուրիմացության մեջ, հաղորդվում է լուր, ասենք, այս կամ այն խանութի բացման մասին, ինչի դիմաց լրատվամիջոցը գումար է վերցրել եւ պատրաստել տվյալ ընկերության ապրանքը գովաբանող նյութ: Այսպիսի թաքնված գովազդային «լուրերով» լի է եւ՛ հեռուստաեթերը, եւ տպագիր մամուլը:

Թաքնված գովազդի արգելքն ավելի շուտ էթիկական կարգավորման է ենթակա, բայց այն առայժմ չի կարգավորվում հայկական ԶԼՄ-ի վարքագծի կանոններով: Միջազգային մի շարք կանոնագրերում առանձին դրույթով սահմանազատվում են լրագրողական եւ գովազդային գործունեությունները:

Բելգիական «Լրատվական գործունեության սկզբունքների կանոնագիրը» հստակեցնում է.

> **«Գովազդը պետք է հստակորեն տարանջատված լինի փաստական տեղեկատվությունից»:**

«Լրագրողների բրիտանական ազգային միության» վարքականոնի 12-րդ կետում գրված է, որ`

> **լրագրողը չպետք է հայտարարությունների, տեսաձայնային նյութերի միջոցով ապրանքներ ու ծառայություններ մատուցի**:

Գերմանիայում լրագրողների վարքականոնի 7-րդ հոդվածում գրված է.

**«Հրատարակիչներն ու խմբագիրները պետք է հետեւեն խմբագրական նյութերի եւ գովազդային հրապարակումների հստակ սահմանազատմանը: Գովազդը, լինի դա տեքստի, լուսանկարի, թե նկարի ձեւով, պետք է հստակ նշվի, որպես այդպիսին: Լրագրական գործունեությունը գովազդային աշխատանքի հետ համատեղելն անթույլատրելի է»:**

Օրենքի բացերից է նաեւ այն, որ կարգավորման շրջանակից ընդհանրապես դուրս է մնացել ինտերնետային գովազդը: Այսպիսով, հրատապ անհրաժեշտություն կա հստակեցնել գովազդի օբյեկտների շրջանակը եւ այն համապատասխանեցնել օրվա պահանջին:

## Առեւտրային գովազդին ներկայացվող հիմնական պահանջները

«Գովազդի մասին» օրենքի 5-րդ հոդվածում նշվում են գովազդին ներկայացվող հիմնական պահանջները: Դրանք են.

- գովազդի օրինականությունը,
- հավաստիությունը,
- պատշաճությունը:

Ըստ Օրենքի 6-րդ հոդվածի՝

**արգելվում եւ հակաօրինական է համարվում այն գովազդը, որն իրականացվում է օգտագործելով քաղաքացիների վստահությունը, փորձի կամ գիտելիքների պակասը, նախապաշարումները եւ սնահավատությունը: Անօրինական է այն գովազդը, որում վարկաբեկվում են մրցակիցները, ինչպես նաեւ նրանց արտադրած եւ իրացրած ապրանքների հատկությունները:**

Ապրանքի պահանջարկի իրական չափերը կեղծելը նույնպես գովազդը դարձնում է անօրինական: Քաղաքացիներին բռնության, հարձակողականության, խուճապի, ինչպես նաեւ բարոյականության համընդհանուր նորմերի խախտման դրդող, շրջակա միջավայրի դեմ ուղղված, սպառողի կյանքին, առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող գործողություններին դրդող կոչերը եւ փաստարկումները նույնպես արգելված են Օրենքով: Անօրինականություն է համարվում նաեւ որեւէ միջոցով (նախագծի, տեքստի, գովազդային բանաձեւերի, պատկերների, երաժշտական եւ ձայնային

էֆեկտների եւ այլն) սպառողների մոլորեցումը:

Գովազդի **հավաստիությունը** վերաբերում է ապրանքի հատկանիշներին՝ բնույթին, կազմին, պատրաստման ժամանակին, նշանակությանը, սպառողական հատկություններին, կիրառման պայմաններին, համապատասխանությանը ստանդարտին, քանակին, ծագման երկրին, գովազդի հրապարակման պահին ապրանքի արժեքին եւ գնին, ապրանքի առաքմանը, փոխանակմանը, վերադարձմանը, նորոգմանը, սպասարկմանը եւ շահագործմանը, երաշխիքային պարտավորություններին, պաշտոնական ճանաչմանը, դիպլոմների, մեդալների, մրցանակների եւ այլ պարգեւների ստացմանը եւ այլն:

8-րդ հոդվածով արգելվում է այն գովազդը, որում խախտվում է գովազդի **պատշաճությունը**, այսինքն՝ որը վարկաբեկում է բարոյականության համընդհանուր եւ ազգային նորմերը, պարունակում է ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական եւ այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ եւ պատկերներ:

**Անպատշաճ է այն գովազդը, որը ուղղակի կամ անուղղակի ձեւով արատավորում կամ անհարգալից վերաբերմունք է արտահայտում պետական խորհրդանիշների /զինանշանի, դրոշի, օրհներգի, դրամանիշի եւ այլն/ նկատմամբ, վարկաբեկում է իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, ինչպես նաեւ արտադրական, առեւտրային կամ այլ գործունեությունը, մասնագիտությունը, ապրանքատեսակը եւ այլն**:

Արգելվում է նաեւ **անբարեխիղճ եւ կանխամտածված կեղծ գովազդը**:

**Անբարեխիղճ է այն գովազդը, որի պատվերի, արտադրության եւ տարածման ընթացքում շրջանցվել են գործող օրենսդրությամբ սահմանված արգելքները եւ սահմանափակումները**:

Օրինակ՝ ծխախոտի գովազդի հեռարձակումը հեռուստատեսությամբ համարվում է անբարեխիղճ գովազդ: Գովազդն անբարեխիղճ ճանաչելու համար անհրաժեշտ է մոլորեցման կամ հասարակական վտանգի փաստի առկայությունը: Մոլորեցում ասելով հասկանում ենք ապակողմնորոշել լսարանին ապրանքների հատկությունները, քանակի, որակի, առանձնահատկությունների, գնի եւ այլ տեղեկությունների, ինչպես նաեւ դրանց գովազդատուների մասին տեղեկատվության լրիվ կամ մասնակի անարժանահավատության, բացթողումների եւ աղավաղումների հետեւանքով: Հասարակական վտանգ ասելով հասկացվում է գովազդի փաստացի ունակությունը մր-

ցակցին վնաս հասցնելու, բռնության, դրդելու, գովազդ սպառողի նախապաշարումներն ու սնահավատությունը, փործի պակասն օգտագործելու, գովազդ սպառողներին առողջության, սեփականության, ինչպես նաեւ շրջակա միջավայրի համար վտանգավոր գործողությունների մղելը:

Գովազդի բառացի ճշմարտացիությունը չի պաշտպանում այն անբարեխիղճ համարվելուց, եթե գովազդի ընդհանուր բովանդակությունից հասկացվում է այլ իմաստ: Գովազդը կարող է անբարեխիղճ համարվել ոչ միայն իր բովանդակության, այլեւ տեղի, ժամանակի եւ տարածման միջոցների պատճառով:

Օրենքով արգելվում է նաեւ կանխամտածված կեղծ գովազդը, որը անբարեխիղճ գովազդի ձեւ է: Սրա միջոցով գովազդատուն, գովազդ արտադրողը կամ գովազդակիրը կանխամտածված մոլորեցնում են գովազդ սպառողներին, օրինակ՝ տալով իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ գովազդվող ապրանքի մասին:

Գովազդի տեսակ է նաեւ հակագովազդը, որը տրվում է անբարեխիղճ գովազդի հետեւանքով սպառողի մոտ առաջացած սխալ պատկերացումները վերացնելու նպատակով՝ հերքելով անբարեխիղճ գովազդը եւ վերականգնելով իրական փաստերը: Անբարեխիղճ գովազդի փաստի բացահայտման դեպքում գովազդի մասին օրենսդրություն խախտողը պարտավոր է իր հաշվին հրապարակել հակագովազդ: Չնայած պարզ է, որ հակագովազդը երբեմն օգտագործվում է հենց գովազդի նպատակով: Օրինակ՝ ծխախոտ արտադրող ընկերությունը կազմակերպում է գովազդային հեռուստաարշավ ընդդեմ ծխելու կամ հանուն առողջ ապրելակերպի՝ միաժամանակ գովազդելով իր ապրանքանիշը:

Գովազդին ներկայացվող հիմնական պահանջներից է նաեւ այն, որ **գովազդը պետք է լինի հայերեն**: Անհրաժեշտության դեպքում, որպես լրացում, գովազդի շարադրանքը կարող է զուգորդվել նաեւ այլ լեզուներով՝ համեմատաբար փոքր տառերով: Գովազդի հայերեն շարադրանքը տեղեկատվության ծավալով չպետք է զիջի այլ լեզվով հրապարակվող տարբերակին: Հայերենի պահանջը չի վերաբերում օտար լեզուներով տպագրվող թերթերին, հատուկ հրատարակություններին, ապրանքանիշերին (siemens, bosh եւ այլ միջազգային ապրանքանիշերը, փաստորեն, կարող են հրապարակվել առանց հայերեն թարգմանության):

## Գովազդի ծավալը եւ տեւողությունը

Որո՞նք են էլեկտրոնային միջոցներում գովազդի հեռարձակման հիմնական կանոնները:

Օրենքով հատուկ կարգավորվում է էլեկտրոնային եւ տպագիր միջոցներում գովազդի հրապարակման կարգը:

**9-րդ հոդվածով արգելվում է մինչեւ 10 րոպե տեւողությամբ ռադիոհաղորդումներում եւ մինչեւ 20 րոպե տեւողությամբ հեռուստահաղորդումներում մեկ անգամից ավելի գովազդային ընդհատումը**:

Թե՛ հեռուստատեսությամբ, թե ռադիոյում բազմաթիվ են այս նորմի խախտումները:

Գովազդի ժամաքանակի մեկ այլ սահմանափակում է 9-րդ հոդվածի 2-րդ կետը, որն արգելում է

**ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ՝ ավելի քան 20 րոպեն մեկ հաճախականությամբ եւ յուրաքանչյուր մեկ եթերային ժամի հաշվով 10 րոպեից ավելի տեւողությամբ**:

Այսինքն, մեկ ժամում գովազդի ընդհանուր տեւղությունը չի կարող գերազանցել 10 րոպեն (իրականում դրանք տեւում են 20-25 րոպե): Նաեւ **գովազդային ընդմիջումները պետք է լինեն 20 րոպեն մեկ, եւ ոչ ավելի հաճախ**: Այսինքն մեկ ժամ տեւողությամբ հաղորդումը, ֆիլմը, երաժշտական կամ երգիծական թողարկումը կարող է ընդմիջվել 20 րոպեից ոչ շուտ հաճախությամբ, եւ մեկ ժամվա ընթացքում միայն առավելագույնը յուրաքանչյուր 20 րոպեն մեկ, նաեւ սկզբում եւ վերջում, իսկ գովազդի ընդհանուր տեւողությունը չի կարող գերազանցեզ 10 րոպեն մեկ ժամվա ընթացքում: Միացնենք պատահական ընտրությամբ որեւէ մասնավոր հեռուստառադիոկայան, եւ կարելի է համոզվել, որ գրեթե չկա այնպիսի հեռուստառադիոկայան, որը չի խախտում այս պահանջը: Ժամային սահմանափակումները խախտվում են գրեթե բոլոր ռադիո եւ հեռուստակայանների կողմից: Ի վերջո, եթերում այն տպավորությունն է ստեղծվում, որ ոգովազդն է ընդհատվում հաղորդումներով, ոչ թե հակառակը:

«Ինտերնյուս» հասարակական կազմակերպության 2005թ. աշնանը կատարած 19 հեռուստաընկերությունների եթերի մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ մեկ շաբաթվա ընթացքում մեկ ժամվա կտրվածքով արձա-

նագրվել է տասնիինգ հեռուստաընկերությունների կողմից արված գովազդային սահմանափակման 276 խախտում: Հատկանշական է այն հանգամանքը, որ տասնինը հեռուստաընկերություններից միայն երեքում խախտում չի արձանագրվել: Ընդհանուր առմամբ, խախտումների միջին թիվը կազմում է մոտավորապես 14.5 խախտում՝ ամեն հեռուստաընկերության հաշվով[38]: ՁԼՄ-ը պետք է գիտակցեն, որ գովազդի առատությունը խիստ նվազեցնում է դրա արդյունավետությունը:

Օրենքը նաեւ սահմանում է, որ **գովազդային ընդհատումներն արգելված են պաշտոնական լրատվական հաղորդագրությունների ժամանակ**:

Այս ձեւակերպման թերի լինելու պատճառով պրակտիկայում շրջանցելու հնարավորություն է ստեղծվում: Օրինակ, «Շանթ» հեռուստաընկերության «Հորիզոն», ինչպես նաեւ Հանրային հեռուստատեսության «Հայլուր» եւ այլ հեռուստաընկերությունների լրատվական թողարկումներն ընդմիջվում են գովազդային բլոկով այն հիմնավորմամբ, որ սպորտային թողարկումը լրատվական ընդհանուր բլոկից առանձին է եւ դիտվում է որպես առանձին լրատվական թողարկում: Ի՞նչ ասել է պաշտոնական լրատվական հաղորդագրություն, օրենքը չի տալիս դրա ձեւակեպումը, ուստի լրատվամիջոցներն ավարտելով պաշտոնական աղբյուրներից ստացած լուրերի հեռարձակումը՝ իրենց հայեցողությամբ ընդմիջում են լրատվական թողարկումը եւ հաղորդում գովազդ:

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետը թույլատրում է հեռարձակել գովազդային հատուկ հաղորդումներ՝ առանց սահմանափակելու դրանց հաճախականությունը: Միակ սահմանափակումը վերաբերում է գովազդային հաղորդման տեւողությանը, որը եթերային 1 ժամվա ընթացքում չպետք է լինի 5 րոպեից ավելի (Հ2, Երկիր մեդիա, ԹՎ5, Արմենակոբ հեռուստաընկերություններն, օրինակ, ունեն հատուկ գովազդային հաղորդումներ տասը րոպե եւ ավելի տեւողությամբ):

Մյուս խնդիրն այն է, որ գովազդային հաղորդումները երբեմն օգտագործվում են Օրենքով արգելվող ծխախոտի եւ ալկոհոլային խմիչքների գովազդներ: Ինչի համար, ի դեպ, որոշ հեռուստաընկերություններ նախազգուշացվել կամ տուգանվել են Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից: Օրինակ, 2003թ. օգոստոսի 19-ին հանձնաժողովի կողմից «ԱԼՄ հոլդինգ» ՍՊԸ-ին գրավոր նախազգուշացվել է թունդ ալկոհոլային խմիչքների գովազդը դադարեցնելու մասին: 2003թ. հուլիսի 11-ին «Ար» հեռուստաընկերությունը նախազգուշացվել է «Արարատ» եւ «Գլորիա» տեսա-

38. www.internews.am

կի ծխախոտ գովազդելու համար: «Ռադիո Վան» եւ «Ռադիո Հայ» ռադիոընկերությունները 2004թ. գրավոր նախազգուշացվել են «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերության ապրանքանիշով սիգարետ գովազդելու համար: Հաշվի առնելով նման խախտումների բազմազանության եւ տուգանքների թվի միջեւ անհամապատասխանությունը՝ հարց է առաջանում, թե ինչու՞ հանձնաժողովը պատշաճ հետեւողականություն չի դրսեւորում բոլոր իրավախախտների նկատմամբ:

Խիստ ցանկալի է, որ օրենքով սահմանվի նաեւ մեկ օրվա ընթացքում տարածվող գովազդի ընդհանուր տեւողությունը, այսինքն թե այն օրվա ընթացքում հեռարձակվող հաղորդումների քանի տոկոսը կարող է կազմել: Այնուամենայնիվ, մաթեմատիկական հաշվարկն այստեղ կարող է օգնել: Եթե Օրենքը սահմանում է, որ գովազդը մեկ ժամվա ընթացքում 10 րոպեն չի կարող գերազանցել, հետեւաբար մեկ օրվա ընթացքում առավելագույն չափը կարող է լինել 240 րոպե: Եւ եթե հեռուստաընկերությունն ունի 24 ժամ անընդմեջ եթեր, ապա դա կազմում է նրա հաղորդումների 10 տոկոսը, ավելի պակաս, քան ընդունված է Եվրոպայում, որտեղ այդ քվոտան ընդհանուր հաղորդումների 20 տոկոսն է կազմում, իսկ, օրինակ, Ռուսաստանի դաշնությունում վերջերս ընդունված օրենքը սահմանում է 15 տոկոս քվոտա[39]:

Հեռուստադիտողին, այնուամենայնիվ, ամենաշատը նյարդայնացնում են գեղավեստական ֆիլմի հեռարձակման ժամանակ գովազդային ընդմիջումները: Նայում ես մի հետաքրքիր ֆիլմ, մեկ էլ ամենակարեւոր ու ճակատագրական պահին՝ գովազդ: Պետք է նշել, որ, օրինակ, Եվրոպայում արգելվում է գեղարվեստական ֆիլմն ընդհատել 45 րոպեում մեկ անգամից ավելի հաճախ:

Իրենց բացասական ազդեցությամբ հաջորդում են վիճակախաղերի գովազդները: Երեւի բոլորն են հիշում այն ժամանակները, երբ հեռուստաեթերը ողողված էր ամենաբազմազան լոտոներով, որոնք հաջորդում էին մեկը մյուսին՝ գրեթե առանց ընդմիջման: Ի վերջո, 2003թ. դեկտ. 17-ին Ազգային ժողովն ընդունեց օրենսդրական սահմանափակումներ, որոնք էականորեն բարելավեցին այս ոլորտը, նաեւ խնայեցին հեռուստադիտողի՝ արդեն տեղի տվող նյարդերը: Համաձայն կատարված փոփոխությունների՝ սահմանվեց դրանց առավելագույն տեւողությունը մեկ օրվա ընթացքում.

**յուրաքանչյուր հեռուստաալիքով հեռարձակվող յուրաքանչյուր վիճակախաղի, շահումով խաղի, խաղատան կազմակերպչի գովազդի ընդհանուր տեւողությունը, այդ թվում՝ նրանց մա-**

39. www.medialaw.ru

**սին գովազդային հաղորդումները եւ գովազդային տեղեկատվությունները, 24 ժամվա ընթացքում չի կարող գերազանցել 9 րոպեն, իսկ մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի եւ չի կարող գերազանցել 60 վայրկյանը: Սա պարզապես փրկություն էր: Արգելվեց գովազդային վիճակախաղի դրամական շահումներ գովազդելը, ինչպես նաեւ վիճակախաղի, շահումով խաղի կամ խաղատան գովազդումը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ եւ 20 րոպե հետո:**

Կատարված փոփոխություններով արգելվեց նաեւ վիճակախաղի, շահումով խաղի կամ խաղատան գովազդումը Հանրային հեռուստատեսությամբ, բացառությամբ հովանավորության դեպքերի: Այս վերջին բացառությունն էլ հնարավորություն տվեց Հանրային հեռուստատեսությանը գեղարվեստական ֆիլմերի հովանավոր ընտրել հենց վիճակախաղերին՝ մեկ-մեկ գովազդելով դրանք ֆիլմից առաջ եւ հետո եւ ..... ընթացքում:

Որոշ երկրներում արգելվում է վիճակախաղերի գովազդներում պատկերել մարդկանց կամ կենդանիների, ինչպես նաեւ վիճակախաղերի գովազդը թույլատրելի է միայն 22-ից մինչ առավոտյան 7-ը: Նման սահմանափակումներ մեզանում առայժմ չեն գործում:

Ի տարբերություն էլեկտրոնային լրատվամիջոցների՝ տպագիր լրատվամիջոցներում գովազդի ծավալները սահմանափակվում են ոչ թե օրենքով, այլ միայն կանոնադրությամբ (10-րդ հոդվածը): Տպագիր լրատվամիջոցներում տպագրվող գովազդին չեն ներկայացվում ծավալային սահմանափակումներ, ինչը տարօրինակ է: Պետք է հստակ սահմանվի, թե թերթի մեկ համարի ընդհանուր ծավալի քանի՞ տոկոսը կարող է գրավել գովազդը: Նման սահմանափակման բացակայությունը կարող է հանգեցնել նրան, որ թերթի, ասենք, կեսից ավելին կարող է տրամադրվել գովազդի:

## Գովազդի հատուկ սահմանափակումները

**26.06.02թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով արգելվեց էլեկտրոնային ԶԼՄ-ում ծխախոտի եւ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) խմիչքների (բացառությամբ կոնյակի) գովազդը: Ծխախոտի գովազդն արգելված է նաեւ արտաքին գովազդում:**

Տպագիր ԶԼՄ-ում ծխախոտի եւ ալկոհոլային խմիչքների գովազդ տեղադրելը թույլատրելի է, բացառությամբ լրագրերի կազմի, ինչպես նաեւ առաջին եւ վերջին էջերի: Նշվում է նաեւ, որ ծխախոտի գովազդի առնվազն 10 տոկոսը պետք է պարունակի ծխախոտի օգտագործման վնասակարության վերաբերյալ նախազգուշացնող տեղեկատվություն: Այս պահանջը կարծում ենք պետք է վերաբերի նաեւ ալկոհոլային խմիչքների գովազդին: Ալկոհոլը ոչ պակաս վնասակար է մարդու առողջությանը, քան ծխախոտը:

Ալկոհոլի գովազդը պետք է ենթարկվի նաեւ ժամային սահմանափակումների. դրանց հեռարձակումը պետք է թույլատրվի, օրինակ, ժամը 22-ից մինչ առավոտյան 7-ը՝ դրա վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Մինչդեռ մեր օրենսդրությամբ ալկոհոլ կարելի է գովազդել օրվա ցանկացած ժամի (նախկինում գործում էր ցերեկային ժամերին հեռարձակելու արգելքը՝ ժամը 7.00-ից մինչեւ 21.00-ը):

Մեր կարծիքով, այս լիբերալ մոտեցումը պետք է վերացվի եւ մեկընդմիշտ արգելվի ծխախոտի գովազդի որեւէ դրսեւորում նաեւ տպագիր ԶԼՄ-ում: Ինչպես նաեւ պետք է նվազեցնել ալկոհոլային խմիչքի 20 տոկոս թնդության սահմանը՝ այն հասցնելով 10-ի:

20 տոկոսը գերազանցող սպիրտի պարունակությամբ ալկոհոլային խմիչքներ արտադրողներն, այնուամենայնիվ, գտել են եթերում գովազդվելու հրաշալի տարբերակ՝ օգտագործելով օրենսդրական բացը: Այսպես, Օրենքն արգելում է խմիչքի գովազդը, ոչ թե ապրանքանիշի: Ընկերություններն էլ գովազդում են ոչ թե կոնկրետ արտադրանքը, այլ ապրանքանիշը՝ շրջանցելով Օրենքը:

Դեռեւս 2005 թվականի գարնանը Երեւանյան հեռուստաընկերությունների ղեկավարները պայմանավորվեցին այլեւս չդիմել նման խորամանկության եւ մեկընդմիշտ դադարեցնել նման ընկերությունների գովազդի հեռարձակումը 2005 թվականի հունիսի 1-ից: Սակայն սահմանված ժամկետից հետո էլ շարունակվում են եթերային խորամանկությունները: Այսպիսով, ղեկավարները չեն հարգում ոչ միայն Օրենքը, այլեւ իրենց գործարար պայ-

մանավորվածությունը: Կարծում ենք՝ այս իրավճիակին վերջ կարող են դնել 2007թ.-ի մարտին «Գովազդի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, որոնցով արգելվեց նաեւ հովանոցային գովազդը:

Հովանոցային գովազդն այն գովազդն է, որում գովազդվող ապրանքների եւ ծառայությունների համար օգտագործվող ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը նույնական են կամ շփոթելու աստիճանի նման են այն ապրանքների եւ ծառայությունների ապրանքային նշանին կամ դրանք արտադրող կամ առաջարկող իրավաբանական անձանց ֆիրմային անվանմանը, որոնց գովազդի նկատմամբ Օրենքով նախատեսված են սահմանափակումներ: Հովանոցային է համարվում նաեւ այդպիսի ապրանքներ արտադրողի կամ վաճառողի եւ ծառայություններ մատուցողի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման կամ ցանկացած այլ անհատականացման միջոցի հիշատակումը գովազդում»: Փաստորեն, այն հեռուստաընկերությունը, որը կցուցադրի ալկոհոլային խմիչքի ապրանքանիշը կամ այն պատկերող շշի մի հատվածը, ենթակա կլինի պատասխանատվության Օրենքով:

Գովազդի մասին օրենքի համաձայն՝

**ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի գովազդներում արգելվում է ներշնչել, որ ալկոհոլը եւ ծխախոտն ունեն բուժական, խթանող, հանգստացնող եւ լարվածությունը թուլացնող հատկություններ, դրդել սպառողներին ալկոհոլի եւ ծխախոտի լայն օգտագործմանը, բացասական գնահատական տալ չափավոր օգտագործմանը կամ չօգտագործմանը, ներկայացնել խմիչքներում՝ ալկոհոլի, իսկ ծխախոտի մեջ՝ նիկոտինի պարունակության բարձր աստիճանը՝ որպես դրական հատկություն**:

26.06.02թ. ընդունված փոփոխությունների փաթեթով այս հոդվածը համալրվեց եւս երկու սահմանափակմամբ.

**արգելվում է ներշնչել, որ ալկոհոլային խմիչքներ օգտագործելը կամ ծխելն էական է բարետես կազմվածք ձեռք բերելու, հասարակական հաջողության հասնելու կամ գրավչություն ստանալու համար: Մյուս սահմանափակումը արգելում է 25 տարեկանից ցածր տարիք ունեցող անձանց նկարահանել եւ պատկերել:**

Ի դեպ, մեր կարծիքով, Օրենքի այս պահանջները պետք է վերաբերեն ոչ միայն ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի գովազդներին, այլեւ բոլոր մյուս գովազդներին:

16.12.2000թվականին ընդունված «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածով այսուհետ **արգելվեց ծխախոտի արտաքին գովազդը պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների եւ այլ միջոցների ձեւով: Դրա կիրառումը կիրականացվի նույն թվականի հոկտեմբերի 1-ից**:

Այսօր էլ ծխախոտի գովազդը շարունակում է իր հաղթարշավը Երեւանի փողոցներում եւ այլուր:

## Պատասխանատվություն գովազդի մասին օրենսդրությունը խախտելու համար

Օրենքի 23-րդ հոդվածով սահմանվում է, որ

> **այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնց իրավունքները խախտվել են անբարեխիղճ գովազդի հետեւանքով, իրավունք ունեն դիմել դատարան՝ պահանջելով վնասի հատուցում, քաղաքացու կյանքին, առողջությանը եւ գույքին պատճառված վնասի հատուցում, բարոյական վնասի հատուցում եւ գովազդի հրապարակային հերքում**:

Հոդվածի գ ենթակետով սահմանված բարոյական վնասի փոխհատուցում քաղաքացին չի կարող պահանջել, քանի որ այն հակասում է ՀՀ Քաղաքացիական օրենսդրությանը, որով բարոյական վնասը փոխհատուցման ենթակա չէ:

Գովազդի մասին օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության ենթակա է եւ՛ գովազդատուն՝ գովազդ պատվիրողը, եւ՛ գովազդ արտադրողը, եւ՛ գովազդակիրը՝ գովազդ տարածողը: Գովազդատուն պատասխանատվություն է կրում գովազդային պատվերի օրինականության, այդ պատվերում բերված տվյալների հավաստիության համար, եթե նա չի ապացուցում, որ գովազդային օրենսդրության պահանջների խախտումը տեղի է ունեցել գովազդ արտադրողի կամ գովազդակրի մեղքով: Գովազդ արտադրողը պատասխանատվություն է կրում գովազդային հաղորդագրության պատշաճության եւ օրինականության համար: Գովազդակիրը պատասխանատվություն է կրում գովազդի տեղաբաշխման միջոցների, ժամանակի եւ տեղի համար:

Համընդհանուր խախտումներով լի պրակտիկայի վերահսկողությունը է՛լ ավելի է խճճվում պատասխանատվության հստակ մեխանիզմների բացա-

կայության պատճառով: Գովազդի մասին օրենսդրության պահպանման վերահսկումը դրված է պետական կառավարման լիազորված մարմնի վրա, որպիսին առայժմ ստեղծված չէ: Գովազդի մասին օրենսդրության առանձին խախտումներով զբաղվում են մի շարք մարմիններ:

Այսպես, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը վերահսկում է դաշտը անբարեխիղճ գովազդի մասով, երբ դրա տարածումը սպառնում է տնտեսվարող սուբյեկտների շահերին եւ առաջացնում է անբարեխիղճ մրցակցություն («Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 06.11.2000թ.): Հանձնաժողովը սկզբնավորումից՝ 2001թվականից մինչ օրս անբարեխիղճ գովազդ պատվիրելու եւ տարածելու համար նախազգուշացրել եւ տուգանել է 3 գովազդատուի՝ «Վիվա Սելլ» ընկերությանը (նախազգուշացում), «Գրանդ Քենդի»-ին (նախազգուշացում) եւ «Աերոֆլոտ»-ին գովազդի միջոցով անբարեխիղճ մրցակցության համար տուգանել է 100 հազար դրամ: Օրինակ, 2006 թվականի սկզբին «Գրանդ Քենդի» ընկերության գովազդային հոլովակում ընկերությունն իր շոկոլադի առավելություններն ընդգծելու համար վարկաբեկում էր մեկ այլ արտասահմանյան ընկերության արտադրանքը: Գովազդի տեքստում ասվում էր, որ շուկայում հայտնվել են տան պայմաններում պատրաստված անորակ եւ վնասակար շոկոլադներ, միաժամանակ կադրում ցուցադրվում էր թուրքական եւ ուկրաինական ընկերությունների արտադրանքը, ընդ որում հոլովակում ցուցադրվում էր ուկրաինական բավականին հայտնի ու որակյալ առեւտրային ապրանքանիշ, որն ԱՊՀ-ում հայտնի է բարձրորակ շոկոլադի տեսակներով: Գովազդը հանվեց եթերից ՀՀ-ում Ուկրաինայի դեսպան Ալեքսանդր Բոժկոյի՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովին դիմելուց անմիջապես հետո:

Էլեկտրոնային ԶԼՄ-ի դեպքում գովազդային օրենսդրության ապահովումն իրականացնում է նաեւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը, Հանրային հեռուստառադիոընկերության դեպքում՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը: Թեեւ հայկական հեռուստառադիոեթերն ուղղակի ողողված է հակաօրինական գովազդով, ծխախոտի եւ արգելված ալկոհոլային խմիչքների գովազդով, սակայն Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը բավարարվել է ընդամենը 5 անգամ տուգանելով ու նախազգուշացնելով: Ակնհայտ է, որ հանձնաժողովը աչք է փակում զանգվածային խախտումների առաջ՝ անհրաժեշտության դեպքում հեռուստառադիո-ընկերություններին վերահսկելու լծակ ունենալու նպատակով:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված

մարմինն իրավասու է տուգանք կիրառել գովազդատուի, գովազդ արտադրողի, գովազդակրի նկատմամբ գովազդային օրենսդրության խախտման մասին իր ծանուցագրերի պահանջների կատարումից խուսափելու կամ ժամանակին չկատարելու համար:

ՀՀ պետական կառավարման լիազորված մարմինն իրավունք ունի խախտող սուբյեկտների նկատմամբ կիրառել **տուգանք նվազագույն աշխատավարձի մինչեւ 100-ապատիկի չափով**: Անբարեխիղճ մրցակցության համար, որը կարող է դրսեւորվել նաեւ գովազդի միջոցով տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացմամբ, կամ տնտեսվարող սուբյեկտի ու նրա գործունեության վարկաբեկմամբ, կամ հասարակության մոլորեցմամբ, կամ տնտեսվարող սուբյեկտի համբավը վնասելով՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ բազային տուրքի հարյուրապատիկի չափով **(100 հազար դրամ)**: Նույն խախտումը տնտեսվարող սուբյեկտի կողմից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ բազային տուրքի հազարապատիկի չափով՝ **մեկ միլիոն դրամ** («Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի 6-րդ հոդված, 5-րդ կետ, ընդունված 04.05.2005թվ ին):

Որոշ դեպքերում հեռուստաընկերությանն առավել ձեռնտու է վճարել 100 հազար դրամ տուգանքը եւ շարունակել հեռարձակել օդու գովազդը, քանի որ հեռարձակումից ստացած շահույթը մի քանի անգամ գերազանցում է տուգանքի չափը:

Գովազդային շուկայում մեկ միասնական քաղաքականության պահպանման նպատակով ԱՊՀ երկրները 2003 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրել են «Գովազդային գործունեության կարգավորման ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության մասին համաձայնագիր»[40], որով սահմանվում են գովազդային գործունեությանը ներկայացվող հիմնական պահանջները եւ դրանք պահպանելու՝ պետությունների պարտավորությունները:

Պետք է նշել, որ արեւմուտքում գովազդային դաշտը հիմնականում ենթարկվում է ինքնակարգավորման՝ որպես առավել արդյունավետ մեխանիզմ: Գովազդային գործունեություն իրականացնողները՝ գովազդատու, արտադրող եւ ԶԼՄ, արեւմուտքում վաղուց հասկացել են, որ գովազդը պետք է համապատասխանի որոշակի էթիկական նորմերի, այն պետք է լինի օրինական, պատշաճ, ազնիվ եւ ճշմարտացի, պատրաստված սպառողի եւ հասարակու-

40. Законодательство и Практика Масс Медиа, 2006, стр. 22

թյան հանդեպ ունեցած սոցիալական պատասխանատվության զգացումով եւ արդար մրցակցության կանոնների պահպանմամբ: Սրան կարելի է հասնել միայն էթիկական նորմերի հաստատմամբ եւ պահպանմամբ: Այս նպատակով գովազդային գործունեություն իրականացնողները ստեղծում եւ ֆինանսավորում են ինքնակարգավորման մարմիններ՝ էթիկական նորմերը բարձր պահելու, գովազդային ոլորտն արդար, պատշաճ, ազնիվ ու օրինական դարձնելու, ի վերջո սպառողի իրավունքները պահպանելու նպատակով: Նման մարմնի հիանալի օրինակ է Եվրոպայով մեկ դեռեւս 1962 թվականից գործող Գովազդի ստանդարտների մարմինը (ASA – Advertising Standards Authority)[41]: Վերջինիս առաքելությունն է կարգավորել գովազդի դաշտը, սահմանել գովազդի հիմնական կանոնները, ինչպես նաեւ քննել եւ լուծել գովազդին վերաբերող բողոքները:

Նման մարմինները, սակայն, եւս ունեն իրենց շահերը պաշտպանելու խնդիր, այդ իսկ նպատակով կազմում են դաշինքներ: Բրյուսելում գտնվող Եվրոպական գովազդային չափանիշների դաշինքը (EASA - European Advertising Standards Alliance)[42] միավորում է 26 պետությունների գովազդային ինքնակարգավորման ազգային մարմիններ (ներառյալ Թուրքիան եւ Ռուսաստանը): Այն հիմնադրվել է 1992 թվականին Եվրամիության Մրցակցության հանձնակատարի՝ պարոն Լեոն Բրիթենի նախաձեռնությամբ՝ այն հիմնավորմամբ, որ այս ոլորտում համագործակցությունն առավել արդյունավետ է, քան մանրամասն ծեւակերպված օրենսդրությունը: Դաշինքի հիմնական նպատակն է ապահովել, որ տարբեր երկրներում ի հայտ եկող բողոքներն արդյունավետ լուծում ստանան հնարավորինս սեղմ ժամկետներում, ինչպես նաեւ պաշտպանվեն Եվրոպական երկրներում գործող գովազդային ոլորտի ինքնակարգավորման մարմինների շահերը:

Եվրոպական երկրներում չի գործում մեկ միասնական գովազդային էթիկական կանոնագիր: Յուրաքանչյուր երկիր ընդունել է էթիկական նորմերի իր համալիրը, որը, սակայն, հիմնվում է Առեւտրի համաշխարհային կազմակերպության ընդունած սկզբունքների վրա: Ի դեպ, այս կանոնագիրը գործում է բոլոր այն երկրներում, որոնք ԱՀԿ-ի անդամ են՝ ներառյալ Հայաստանը: Այսինքն, թեեւ մեզանում չեն ընդունված գովազդային գործունեություն իրականացնողների էթիկական նորմեր, բայց նրանց վրա տարածվում են ԱՀԿ-ի սկզբունքները:

41. http://www.asa.org.uk/asa

42. http://www.easa-alliance.org - Դաշինքի պաշտոնական կայքում կարելի է ծանոթանալ Դաշինքի ընդունած ինքնակարգավորման հիմնական սկզբունքներին եւ գործունեության չափանիշներին:

## Հարցեր լսարանին

**1.** Հեռուստաեթերից կամ տպագիր մամուլից դուրս գրեք գովազդի օրենսդրության խախտումներ եւ ներկայացրեք, թե կոնկրետ ո՛ր դրույթի խախտում եք արձանագրել:

**2.** Ի՞նչ է ցույց տալիս ձեր ուսումնասիրությունը. գովազդի օրենսդրության ո՞ր խախտումներն են առավել մեծ թիվ կազմում: Ինչո՞վ է դա պայմանավորված:

# Դատավարությունների լուսաբանման կարգը ՀՀ-ում

Դատական քննության հրապարակայնությունը արդարադատության կարեւոր սկզբունքներից է: Լրագրողները դատարանի դահլիճում հետեւում են արդարադատության իրականացմանը, հասարակությանը տեղեկացնում դատական գործերի քննության արդյունավետության կամ թերությունների մասին: Մի խոսքով՝ կատարում են արդարադատությունը հսկողի դեր:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին» (2003)13[43] Հանձնարարականում նշվում են քրեական գործերով դատաքննության վերաբերյալ լրատվամիջոցների կողմից տեղեկատվություն հաղորդելու սկզբունքները: **Որպես առաջին սկզբունք է նշվում լրատվամիջոցներով հանրության իրազեկումը.**

**«Հանրությունը պետք է հնարավորություն ունենա լրատվամիջոցների միջոցով տեղեկատվություն ստանալ դատական եւ իրավապահ մարմինների գործունեության մասին: Ըստ այդմ, լրագրողները պետք է հնարավորություն ունենան ազատորեն լուսաբանելու եւ մեկնաբանելու քրեական դատավարության գործընթացը՝ ենթարկվելով միայն ներքոհիշյալ սկզբունքներով նախատեսված սահմանափակումներին»**:

Դատական համակարգի լուսաբանման եւ հսկողության իրենց դերը պատշաճ եւ արհեստավարժ կատարելու համար լրագրողները պետք է իմանան իրենց իրավունքներն ու պարտականությունները: Խնդիրն իր սահմանադրական կարգավորումն է ստացել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում.

**«Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:**

40. Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից հուլիսի 10, 2003 թվականին նախարարների ներկայացուցիչների 848-րդ նստաշրջանում:

Դատական քննության լուսաբանման եւ հրապարակայնության հարցը կարգավորվում է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ եւ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածներով:

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի՝ «Կարգը դատական նիստում»,

**դռնբաց դատական նիստին ներկա գտնվողները (ներառյալ լրագրողները) իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն եւ ձայնագրություն: Դատական նիստի կինո եւ լուսանկարահանումը, ինչպես նաեւ հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ:**

Հոդվածից երեւում է, որ քաղաքացիական գործեր լուսաբանող լրագրողները կարիք չունեն նիստը նախագահողից ստանալ հատուկ թույլտվություն նիստը ձայնագրելու կամ սղագրություն-գրառումներ կատարելու համար: Դա կարող են անել առանց թույլտվության, մինչդեռ, եթե ցանկանում են կատարել նաեւ լուսանկարահանում կամ տեսագրում, ապա այս դեպքում լրագրողը պետք է նիստը նախագահողից թույլտվություն ստանա: Վերջինս որոշումը կայացնում է կողմերի համաձայնության հիման վրա: Այսինքն, եթե կողմերից մեկը դեմ է տեսագրմանը կամ լուսանկարահանմանը, նիստը նախագահողը պետք է մերժի լրագրողի խնդրանքը: Նշենք նաեւ, որ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածում առկա է մի թերություն. եթե հասկանալի է, որ տեսանկարահանումը կարող է թույլատրելի լինել դատարանի հայեցողությամբ, ապա միանգամայն անընդունելի եւ անտրամաբանական է արդեն նկարահանված նյութի հեռարձակումը ռադիոյով կամ հեռուստատեսությամբ դատարանի կողմից արգելվելու հնարավորությունը, որ տալիս է օրենքի այս նորմը:

Քրեական գործերի լուսաբանման հարցը մասամբ է կարգավորված օրենսդրությամբ: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանում է քրեական գործերի դատական քննության դռնբացության սկզբունքը:

**Քրեական գործերի քննության ընթացքում լրագրողները ազատ կարող են ներկա գտնվել, կատարել գրառումներ, սղագրություններ, ձայնագրություն: Լուսանկարահանում եւ տեսագրություն կարելի է կատարել միայն նիստը նախագահողի թույլտվությամբ: Նշենք նաեւ, որ կողմերի համաձայնությունն այստեղ պարտադիր պայման չէ:**

Համաձայնագրի չորրորդ սկզբունքի համաձայն՝ եթե լրագրողները դատական եւ իրավապահ մարմիններից օրինական ճանապարհով տեղեկություն են ձեռք բերել ընթացքի մեջ գտնվող քրեական գործի վերաբերյալ, այդ մարմինները պետք է առանց խտրականության նույն տեղեկատվությունը հասանելի դարձնեն բոլոր այն լրագրողների համար, որոնք նույն տեղեկատվության համար արդեն դիմել են կամ դիմում են: Սա նշանակում է՝ տեղեկատվության տրամադրման գործում խտրականությունը բացառվում է՝ անկախ լրատվամիջոցի ուղղվածությունից, դիրքորոշումից կամ լրագրողի անձից:

Եվրախորհրդի համաձայնագրի 12-14 սկզբունքները վերաբերում են դատաքննությանը լրագրողների մասնակցությանն ու լուսաբանման կարգին: Այսպես, 12-րդ սկզբունքի համաձայն՝

**«Լրագրողներին պետք է թույլատրվի ներկա լինել բաց դատական լսումներին եւ դատավճիռների հրապարակային ընթերցմանը առանց խտրականության եւ առանց նախնական հավատարմագրման պահանջի»:**

13-րդ սկզբունքը նշում է, որ

**դատական նիստերի դահլիճներում անհրաժեշտ քանակով նստելատեղեր պետք է տրամադրվեն լրագրողներին համապատասխան պահանջի համաձայն. առանց այդպիսով սահմանափակելու հանրության ներկայությունը:**

Հրապարակայնության կարեւոր տարրերից է դատական գործերի նյութերի մատչելիությունը: Սակայն գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ դատավարությունների լուսաբանման ընթացքում լրագրողների իրավունքներն անհարկի սահմանափակվում են: Հիմնական դժգոհություններից է այն, որ հնարավորություն չի տրվում ծանոթանալ այս կամ այն գործի նյութերին: Դատական գործերի մանրամասներն այդպես էլ չեն հասնում լրագրողին: Վերջինս ստիպված սահմանափակվում է այն ամենով, ինչ տեսնում եւ լսում է դատարանի դահլիճում: Մինչդեռ գործն ամբողջական եւ անաչառ լուսաբանելու համար նախ անհրաժեշտ է ծանոթանալ գործի նյութերին: Եղել են դեպքեր, երբ լրագրողին անհիմն մերժել են հնարավորություն տալ ծանոթանալու նույնիսկ դատարանի որոշմանը:

Կարեւոր հարց է այն, թե արդյոք կարո՞ղ են դատական գործի նյութերին ծանոթանալ գործին չմասնակցող անձինք, այդ թվում եւ լրագրողները: ՀՀ օրենսդրությունը նման իրավունք տալիս է միայն գործին մասնակցող անձանց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝

**գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները**:

Չպետք է մոռանալ, սակայն, որ բոլոր դեպքերում դատարանի որոշումն ընթերցվում է հրապարակայնորեն, նույնիսկ այն դեպքում, երբ դատական գործի քննությունն անցել է դռնփակ: Սա նշանակում է, որ ընթերցվող որոշումը կարող է ունկնդրել յուրաքանչյուր ոք: Մեր կարծիքով, եթե քաղաքացին իրավունք ունի լսել հրապարակավ ընթերցվող դատարանի վերջնական որոշումը, այդ իրավունքը չի կարող սահմանափակվել ինֆորմացիայի ընկալման որեւէ այլ ձեւի դեպքում (օրինակ՝ ստանալ դրա պատճենը, կարդալ դատարանի գրասենյակում եւ այլն): Եթե դատարանի որոշումը բոլոր դեպքերում հրապարակվում (ընթերցվում) է դռնբաց, ապա սահմանափակումներ չեն կարող նախատեսվել նաեւ որոշմանը գրասենյակում ծանոթանալու դեպքում: Այսինքն՝ լրագրողը կարող է եւ իրավունք ունի ծանոթանալ դատարանի որոշմանը եւ ընկալել որեւէ այլ, իր նախընտրած ձեւով: Քանի որ օրենսդրությամբ նշված չէ, թե դատարանի որոշումը չի կարող տրվել գործին չմասնակցած անձանց, ուստի բոլոր քաղաքացիները իրավունք ունեն այն ստանալու:

Այստեղ անմիջականորեն գործում է սահմանադրական նորմը (ՀՀ Սահմանադրության 27 հոդված), որի համաձայն՝ **յուրաքանչյուր ոք ունի տեղեկություն ստանալու իրավունք**: Քաղաքացին իրավունք ունի օրինական ճանապարհով ձեռք բերված տեղեկատվությունը ցանկացած ձեւով տարածել:

Ինչ վերաբերում է գործի ավարտից հետո դատական նիստերի եւ դատավարության ընթացքն արձանագրող այլ փաստաթղթերի մատչելիությանը, նշենք.

**ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այլ անձանց իրավունքը՝ ծանոթանալու դատական նիստի արձանագրությանը եւ գործի նյութերին: Նման իրավունք վերապահված է միայն կողմերին:** Օրինակ՝ ըստ օրենսգրքի 59 հոդվածի՝ տուժողը իրավունք ունի «ծանոթանալ քննչական եւ այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է ..., ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը եւ ներկայացնել դրա մասին իր դիտողությունները» (կետ 8), իրավունք ունի «նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել եւ գործից դուրս գրել

ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ» (կետ 9), ինչպես նաեւ «իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաեւ դատավճռի կամ դատարանի ՝ այլ վերջնական որոշման պատճենը» (կետ 11):

Նույնպիսի իրավունքներ սահմանված են դատավարության կողմ հանդիսացող մյուս սուբյեկտների համար եւս (քաղաքացիական հայցվոր, կասկածյալ, մեղադրյալ, պաշտպան եւ այն):

Նույն մոտեցումն ունի նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որի 28-րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետը նախատեսել է, որ «**Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն՝ ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները…»**:

Եթե օրենսգրքերը հատուկ նշում են դատամատչելիության իրավունքի սուբյեկտը, արդյո՞ք դրանից մեխանիկորեն հետեւում է, թե մյուս սուբյեկտները այդ իրավունքից չեն կարող օգտվել: Ո՛չ, եթե հարցին նայենք սահմանադրական նորմերի տեսանկյունից, որոնց համաձայն՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքները պետք է մեկնաբանվեն «այն, ինչ արգելված չէ՝ թույլատրված է» սկզբունքով, իսկ պաշտոնատար անձինք «այն, ինչ թույլատրված չէ ՝ արգելված է» սկզբունքով: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 5–րդ հոդվածի համաձայն՝

**քաղաքացիները իրավունք ունեն անել այն, ինչն արգելված չէ օրենքով, իսկ պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ:**

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

**«Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:**

Դատամատչելիության սահմանները չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրությամբ հռչակվող տեղեկատվության մատչելիությանը: Սակայն, սահմանադրական նորմը կարող է կոնկրետացվել առանձին բնագավառներում՝ հաշվի առնելով վերջիններիս, մասնավորապես՝ քրեական եւ քաղաքացիական դատավարությունների շահերը: Այդպիսի կոնկրետացում կարող է ար-

վել միմիայն հատկապես նշելով, թե ո՛ր դեպքում է, որ սահմանադրական նորմի ներգործությունը սահմանափակվում է: Նման կոնկրետացման ձեւերից կարող է լինել օրենքում հատկապես նշելը՝ այն անձանց, որոնք մասնավորապես քրեական եւ քաղաքացիական դատավարության ոլորտներում տեղեկատվության մատչելիության իրավունքից չեն օգտվում: Քանի դեռ այդպիսի հատուկ նշում չկա, ասենք, չի նշված, որ լրագրողը իրավունք չունի ծանոթանալ այս կամ այն տեղեկատվությանը, վերջինս իրավունք ունի ծանոթանալ դրան՝ օգտվելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2–րդ մասով իրեն ընձեռված իրավունքից:

Ընդ որում, չմոռանանք նաեւ, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն»**:

Բերենք դատական մարմինների կողմից տեղեկատվության մատչելիության սահմանափակման օրինակներ.

- 2006 թվականին լրագրող Մանե Մադոյանից՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ երկու ամիս պահանջվեց «Երիտասարդության պալատ» ՓԲԸ-ն անվճարունակ ճանաչելու մասին ՀՀ տնտեսական դատարանի վճռի պատճեն ստանալու համար: Թեեւ դատարանի ինտերնետային կայքում տեղադրված են դատարանի բազմաթիվ որոշումները, որոնցից կարող է օգտվել յուրաքանչյուրը՝ անվճար եւ անսահմանափակ, գործը քննած դատավոր Կարինե Պետրոսյանը լրագրողին գրավոր հայտնեց, որ դատարանի վճիռը չի տրամադրվի՝ վկայակոչելով ՀՀ Քաղ. օրենսգրքի 28 հոդվածը: «Երիտասարդության պալատ» ՓԲԸ-ն անվճարունակ ճանաչելու մասին ՀՀ Տնտեսական դատարանի վճիռը ԻԱ կենտրոնին տրամադրվեց միայն դատավորին տնտեսական դատարանի ինտերնետային կայքի գոյության մասին հիշեցնելուց եւ 800 դրամ պետական տուրք վճարելուց հետո:
- 2001 թվականի հունվար ամսին քրեական եւ զինվորական գործերով Վերաքննիչ դատարանը փոխում է «Բրաբիոն ֆլորա սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն Չոբանյան Արշալույսի խափանման միջոցը՝ կալանքը փոխարինելով քաղաքից չբացակայելու վերաբերյալ ստորագրությամբ: Դատարանը մերժում է «Երկիր» թերթի լրագրող Արթուր Հովհաննիսյանի դիմումը դատարանի որոշմանը ծանոթանալու մասին՝ պատճառաբանելով, որ իրենք պարտավոր չեն լրագրողին տալ որոշումը, ինչպես նաեւ գործի քննությունը դեռեւս ավարտված չէ, եւ կա նախաքննական գաղտնիք: Լրագրողից լուրջ ջանքեր պահանջվեցին, մինչեւ վերջապես

նրան դատարանի որոշմանը տեղում ծանոթանալու հնարավորություն ընձեռեցին:

Լրագրողների կարեւորագույն պարտականությունն է նաեւ մեղադրյալի անմեղության կանխավարկածի իրավունքը հարգելը: ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդված.

**«Հանցագործության մեջ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:**

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ

**անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ դատավարական օրենքով սահմանված կարգով եւ ուժի մեջ մտած դատավճռով: Որպես մեղադրյալ ներգրավված մարդու հանդեպ ելակետային վերաբերունքը նրա անմեղության կանխավարկածն է: Անմեղ համարվելը նրա օբյեկտիվ դատավարական վիճակն է: Որեւէ մեկն իրավունք չունի մինչեւ դատավճռի կայացումը նրան մեղավոր անվանել:**

Լրագրողները հաճախ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով անտեսում են օրենքի պահանջը: Երբեմն անփույթ լրագրողները իրար են խառնում մեկնաբանություններն ու բուն փաստերը: Իրենց հրապարակումներում արդեն հանցագործ են անվանում այն մարդուն, որի մեղավորությունը դեռեւս չի ապացուցվել դատարանում: Հետագայում մեղադրյալի արդարացումն անգամ նրան չի ազատի մամուլի պիտակներից:

Եվրախորհրդի վերոնշյալ հանձնարարականի երկրորդ սկզբունքում նշվում է.

**«Անմեղության կանխավարկածի սկզբունքի նկատմամբ հարգանքը արդար դատավարության իրավունքի անքակտելի մասն է: Հետեւաբար, լրատվամիջոցների կողմից ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի վերաբերյալ կարծիքներ ու տեղեկատվություն կարող է տարածվել կամ հաղորդվել միայն այն դեպքում, եթե դա չի վտանգում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը»:**

Անմեղության կանխավարկածի կարեւորագույն բաղադրատարրերից մեկն այն է, որ **մարդը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, համապատասխան քննչական մարմիններն են պարտավոր ապացուցել վերջինիս մեղավորությունը:**

Կարեւորագույն սկզբունք է նաեւ այն, որ **չփարատված կասկածներն օգտագործվում են հօգուտ մեղադրյալի:** Եթե նույնիսկ անձն ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել, ապա դա բավարար պայման չէ, որպեսզի անձին մեղադրեն հանցագործության մեջ: Միայն դատավարության փուլում դատավորը, համադրելով բոլոր ապացույցները, կարող է հանգել նման եզրակացության, ապացուցված համարել անձի մեղավորությունը կամ անմեղությունը: Երեբունի համայնքի առաջին ատյանի դատավոր Արայիկ Կուբանյանը իր հարցազրույցներից մեկում ասում է. «Օրինակ՝ ԱՄՆ-ում, երբ մարդուն ձերբակալում են, զգուշացնում են, որ նա չխոսելու իրավունք ունի, քանի որ ասվածը դատարանում կարող է օգտագործվել նրա դեմ: Չխոսելու իրավունքն ի սկզբանե անձին բացատրում են, իսկ մեզ մոտ մարդուն բռնում ու խոսեցնում են՝ ի՞նչ է արել, ո՞նց է արել, եւ միանգամից հեռուստատեսությամբ եթեր հեռարձակում»[44]:

ՀՀ օրենսդրությունը դռնբաց դատավարության սկզբունքը ամրագրելու հետ մեկտեղ սահմանում է նաեւ այն դեպքերը, երբ դատական քննությունը պետք է անցկացվի դռնփակ: ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

**«Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների եւ հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել»**:

Դռնփակ նիստեր անցկացնելու հիմքերը նշվում են Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասում.

**«Մամուլի եւ հասարակության մուտքը կարող է արգելվել ողջ դատավարության ընթացքում կամ դրա մի մասում ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ ազգային անվտանգության նկատառումնե-**

44. Վիկտորիա Աբրահամյան «Ովքեր են խախտում անմեղության կանխավարկածի սկզբունքը» հոդվածից, www.hetq.am:

**րով եւ/կամ երբ այդ են պահանջում կողմերի անձնական կյանքի շահերը, կամ երբ, դատավորի կարծիքով, այն խիստ անհրաժեշտ է հատուկ հանգամանքներում, երբ հրապարակայնությունը կարող է ազդել արդարադատության վրա»**[45]**:**

Սկբունքն ամրագրվում է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության Եվրոպական համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասում[46]:

ՀՀ Քրեական Դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

**դռնփակ նիստեր կարող են անցկացվել «հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով: Դատարանների դատավճիռները եւ վերջնական որոշումները բոլոր դեպքերում հայտարարվում են հրապարակայնորեն»**:

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը եւս սահմանում է բացառություններ.

**«Գործի քննությունը դռնփակ նիստում թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առեւտրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում»:**

«Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն

**«դատավորն իրավունք չունի հրապարակել դատավորների խորհրդակցության եւ քվեարկության գաղտնիքը, դռնփակ դատաքննությունների ժամանակ ստացած տեղեկությունները, ինչպես պաշտոնավարության ժամանակ, այնպես էլ պաշտոնաթողությունից հետո»**[47]**:**

Մեր համոզմամբ, դռնփակ նիստերը անձի սահմանադրական իրավունքները պաշտպանելու միջոց են եւ ոչ՝ մամուլի ազատությունը ոտնահարելու:

---

45. Судьи и журналисты в странах восточной Европы в период перехода к демократии, стр. 137.

46. Նույն տեղում, էջ 146:

47. Տես՝ Սամվել Դիլբանդյան, «ՀՀ դատարանակազմությունը եւ իրավապահ մարմինները», Երեւան, 2000 թ, էջ 257:

Դռնփակ նիստը անցկացվում է դատավորի որոշմամբ, որում անպայման պետք է նշվեն պատճառները՝ օրենքի համապատասխան հոդվածներին հղում կատարելով: Դռնփակ նիստ անցկացնելու հարցը յուրաքանչյուր դեպքում կոնկրետ է որոշվում: Որոշ երկրներում գոյություն ունի բռնաբարության դատավարությունների հատուկ կարգ, համաձայն որի տուժածի խնդրանքով հասարակությանը չեն թողնում դատարանի դահլիճ եւ արգելվում է հրապարակել նրա անունը կամ այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան ճանաչել նրա ինքնությունը (Ֆրանսիա): Իսկ Մեծ Բրիտանիայում, օրինակ, անչափահասների կողմից կատարված քրեական հանցագործությունների դատաքննության ժամանակ հասարակությանը դահլիճ չեն թողնում, ներս են թողնում միայն մամուլի ներկայացուցիչներին[48]: Մեծ Բրիտանիայում մամուլը եւ հասարակությունը պետք է զրկվեն դատավարությանը ներկա լինելու իրավունքից, եթե «նրանց ներկայությունն անհնարին է դարձնում արդարադատության կայացումը»[49]:

Լրագրողների կարծիքով՝ երբեմն դատարանները չարաշահում են դատավարությունների ընթացքում լրագրողների իրավունքները սահմանափակելու՝ իրենց լիազորությունը: Դատավորների կողմից ընդունվում է **«բերանակապի կարգի»** կիրառումը որոշ փաստերի հրապարակումը կանխելու կամ արգելելու նպատակով: Լրագրողները շարունակում են դժգոհել, որ դատարանները ավելի ու ավելի շատ դռնփակ դատական նիստեր են անցկացնում, դրանով իսկ «բերանակապ» դնելով մարդկանց վրա (ոչ միայն լրագրողներին է վերաբերում): Այս խնդիրը հատկապես սրված է Միացյալ նահանգներում: Դատավորները կարգադրում են դատական պաշտոնյաներին դատարանից դուրս չխոսել լրագրողների հետ: Այս կարգը խախտող ցանկացած ոք կարող է պատժվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար:

1976 թվականին ԱՄՆ-ում ոստիկանությունը ձերբակալում է մեկին, որին կասկածում էին Նեբրասկայի նահանգում բնակվող մի ընտանիքի 6 անդամների սպանության մեջ: Դատավոր Հյուջ Ստյուարտը կարգադրեց լրագրողներին չհրապարակել մեղադրյալի խոստովանության, այլ մարդկանց մասին տված ցուցմունքների, որոշ բժշկական տվյալների, սեքսուալ բնույթի հարձակման եւ նրա զոհի ինքնության մասին տեղեկություններ: Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը որոշեց, որ դատավորը գերազանցել է իր լիազորությունները, եւ որ «բերանակապի կարգը» հակասում է ԱՄՆ-ի Սահմանադրությանը: Գերագույն դատավոր Ուորեն Բըրգերը նշեց, որ խիստ

48. ՁԼՄ. օրենքներ եւ պրակտիկա, Երեւան, 1999, էջ 89:
49. Scott v. Scott (1913) AC 417.

կասկածելի է խոսքի ցանկացած նախնական սահմանափակման սահմանադրական հիմնավորվածությունը[50]: «Բերանակապի» կարգը խոչընդոտում է լրատվամիջոցների՝ դատավարությունները լուսաբանելու իրավունքը:

«Նեբրասկա նահանգի ասոցիացիան ընդդեմ Ստյուարտի» գործում ԱՄՆ Գերագույն դատարանը միաձայն անվավեր ճանաչեց նահանգային դատարանի որոշումը, որով արգելվում էր հրապարակել սպանության մասին մեղադրյալի խոստովանությունը, ինչպես նաեւ դրան անմիջականորեն առնչվող փաստերը: Այս գործով ԱՄՆ-ի Գերագույն Դատարանի կայացրած վճիռը դիտարկվում է որպես «հանցագործությունների մասին հրապարակումների նախնական սահմանափակումների փաստացի արգելք»[51]: ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Բըրգերը նշել է, որ դատավորները մամուլին պետք է պարզ եւ հասկանալի բացատրեն, թե ինչու են փակ անցկացնում այս կամ այն դատավարությունը: Ո՞րն է եղել այն «անհաղթահարելի շահը», որը կարող է արդարացնել դռնփակ դատավարության անցկացումը: Նա մեկնաբանում է, որ եւ՛ քաղաքացիական, եւ քրեական դատավարությունների մասին գոյություն ունի «բաց լինելու» կանխավարկած[52]: Այս կանխավարկածը ենթադրում է, որ դատավարությունները բաց են, քանի դեռ դրանք փակելու անհրաժեշտություն չկա: Դրանք դռնփակ անցկացնելը կարող է հիմնավորվել միայն անվիճելի անհրաժեշտությամբ: Բոլոր դեպքերում դատարանի վճիռը հրապարակվում է դռնբաց նիստում:

Մեզանում հիմնականում դատարանները հարգում են հրապարակայնության սկզբունքը: Լրագրողները ազատ մուտք ունեն դատավարություններում, կարող են օրենքով սահմանված կարգով տեսագրել, ձայնագրել դատավարության ընթացքը: Սակայն երբեմն լրագրողները առիթ են ունենում դժգոհել դատավարությունների լուսաբանման ժամանակ իրենց իրավունքները սահմանափակելու դեմ: Ինչպես արդեն վերեւում նշեցինք, դատավարություններ լուսաբանող լրագրողների հիմնական դժգոհություններից է այն, որ իրենց հնարավորություն չի տրվում ծանոթանալ այս կամ այն գործի նյութերին: Սակայն միշտ չէ, որ լրագրողների դժգոհությունը հիմնավոր է:

Երբ 2001 թվականի փետրվարի 15-ին սկսվեց «Հոկտեմբերի 27»-ի դատավարությունը, Արդարադատության նախկին նախարար Դավիթ Հարությունյանը հանդես եկավ հայտարարությամբ այն մասին, որ դատավարության լուսաբանումը պետք է անհրաժեշտորեն սահմանափակվի, մասնավորապես լրագրողները չպետք է հրապարակեն հոկտեմբերի 27-ի դատավարու-

50. Fred Fedler, Reporting for the Print Media, New York, 1987.

51. ՁԼՄ. օրենքներ եւ պրակտիկա, էջ 14:

52. Globe Newspaper Co. v. Superior Court, 457 U.S.

թյան վկաների ցուցմունքները: Նախարարը ստիպված եղավ մի քանի անգամ մեկնաբանել իր հայտարարությունը՝ նշելով, որ քրեական դատավարության սկզբունքներից է այն, որ վկաները դուրս են հրավիրվում դահլիճից: Սրա նպատակը մեկն է. վկաների ցուցմունքները լինեն անաչառ, նրանք պետք է իրենց ցուցմունքները տան առանց որեւէ ազդեցության: Չէ՞ որ նույն վկան, երեկոյան միացնելով հեռուստացույցը կամ առավոտյան գնելով թերթերը, մանրամասն կարող է տեղեկանալ, թե ինչ ցուցմունք են տվել գործով մյուս վկաները: Այս դեպքում անիմաստ է դառնում քրեական դատավարության պահանջը, թե վկաները ցուցմունք պետք է տան առանձին-առանձին:

Լրագրողներն այս հայտարարությունը գրաքննության փորձ որակեցին[53], քանի որ վերը նշված դատավարությունը հասարակական մեծ հնչեղություն ուներ եւ տեղեկատվության սահմանափակումը կարող է հակասել հասարակության շահին: Նշվում էր նաեւ, որ պաշտոնապես այս դատավարությունը հայտարարվել էր հրապարակային: Սակայն այս դեպքում իրար էին բախվել երկու կարեւոր սկզբունք՝ արդարադատության եւ հրապարակայնության սկզբունքները: Այս դեպքում սահմանափակումը պայմանավորված էր արդարադատության սկզբունքը պաշտպանելու անհրաժեշտությամբ: Միաժամանակ, չպետք է մոռանալ, որ հասարակությունը չի վստահում փակ դռների ետեւում կայացված կարեւոր որոշումներին: Եթե անգամ դրանք բացարձակ արդար են իրականացվում, մարդիկ, միեւնույն է, կասկածով են վերաբերվում, որովհետեւ տեղյակ չեն մանրամասներին:

Երբեմն դատավարության ընթացքը դառնում է խիստ շիկացած: Նման մթնոլորտում արդարադատություն իրականացնելը խիստ կասկածելի է: Դատարանում հանգիստ մթնոլորտի պահպանումը անհրաժեշտ է արդար դատավարությանը եւ այն ամեն գնով պետք է պահպանվի: ԱՄՆ Գերագույն դատարանի դատավոր Քլըրքը նման անառողջ մթնոլորտը անվանել է «դիմակահանդեսային»՝ նշելով, որ դրանից հեշտությամբ կարելի է խուսափել, քանի որ դատարանի դահլիճը եւ դատարանի շենքը դատարանի վերահսկողության սուբյեկտներ են[54]: Նման դեպքերում մամուլը ոչ թե պետք է ավելի բորբոքի հասարակական կրքերը եւ փորձի ազդեցություն եւ ճնշում գործել դատարանի վրա, այլեւ պետք է կարողանա հավասարակշռված եւ անաչառ լրատվությամբ հանդարտեցնել լարվածությունը: Հասարակությունը իրավունք ունի իմանալ, թե որքանով անկողմնակալ եւ արդար են գործում դատական մամինները: Նա ուզում է իմանալ՝ արդյո՞ք լավ է աշխատում դատա-

53. Տես՝ օրինակ, «Հայկական ժամանակ»-ի N24 (354), 2001 թվականի փետրվար 16-ի, N 25 (355) փետրվարի 17-ի համարները:
54. The First Amendment and the Fifth Estate, Regulation of Electronic Media, 2nd edition, T. Barton Carter, Marc A. Franklin, Jay B. Wright, 1990, The Foundation Press, New York, page 637.

կան համակարգը, արդյո՞ք ազնիվ քաղաքացիները պաշտպանվում են, իսկ հանցագործները՝ պատժվում: Մամուլը ծառայում է քաղաքացիների կարեւորագույն իրավունքներից մեկին՝ տեղեկատվություն ստանալու իրավունքին, արտահայտում է հասարակական շահերը, ծեւավորում հասարակական կարծիք եւ իշխանությունների վրա, այդ թվում եւ դատական, իրականացնում քաղաքացիական վերահսկողություն:

## Տեսախցիկների առկայությունը դատարանում

Դատական տեղեկատվության մատչելիության առումով իրարամերժ կարծիքներ է առաջ բերում դատարանի դահլիճում տեսախցիկների առկայության հարցը: Պե՞տք է արդյոք տեսաձայնային լրատվամիջոցներին թույլ տալ ձայնագրել, տեսագրել եւ հաղորդել այն, ինչ կատարվում է դատարանի դահլիճում:

Ոմանք ասում են, թե տեսախցիկների ներկայությունը չի խանգարում դատարանների արդյունավետ գործունեությանը, ոչ էլ վիճելի է դարձնում մեղադրյալի՝ արդար դատավարության իրավունքը: Ավելին՝ նրանք պնդում են, որ նման մատչելիությունը հասարակությանը ավելի լավ է իրազեկում դատական իշխանության գործունեության մասին եւ դրանով իսկ ավելի մեծ հարգանք ստեղծում դատարանների նկատմամբ: Նաեւ տեսախցիկների ներկայությունը ավելի շատ մարդկանց է հնավորություն տալիս տեսնել, թե ինչպես է իրականացվում արդարադատությունը, ինչպես նաեւ հնարավորություն ստեղծում, որ վկաները ճիշտ ցուցմունքներ տան, քանի որ ճշմարտությունը իմացողները կարող են նրանց տեսնել հեռուստատեսությամբ:

Տեսախցիկների հակառակորդները դրանց ներկայությունը համարում են ավերիչ դատական պրոցեսի համար, քանի որ ազդեցություն են թողնում շատերի, եթե ոչ դատավարությանը ներկա բոլոր անձանց վրա, իսկ դրա փոխարեն չեն բարելավում հասարակության գիտելիքները կամ կարծիքը դատական համակարգի մասին: Նույնիսկ սխալ տեղեկատվություն են տարածում, գցում են դատարանների վարկը: Տեսախցիկների դեմ փաստարկներից են՝ վտանգը, որ դատավարությանն առնչվող փաստաթղթերը կօգտագործվեն սենսացիոն նպատակներով, հնարավորությունը, որ մասնակիցները (դատավոր, փաստաբան, վկաներ) կարող են այլ կերպ իրենց պահել, երբ միացված են տեսախցիկները, այն վախը, որ դրանք կարող են ազդել հեռուստադիտողի կարծիքի վրա եւ որ դատարանի դահլիճում բախում կառաջացնեն:

Ինչպես հասարակական այլ վայրերում, դատարաններում եւս հեռուստալրագրողները փորձում են իրենց սովորական գործն անել՝ տեղեկատվությամբ ապահովել հասարակությանը: Չէ՞ որ հատկապես դատարանի դահլիճում կատարվող իրադարձություններին հասարակությունը մեծ հետաքրքրությամբ է հետեւում, հատկապես վերջին շրջանում սկիզբ առած մի շարք դատավարությունների, ուր հասարակության աչքն ու ականջը հանդիսացան լրատվամիջոցները:

Տեսախցիկները ազդեցություն կարող են ունենալ ոչ միայն դատավորի վրա, այլեւ կողմերի, տուժողի հարազատների, վկաների եւ մյուս ներկաների վրա: Նկարահանող լրագրողը սա պետք է շատ լավ իմանա եւ դատավարությունը նկարահանելիս հարգի ոչ միայն դատարանի, այլեւ ներկաների, հատկապես կողմերի պահանջները: Սակայն, մյուս կողմից դռնբաց դատական նիստերում լրագրողների իրավունքների սահմանափակումը խիստ բացասական է անդրադառնում այս կամ այն ինֆորմացիայի բովանդակության վրա (լրագրողն այնուամենայնիվ հրապարակում է այդ ինֆորմացիան եւ հասկանալի է՝ մի մասը հիմնում իր երեւակայության վրա):

Երբեմն դատարանում տեսախցիկների առկայությունը կարող է անուղղակիորեն ոտնահարել մեղադրյալի անմեղության կանխավարկածի իրավունքը եւ հասարակության մեջ մեղադրյալի մեղավորության մասին համոզմունք արմատավորել:

Հանձնարարականի 14-րդ սկզբունքը նշում է.

**«Ուղիղ հեռարձակումը եւ նկարահանումը լրատվամիջոցների կողմից դատական նիստերի դահլիճներում չպետք է թույլատրվի, բացառությամբ այն դեպքերից, երբ դա բացահայտորեն թույլատրված է օրենքով կամ համապատասխան պաշտոնյաների կողմից»:**

Այսպիսով, հանձնարարականը հստակ արգելում է ուղիղ հեռարձակումը դատարանի դահլիճից:

ՀՀ քրեական դատավարական օրենսդրության մեջ տեսախցիկների հարցը ընդհանրապես կարգավորում չի ստացել: Հարցը հստակ ձեւակերպվել ու կարգավորվել է քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Մեր համոզմամբ անհրաժեշտ է, որ նման կարեւորության հարցը անպայման իր կարգավորումը ստանա Քրեական դատավարության օրենսգրքում եւս, որովհետեւ հարցի կարգավորման բացթողումը քրեական դատավարություններում վտանգում է մեղադրյալի իրավունքները եւ խոչընդոտում արդար դատավարությանը:

Շատ երկրներում արգելված են դատավարությունների ժամանակ տեսա եւ լուսանկարահանումները, որոշ երկրներում էլ թույլատրված են նկարահանումները կուլիսներում:

- Գերմանիայում տեսա եւ լուսանկարահանումները թույլատրելի են միայն դատական լսումները սկսելուց առաջ: Հաշվի առնելով դատավարությունների մասին ինֆորմացիա ստանալու հասարակության

իրավունքը, գրառումները (ձայնագրությունները) եւ ուրվանկարները անօրինական չեն, չնայած հեռուստախցիկներն արգելված են, եւ նիստը նախագահողը կարող է արգելել նաեւ լուսանկարումը[55]:

- Մամուլի առաջ առանձնահատուկ արգելք են դնում Նորվեգիայի դատարանները: Նրանք կիրառում են դատարանի ճանապարհին, դատարանի դահլիճից դուրս բերելիս եւ դատարանի դահլիճում լուսանկարելու ընդհանուր արգելք[56]: Ռադիոյի համար ձայնագրությունները եւ հեռուստատեսության համար տեսագրություններն ընդհանրապես արգելված են: Շվեդիայում նույնպես արգելվում է նկարահանումը դատարանի դահլիճում: Շվեդիայի պես ժողովրդավար երկիրն աչքի չի ընկնում նաեւ դատավարությունների լուսաբանման ակտիվությամբ:
- Մամուլի մասին Ֆրանսիայի 1881 թվականի օրենքի 39-րդ հոդվածի համաձայն բոլոր քաղաքացիական գործերում դատարաններն ու տրիբունալները կարող են արգելել դատաքննության լուսաբանումը[57]:

Եվրոպայի խորհրդի վերոնշյալ հանձնարարականը եւս դատական նիստերի տեսանկարահանման եւ հեռարձակման հետ կապված լուրջ սահմանափակում է դնում` նշելով.

**«Ուղիղ հեռարձակումը եւ նկարահանումը լրատվամիջոցների կողմից դատական նիստերի դահլիճներում չպետք է թույլատրվի ..... երբ դա տուժողների, վկաների, քրեական դատավարության մասնակից կողմերի, երդվյալների կամ դատավորների վրա անցանկալի ազդեցության լուրջ վտանգ է ներկայացնում»:**

Տեսախցիկների դեմ փաստարկների հիմքում ընկած է նաեւ այն մտավախությունը, թե դատարանում տեսախցիկների առկայությունը կարող է անուղղակիորեն ոտնահարել մեղադրյալի անմեղության կանխավարկածի իրավունքը եւ հասարակության մեջ մեղադրյալի մեղավորության մասին համոզմունք արմատավորել (հատկապես այն դեպքերում, երբ մեղադրյալը գտնվում է դատարանի դահլիճում տեղադրված վանդակում):

Այնուամենայնիվ, մեր կարծիքով, տեսախցիկները դատարանի դահլիճից դուրս բերելը նշանակում է բացառել հասարակության մեջ իրավական ինս-

55. ՁԼՄ, օրենքներ եւ պրակտիկա, էջ 53:
56. ՁԼՄ, օրենքներ եւ պրակտիկա, էջ113:
57. Օրենքների ժողովածու Ֆրանսիական մամուլի մասին, Երեւան, 1996, էջ 22:

տիտուտների հանդեպ հարգանք դաստիարակելու հնարավորությունը: Չէ՞ որ հենց հասարակության կարծիքն է աջակցում դատական համակարգին: Հասարակությունը պետք է համոզված լինի, որ դատարանը առաջնորդվում է միայն օրենքով:

## Դատավարության մասնակցի լուսաբանումը ԶԼՄ-ով

Վերոնշյալ հանձնարարականի 8-րդ սկզբունքը պաշտպանում է դատավարության մասնակցի մասնավոր կյանքի իրավունքը:

**«Կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների, կամ քրեական գործի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկատվության մատուցումը պետք է կատարվի Եվրոպական Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի պաշտպանության նկատմամբ հարգանքի դրսեւորմամբ: Հատուկ պաշտպանվածություն պետք է տրամադրվի անչափահասներին, կամ այլ խոցելի անձանց, ինչպես նաեւ տուժողներին, վկաներին, եւ կասկածյալների, մեղադրյալների ու դատապարտյալների ընտանիքներին: Բոլոր գործերում, պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն վտանգավոր հետեւանքներին, որոնց կարող են ենթարկվել այս սկզբունքում հիշատակված անձինք տեղեկատվության բացահայտման հետեւանքով իրենց ինքնության հրապարակայնության դեպքում»:**

Դատավարության ենթատեքստում «քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիություն» արտահայտությունը կարող է վերաբերել, օրինակ, սեռական բռնության զոհի անվտանգության ապահովմանը, որը կարող է պահանջել իր ինքնության գաղտնիություն, պատիժ կրող կամ արդեն կրած ծանր հանցագործի անվտանգությունը, ամուսնական, ընտանեկան զանազան հարցերին եւ այլն: Այստեղ հանրության տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է ստորադասվել անձի անձնական եւ/կամ ընտանեկան անվտանգության, նրա պատվի եւ հեղինակության, կյանքի պաշտպանության նկատառումներից ելնելով: Օրինակ Կանադական թերթերն ընդդեմ Կանադայի (Գլխավոր Դատախազի) գործում Կանադայի Գերագույն դատարանը ընդունել է որոշում, որը դատավորներից պահանջում էր.

**«...հիմնավորված միջնորդության դեպքում նրանք արգելեն սեռական զոհի անձնական տվյալների եւ ինքնության մասին հրապարակումները: Սակայն արգելքը չի կարող խոչընդոտել ԶԼՄ-ին կամ հանրությանը ներկա գտնվել դատական քննությանը»:**

Այնուամենայնիվ, նման որոշումը միայն անուղղակիորեն է պաշտպանում անձնական կյանքի անձեռնմխելիությունը. առաջնահերթ նպատակը դատավարության մասնակիցների մոտ վստահության ստեղծումն է, առանց որի դատարանը պատշաճ կերպով չի կարող իրականացնել արդարադատություն:

Մեկ այլ գործում, դիմողները, որոնք դատապարտված էին ծանր մարդասպանության համար եւ շուտով պետք է պայմանական ազատ արձակվեին, պնդում էին, որ իրենց կյանքը մեծ վտանգի տակ կլինի, եթե դատարանը մշտական արգելք չսահմանի իրենց ինքնությունը բացահայտող ցանկացած հրապարակման վրա: Նրանք իրենց խնդրանքը հիմնավորում էին նաեւ նրանով, որ անգլիական որոշ թերթեր արդեն խոստացել էին հրապարակել նրանց ինքնությանը վերաբերող տվյալներ եւ անվանել էին նրանց «հրեշներ»:

Անգլիայի Բարձր դատարանի ընտանեկան հարցերի պալատը այս առումով սահմանել է.

**«...մեծ հավանականություն կա, որ դիմողների տվյալները կարող են բացահայտվել եւ ցուցադրվել ԶԼՄ-ով, իսկ այդ դեպքում վրեժխնդիր անձիք կարող են հաշվեհարդար տեսնել նրանց հետ, ...բացառիկ դեպքերում դատարանները իրավասու են սահմանափակումներ դնել մամուլի վրա, եթե հակառակ դեպքում մեծ կլինի այն բանի հավանականությունը, որ գաղտնիության բացահայտումը ֆիզիկական վնաս կպատճառի գաղտնիություն պահանջող անձին, կամ կհանգեցնի նրա մահվանը, եւ եթե այլ կերպ, քան հրապարակման արգելքը, հնարավոր չէ պաշտպանել դիմողին, ...դատարանները կարող են սահմանափակել ազատ արտահայտվելու իրավունքը, եթե այն նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ, ինչպես նաեւ հետապնդում է իրավաչափ նպատակ»**[58]:

Այս դեպքում սահմանափակումը նպատակ ունի պաշտպանել այլ անձանց իրավունքները, մասնավորապես կյանքի իրավունքը, անձնական կյանքի եւ անմարդկային վերաբերմունքի չենթարկվելու իրավունքները: Եթե պետությունը վերը նշված միջոցներին չդիմեր, դիմողները կարող էին դիմել միջազգային ատյաններին՝ պնդելով, որ պետությունը, տեղյակ լինելով իրենց նկատմամբ առկա սպառնալիքների մասին, իր անգործությամբ խախտել է

58. Տես՝ Արման Զրվանդյան, «Ազատ արտահայտվելու իրավունքը եւ անձնական կյանքի իրավունքի պաշտպանությունը», «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիր, N9, 2003, նոյեմբեր էջ 12:

իրենց իրավունքները: Ազատազրկված անձանց կյանքի գաղտնիության եւ ինտեգրման իրավունքին է առնչվում հանձնարարականի վերջին՝ 18-րդ սկզբունքը «Ազատազրկության ժամկետն ավարտած անձանց վերաբերյալ լրատվություն հաղորդելը լրատվամիջոցների կողմից»՝

**«Որպեսզի ազատազրկման ժամկետը սպառած անձը կարողանա ինտեգրացվել հասարակության մեջ, Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի պաշտպանության իրավունքը պետք է ընդգրկի նաեւ նման անձանց ինքնության հրապարակայնացումը կապված նախկին դատվածության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններն անձամբ եւ բացահայտորեն նման հրապարակայնության համաձայնություն են տվել, կամ իրենց նախկին դատվածությունը հանրային հետաքրքրության առարկա է դարձել»**:

## Հարցեր լսարանին

**1.** Ուսումնասիրեք տպագիր եւ էլեկտրոնային ԶԼՄ-ը եւ գտեք մեղադրյալի անմեղության կանխավարկածի իրավունքի ոտնահարման դեպքեր: Քննարկել լսարանում:

**2.** Մասնակցեք Երեւանում ընթացող դատական գործերի քննությանը եւ դատարանի դահլիճում իրականացրեք օրենսդրությամբ լրագրողին վերապահված իրավունքներն ու պարտականությունները: Այնուհետեւ լսարանում իրականաց նել դերային խաղ: Որեւէ դատական գործի քննություն բեմականացնել, ուսանողներին բաժանվում են դատավորի, մեղադրյալի, մեղադրողի եւ լրագրողի պայմանական դերերը: Մասնակցիները փորձում են իրականացնել դատավարություն՝ ՀՀ օրենսդրության համաձայն, իսկ մյուս լրագրող-ուսանողները լուսաբանում են դատական գործընթացը:

# Ընտրությունների լուսաբանման իրավական կարգավորումը ՀՀ-ում

**«ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին, եւ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց միջոցով»**

ՀՀ Սահմանադրություն, հոդված 2:

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածով եւ ՀՀ «Ընտրական օրենսգրքի» 7-րդ հոդվածով երաշխավորվում է Հայաստանի Հանրապետությունում ազատ, ժողովրդավարական եւ հրապարակային ընտրությունների անցկացումը:

Ընտրությունները հասարակության համար կարեւոր նշանակություն ունեցող քաղաքական գործընթաց են, որի մասին հանրությունը պետք է բավարար չափով իրազեկ լինի, որպեսզի կարողանա կողմնորոշվել իր ընտրության մեջ: Ազատ եւ արդար կարող է համարվել այն ընտրական գործընթացը, որի ընթացքում ընտրազանգվածը հնարավորություն է ունեցել ազատ եւ իրազեկ ընտրություն կատարել: Հասարակությանն իրազեկելու կարեւոր առաքելությունը վերապահված է զանգվածային լրատվամիջոցներին, որոնք պետք է լսարանին անաչառ եւ բազմազան տեղեկատվություն հաղորդեն: Եթե լուսաբանումն ազատ եւ արդար չէ, այն կարող է բացասաբար անդրադառնալ ընտրությունների արդյունքների վրա եւ կարող է ընտրությունները անազատ եւ անարդար ճանաչելու պատճառ դառնալ:

Իրենց մասնագիտությանը լուրջ վերաբերվող բոլոր լրագրողները ձգտում են ընտրությունների ազատ, արդար եւ անկողմնակալ լուսաբանման: Նրանց նպատակը պետք է լինի ընտրական գործընթացն ազատ լուսաբանելը՝ առանց վախենալու քաղաքական գործիչների, կուսակցությունների, կառավարության, ընդդիմության, ուժային կառույցների, հասարակության, խմբագրի կամ սեփականատիրոջ հանդիմանությունից: Նրանք նաեւ պետք է իրենց ուսերին վերցնեն այդ ազատությունից բխող պատասխանատվության բեռը:

## Նախընտրական քարոզչությունը ԶԼՄ-ով

Նախընտրական քարոզչությունը Հայաստանում կարգավորվում է ՀՀ Ընտրական օրենսգրքով եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքով: Օրենսգրքի 20-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն`

**զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչությունն իրականացվում է հրապարակային բանավեճերի, կլոր սեղանների, մամուլի ասուլիսների, հարցազրույցների, քաղաքական գովազդի եւ օրենքով չարգելված այլ ձեւերով:**

**Տասնութերորդ հոդվածը նշում է, որ նախընտրական քարոզչությունն սկսում է թեկնածուների գրանցումից անմիջապես հետո եւ ավարտվում է քվեարկությունից մեկ օր առաջ**:

Նախընտրական քարոզչությունը ենթարկվում է մի քանի հիմնական սկզբունքների, որոնք ընդունվել եւ կիրառվում են` ապացուցելով իրենց կենսունակությունը` որպես ժողովրդավարական ընտրությունների կայացման հիմնական նախապայման: **Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները սահմանված են ՀՀ Ընտրական օրենսգրքի 18 եւ 20 հոդվածներում.**

- Նախընտրական քարոզչության ազատություն.

Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 1-ին կետի` **պետությունն ապահովում է քաղաքացիների նախընտրական քարոզչության ազատ իրականացումը:** Ազատության մեկ այլ երաշխիք է նույն հոդվածի 2-րդ կետը`

**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները (այսուհետ` կուսակցություն) իրավունք ունեն օրենքով չարգելված ձեւերով քարոզչություն կատարել ցանկացած թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ նրա դեմ»:**

- Նախընտրական քարոզչության օրինականություն.

Ընտրությունների ազատությունը ենթադրում է ազատություն օրենքի շրջանակում` հաշվի առնելով նաեւ նախընտրական քարոզչության էթիկական սահմանափակումները:

● Մրցակցություն.

Ընտրությունների մյուս կարեւոր սկզբունքներից է մրցակցությունը, որը եւս իր դրսեւորումն է գտնում նախընտրական քարոզչության ընթացքում, երբ ազատ ու ազնիվ մրցակցության պայմաններում թեկնածուներից յուրաքանչյուրը պետք է հանրությանը ցույց տա, որ ինքն է հենց այն արժանավորը, որին ընտրողը պետք է տա իր ձայնը: Տարբեր քաղաքական ուժեր պետք է պայքարեն ընտրողների վստահության քվեն ստանալու, իրենց նախընտրական ծրագրերը նրանց ներկայացնելու համար եւ որպեսզի հավատացնեն, որ իրենց քաղաքական ծրագիրն առավելություն ունի մրցակցի նկատմամբ, նաեւ ցույց տան մրցակից քաղաքական ուժի ծրագրային թերությունները՝ առանց, սակայն, անազնիվ ճանապարհով վարկաբեկելու նրան:

Հայաստանում, սակայն, քաղաքական բանավեճերն ու նախընտրական քարոզարշավներն ուղեկցվում են փոխադարձ հայհոյանքներով, էթիկայի տարրական կանոնների անտեսմամբ, անհանդուրժողականությամբ, ինչը հետեւանք է նաեւ քաղաքական վերնախավի անկրթության, նրանց քաղաքական մշակույթի խիստ ցածր լինելու կամ բացակայության:

● Հավասար հնարավորությունների եւ պայմանների ապահովում.

Ըստ ՀՀ Ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 1-ին կետի՝ նախընտրական քարոզչությունն իրականացվում է հավասար հիմունքներով:

«Արտիկլ 19» միջազգային կազմակերպության մշակած «Ընտրությունների լուսաբանումը անցումային ժողովարդավարություններում» ուղեցույցի 9-րդ կետում նշվում է.

**«Պետական կամ հանրային լրատվամիջոցները քաղաքական կուսակցություններին կամ թեկնածուներին պետք է տրամադրեն եթերաժամանակ արդար եւ ոչ խտրական սկզբունքի հիման վրա: Բազմակուսակցական ընտրության համար խորհուրդ է տրվում, որ բոլոր հիմնական կուսակցություններն ու թեկնածուները ստանան հավասար եթերաժամ»:**

Այս սկզբունքը ենթադրում է բոլոր թեկնածուների ու կուսակցությունների համար հավասար պայմանների ապահովում՝ նյութական, տարածքային եւ տեղեկատվական միջոցների հավասարություն: Այդպիսի հավասարությունն ապահովվում է, օրինակ, ընտրությունների կազմակերպման համար կուսակցությունների ծախսերի առավելագույն չափի օրենքով սահմանմամբ, կուսակցությունների եւ անհատների կողմից ներդրվող միջոցների չափի

սահմանափակումով, ինչպես նաեւ հավասարության սկզբունքով նրանց հանրային հեռուստատեսությամբ եւ ռադիոյով անվճար հանդես գալու հնարավորություն տալով: Հավասարության սկզբունքի ապահովման պարտականությունը նախեւառաջ ենթադրում է նրանց համար առանց խտրականության դահլիճների եւ այլ շինությունների տրամադրում` նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ եւ ընտրություններ հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցով եւ կարգով: Ինչպես նշվում է օրենսգրքում` դրանք ընտրություններին մասնակցող թեկնածուներին ու կուսակցություններին տրամադրվում են հավասար հիմունքներով եւ անվճար:

Հավասարության սկզբունքը ենթադրում է նաեւ հավասար եթերաժամի, ծավալի եւ սակագնի տրամադրում` առանց խտրականության: Հավասար եթերաժամի սկզբունքը լավ արդյունք կարող է տալ, սակայն չի բացառվում նաեւ հակառակը: Հայաստանում ընտրություններին մասնակցում են հաճախ տասնյակ կուսակցություններ եւ քաղաքական գործիչներ: Այդ դեպքում նրանց նախընտրական ծրագրերը ներկայացնող ուղերձները պարզապես կարող են ձանձրացնել լսարանին:

Ըստ Օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի`

**զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու համար թեկնածուներին եւ կուսակցություններին երաշխավորվում են հավասար պայմաններ` եթերաժամանակ կամ ծավալ, սակագին եւ այլն: Անվճար եթերաժամանակ տրամադրելու կարգը սահմանում է Կենտռնական ընտրական հանձնաժողովը**:

Հանրային հեռուստաընկերությունը եւ հանրային ռադիոն պարտավոր են հավասար պայմաններ ապահովել ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար (20-րդ հոդված, 3-րդ կետ): Հոդվածը նաեւ երաշխավորում է, որ Հանրային հեռուստաընկերությամբ եւ Հանրային ռադիոյով հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների կողմից իրականացվող նախընտրական քարոզարշավի վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն` ապահովելով արդար ու հավասար պայմանների պահպանումը:

Ընտրություններին մասնակցող թեկնածուի, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի կողմից միջոցառումներ չկազմակերպելը կամ այդ

միջոցառումների մասին տեղեկատվության բացակայությունը հիմք չեն կարող լինել ընտրությունների մյուս մասնակիցների քարոզարշավի մասին զանգվածային լրատվության միջոցներով համապատասխան տեղեկություններ չհրապարակելու համար:

Այս սկզբունքները հավասարապես տարածվում են նաեւ մասնավոր հեռարձակողների վրա: Թեկնածուներն ու Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրավունք ունեն հավասար պայմաններով օգտվելու նաեւ այլ ռադիոընկերությունների եւ հեռուստաընկերությունների եթերաժամերից՝ անկախ սեփականության ձեւից:

Օրենսգրքի 20-րդ հոդվածի 10-րդ կետն ապահովում է, որ

**թերթերն ու ամսագրերը, անկախ նրանց հիմնադիրներից, բացառությամբ կուսակցության կողմից հիմնադրված թերթերի եւ ամսագրերի, նախընտրական քարոզչական նյութեր հրապարակելիս ապահովեն հավասար պայմաններ**:

Հավասարության սկզբունքի ապահովմանն է ուղղված նաեւ ԿԸՀ-ի ընդունած կարգի 5-րդ կետը, որն արգելում է նախընտրական քարոզչության ժամանակ զանգվածային լրատվության միջոցների աշխատակիցներին իրենց վերապահված լիազորությունները եւ իրավունքները գործադրել թեկնածուների միջեւ անհավասար պայմաններ ստեղծելու, կողմնակալություն ցուցաբերելու միջոցով քաղաքացիների կամքի ազատ արտահայտման վրա ներգործելու նպատակով:

Լրացուցիչ երաշխիք է նաեւ Կարգի 23-րդ կետը.

**ԱԺ պատգամավորության թեկնածուներին արգելվում է Հանրային եւ մասնավոր հեռուստառադիոընկերությունների եթերով վարել հեղինակային կամ այլ հաղորդումներ:**

Այնուամենայնիվ, ընտրությունների ժամանակաշրջանում բազմաթիվ են դեպքերը, երբ լրագրողները գրանցվելով որպես թեկնածուներ, շարունակում են կատարել իրենց մասնագիտական գործունեությունը: Այսպես, լրագրող-թեկնածուները հայտնվում են արտոնյալ վիճակում. նրանք եթերում են գրեթե ամեն օր, սովորականի պես վարում են իրենց հաղորդումները, բանավեճի հրավիրում մյուս թեկնածուներին: Մեկը եթերում է անվճար եւ անսահմանափակ ժամանակով, մյուսը ստիպված է վճարել եթերի յուրաքանչյուր վայրկյանի համար: Ի դեպ, որոշ հաղորդումների մասնակցելու վճարը տատանվում է 500-ից մինչեւ 2000 դոլարի սահմաններում՝ կախված

հեռուստաընկերության կամ հաղորդման վարկանիշից: 2003թ. ԱԺ ընտրու-թյուններում 17-րդ ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածու (առաջադրված է նաեւ համամասնականով) Տիգ-րան Կարապետյանը գրեթե ամեն երեկո կա՛մ ինքն ի՛ր հյուրն էր, կա՛մ իր հե-ռուստաընկերության լրագրողի: «Շանթ» հեռուստաընկերության «Հորի-զոն» լրատվական հաղորդման վարող, պատգամավորության թեկնածու Նվեր Մնացականյանը լուսաբանում էր մյուս թեկնածուների նախընտրական ար-շավը, իսկ վերլուծական «Հեռանկար» հաղորդման ընթացքում դեմառդեմ բանավիճում է մյուս թեկնածուների հետ: «Երեւան» հեռուստաընկերության «Բուրգ» վերլուծական հաղորդման հեղինակ-վարող, եւ 16-րդ ընտրատա-րածքում մեծամասնական կարգով առաջադրված թեկնածու Սարգիս Ասատրյանի հաղորդման հյուրերը նույնպես հիմնականում պատգամավո-րության թեկնածուներ էին: Օրենքի՝ «հավասար հիմունքներ» սահմանող դրույթը խախտողների ցանկում են ոչ միայն հեռուստալրագրողները, այլեւ մի շարք թերթերի խմբագիրներ ու լրագրողներ:

Օրենքով սահմանված հավասարության սկզբունքը խախտելուց բացի լրագրող- թեկնածուները անտեսում են նաեւ մասնագիտական էթիկայի կա-րեւորագույն սկզբունքներից մեկը՝ քաղաքականությամբ զբաղվելիս լրագ-րողը պետք է դադարեցնի լրագրողական գործունեությունը: Այս պահանջը նշված է արեւմտյան գրեթե բոլոր առաջատար լրատվամիջոցների էթիկա-կան կանոնագրերում: Հասարակությունը չի վստահում թեկնածու-լրագրո-ղին, քանի որ նա չի կարող օբյեկտիվ լրատվություն տալ նախընտրական ու ընտրական անցուդարձի մասին: Ինչպե՞ս հասկանան մարդիկ՝ լրագրողը ճիշտ է ասում, թե պարզապես իր համար քաղաքականություն տանող ճա-նապարհ է հարթում: Մամուլի հանդեպ համընդհանուր վստահության կորս-տի բազմաթիվ պատճառներին ավելանում է եւս մեկը՝ լրատվամիջոցը ծա-ռայեցնում են քաղաքականության մեջ դիրքեր գրավելու նպատակին:

## Նախընտրական քարոզչության կարգը եւ ձեւերը

Նախընտրական քարոզչությունն սկսում է թեկնածուների գրանցումից անմիջապես հետո եւ ավարտվում քվեարկությունից մեկ օր առաջ: Քվեարկության եւ նրան նախորդող օրը նախընտրական ցանկացած քարոզչություն արգելվում է: Օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է ԶԼՄ-ից թեկնածուների օգտվելու կարգը, այն է`

**բոլոր թեկնածուներն ունեն հավասար պայմաններ` եթերաժամանակ, ծավալ եւ սակագին**:

Նախընտրական քարոզչությունը զանգվածային լրատվության միջոցներով մանրամասն կարգավորման է ենթարկված ՀՀ Ընտրական օրենսգրքի 20 հոդվածով: Սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն`

**զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչությունն իրականացվում է հրապարակային բանավեճերի, կլոր սեղանների, մամուլի ասուլիսների, հարցազրույցների, քաղաքական գովազդի եւ օրենքով չարգելված այլ ձեւերով:**

Ըստ 20 հոդվածի 1-ին կետի`

**Հանրապետության Նախագահի թեկնածուները եւ Ազգային ժողովի` համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունները Հանրային ռադիոյով եւ Հանրային հեռուստատեսությամբ հավասար պայմաններով անվճար եւ վճարովի եթերաժամերի (այդ թվում` ուղիղ եթերով) իրավունք ունեն: Անվճար եթերաժամ տրամադրելու կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Հանրապետության նախագահի առաջադրված թեկնածուն իրավունք ունի անվճար օգտվել հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 60 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 120 րոպե:**

Համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրավունք ունեն Հանրային հեռուստաընկերության եթերաժամից անվճար օգտվել ոչ ավելի, քան 60 րոպե (վճարովի հիմունքներով` 120 րոպե) իսկ Հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 120 րոպե (վճարովի հիմունքներով` 180 րոպե):

ԿԸՀ-ը վիճականությամբ բաշխեց անվճար եւ վճարովի եթերաժամով հեռարձակվող հանրային ելույթների հերթականությունը: Հանրային լրատվամիջոցները կատարեցին իրենց պարտավորությունները` ինչ-որ չափով

պահպանելով ծեւականություն. հանրային Հ1 հեռուստաընկերության որոշմամբ անվճար բոլոր քարոզչական հոլովակները օրական կարող են մեկ բլոկով հեռարձակվել ԿԸՀ-ի կողմից հատկացված ժամանակահատվածում, բայց «փրայմթայմ» ժամերից դուրս[59]:

Համաձայն 20-րդ հոդված 4-ր կետի՝

**համապետական ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո, պետք է հրապարակվի Հանրային ռադիոյով եւ Հանրային հեռուստաընկերությամբ վճարովի եթերաժամի յուրաքանչյուր րոպեի գինը: Վճարովի քաղաքական գովազդի եւ քարոզչական այլ հաղորդումների՝ իրենց եթերաժամի արժեքի մասին նախապես պետք է հայտնեն նաեւ մասնավոր հեռուստառադիոընկերությունները**:

Նախընտրական քարոզչության փուլում այդ գինը չի կարող փոփոխվել:

Համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրավունք ունեն հավասար պայմաններով (միեւնույն տեւողությամբ եւ միեւնույն սակագնով՝ պայմանագրային կարգով) օգտվել Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր հեռուստաընկերությունների եթերաժամերից: Մեծամասնական ընտրակարգով գրանցված ԱԺ պատգամավորության թեկնածուները զրկված են անվճար եթերաժամի իրավունքից: Սա ԿԸՀ-ում բացատրում են նրանով, որ մեծամասնական ընտրակարգով գրանցված թեկնածուների թիվը մեծ է, եւ պետությունը չի կարող մարել նրանց՝ ԶԼՄ-ից անվճար օգտվելու ծախսերը: Դրա փոխարեն մեծամասնական ընտրակարգով գրանցված թեկնածուները նախընտրական քարոզչության նպատակով վճարովի հիմունքներով կարող են հանդես գալ մասնավոր լրատվամիջոցներով՝ անսահմանափակ եթերաժամանակ:

Մասնավոր հեռաուստաընկերությունները, սակայն, 2007թ. ԱԺ ընտրություններում այնպիսի բարձր գներ սահմանեցին, որ հեռուստաեթերը խստորեն սահմանափակվեց մեծամասնական կարգով գրանցված թեկնածուների համար (80,000-ից մինչեւ 130,000 դրամ մեկ րոպեի դիմաց)՝ մատչելի դառնալով միայն հարուստ թեկնածուների համար:

Թեկնածուների հնարավոր ֆինանսական անհավասարությունը «հարթելու» նպատակով պետությունը սահմանափակում է այն գումարները, որ թեկնածուները ծախսում են ընտրարշավի կազմակերպման համար:

59. Տես՝ Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության զեկույցը, 2007:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝

**թեկնածուն նախընտրական քարոզչության ընթացքում իրավունք ունի ծախսել նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկը չգերազանցող գումար, իսկ կուսակցությունները՝ նվազագույն աշխատավարձի 60 000-ապատիկը չգերազանցող գումար:**

Սակայն ցանկության եւ հնարավորության դեպքում, երբ համաձայնության կա թեկնածուի եւ ԶԼՄ-ի միջեւ, թեկնածուները հաճախ գերազանցում են ծախսերի թույլատրելի սահմանը եւ հավելյալ քարոզչություն իրականացում, մանավանդ, որ ԶԼՄ-ում ծախսային եւ ժամանակային սահմանափակումներ չկան:

Օրենքն արգելում է նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները ու հեռուստահաղորդումները ընդմիջել ապրանքների կամ ծառայությունների գովազդով: 20 հոդվածի կետ 8-ը սահմանում է, որ

**նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները եւ հեռուստահաղորդումները եթեր հեռարձակելիս ձայնագրվում եւ տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն երեք ամիս:**

Հեռուստաընկերությունների եւ ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը, որը նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում իրավասու է դիմելու դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է խախտումների վերաբերյալ կարծիք ներկայացնելու դատարան:

Ցավոք, 2007թ. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը որեւէ դիմում չի ներկայացրել դատարան ընդդեմ հավասարության կամ այլ սկզբունքները խախտված ԶԼՄ-ի: Դրա փոխարեն համամասնական ընտրակարգով գրանցված «Հանրապետություն» կուսակցությունից պատգամավորության թեկնածու Արտակ Զեյնալյանն է դիմում Երեւանի Կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան ընդդեմ ՀՀ ԿԸՀ-ի եւ «Հ2», «Երկիր Մեդիա», «Արմենիա», «ԱԼՄ» եւ «Հայաստանի Հանրային» հեռուստաընկերությունների՝ ԿԸՀ անգործությունը անիրավաչափ ճանաչելու պահանջով: Պատասխանող ճանաչված հեռուստաընկերությունները չեն նկարահանել եւ լուսաբանել ՀՀ ԱԺ 2007թվի մայիսի 12-ի ընտրությունների նախընտրական քա-

րոզչության շրջանակներում կազմակերպված «Հանրապետություն» կուսակցության հանդիպումն ընտրողների հետ՝ դրանով իսկ, ըստ դիմումատուի, խախտելով հավասարության սկզբունքը («ԸՕ», հոդված 18): Իսկ ԿԸՀ-ն չի վերահսկել ՁԼՄ կողմից քարոզչության համար սահմանված հավասար հնարավորությունների ապահովումը եւ ցուցաբերել է անգործություն՝ խախտելով «ԸՕ»-ի 41-րդ հոդվածը: Դիմումատուն պահանջել էր

**1.** ԿԸՀ անգործությունը ճանաչել անիրավաչափ,

**2.** պարտավորեցնել պատասխանող հեռուստաընկերություններին լուսաբանել կուսակցության անցկացրած միջոցառումը:

Պատշաճ ծանուցված լինելով՝ դատական քննության ընթացքում պատասխանողներից միայն ներկա են եղել Հանրային հեռուստաընկերության երկու ներկայացուցիչները: ԿԸՀ գրավոր դիմումով խնդրել է գործը քննել առանց իր ներկայացուցչիների: 28.04.2007թվին Կենտրոն եւ Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը վճռեց մերժել հայցը:

## Տեղեկություն ստանալու իրավունքը ընտրական գործընթացներում

Տեղեկատվության ազատությունը երաշխիք է եւ արդյունավետ միջոց ընտրությունների հրապարակայնությունը եւ թափանցիկությունը ապահովելու համար: Լրագրողների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանվածության աստիճանից է կախված նաեւ ընտրական գործընթացների մասին ողջ հասարակության իրազեկված լինելու իրավունքի լիարժեք ապահովումը:

Ընտրական գործընթացներում լրագրողների համար տեղեկատվության մատչելիությունն ու ազատությունն ապահովվում են նախեւառաջ ընտրությունների հրապարակայնության սկզբունքի իրականացման շնորհիվ.

**«Ընտրությունները նախապատրաստվում եւ անցկացվում են հրապարակայնորեն»:**

ՀՀ Ընտրական օրենսգիրք, հոդված 7:

Հրապարակայնության սկզբունքն իր տեղն է գտել նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասում: ՏԱ հրապարակայնության սկզբունքի էությունը հետեւյալն է. այն հաստատում է այն կանխավարկածը, որ պաշտոնական փաստաթղթերը հասարակական բնույթ ունեն եւ պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առա-

վել կարեւոր հանրային կամ պետական շահ տեղեկությունը չհրապարակելու համար: Անգամ եթե լրագրողը դիմում է գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից հասարակության հետաքրքրությունը, տեղյակ լինելու իրավունքը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով: ԶԼՄ-ի ներկայացուցիչների ազատության լրացուցիչ իրավական երաշխիք է ամրագրված նաեւ ՀՀ Ընտրական օրենսգրքով.

**«Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի իրավունքների որեւէ սահմանափակում չի թույլատրվում ընտրական բոլոր գործընթացներում»:**

ԸՕ, հոդված 30:

Տեղեկատվություն ստանալու իրավունքը լրագրողի հիմնական իրավունքներից է, առանց որի նա չի կարող կատարել ընտրական գործընթացների մասին հասարակությանն իրազեկելու իր առաջնային առաքելությունը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ

**յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը**:

Լրագրողն ունի ինչպես տեղեկատվությանը ծանոթանալու եւ/կամ դրանից քաղվածքներ անելու, այնպես էլ այն կամ դրա պատճենը ստանալու իրավունք: ՀՀ Ընտրական օրենսգրքի 30 հոդվածի համաձայն՝

**լրագրողն իրավունք ունի անարգել ծանոթանալ ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալ դրանց պատճենները, կատարել քաղվածքներ**:

**Ընտրությունների կազմակերպման, անցկացման եւ ամփոփման բոլոր գործընթացներում զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են անարգել մասնակցել, հետեւել, ուղղել հարցեր, կատարել ճշտումներ եւ հարցումների միջոցով ստանալ տեղեկություններ**:

Լրագրողը կարող է դիմել ինչպես ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին անարգել ծանոթանալու, այնպես էլ դրանցից քաղվածքներ կատարելու եւ/կամ դրանց պատճենը ստանալու համար:

Սակայն պետք է նշել, որ անհրաժեշտ տեղեկությունները հիմնականում հրապարակվում են` տեսանելի, մատչելի տեղերում փակցնելու, զանգվածային լրատվության միջոցներով հայտարարելու, համապատասխան ինտերնետային կայքում տեղադրելու, ինչպես նաեւ դրանց ուղղակիորեն ծանոթանալու, պատճենելու եւ այլ ձեւերով հրապարակային դարձնելու միջոցով: Հետեւաբեր շատ հաճախ դուք պարզապես կարող եք շատ հեշտությամբ, արդյունավետությամբ եւ առանց ժամանակի կորստի ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվությունը` իմանալով, թե որ լիազոր մարմիննն է այն տնօրինում: Ընտրական օրենսգիրքը սահմանում է պարտադիր հրապարակման, տրամադրման ենթակա մի շարք տեղեկություններ, որոնց ամբողջական ցանկը ներկայացված է սույն գլխում:

## Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ մերժման կարգը

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում հստակ սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերն ու կարգը: Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկության տրամադրումը մերժվում է, եթե այն.

**1.** պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,

**2.** խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

**3.** պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,

**4.** բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

**5.** խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

Այսպիսով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել վերոնշյալ կենսական շահերից որեւէ մեկին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերը կարող են անմիջականորեն առնչվել ընտրություններում առաջադրված թեկնածուների անձնական կամ ընտանեկան կյանքին: Դրանց վերաբերյալ տեղեկությունները կարող են օգտագործվել թեկնածուների քարոզարշավի կամ ընտրապայքարի ընթացքում: Պետք է հիշել, որ թեկնածուների նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, հեռագրական եւ այլ հաղորդումները գաղտնի են, եւ դրանց տրամադրումը կարող է մերժվել:

Թեկնածուների գրանցման ժամանակ պահանջվող փաստաթղթերի կազմում թեկնածուն պարտադիր ԿԸՀ է ներկայացնում հայտարարագիր, որը բաց փաստաթուղթ է. դրան կարող է ծանոթանալ լրագրողը, կարող է նաեւ ստանալ դրա պատճենը: Հայտարարագրում լրացվում են անձնական եւ ըն-

տանեկան կյանքին առնչվող բավական ընդարձակ տեղեկություններ:

Անդրադառնանք նաեւ նախաքննական գաղտնիք պարունակող տեղեկություններին: Եթե առաջադրված թեկնածուի գործը գտնվում է նախաքննության փուլում, եւ դատարանը դեռեւս դատավճիռ չի կայացրել ու հրապարակել այն, թեկնածուի գործով նախաքննության նյութերի վերաբերյալ տեղեկությունների հարցումը կարող է մերժվել:

Ընտրությունները հիմնականում հրապարակային եւ թափանցիկ գործընթաց են: Դրանցում առկա հիմնական գաղտնիքն, այնուամենայնիվ, բուն քվեարկությունն է: Յուրաքանչյուր ընտրող կարող է հրաժարվել հայտնել իր կատարած քվեարկության մասին, իսկ ընտրական հանձնաժողովի անդամները (նաեւ՝ դիտորդները, վստահված անձինք) կարող են մերժել այդ մասին տեղեկության տրամադրումը, որովհետեւ իրավունք չունեն այն իմանալու եւ հրապարակելու:

Համաձայն ՀՀ ԸՕ-ի՝ ընտրական տեղեկատվության մերժման հիմք կարող է լինել նաեւ՝

**1. կալանքի տակ գտնվող ընտրողների ցուցակի հրապարակման սահմանափակումը** (ԸՕ, հոդվ. 12)

**2. զինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակի հրապարակման սահմանափակումը** (ԸՕ, հոդվ. 12)

**3. ընտրատեղամասում ընտրողների կողմից ստորագրված ցուցակների հրապարակման սահմանափակումը** (ԸՕ, 13 հոդվ., 1-ին կետ):

**Հիշեք.** տեղեկատվությունը կարող է սահմանափակվել միայն վերոնշյալ հիմքերի առկայության դեպքում:

# Ընտրական մարմինների նիստերին լրագրողների մասնակցության իրավունքը

## Լրագրողի հավատարմագրումը

ՀՀ Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածով հստակ սահմանված են լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, պարտականությունները եւ գործունեության երաշխիքները:

Վերջիններս, համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի,

**իրավունք ունեն ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում իրավունք ունեն ներկա գտնվել նաեւ ընտրատեղամասային կենտրոնում եւ կատարել իրենց մասնագիտական գործունեությունը: Ընտրական օրենսգիրքը նշում է, որ ԶԼՄ ներկայացուցիչի իրավունքների որեւէ սահմանափակում չի թույլատրվում**:

Այսինքն, եթե ընտրական հանձնաժողովի նախագահը կամ որեւէ այլ անձ արգելի լրագրողի մուտքը հանձնաժողով կամ ընտրատարածք, ապա նա ենթակա է պատասխանատվության: Ավելին, ՀՀ Ընտրական օրենսգրքի 7 հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ

**ընտրական հանձնաժողովների նիստերը կամ քվեարկության ընթացքում ընտրական հանձնաժողովների աշխատանքները լուսաբանելիս լրագրողի համար պետք է ապահովվեն աշխատանքային անհրաժեշտ եւ հավասար պայմաններ:**

Դրանց ապահովումը դրված է ընտրական հանձնաժողովի նախագահի վրա: Նա ապահովում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությունը ընտրական հանձնաժողովների աշխատանքներին (ԸՕ, հոդվ. 7):

Միաժամանակ, ԸՕ 30-րդ հոդվածը սահմանում է նաեւ, որ

**լրատվության միջոցների ներկայացուցիչն իրավունք չունի միջամտել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին:**

Այսինքն՝ ներկա գտնվելու եւ մասնակցության իրավունքը չի նշանակում միջամտել ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքներին: Լրագրողը պետք է հանդես գա իրադարձությունը դիտողի եւ արձանագրողի դերում:

Ներկա գտնվելուց եւ մասնակցելուց բացի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչը իրավունք ունի.

**1.** կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետեւել քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման եւ քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին,

**2.** անարգել ծանոթանալ տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալ դրանց պատճենները, կատարել քաղվածքներ,

**3.** կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ազատ տեղաշարժվել տեղամասային կենտրոնում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար,

**4.** ծանոթանալ ընտրական հանձնաժողովներում մուտքագրված դիմումներին եւ պարբերաբար ստանալ տեղեկություններ՝ դրանց հետագա ընթացքի վերաբերյալ,

**5.** կարող են ներկա գտնվել քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքներին (ԸՕ, հոդվ. 30):

ԶԼՄ-ի ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել նաեւ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում քվեարկողների քվեարկության կազմակերպմանը:

Ցավոք, նոր ընտրական օրենսգիրքը «անտեսել է» տնային կամ այլ մասնագիտացված հաստատություններում գտնվող եւ տեղաշարժման սահմանափակում ունեցող հաշմանդամների եւ ծերերի տնայցերի միջոցով քվերակության իրավունքը, հետեւաբար լրագրողները նույնպես չեն կարող հետեւել այդ կարգավիճակն ունեցող անձանց քվեարկությանը:

Ներկա գտնվող լրագրողը կարող է կատարել գրառումներ, սղագրություններ, ձայնագրություններ, տեսա եւ լուսանկարահանումներ, տեղեկությունը հստակեցնելու կամ ճշտելու նպատակով տալ հարցեր եւ կատարել այլ գործողություններ, որոնցով սակայն որեւէ կերպ չպետք է միջամտի տվյալ ընտրական հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

## Լրագրողի հավատարմագրումը ընտրական գործընթացներում

Հավատարմագրման նպատակն է աջակցել լրագրողներին կատարելու իրենց մասնագիտական գործունեությունը պետական մարմինների աշխատանքը լուսաբանելիս: Սրանից հետեւում է, որ հավատարմագրման նպատակն է ոչ թե լրացուցիչ սահմանափակումներ ստեղծել լրագրողների գործունեության համար, այլ օժանդակել նրանց կատարել իրենց աշխատանքը: Լրագրողի ազատությունը եւ իրավունքները չեն կարող կախման մեջ դրվել հավատարմագրման կարգերից:

Եվրախորհրդի նախարարների խորհրդի 1996 թ. (96) 4 հանձնարարականի 11-րդ սկզբունքի համաձայն`

> **հավատարմագրումը չպետք է օգտագործվի լրագրողի տեղեկություն ստանալու իրավունքը սահմանափակելու նպատակով:**

Համաձայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի`

> **պետական մարմինների գործունեությունը լուսաբանելու, հրապարակայնությունը եւ թափանցիկությունը ապահովելու նպատակով կարող է իրականացվել լրագրողների հավատարմագրում: Իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համարվում է պետական մարմին, որը գործում է մշտական հիմունքներով` անկախ ընտրությունների անցկացման ժամանակահատվածից:**

ԿԸՀ-ը 2004թ. ապրիլի 29-ին ընդունել է ԿԸՀ-ում լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին որոշում, որով սահմանվում են լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի կամ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի ԿԸՀ-ում հավատարմագրման կանոնները եւ հավատարմագրված լրագրողի գործունեության կազմակերպման հիմնադրույթները` նպատակ ունենալով ապահովել ընտրական գործընթացների թափանցիկությունը եւ այդ գործունեության մասին անմիջական տեղեկատվություն ստանալու նպատակով լրագրողների համար ստեղծել բարենպաստ պայմաններ:

Բարեփոխված ՀՀ Ընտրական օրենսգրքում ընտրական գործընթացներին մասնակցելու համար հավատարմագրման ենթակա սուբյեկտների կազմում զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները նշված չեն:

Այսպիսով,

**2007թ. Ազգային ժողովի ընտրությունները լուսաբանելու համար լրագրողները հավատարմագրման կարիք չունեն: ԿԸՀ-ի կողմից հավատարմագրված չլինելը չի կարող խոչընդոտ լինել լրագրողի համար կատարելու իր մասնագիտական գործը ընտրությունների ժամանակ:**

Լրագրողին անհրաժեշտ է լուսաբանման նպատակով ներկայացնել միայն անձը հաստատող փաստաթուղթ եւ ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է թույլատրել նրան իրականացնել իր մասնագիտական գործունեությունը: Խնդիրը միայն այն է, որ հավատարմագրման պարտադիր պայման չլինելը չի ամրագրվել որեւէ իրավական ակտով (ասենք, ԿԸՀ-ի որոշմամբ), ինչը գործնականում ընտրական հանձնաժողովներին կարող է հնարավորություն տալ խախտել լրագրողի իրավունքը:

# Պարտադիր հրապարակման ենթակա ընտրական տեղեկությունները եւ դրանց տրամադրման ժամկետները

## Ընտրողների ցուցակները

**Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, համապատասխան տեղեկություն տնօրինող լիազոր մարմնից կամ նրա ստորաբաժանումներից դիմելուց հետո եռօրյա ժամկետում ստանալ ընտրողների ցուցակները՝**

**ա)** ըստ մարզերի, համայնքների, ընտրական տեղամասերի,

**բ)** էլեկտրոնային կրիչով կամ թղթային տարբերակով,

**գ)** վճարելով համապատասխան վճարը:

**Ծանոթություն.**
*2007թվի ընտրությունների մեկ առանձնահատկություն.*

Համաձայն 26.02.07թ. ԱԺ-ի կողմից ընդունված «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի 1-ին հոդվածի 5-րդ կետի՝

**«Հայաստանի Հանրապետությունում ընտրություններն անցկացվում են միայն Հայատսանի Հանրապետության տարածքում»,**

իսկ 2-րդ հոդվածի 7-րդ կետում սահմանված է, որ ՀՀ եւ միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող եւ Հայաստանի Հանրապետությունում հաշվառում ունեցող քաղաքացիները ընտրությունների ժամանակ ընտրություններին մասնակցում են ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, իսկ ՀՀ-ում հաշվառում չունեցող վերը նշված քաղաքացիները ընտրությունների ժամանակ քվերակությունների չեն մասնակցում:

Ստացվում է, որ օտարերկյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիներն այլեւս հնարավորություն չունեն մասնակցել ՀՀ համապետական

ընտրությունների քվերակությանը ՀՀ դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայա ցուցչությունների միջոցով: Հետեւաբար, ոչ միայն սահմանափակվում է այդ քաղաքացիների ընտրության իրավունքը, այլ սահմանափակվում է ՀՀ-ից դուրս գտնվող քաղաքացիների վիճակագրության մասին տեղեկությունը:

ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ տեղեկություն տնօրինող լիազորված մարմինը էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում տեղադրելու համար

**ա)** ըստ համայնքների եւ ըստ մարզերի տարին 2 անգամ՝ հուլիս եւ հունվար ամիսներին,

**բ)** համապետական ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից առնվազն 41 օր առաջ՝ նաեւ ըստ ընտրական տեղամասերի (ԸՕ, հոդվ. 9):

ՀՀ ընտրողների ռեգիստրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքի (**www.elections.am**) մշտական եւ անբաժանելի մասն է, որտեղ ըստ մարզերի եւ ըստ համայնքների, իսկ Ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաեւ ըստ ընտրական տեղամասերի, տեղադրվում են ներկայացվող պահանջներին համապատասխանող ցուցակները:

Տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում, քվեարկությունից 40 օր առաջ փակցնում է՝

**ա)** ընտրողների ցուցակը,

**բ)** տեղեկանք՝ այդ ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի եւ պայմանների մասին:

Ընտրողների ցուցակի վերջնական օրինակը տեղամասային կենտրոնում փակցվում է քվեարկության օրվանից 2 օր առաջ:

## Սահմանափակումները

- **Ընտրողների կողմից ստորագրված ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից պատճեններ չեն հանվում:**
ՀՀ Ընտրական օրենսգիրք, հոդված 13, 1-ին կետ:

- **Զինվորական մասերում հաշվառված եւ կալանքի տակ գտնվող ընտրողների ցուցակների մատչելիությունը սահմանափակված է:**
ՀՀ Ընտրական օրենսգիրք, հոդված 12

- **Կալանքի տակ գտնվող ընտրողների ցուցակը՝ նրանց պահելու լիազորություն ունեցող հաստատությունների ղեկավարները, քվեարկության օրվանից 2 օր առաջ հանձնում են իրենց մոտ կազմավորվող տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին:**
ՀՀ Ընտրական օրենսգիրք, հոդված 12

## Քվեաթերթիկներ

- Տեղամասային կենտրոնում կամ կենտրոնի մուտքի մոտ պետք է փակցված լինեն կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված քվեաթերթիկների նմուշները, որոնք թողարկվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 9, եւ ոչ ուշ, քան 3 օր առաջ:
- Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում, տեսանելի տեղում, պետք է փակցված լինեն Հանրապետության Նախագահի թեկնածուների լուսանկարները եւ նրանց համառոտ կենսագրությունները պարունակող պաստառ, Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում՝ քվեարկվող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները:
- Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովները պարտավոր են երեքժամյա պարբերականությամբ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով տվյալներ հաղորդել, հրապարակել քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները 3-ժամյա ամփոփված տվյալներն հաղորդում են կենտրոնական ընտրական

հանձնաժողին (ԸՕ, հոդվ. 7), որտեղից եւ լրագրողը կարող է ստանալ դրանք:

- Հանրապետական ընտրությունների ժամանակ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրը, ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակում ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչեւ ժամը 21.00, եռեքժամյա պարբերականությամբ, ըստ ընտրատարածքների, հրապարակում է տեղեկություններ մինչեւ նախորդ ժամն ընտրություններին մասնակցած ընտրողների թվի, ինչպես նաեւ ստացված դիմում-բողոքների վերաբերյալ:

## Քվեարկության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները

**1.** Տեղամասային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 60 հոդվածով սահմանված կարգով կատարված հաշվարկները, կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն, դրանում նշելով՝

**ա)** ընտրողների ընդհանուր թիվը՝ ըստ ընտրողների ցուցակների,

**բ)** տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեարկության ծրարների թիվը,

**գ)** տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը եւ ելունդների համարները,

**դ)** չօգտագործված քվեարկության ծրարների թիվը,

**ե)** տեղամասային ընտրական հանձնաժողովում մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

**զ)** գրանցված եւ քվեաթերթիկներ ստացած ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների,

**է)** անվավեր քվեաթերթիկների թիվը,

**ը)** օգտագործված քվեաթերթիկների ելունդների թիվը,

**թ)** յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,

ժ) թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշ-

ինքներին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը (մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում սույն տողը չի լրացվում),

**ի)** թեկնածուին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (լրացվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում),

**լ)** սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը,

**խ)** վավեր քվեաթերթիկների թիվը,

**ծ)** անճշտությունների չափը:

Եթե հանձնաժողովի որեւէ անդամ արձանագրության տվյալների վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նա ներկայացնում է իր գրավոր կարծիքը, որը կցվում է արձանագրությանը, իսկ իր ստորագրության կողքին այդ մասին կատարում է նշում:

Նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո, հանձնաժողովի նախագահը հրապարակում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը:

Համապետական ընտրություններին մասնակցած ընտրողների թվի մասին ամփոփ տվյալները կենտրոնական ընտրական հանձնաժողովը պաշտոնապես հրապարակում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից հեռահաղորդակցության միջոցներով ստացված տվյալների հիման վրա, քվեարկության հաջորդ օրը, մինչեւ ժամը 10.00-ը:

## «Ընտրություն» ավտոմատացված համակարգը

«Ընտրություն» ավտոմատացված համակարգը նորամուծություն է Հայաստանի Հանրապետության ընտրական գործընթացում: Ավտոմատացված այս համակարգը իր ամբողջ հնարավորությամբ առաջին անգամ է կիրառվում: Փորձենք դիտարկել, թե վերջինս ինչ նոր հնարավորություններ է ընձեռելու լրագրողներին եւ, ընդհանրապես, որքանով է նպաստում ընտրական տեղեկատվության մատչելիությանը:

Մինչ 2007 թվականի խորհրդարանական ընտրությունները ավտոմատացված որոշակի համակարգ կիրառվում էր. ընտրությունների արդյունքները ներկայացվում էին ԿԸՀ, այստեղ դրանք մուտքագրվում էին համակարգ եւ դրանից հետո դառնում մատչելի: Նոր համակարգը ենթադրում է, որ յուրաքանչյուր ընտրական տեղամաս իր լիազորությամբ անցկացված քվերակության արդյունքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում մուտքագրում է համակարգիչ, որը իր օպերատիվության եւ անմիջականության շնորհիվ լրագրողին հնարավորություն է տալիս ցանկացած վայրից ինտերնետային ցանցի միջոցով «այցելել» ԿԸՀ ինտերնետային կայք եւ հետեւել տվյալների աստիճանական համալրմանը` միաժամանակ տեղում վերլուծելով եւ անցկացնելով մշտադիտարկում (մոնիտորինգ):

Միաժամանակ ընտրությունների ամփոփիչ տվյալները ԿԸՀ-ում ցուցադրվում են այդտեղ տեղադրված լուսատախտակի վրա: Սա եւս մեկ հնարավորություն է ընտրական գործընթացի հրապարակայնության եւ թափանցիկության համար: Այժմ` առավել մանրամասն.

Տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության տվյալների մուտքագրումը համակարգիչ կատարվում է «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով: Տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության յուրաքանչյուր տվյալ մուտքագրվում է այդ տվյալի համար նախատեսված դաշտում:

Մուտքագրված տվյալների տպագրման դեպքում քվեարկության արդյունքների աղյուսակի յուրաքանչյուր տող` ըստ ընտրական տեղամասերի, կունենա հետեւյալ տեսքը`

| Ընտրատարածք N |
|---|
| Ընտրական տեղամաս N |
| 1. Ընտրողների ընդհանուր թիվը՝<br>ըստ ընտրողների ցուցակների |
| 2. ՏԸՀ-ին հատկացված քվեարկության ծրարների թիվը |
| 3. ՏԸՀ-ին հատկացված քվեաթերթիկների թիվը եւ ելուղների համարները |
| 4. Չօգտագործված քվեարկության ծրարների թիվը |
| 5. Մարված (չօգտագործված, ոչ ճիշտ լրացված եւ հետ վերադարձված) քվեաթերթիկների թիվը |
| 6. Գրանցված ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների |
| 7.Անվավեր քվեաթերթիկների թիվը |
| 8. Օգտագործված քվեաթերթիկների ելուղների թիվը |
| 9. Յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը |
| 10. Կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը (մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում չի լրացվում) |
| 11. Թեկնածուին, կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (լրացվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում) |
| 12. Սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը |
| 13. Վավեր քվեաթերթիկների թիվը |
| 14. Անճշտությունների չափը |

Քվեարկության արդյունքների աղյուսակի վերնագիրը պարունակում է ընտրության (հանրաքվեի) անվանումը, համապատասխան ընտրական հանձնաժողովի անվանումը: Նշում է կատարվում նաեւ ընտրական տեղամասերի քանակի եւ աղյուսակավորման ամսաթվի ու ժամանակի մասին:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան 3 ժամը մեկ, ապահովում է ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորումն ու տպագրումը՝ ըստ ընտրական տեղամասերի: Տեղամասերում քվեարկության արդյունքների աղյուսակավորման տպագրված օրինակը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) եւ քարտուղարի ստորագրություններով եւ հանձնաժողովի կնիքով, անհապաղ փակցվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում, բոլորի համար տեսանելի տեղում:

**Տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ավարտում է քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում:**

## Ի՞նչ պատասխանատվություն է կրում տեղեկատվություն տնօրինողը ընտրական տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու դեպքում

Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածի 14-րդ եւ 30-րդ կետերի՝

**իրավական պատասխանատվության են հանգեցնում զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցչի հանդեպ բռնի գործողություններ կատարելը կամ վիրավորանք հասցնելը (14-րդ կետ), ինչպես նաեւ հանձնաժողովի նախագահի կողմից ընտրական քվեաթերթիկների նշումներին, ընտրական հանձնաժողովի որոշումներին ծանոթանալուն խոչընդոտելը, հանձնաժողովի որոշումների պատճենները չտալը կամ դրանիցից քաղվածքներ կատարել չթույլատրելը (30-րդ կետ):**

Բացի այս, համաձայն՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի

**«Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»:**

Նույն հոդվածի 3-րդ մասով արգելվում է՝

**1.** գրաքննությունը,

**2.** որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ.

**3.** լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը:

Վերոնշյալ բոլոր գործողությունները, ինչպես նաեւ ընտրական մարմինների կողմից տեղեկություն տրամադրելուց ապօրինի հրաժարվելու կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաեւ տեղեկատվության ազատության օրենքով սահմանված կարգի այլ խախտումները հանգեցնում են ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվության:

2003թ. դեկտեմբերի 1-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝

**«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝**

**առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:**

**Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝**

**առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:**

Վարչական պատասխանատվություն է սահմանվում նաեւ, եթե զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին խոչընդոտել են ծանոթանալ հանձնաժողովի որոշումներին կա՛մ վերջիններիս չեն տրամադրել հանձնաժողովի որոշումների պատճենները, կա՛մ չեն թույլատրել դրանցից քաղվածքներ կատարել: Այս դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40.2 հոդվածով առաջանում է տուգանքի նշանակում՝ **նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից մինչեւ 500-ապատիկի չափով:**

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում լրագրողի՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար: ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածով՝

**«Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը» պատասխանատվություն է սահմանվում նրա գործունեությանը խոչընդոտելու դեպքում պատիժ սահմանելով տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: Եթե նույն արարքը կատարել է պաշտոնական անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ ենթակա է պատասխանատվության ուղղիչ աշխա-**

**տանքներով՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա»**:

ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված են նաեւ հոդվածներ, որոնք հատուկ պատասխանատվություն են նախատեսում ընտրությունների ժամանակ լրագրողների աշխատանքին խոչընդոտելու համար:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149 հոդվածը նախատեսում է.

**«...զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:**

Նույն արարքները, որոնք՝

**1.** կատարվել են գույքին վնաս պատճառելու սպառնալիքով (օրինակ՝ կոտրել տեսախցիկը կամ ձայնագրիչը),

**2.** կատարվել են նյութապես շահագրգռելով (օրինակ՝ գումար առաջարկելով),

**3.** զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

**4.** կատարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով,

**5.** կատարվել են մի խումբ անձանց կողմից,

**6.** զուգորդվել է անձին ազատությունից զրկելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Լրագրողի աշխատանքին եւ տեղեկատվություն ստանալուն խոչընդոտելու համար պատասխանատվություն է նախատեսում նաեւ ՀՀ Քրեական օրենսգրքի 154.5 հոդվածը.

**«....զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում եւ կարգով ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը՝**

**պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ վեց ամսից երկու տարի ժամկետով»:**

Քրեական օրենսգրքի 152 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ընտրողների ցուցակը քաղաքացիներին եւ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելու համար՝ առաջացնելով տուգանքի նշանակում՝ **նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով**:

## Ընտրական գործընթացներում լրագրողը կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը կարող է ստանալ հետեւյալ տեղեկությունները

**Լրագրողն իրավունք ունի ստանալու.**

- ընտրական հանձնաժողովի, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների՝ ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը վերաբերող որոշումները վերոնշյալ մարմիններից (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 7 հոդված, 2 կետ):
- Հանրապետության Նախագահի թեկնածուների կենսագրական տվյալները ԿԸՀ-ից (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 41 հոդված, 1 կետ, մաս 18):
- Թեկնածուների եւ ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների հայտարարագրերի պատճենները (նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների եւ դրանց օգտագործման վերաբերյալ) ՀՀ Նախագահի եւ ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ու կուսակցությունների դաշինքների դեպքում, մյուս թեկնածուների հայտարարագրերի պատճենները ԿԸՀ-ից (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 25 հոդված, 11 կետ):
- Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ընտրողների գրանցամատյանում ընդգրկված ընտրողների ընդհանուր թվի մասին տեղեկություն Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (սկսած քվեարկության նախորդ օրվանից) (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 7 հոդված, 4 կետ):
- ՀՀ ընտրողների ցուցակը՝ բացառությամբ զինվորական մասերում, կալանքի տակ պահելու հիմնարկներում կազմվող եւ ընտրողների ստորագրած ցուցակների (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 13 հոդված, 1 կետ): ՀՀ ընտրողների ցուցակին կարելի է ծանոթանալ նաեւ լիազոր մարմնի՝ ՀՀ Ոստիկանության ինտերնետային կայքից **www.police.am** (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 13 հոդված, 2 կետ):

- ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների,
- տեղի,
- դրանց քննարկման կարգի,
- ժամանակի եւ պայմանների մասին տեղեկություններ տեղամասային կենտրոնից՝ քվեարկությունից 40 օր առաջ (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 13 հոդված, 4 կետ, 5 կետ):
- համապատասխան համայնքի, իսկ ընտրությունների դեպքում նաեւ տեղամասի ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարից, լիազոր մարմնից կամ նրա ստորաբաժանումներից դիմելուց հետո եռօրյա ժամկետում՝ համապատասխան վճարով: Վճարը սահմանում է լիազոր մարմինը՝ հաշվի առնելով կրիչը, որով պահանջվել են ընտրողների ցուցակները (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 13 հոդված, 3 կետ, 93 հոդված, 4 կետ, 138 հոդված, 6 կետ),
- ընտրողների ցուցակների վերջնական օրինակը տեղամասային կենտրոնից՝ քվեարկությունից 2 օր առաջ (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 13 հոդված, 6 կետ),
- տեղեկություններ ընտրական տեղամասերի եւ տեղամասային կենտրոնների կազմավորման մասին համայնքի ղեկավարից երկօրյա ժամկետում (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 17 հոդված, 3 կետ),
- տեղեկություններ ընտրական հանձնաժողովների կազմի,
- գտնվելու վայրի,
- աշխատաժամերի,
- ընտրական տեղամասերի եւ տեղամասային կենտրոնների կազմավորման,
- ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետի,
- թեկնածուների առաջադրման,
- գրանցման,

- քվեարկության օրվա,
- ընտրությունների արդյունքների մասին (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 7 հոդված, 5 կետ),
- տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը փոխելու մասին տեղեկատվություն համայնքի ղեկավարից անհապաղ (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 17 հոդված, 4 կետ):
- ընտրատարածքների ցուցակը եւ գծապատկերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 17.1 հոդված, 5 կետ),
- տեղեկություններ ընտրական հանձնաժողովներում մուտքագրված դիմումների թափանցիկ ու արդարացի քննարկման եւ նրանց հետագա ընթացքի վերաբերյալ (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 40.1 հոդված, 7 կետ),
- ՀՀ Ընտրական օրենսգրքի կիրառման վերաբերյալ հրահանգները եւ նորմատիվ ակտերը ԿԸՀ-ից (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 41 հոդված, 1 կետ, մաս 7),
- Հանրապետության Նախագահի առաջադրված թեկնածուների մասին հաղորդագրությունը ԿԸՀ-ից (հաղորդագրության հրապարակման համար ԿԸՀ-ին տրված է 3-օրյա ժամկետ) (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 72 հոդված, 5 կետ),
- անվավեր ճանաչված քվեաթերթիկների, յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկած քվեաթերթիկների, իսկ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ եւ դեմ քվեարկած քվեաթերթիկների թիվը (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 60 հոդված, 3 կետ),
- տեղեկություններ ընտրությունների արդյունքների մասին հանձնաժողովի նախագահից նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան ընտրությունների ավարտից 10 ժամ հետո (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 61 հոդված, 6 կետ),
- տեղեկություններ ԱԺ համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների մասին ԿԸՀ-ից, ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների մասին ընտրա-

տարածքային ընտրական հանձնաժողովից (ՀՀ Ընտրական օրենսգիրք, 115 հոդված, 8 կետ),

- ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 63 հոդված, 3 կետ),
- ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները ընտրատարած-քային ընտրական հանձնաժողովի նախագահից (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 63.1 հոդված, 8 կետ, 9 կետ),
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրությունները (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 60 հոդված, 1 կետ, 2 կետ),
- ՀՀ Ընտրական օրենսգրքի խախտումների վերլուծությունը, տեղեկություններ խախտում կատարողների դեմ ձեռնարկված միջոցառումների մասին ԿԸՀ-ից (վերլուծությունը հրապարակում է ԿԸՀ-ը համապետական ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից հետո՝ 3 ամսվա ընթացքում): (ՀՀ Ընտր. օրենսգիրք, 63.2 հոդված, 13 կետ),
- Կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը (Կուսակցությունների մասին օրենք, 3 հոդված, 2 կետ),
- Կուսակցության հիմնադիր եւ ծրագրային փաստաթղթերը (Կուսակցությունների մասին օրենք, 8 հոդված, 4 կետ),
- Կուսակցության գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվության պատճենը, դրա կազմավորման աղբյուրների մասին տեղեկատվություն (Կուսակցությունների մասին օրենք, 22 հոդված, 2 կետ),
- կուսակցությունների ֆինանսական հաշվետվության պատճենը (Կուսակցությունների մասին օրենք, 28 հոդված, 4 կետ),
- կուսակցությանը նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավելի արժողությամբ նվիրատվության աղբյուրների մասին տեղեկատվություն (Կուսակցությունների մասին օրենք, 28 հոդված, 6 կետ),

- ընտրությունների ավարտից 6 օր հետո կուսակցությանը գրանցած ընտրական հանձնաժողովից կարող են ստանալ ընտրություններին մասնակցող կուսակցությունների հայտարարագրի պատճենը՝ նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների եւ դրանց օգտագործման վերաբերյալ: Դրանց կարելի է ծանոթանալ նաեւ ԿԸՀ-ի ինտերնետային կայքում, որտեղ այն տեղադրվում է ստանալուց հետո 3-օրյա ժամկետում (Կուսակցությունների մասին օրենք, հ.25, կետ11),
- տեղեկատվություն կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման տեղի եւ ժամի մասին (կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ) (Կուսակցությունների մասին օրենք, 12 հոդված, 1 կետ):

## Հարցեր լսարանին

**1.** Ներկայացրեք ընտրությունների ընթացքում տեղեկատվություն ստանալու ձեր լրագրողական փորձը:

**2.** Ինչպիսի՞ն են ընտրական գործընթացներում լրագրողների հավատարմագրման առանձնահատկությունները:

**3.** Համեմատել 2003 եւ 2007թ.թ. ԱԺ ընտրությունների լուսաբանմանն առնչվող օրենսդրական կարգավորման դրույթները:

**4.** Ուսումնասիրեք նախորդ ընտրությունների փորձը եւ ներկայացրեք լրագրողների իրավունքների խախտման դեպքեր:

**5.** Ընտրությունների լուսաբանման ո՞ր չափանիշներն են առավել հաճախ խախտում ԶԼՄ-ը: Ինչո՞վ է դա պայմանավորված: Հիմնավորեք:

# ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում, 2-րդ հրատարակություն, ԵՄԱ, Երեւան, 2003:

2. Շուշան Դոյդոյան, Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 2001:

3. Տեղեկատվության ազատության մասին օրենքի մոդել, ԱՐՏԻԿԼ 19, հունիս, 2001:

4. Շուշան Դոյդոյան, Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Երեւան, 2005:

5. Տեղեկատվական իրավունք, խմբ. Կարեն Անդրեասյան, Երեւան, 2004:

6. Ինչպես օգտագործել Տեղեկատվության մասին ՀՀ օրենքը, Շ. Դոյդոյան, ուղեցույց լրագրողների համար, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2-րդ հրատարակություն, 2006թ:

7. Ժուռնալիստիկա. տեսության եւ պատմության հարցեր, պրակ Ա-Դ, ԵՊՀ, ժուռնալիստիկայի ֆակուլտետ, Երեւան, 1999-2003:

8. Մարդու իրավունքների մասին եվրոպական հռչակագրի 10-րդ հոդվածի առնչությամբ կայացրած դատական որոշումների մասին Եվրախորհրդի հաշվետվություն, Երեւան, 2003:

9. Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրեր, փաստաթղթերի ժողովածու, Գիրք Ա, Երեւան, 2001:

10. Մամուլը եւ ժողովրդավարությունը, ԵՄԱ, Երեւան, 2001:

11. Զանգվածային լրատվության միջոցներ. օրենքներ եւ պրակտիկա, «ԱՐՏԻԿԼ 19», Երեւան, 1999:

12. «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիր N 1-12, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, խմբ. Շ. Դոյդոյան, Երեւան, 2001-2005:

13. Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, Ինտերնյուս, Երեւան, 2001-2004:

14. Информационное право, учебник, Бачило, Лопатин, Федотов, С. Петербург, 2001.

15. Законодательство о СМИ, Учебно-практические материалы, Москва, 1999.

16. Законы и практика СМИ в странах СНГ и Балтии, Фонд защиты гласности, Москва, 1999.

17. Журналист в поисках информации, Фонд защиты гласности, Москва, 1997.

18. Дж. Гора, Д.Голдберг, Г.Стерн, М.Гальперин, Право на протест, Санкт-Петербург, 1999.

19. Шушан Дойдоян, От секретности к гласности, Законодательство и практика масс медиа, издается в сотрудничестве с журналом "Законодательство и практика масс медиа", N 1(4), 2003.
(http://www.medialaw.ru/exussrlaw/index.htm)

20. Шушан Дойдоян, Необходимость закона "О свободе информации в РА", "Законодательство и практика масс медиа", N 1, Москва, 2002, стр. 3-5.

21. Шушан Дойдоян, Доступ к судебной информации в Армении, "Законодательство и практика масс медиа", N 3, Москва, 2002, стр. 7-12.

22. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003, Paris.

23. The Right to Know, The Right to live, Edited by Richard Calland, Alison Tilley, ODAC, 2002.

24. Freedom of the Press throughout the World; Reporters sans Frontiers, 2000-2005 Annual Reports, Paris.

25. Civil Liberties, Legal Principals of Individual Freedom, Edwin Shorts & Clairede Than, London, 1998.

26. Freedom of Information, Herbert Brucker, New York, 2002.

27. First Amendment Law; Jerome Barron, C. Thomas Dienes, St. Paul Minn., 2000.

28. K. Oregan, "Democracy and access to information in South African Constitution: Some reflections", 2002, Johannesburg.

29. Patterns of Censorship Around the World; ed. Ilan Peleg, Westview Press, Inc.1998.

# ՀՀ իրավական ակտեր[60]

ՀՀ Սահմանադրություն, 1995:

Զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենք, 2003

Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենք, 2000:

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք, 2003:

Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ օրենք, 2004:

ՀՀ Քրեական օրենսգիրք, 2003:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 1998:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, 1998:

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 1998:

ՀՀ Ընտրական օրենսգիրք, 1999:

Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին ՀՀ օրենք, 1996:

Մարդու իրավունքների եւ ազատությունների եվրոպական համաձայնագիր, 1953:

Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966:

Օրհուսի կոնվենցիա, 1998:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարական (2003)13 «Լրատվամիջոցներով քրեական դատավարությունների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու մասին»

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարական Rec (2002)2 «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիու- թյան վերաբերյալ»

ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 1998թ. մարտի 13-ի թիվ 173 որոշում:

60. Այս ակտերը կարելի է ձեռք բերել www.parliament.am, www.internews.am, home.media.am ինտերնետային կայքերում, ինչպես նաեւ Ինտերնյուս կազմակերպության հրատարակած «Իրավական ուղեցույց հեռարձակողների համար» գրքում (Երեւան 2004) եւ ՀՀ Պաշտոնական տեղեկագրերում:

## Ինտերնետային աղբյուրներ

www.medialaw.ru (այստեղ կարելի է ձեռք բերել ԱՊՀ բոլոր երկրների ԶԼՄ գործունեությունը կարգավորող իրավական ակտերը)

www.freedominfo.org

www.foi.am

www.accessinfo.org

www.foiadvocates.net

www.rsf.org

www.internews.am

www.home.media.am

www.ypc.am

www.gdf.ru

www.medialaw.ru

www.article19.org

www.legalresearch.ch

www.ceu.hu/legal/legaldir.html

www.cpj.org

www.freedomforum.org

www.icfj.org

www.uark.edu/depts/comminfo

www.cps.org/dox/home.html

www.epic.org/freespeech

www.freeexpression.org

www.freespeech.org

www.mediaaccess.org

www.ncac.org

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Ընդունված է 2003 թ.-ի սեպտեմբերի 23-ին**

**Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը**

**1.** Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները:

**2.** Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ` հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

**Հոդված 2. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը**

**1.** Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:

**2.** Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

**Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

**տեղեկատվության ազատություն՝** տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

**տեղեկություն՝** անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).

**տեղեկատվություն տնօրինող՝** տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք.

**հանրային նշանակության կազմակերպություն՝** ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ՝ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.

**հարցում՝** տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.

**հրապարակում՝** տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այնուհետեւ՝ Ինտերնետ), ինչպես նաեւ՝ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնել եւ մատչելի դարձնել:

## Յոդված 4. Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները

Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

**1.** տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանումը.

**2.** տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը.

**3.** տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը.

**4.** հրապարակայնությունը:

**Հոդված 5. Տեղեկատությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը**

Տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով:

**Հոդված 6. Տեղեկատվության ազատության իրականացումը**

**1.** Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

**2.** Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:

**3.** Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

**Հոդված 7. Տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովումը**

**1.** Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

**2.** Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքե-

րին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

**3.** Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը.

9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում` մերժման հիմքերը.

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

**4.** Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո` 10-օրյա ժամկետում:

**5.** Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձեւով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում նաեւ դրանով:

**6.** Հանրային նշանակության, ինչպես նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները եւ դրանց փոփոխությունները:

## Հոդված 8. Տեղեկատվության ազատության սահմանափակումները

**1.** Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա`

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում` նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

**2.** Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

**3.** Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.

2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

**Հոդված 9. Հարցումը ներկայացնելու եւ քննարկելու կարգը**

**1.** Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

**2.** Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձեւերից առանձին:

**3.** Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝

1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.

2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.

3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պա-

հանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

**4.** Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

**5.** Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը: Բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե`

1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը.

2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.

3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

**6.** Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր` հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը եւ ազգանունը եւ (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը:

**7.** Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո` 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո` 5-օրյա ժամկետում.

3) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու հա-

մար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

**8.** Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

**9.** Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը:

**10.** Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

**11.** Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

## Հոդված 10. Տեղեկությունների տրամադրման պայմանները

**1.** Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

**2.** Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.

1) բանավոր հարցումներին պատասխանելիս.

2) մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.

3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.

4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս.

5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.

6) տեղեկության տրամադրումը մերժելիս:

**3.** Հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

**4.** Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

**Հոդված 11. Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ կարգը**

**1.** Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

**2.** Տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունների

կատարմանը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

**3.** Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկետվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:

**4.** Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

**Հոդված 12. Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականությունները**

Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը.

2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը.

3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.

4) սահմանել իր կողմից բանավոր եւ (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.

5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

**Հոդված 13. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը**

**1.** Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:

**2.** Տեղեկատվության ազատության ապահովման համար պա-

տասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը:

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

**Հոդված 14. Պատասխանատվությունը տեղեկատվության ազատության խախտման համար**

**1.** Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

**2.** Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

**Հոդված 15. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1.Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

# ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Ընդունված է 2003 թ.-ի դեկտեմբերի 13-ին**

**Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է զանգվածային լրատվության իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանում է լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները, լրագրողի հավատարմագրման, տարածված տեղեկատվության հերքման եւ պատասխանի իրավունքի իրացման հիմնադրույթներն ու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում լրատվական գործունեություն իրականացնողները պատասխանատվության ենթակա չեն:

**Հոդված 2. Զանգվածային լրատվության մասին օրենսդրությունը**

Զանգվածային լրատվության ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաեւ դրանց հիման վրա եւ դրանցով սահմանված շրջանակներում այդ հարաբերությունները կարգավորող իրավական այլ ակտերով:

**Հոդված 3. Հիմնական հասկացությունները**

Ստորեւ բերված հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ նշանակությամբ.

1) զանգվածային լրատվություն (այսուհետ` լրատվություն)` անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության տարածում, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը` ազատորեն, անկախ պետական սահմաններից` փնտրելու, ստանալու եւ տարածելու տեղեկություններ ու գաղափարներ:

Լրատվությունն իրականացվում է զանգվածային լրատվության

միջոցի տարածմամբ.

2) զանգվածային լրատվության միջոց (այսուհետ՝ լրատվության միջոց)՝ լրատվություն իրականացնելու միջոց, որը բաժանորդագրությամբ կամ առանց դրա, վճարովի կամ անվճար հիմունքներով տարածվում է՝

- մշտական անվանում, հերթական համար եւ ամսաթիվ ունեցող պարբերական թողարկումներով՝ նյութական կրիչի վրա, որոնց միեւնույն բովանդակությամբ օրինակների քանակը պակաս չէ հարյուրից,

- հեռուստառադիոհաղորդմամբ,

- հանրային հեռահաղորդակցության ցանցով (ցանցային լրատվության միջոց)՝ որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի եւ լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից, պահման ժամանակի տեւ ողությունից եւ այլ չափանիշներից:

Լրատվության միջոց են նաեւ լրատվական գործակալության եւ նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների պարբերական հաղորդումները՝ ուղղված լրատվական գործունեություն իրականացնողներին՝ անկախ տարածման ձեւ ից, թողարկման օրինակների քանակից կամ որեւէ այլ չափանիշից.

3) լրատվական գործունեություն իրականացնող՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, որն իր անունից տարածում է լրատվության միջոց:

Եթե Հայաստանի Հանրապետությունում լրատվական գործունեություն իրականացնողն այդ գործունեության առանձին փուլերն իրականացնում է այլ անձանց (զուտ տարածողը, հրատարակիչը եւ այլն) հետ կնքած գործարքների հիման վրա, ապա այդ անձինք, սույն օրենքի իմաստով, լրատվական գործունեություն իրականացնողներ չեն.

4) լրագրող՝ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ, նրա հետ կնքած աշխատանքային կամ այլ պայմանագրի հիման վրա տեղեկատվություն փնտրող, հավաքող, ստացող, պատրաստող, խմբագրող:

**Հոդված 4. Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները**

**1.** Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության եւ բազմակարծության սկզբունքների հիման վրա:

Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**2.** Լրատվության միջոցները թողարկվում եւ տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որեւէ այլ մարմնում հայտարարագրման կամ որեւէ մարմնի ծանուցման:

Հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորումն իրականացվում է հեռուստատեսության եւ ռադիոյի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

**3.** Արգելվում է՝

1) գրաքննությունը.

2) որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ.

3) լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը.

4) խտրականությունը լրատվության համար անհրաժեշտ սարքավորումների եւ նյութերի քաղաքացիական շրջանառությունում.

5) ցանկացած, այդ թվում՝ այլ երկրներում թողարկված եւ տարածված լրատվության միջոցներից օգտվելու՝ անձի իրավունքի սահմանափակումը:

**Յոդված 5. Տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը**

**1.** Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

**2.** Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաեւ լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, եւ սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ:

**Յոդված 6. Լրագրողի հավատարմագրումը**

**1.** Լրատվական գործունեություն իրականացնողն իր լրագրողին հավատարմագրելու համար իրավունք ունի դիմել պետական մարմիններ:

Պետական մարմինը պարտավոր է, սույն օրենքին եւ տվյալ մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին համապատասխան, հնգօրյա ժամկետում հավատարմագրել լրագրողին:

Յավատարմագրման կարգ սահմանված չլինելը լրագրողի հավատարմագրումը մերժելու հիմք չէ:

**2.** Պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգում սահմանվում են՝

1) լրատվության միջոցին ներկայացվող այն պահանջները (լրատվության միջոցի տեսակը, տարածման տարածքը, մամուլի տպաքանակը եւ այլն), որոնց պարագայում հավատարմագրվում է նրա լրագրողը.

2) հավատարմագրված լրագրողի աշխատանքի կազմակերպման կանոնները, այդ թվում՝ նրա աշխատանքի արդյունավետության ապահովմանն ուղղված պայմանները.

3) տվյալ մարմնի գործունեության առանձնահատկություններից բխող պահանջները:

**3.** Հավատարմագրման կարգում չպետք է սահմանվեն, իսկ սահմանվելու դեպքում իրավաբանական ուժ չունեն այնպիսի դրույթները, որոնք`

1) կսահմանափակեն հավատարմագրված լրագրողի իրավունքը` մասնակցելու տվյալ մարմնի, դրա ստորաբաժանումների նիստերին, այլ միջոցառումներին, բացառությամբ դրանց դռնփակ լինելու դեպքերի.

2) կբացառեն տվյալ մարմնում անցկացվող միջոցառումների մասին լրագրողների` ողջամիտ ժամկետում տեղեկացված լինելը.

3) անհավասար պայմաններ կստեղծեն հավատարմագրված լրագրողների համար.

4) կսահմանափակեն լրագրողի` տեղեկատվություն ձեռք բերելու օրենքով սահմանված իրավունքները:

**4.** Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում հավատարմագրման օրինակելի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**5.** Լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով:

**6.** Հավատարմագրված լրագրողն իր աշխատանքը կազմակերպում է տվյալ մարմնում լրագրողների հավատարմագրման կարգին եւ այդ մարմինների աշխատակարգի կանոններին համապատասխան:

**7.** Որեւէ մարմնում հավատարմագրված բոլոր լրագրողների համար աշխատանքի պայմանները պետք է լինեն նրանց աշխատանքին նպաստող եւ ոչ խտրական` ողջամտության սահմաններում:

Լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվությունը հավատարմագրված բոլոր լրագրողներին պետք է տրամադրվի միաժամանակ, իսկ նախատեսվող միջոցառումների ճշգրիտ ժամանակի եւ վայրի մասին նրանք պետք է տեղեկացվեն

դրանք սկսվելուց առաջ՝ ողջամիտ ժամկետում:

**8.** Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցչի՝ լրագրողի՝ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

**9.** Հավատարմագրման կարգի սահմանված լինելը չի կարող հիմք դառնալ օրենքով սահմանված կարգով լրագրողին տեղեկատվության տրամադրումը մերժելու համար:

**Հոդված 7. Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները**

**1.** Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաեւ այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը:

**2.** Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, եւ այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար եւ դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

**3.** Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

**Հոդված 8. Հերքման եւ պատասխանի իրավունքը**

**1.** Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:

Հերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը:

**2.** Լրատվական գործունեություն իրականացնողը հերքման պահանջն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնողին տեղեկացնել հերքումը տարածելու ժամանակի մասին կամ գրավոր հայտնել հերքման տարածումը մերժելու մասին:

**3.** Հերքումն իրականացվում է լրատվության նույն միջոցում, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով:

Հերքումն իրականացվում է դրա պահանջն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Այդ ժամկետում լրատվության միջոցի թողարկում տեղի չունենալու կամ միակ թողարկումն արդեն իսկ թույլատրված լինելու դեպքում հերքումը պետք է տեղ գտնի լրատվության միջոցի առաջին իսկ թողարկման մեջ:

Հերքումն իրականացվում է «Հերքում» խորագրի ներքո: Տեղակայման, ձեւավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով հերքումը չպետք է զիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է:

**4.** Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուի մասին տարածված տեղեկատվության հերքումը կատարվում է 24 ժամվա ընթացքում: Եթե մինչեւ քվեարկության սկիզբը մնացել է ոչ ավելի, քան 24 ժամ, ապա հերքումը կատարվում է դրա մասին պահանջն ստանալուն պես: Նշված ժամկետում հերքման տարածումը հնարավոր չլինելու դեպքում դա պետք է տարածվի սույն հոդվածով սահմանված ժամկետում:

**5.** Հերքման պահանջի հետ անձն իրավունք ունի պահանջել իր պատասխանի հրապարակումը:

Լրատվական գործունեություն իրականացնողը կարող է պատասխանի հրապարակումը զուգակցել կամ չզուգակցել հերքումով: Հերքման պահանջը բավարարված է համարվում պատասխանի հրապարակումով:

**6.** Պատասխանի հրապարակման պահանջը բավարարվում է

սույն հոդվածով հերքման համար սահմանված կանոններով:

Պատասխանը չպետք է հակասի սույն օրենքի պահանջներին եւ պետք է վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին: Այն չպետք է պարունակի պատասխանի առարկա տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած անձի, ցանկացած այլ անձի կամ նրանց գործունեության քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ:

Պատասխանի ծավալը չպետք է գերազանցի պատասխանի առարկա տեղեկատվության ծավալը: Եթե պատասխանի առարկա տեղեկատվությունը բազմաբովանդակ նյութի ամբողջ ծավալից հստակ սահմանազատվող ինքնուրույն, առանձին հատված է, ապա պատասխանի ծավալը չպետք է գերազանցի այդ հատվածի ծավալը:

Պատասխանը հրապարակվում է անվճար:

**7.** Հերքման եւ (կամ) պատասխանի հրապարակման պահանջը պետք է մերժվի, եթե տվյալ պահանջը`

1) անանուն է.

2) հակասում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտին:

Հերքման պահանջի հետ ներկայացվող պատասխանի հրապարակման պահանջը պետք է մերժվի, եթե այդ պատասխանը չի համապատասխանում սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջներին:

8. Հերքման կամ պատասխանի հրապարակման պահանջը կարող է մերժվել, եթե`

1) չի պահպանվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետը.

2) պահանջը վերաբերում է այնպիսի տեղեկատվությանը, որը տարածվել է հրապարակային ելույթին, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերին, լրատվության այլ միջոցին կամ հեղինակային որեւէ ստեղծագործությանը կատարված հղումով, եւ սկզբնաղբյուրը հերքում չի տարածել:

Հերքման պահանջի հետ ներկայացվող պատասխանի հրապա-

րակման պահանջը կարող է մերժվել, եթե այդ պատասխանը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին:

**9.** Եթե լրատվական գործունեություն իրականացնողը հրաժարվում է տարածել հերքումը կամ պատասխանը կամ խախտում է դրանք տարածելու՝ սույն օրենքով սահմանված կարգն ու ժամկետը, ապա անձը, որի իրավունքները խախտվում են, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան՝ հերքումը տարածելու եւ իր պատասխանը հրապարակելու հայցով:

### Հոդված 9. Լրատվական գործունեություն իրականացնողի պատասխանատվությունը

**1.** Լրատվական գործունեություն իրականացնողի կողմից այդ գործունեության իրականացումն օրենքի պահանջների խախտմամբ առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

**2.** Լրատվական գործունեություն իրականացնողն ազատվում է տվյալ տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե դա՝

1) ստացվել է լրատվական գործակալությունից.

2) բխում է վիճարկող կողմի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից.

3) հրապարակային ելույթի, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն է, եւ դա տարածելիս ինքը կատարել է հղում այդ աղբյուրին:

**3.** Օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով, կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել:

Եթե լրատվական գործունեություն իրականացնողը տարածել է այնպիսի տեղեկատվություն, որի՝ օրենքով սահմանված կարգով

գաղտնի համարվելն ակնհայտ է եղել, սակայն այդ տեղեկատվության տարածումը բխել է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, ապա նա պատասխանատվության ենթակա չէ:

**Հոդված 10. Լրատվության միջոցի անվանումը**

**1.** Լրատվության միջոցի անվանումը պետք է ընդունելի լինի հասարակական բարոյականության տեսանկյունից ու տարբերվի եւ շփոթության աստիճանի նման չլինի լրատվության այլ միջոցի, այդ թվում՝ վերջին երկու տարիներին տարածումը դադարեցրած լրատվության միջոցի անվանմանը, եթե վերջինիս տարածողը լրատվական գործունեություն իրականացնող նույն անձը չի եղել:

**2.** Լրատվության միջոցի անվանման մեջ հանրահայտ անձի անունը կամ դրա մի մասը, եթե դա ակնհայտորեն կապվում է այդ հանրահայտ անձի հետ, կարող է օգտագործվել միայն այդ անձի, իսկ նրա մահացած լինելու դեպքում՝ ժառանգի գրավոր համաձայնությամբ:

Եթե անձը, իսկ նրա մահացած լինելու դեպքում՝ ժառանգը, գտնում է, որ լրատվության միջոցի գործունեությունն ստվերում է այդ անձի հեղինակությունը, ապա կարող է լրատվության միջոցի անվանման մեջ անձի անունն օգտագործելու իրավունքից զրկելու պահանջով դիմել դատարան:

**3.** Լրատվության միջոցի անվանման մեջ «Հայաստան» բառի հոլովաձեւերն ու դրանց թարգմանությունները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**4.** Լրատվության միջոցի անվանման իրավական պաշտպանության նպատակով այդ անվանումը կարող է գրանցվել որպես ապրանքային նշան:

**5.** Լրատվության միջոցի անվանման վերաբերյալ սույն հոդվածի պահանջները տարածվում են լրատվության միջոցի խորագրի, ինչպես նաեւ ցանցային լրատվության միջոցի հասցեի վրա:

**Հոդված 11. Թողարկման տվյալները ներկայացնելը**

**1.** Նյութական կրիչի վրա թողարկված լրատվության միջոցի յուրաքանչյուր թողարկում պետք է ներառի՝

1) լրատվության միջոցի անվանումը.

2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձեւ ը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի պետական գրանցման (կամ իրավաբանական անձի անունից գործող նրա առանձնացված ստորաբաժանման հաշվառման) վկայականի համարը, տրման օրը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա նրա անունը, ազգանունը, հասցեն, եթե նա անհատ ձեռնարկատեր է, ապա նաեւ պետական գրանցման վկայականի համարը եւ տրման օրը.

3) լրատվության միջոցի տվյալ թողարկման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ըստ անձնագրի).

4) տվյալ թողարկման տարին, ամիսը եւ ամսաթիվը.

5) տվյալ թողարկման հերթական համարը.

6) տվյալ թողարկման օրինակների ընդհանուր քանակը:

**2.** Թողարկման տվյալների մեջ կարող են ներառվել սույն հոդվածում չնշված այլ տեղեկություններ:

**3.** Հեռուստառադիոհաղորդմամբ տարածվող լրատվության միջոցի թողարկման տվյալները ներկայացվում են հեռուստատեսության եւ ռադիոյի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

**Հոդված 12. Ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությունը**

Լրատվական գործունեություն իրականացնողը, մինչեւ ընթացիկ տարվա մարտի երեսունմեկը ներառյալ, պարտավոր է լրատվության միջոցի հերթական թողարկման մեջ (եթե դա թողարկվում է) «Տարեկան հաշվետվություն» վերնագրի ներքո հրապարակել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունը՝ կապված տվյալ լրատվության միջոցին առնչվող գործունեության հետ՝ նշելով համախառն եկամտի եւ դրա կազմում նվիրատվությունների մասնաբաժնի չափերը:

**Հոդված 13. Պարտադիր օրինակները եւ լրատվության միջոցների վարչական ռեգիստրը**

**1.** ՀՀ-ում նյութական կրիչի վրա թողարկված եւ Հայաստանի Հանրապետությունում տարածվող լրատվության միջոցի յուրաքանչյուր թողարկման երկուական օրինակ անվճար ուղարկվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի ազգային գրադարան եւ Հայաստանի ազգային գրապալատ:

**2.** Լրատվության միջոցները, ըստ ստացված պարտադիր օրինակների եւ թողարկման տվյալների, հաշվառվում են Հայաստանի Հանրապետության լրատվության միջոցների վարչական ռեգիստրում, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում, եւ որի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

**Հոդված 14. Եզրափակիչ դրույթ**

Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության 1991 թվականի հոկտեմբերի 8-ի Ն-420 օրենքը:

## ՀՀ քրեական օրենսգիրք

### Հոդված 144. Անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը

Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկությունները առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

### Հոդված 145. Բժշկական գաղտնիքը հրապարակելը

**1.** Առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

**2.** Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Հոդված 146. Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը**

**1.** Քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

**2.** Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

**Հոդված 148. Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը**

Անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող եւ սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին եւ օրինական շահերին վնաս է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

**Հոդված 164. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը**

**1.** Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնա-

պատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Յոդված 169. Որդեգրման գաղտնիքը հրապարակելը**

Որդեգրման գաղտնիքը որդեգրողի կամքին հակառակ հրապարակելն այն անձի կողմից, ով որդեգրման փաստը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք, կամ այդ գաղտնիքն այլ անձի կողմից շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հրապարակելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Յոդված 278. Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը**

**1.** Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծող դեպքերի, իրադարձությունների, փաստերի կամ երեւույթների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը կամ աղավաղելը, որը կատարվել է բնակչությանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքները, որոնք՝

1) կատարվել են պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) անզգուշությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը կամ առաջացրել են մարդու մահ կամ այլ ծանր հետեւանքներ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչեւ երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Հոդված 282. Շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը**

**1.** Պաշտոնատար անձի կողմից բնակչությունից մարդկանց կյանքի եւ առողջության համար վտանգավոր ռադիոակտիվ, քիմիական, մանրէաբանական կամ այլ կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ այլ վտանգավոր տեղեկություններ թաքցնելը կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորությամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

**2.** Նույն արարքը, որն անզգուշությամբ պատճառել է մարդու մահ, մարդկանց զանգվածային հիվանդություններ, կենդանիների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետեւանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

# ՀՀ ՕՐԵՆՔԸ

## Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

**Ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 1-ին**

### Հոդված 1-ին, կետ 1-ին

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

# Եվրոպայի խորհուրդ
# Նախարարների կոմիտե
# Հանձնարարական Rec (2002)2

**Նախարարների կոմիտեից՝ անդամ պետություններին**

**Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ**

ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից՝
փոխնախարարների 784-րդ նիստում, 2002թ. փետրվարի 21-ին

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15բ հոդվածի համաձայն՝

**նկատի ունենալով**, որ Եվրոպայի խորհրդի նպատակը իր անդամների միջեւ առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող սկզբունքների եւ իդեալների պահպանումն ու իրագործումն է,

**հաշվի առնելով**, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 8-րդ եւ10-րդ հոդվածները, ՄԱԿ-ի՝ Տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության եւ բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության կոնվենցիան (ընդունված Աարհուսում, Դանիա, 1998թ. հունիսի 25-ին), Անձնական տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանության՝ 1981թ. հունվարի 28-ին ընդունված կոնվենցիան (ETS No. 108), 1982թ. ապրիլի 29-ին ընդունված՝ Արտահայտման եւ տեղեկատվության ազատության մասին հռչակագիրը, ինչպես նաեւ՝ իր «Պետական իշխանությունների մոտ պահվող տեղեկատվության մատչելիության վերաբերյալ» R (81) 19 հանձնարարականը, «Պետական մարմինների մոտ պահվող անձնական տվյալների՝ երրորդ անձանց փոխանցման վերաբերյալ» R (91)10 հանձնարարականը, «Վիճակագրական նպատակներով հավաքված եւ մշակված անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ» R (97) 18 հանձնարարականը, ապա նաեւ՝ «Արխիվների մատչելիության հարցում համաեվրոպական քաղաքականության վերաբերյալ» R (2000) 13 հանձնարականը,

**նկատի ունենալով** բազմակարծիք, ժողովրդավարական երկրնե-

րում պետական կառավարման թափանցիկության եւ հանրության համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկատվության դյուրամատչելիության նշանակությունը,

**համարելով**, որ պաշտոնական փաստաթղթերի՝ հավասարության եւ հստակ գործող կանոնների վրա հիմնված լայն մատչելիությունը՝

- **թույլ է տալիս** հանրությանը՝ համարժեք տեսակետ ունենալ ու քննադատական կարծիք ձեւավորել իրենց ապրած հասարակության մեջ տիրող իրավիճակի եւ իրենց կառավարող իշխանությունների մասին՝ ընդսմին խրախուսելով հանրության մասնակցությունը համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրներին,
- **խթանում է** կառավարման մարմինների կատարողականությունն ու արդյունավետությունը եւ նպաստում նրանց պարկեշտության պահպանմանը՝ հնարավորություն տալով հեռու մնալ կոռուպցիայի վտանգներից,
- **նպաստում է** կառավարման մարմինների՝ իբրեւ պետական ծառայության տեսակների, օրինականության հաստատմանը եւ հասարակության կողմից պետական իշխանությունների հանդեպ վստահության ամրապնդմանը,

ըստ այդմ՝ **նկատի առնելով**, որ անդամ պետություններն առավելագույն ջանք պետք է գործադրեն՝ ապահովելու հանրության համար պաշտոնական փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների մատչելիությունը՝ մնալով մյուս իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության դիրքերում,

**ընդգծելով**, որ ստորեւ ամրագրված սկզբունքները նվազագույն չափանիշներ են ներկայացնում իրենցից, եւ որ դրանք չպիտի ընկալվեն ի վնաս տվյալ երկրի այն օրենքների ու կանոնակարգերի, որոնցով արդեն իսկ վերապահված են պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու ավելի լայն իրավունքներ,

**հաշվի առնելով**, որ սույն հանձնարարականը հիմնականում անդրադառնում է պաշտոնական փաստաթղթերից օգտվելու շուրջ անհատ անձանց ներկայացրած հայտերին, պետական իշխանությունները պետք է պարտավորվեն իրականացնել ակտիվ հաղորդակցման քաղաքականություն՝ նպատակ ունենալով հանրությանը մատչելի դարձնել ցանկացած տեղեկատվություն, որը կարող է օգտա-

կար դիտվել բաց, ժողովրդավարական հասարակության համար,

**առաջարկում է անդամ պետությունների կառավարություններին՝ իրենց օրենսդրության մեջ եւ գործնականում առաջնորդվել սույն հանձնարարականում ամրագրված սկզբունքներով:**

## I. Սահմանումներ

Սույն հանձնարարականի նպատակներով՝

«Պետական իշխանություններ» նշանակում է.

i. կառավարությունը եւ կառավարման մարմինները՝ համազգային, շրջանային կամ տեղական մակարդակում,

ii. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որքանով որ նրանք կատարում են պետական գործառույթներ կամ իրականացնում վարչական իշխանություն՝ տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված կարգով,

«Պաշտոնական փաստաթուղթ» նշանակում է ցանկացած ձեւով գրառված այն տեղեկատվությունը, որը կազմվել կամ ստացվել է պետական իշխանությունների կողմից, պահվում է նրանց մոտ եւ առնչվում է այս կամ այն պետական կամ վարչական գործառույթին՝ բացառությամբ նախապատրաստման փուլում գտնվող փաստաթղթերի:

## II. Տարածելիությունը

**1.** Սույն հանձնարարականը վերաբերում է միմիայն պետական իշխանությունների մոտ պահվող պաշտոնական փաստաթղթերին: Այդուհանդերձ, անդամ պետությունները պետք է իրենց երկրի օրենսդրության եւ գործող կարգի համաձայն քննեն ու պարզեն, թե որքանո՞վ են սույն Հանձնարարականի սկզբունքները կիրառելի օրենսդիր մարմինների եւ դատաիրավական իշխանությունների մոտ պահվող տեղեկատվության նկատմամբ:

**2.** Սույն հանձնարարականը որեւէ կերպ չի ազդում Անձնական տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանության կոնվենցիայով նախատեսված՝ մատչելիության իրավունքի կամ մատչելիության սահմանափակումների վրա:

## III. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության ընդհանուր սկզբունքը

Անդամ պետությունները պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը՝ հայտ ներկայացնելու պայմանով հասու լինել պետական իշխանությունների մոտ պահվող պաշտոնական փաստաթղթերին: Այս սկզբունքը պետք է կիրառվի առանց որեւէ (այդ թվում՝ ազգային պատկանելության) հիմքով խտրականության:

## IV. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության հնարավոր սահմանափակումները

**1.** Անդամ պետությունները կարող են սահմանափակել պաշտոնական փաստաթղթերին հասու լինելու իրավունքը: Սահմանափակումները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության պայմաններում եւ նպատակամղված լինեն պաշտպանելու.

i. ազգային անվտանգությունը, պաշտպանությունը եւ միջազգային հարաբերությունները,

ii. հասարակության անվտանգությունը,

iii. քրեական գործողությունների կանխումը, հետաքննությունը եւ դատական կարգով հետապնդումը,

iv. անձի անձեռնմխելիությունը եւ անձի մյուս օրինական շահերը,

v. առեւտրային եւ տնտեսական այլ շահերը՝ մասնավոր թե հանրային,

vi. կողմերի հավասարությունը՝ կապված դատական վարույթների հետ,

vii. բնությունը,

viii. պետական իշխանությունների կողմից իրականացվող տեսչական ստուգումները, հսկողությունը եւ վերահսկողությունը,

ix. տվյալ պետության տնտեսական, դրամավարկային եւ արժութային քաղաքականությունը,

x. որեւէ հարցի ծառայողական նախապատրաստման ընթացքում պետական իշխանությունների ներսում կամ դրանց միջեւ վարվող խորհրդակցությունների գաղտնապահությունը:

2. Տվյալ փաստաթղթին հասու լինելը կարող է մերժվել, եթե պաշտոնական փաստաթղթում պարունակվող տեղեկությունների բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել 1-ին պարբերության մեջ նշված որեւէ շահի, բացառությամբ այն դեպքերի, երբ բացահայտման հարցում գերակայում է հասարակության շահը:

3. Անդամ պետությունները պետք է մտածեն սահմանելու այնպիսի ժամկետներ, որոնց լրանալու դեպքում 1-ին պարբերության մեջ նշված սահմանափակումներն այլեւս չեն գործի:

## V. Պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու հայտերը

1. Պաշտոնական փաստաթուղթ հայցողը պարտավորված չպետք է լինի հիմնավորելու պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու իր ցանկությունը:

2. Հայտերին առնչվող ձեւականությունները պետք է հասցվեն նվազագույնի:

## VI. Պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու հայտերի մշակումը

1. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտը պետք է քննարկի պետական այն իշխանությունը, որի մոտ պահվում է տվյալ փաստաթուղթը:

2. Պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու հայտերը պետք է քննարկվեն հավասարության սկզբունքի հիման վրա:

3. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտը պետք է քննարկվի շուտափույթ կարգով: Այդ հարցով որոշումը պետք է կայացվի, ըստ պատկանելույն փոխանցվի եւ իրագործվի որոշակի ժամանակահատվածում, որը կարող է նախապես սահմանված լինել:

4. Եթե պահանջվող պաշտոնական փաստաթուղթը տվյալ պետական իշխանության մոտ չի պահվում, ապա վերջինս պետք է, որքանով որ հնարավոր է, հայցողին ուղղորդի համապատասխան պետական իշխանության մոտ:

5. Պետական իշխանությունը պետք է հնարավորինս օգնի հայցն-

դին՝ գտնելու պահանջվող պաշտոնական փաստաթուղթը, սակայն պետական իշխանությունը պարտավորված չէ բավարարել հայտը, եթե այն վերաբերում է մի փաստաթղթի, որը հնարավոր չէ գտնել:

6. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտը կարող է մերժվել, եթե այն ակնհայտորեն անհիմն է:

7. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հայտն ամբողջությամբ կամ մասամբ մերժող պետական իշխանությունը պետք է ներկայացնի նման մերժման հիմքերը:

## VII. Պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու եղանակները

1. Պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հնարավորություն տալու դեպքում պետական իշխանությունը պետք է թույլատրի բնօրինակի քննությունը կամ տրամադրի դրա պատճենը՝ հնարավորության սահմաններում հաշվի առնելով հայցողի արտահայտած ցանկությունը:

2. Եթե պաշտոնական փաստաթղթում եղած տեղեկատվության մի մասի վերաբերյալ կա որևէ սահմանափակում, ապա պետական իշխանությունը պետք է այդուհանդերձ հնարավորություն ընձեռի ծանոթանալ դրանում պարունակվող մնացած տեղեկություններին: Ցանկացած բացթողում պետք է հստակորեն մատնանշվի: Այնուամենայնիվ, եթե փաստաթղթի մասնատված տարբերակը ապակողմնորոշող է կամ անիմաստ, ապա նման թույլտվությունը պետք է մերժվի:

3. Պետական իշխանությունը կարող է պաշտոնական փաստաթղթին հասու դառնալու հնարավորություն ընձեռել՝ հայցողին ուղղորդելով դեպի այլընտրանքային դյուրամատչելի աղբյուրները:

## VIII. Պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու համար գանձվող վճարները

1. Պաշտոնական փաստաթղթերի բնօրինակներին տեղում ծանոթանալը պետք է սկզբունքորեն լինի անվճար:
2. Պաշտոնական փաստաթղթի պատճենի դիմաց հայցողից կարող է գանձվել վճար, որը պետք է լինի ողջամտության սահմաններում եւ չպետք է գերազանցի պետական իշխանության կողմից կատարված իրական ծախսը:

## IX. Վերանայման կարգը

1. Հայցողը, ում՝ պաշտոնական փաստաթղթից օգտվելու հայտը մասամբ կամ ամբողջապես մերժվել է կամ չի ընդունվել, կամ չի քննարկվել VI սկզբունքի 3-րդ կետում նշված ժամկետների շրջանակում, պետք է հնարավորություն ունենա օգտվել վերանայման կարգից՝ դատարանում կամ օրենքով սահմանված մեկ այլ անկախ եւ անկողմնակալ ատյանում:
2. Հայցողը պետք է մշտապես հնարավորություն ունենա օգտվելու վերանայման շուտափույթ եւ ոչ թանկ արարողակարգից, որը ենթադրում է կա՛մ տվյալ պետական իշխանության կողմից հայտի վերաքննարկում, կա՛մ վերանայում՝ ըստ 1-ին պարբերության մեջ նշված կարգի:

## X. Լրացուցիչ միջոցառումներ

1. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի.

   i. հանրությանը տեղեկացնեն պաշտոնական փաստաթղթերին հասու լինելու իր իրավունքի եւ այդ իրավունքից օգտվելու եղանակների մասին,

   ii. ապահովեն պետական ծառայողների պատրաստվածությունը՝ այդ իրավունքի իրագործմանն առնչվող իրենց պարտականությունների եւ պարտավորությունների հարցում,

   iii. ապահովեն հայցողների՝ իրենց այդ իրավունքից օգտվելու հնարավորությունը:

**2.** Այդ նպատակով, պետական իշխանությունները հատկապես պետք է.

i. պատշաճ կարգով վարեն իրենց փաստաթղթերը, որպեսզի դրանք դյուրամատչելի լինեն,

ii. կիրառեն հստակ եւ հաստատված կանոններ՝ իրենց փաստաթղթերի պահպանման ու ոչնչացման համար,

iii. հնարավորության սահմաններում մատչելի դարձնեն իրենց պատասխանատվության տակ գտնվող հարցերի կամ գործունեության տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը, ասենք՝ կազմելով իրենց մոտ պահվող փաստաթղթերի ցանկեր կամ մատյաններ:

## XI. Պետական իշխանությունների նախաձեռնությամբ հրապարակվող տեղեկատվությունը

Պետական իշխանությունը պետք է սեփական նախաձեռնությամբ եւ ըստ նպատակահարմարության անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝ հրապարակելու իր մոտ պահվող տեղեկատվությունը, եթե նման տեղեկությունների տրամադրումը ծառայում է պետական կառավարման թափանցիկության եւ կառավարման մարմինների կատարողականությունը խթանելու գործին կամ կարող է նպաստել հանրության համար հետաքրքրություն ներկայացնող խնդիրներում հասարակության իրազեկված մասնակցությանը:

## Եվրոպայի Խորհուրդ Նախարարների Կոմիտե

## Յանձնարարական (2003)13

Ուղղված Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին

Ընդունվել է Նախարարների Կոմիտեի կողմից հուլիսի 10, 2003 թվականին նախարարների ներկայացուցիչների 848 - րդ նստաշրջանում

Նախարարների Կոմիտեն, Եվրոպայի Խորհրդի կանոնադրության 15.b հոդվածի համաձայն,

**Յաշվի առնելով**, որ Եվրոպայի Խորհրդի նպատակն է իր անդամներին առավելագույնս միավորելը. նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող գաղափարներն ու սկզբունքները պահպանելու եւ իրականացնելու նպատակով,

**Յիշելով,** որ անդամ երկրները հավատարիմ են արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքին՝ ինչպես ամրագրված է Մարդու իրավունքների և Յիմնարար Ազատությունների Կոնվենցիայի (այսուհետեւ՝ Կոնվենցիա) 10 հոդվածում, որը համդիսանում է ժողովրդավարական հասարակության կարևորագույն հիմնաքարերից մեկը եւ դրա առաջընթացի ու յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական նախապայմաններից մեկը,

**Յաշվի առնելով**, որ համաձայն հանրության տեղեկատվություն ստանալու իրավունքի լրատվամիջոցներն իրավունք ունեն հանրությանը տեղեկատվություն հաղորդել, այդ թվում նաև հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն, համաձայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի, եւ նրանք մասնագիտական պարտավորություն ունեն դա կատարելու,

**Յաշվի առնելով**, որ անմեղության կանխավարկածի իրավունքը, արդար դատավարության եւ ընտանիքի ու մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքները համաձայն Կոնվենցիայի 6 եւ 8 հոդվածների հանդիսանում են հիմնարար պահանջներ, որոնք պետք է հարգվեն ցանկացած ժողովրդավարական հասարակությունում,

**Շեշտելով** լրատվամիջոցների կողմից հանրությանը քրեական դատավարության վերաբերյալ տեղեկություն հաղորդելու, քրեական իրավունքի հանցանքը կանխելու գործառույթը տեսանելի դարձնելու, ինչպես նաեւ քրեական դատավարության համակարգի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողություն ապահովելու կարեւորությունը,

**Հաշվի առնելով** Կոնվենցիայի 6, 8 եւ 10 հոդվածներով պաշտպանվող իրավունքների հնարավոր բախումը եւ յուրաքանչյուր անհատական գործի փաստերից ելնելով այդ իրավունքների միջեւ հավասարակշռություն հաստատելու անհրաժեշտությունը, եւ արժանին հատուցելով Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման հարցում Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի վերահսկող դերը,

Այնուհետեւ, **հաշվի առնելով** լրագրողների եւ լրատվամիջոցների մասնագիտական միավորումներ կազմավորելու իրավունքը, համաձայն Կոնվենցիայի 11 հոդվածով նախատեսված միավորումներ կազմելու իրավունքի, որը լրատվամիջոցների ինքնակարգավորման հիմքն է հանդիսանում;

**Տեղյակ լինելով** Եվրոպայում լրագրողների եւ լրատվամիջոցների բազմաթիվ նախաձեռնություններին լրագրողության զարգացման գործում՝ ինքնակարգավորման միջոցով կամ պետության հետ կարգավորման շրջանակներում համագործակցելով;

**Ցանկանալով** խնդրո առարկա իրավունքների վերաբերյալ քաջատեղյակ երկխոսություն ծավալել լրատվամիջոցների կողմից քրեական գործերի լուսաբանման համատեքստում, եւ Եվրոպայում ակտիվ գործընթաց արմատավորել ապահովելով քրեական գործերի մատչելիությունը լրատվամիջոցների համար;

**Հիշելով** իր (74)26 Բանաձեւը հերքման իրավունքի վերաբերյալ, Հմ. R (85) 11 Հանձնարարականը Քրեական իրավունքի եւ վարույթի շրջանակներում տուժողի կարգավիճակի վերաբերյալ, Հմ. R (97)13 Հանձնարարականը վկաներին սպառնալու եւ նրանց պաշտպանության իրավունքի վերաբերյալ, Հմ. R(97)21 հանձնարարականը լրատվամիջոցների եւ հանդուրժողականության վերաբերյալ,

**Շեշտելով** քրեական վարույթի համատեքստում լրագրողի աղբյուրի

գաղտնիության պաշտպանության անհրաժեշտությունը, որի հիմքում ընկած է տեղեկատվության աղբյուրների գաղտնիության պաշտպանության իրավունքի վերաբերյալ Համ. R (2000)7 Հանձնարարականը;

**Նկատի ունենալով** լրագրողական ազատության եւ մարդու իրավունքների առընչությամբ Համ.2 Բանաձեւը, որն ընդունվել է ԶԼՄ-ների ռազմավարության վերաբերյալ 4-րդ Եվրոպական Նախարարական Համաժողովում ( Պրագա,Դեկտեմբեր 1994 ), ինչպես նաեւ լրատվամիջոցների վաղվա օրվա ռազմավարության վերաբերյալ Հայտարարագիրը, որն ընդունվել է լրատվամիջոցների ռազմավարությանը նվիրված Եվրոպական Նախարարների 6-րդ Համաժողովում (Կրակով, Հունիս 2000);

**Նշելով,** որ այս Հանձնարարականը միտում չունի սահմանափակել անդամ երկրներում արդեն իսկ գործող այն չափանիշները, որոնք կոչված են պաշտպանելու արտահայտվելու իրավունքը;

**Առաջարկում է** անդամ երկրների կառավարություններին, հաշվի առնելով ազգային իրավական համակարգերի միջեւ առկա տարբերությունները, քրեական վարույթի ոլորտում.

1. ձեռնարկել կամ կիրառել, ելնելով կոնկրետ հանգամանքներից, բոլոր միջոցները, որոնք ըստ իրենց անհրաժեշտ են այս հանձնարարականի սկզբունքները իրագործելու ուղղությամբ. իրենց սահմանադրական դրույթների շրջանակներում,

2. լայնորեն տարածել այս հանձնարարականը եւ դրա սկզբունքները, անհրաժեշտության դեպքում թարգմանության հետ միասին, եւ,

3. ներկայացնել Հանձնարարականը հատկապես դատական եւ իրավապահ մարմինների ուշադրությանը, ինչպես նաեւ դրանք մատչելի դարձնել իրավաբանների ներկայացուցչական մարմիններին եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների համար:

## (2003)13 Հանձնարարականի Հավելված

Քրեական գործերով դատաքննության վերաբերյալ լրատվամիջոց-ների կողմից տեղեկատվություն հաղորդելու սկզբունքները

**Սկզբունք 1** - Հանրության իրազեկում լրատվամիջոցների միջոցով

Հանրությունը պետք է հնարավորություն ունենա լրատվամիջոցների միջոցով տեղեկատվություն ստանալ դատական եւ իրավապահ մարմինների գործունեության մասին: Ըստ այդմ, լրագրողները պետք է հնարավորություն ունենան ազատորեն լուսաբանելու եւ մեկնաբանելու քրեական դատավարության գործընթացը, ենթարկ-վելով միայն ներքոհիշյալ սկզբունքներով նախատեսված սահմա-նափակումներին.

**Սկզբունք 2** - Անմեղության կանխավարկած

Անմեղության կանխավարկածի սկզբունքի նկատմամբ հարգանքը արդար դատավարության իրավունքի անքակտելի մասն է: Հետեւաբար, լրատվամիջոցների կողմից ընթացքի մեջ գտնվող քրե-ական գործերի վերաբերյալ կարծիքներ ու տեղեկատվություն կա-րող է տարածվել կամ հաղորդվել միայն այն դեպքում, եթե դա չի վտանգում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխա-վարկածը:

**Սկզբունք 3** - Տեղեկատվության ճշգրտություն

Դատական եւ իրավապահ մարմինները լրատվամիջոցներին պետք է մատուցեն միայն ճշգրտված տեղեկություն կամ այնպիսի տեղեկու-թյուն, որը հիմնված է խելամիտ գնահատականների վրա: Վերջինիս դեպքում այդ մասին պետք է հստակորեն տեղյակ պահվի լրատվա-միջոցներին:

**Սկզբունք 4** - Տեղեկատվության մատչելիություն

Եթե լրագրողները դատական եւ իրավապահ մարմիններից օրինա-կան ճանապարհով տեղեկություն են ձեռք բերել ընթացքի մեջ տն-վող քրեական գործի վերաբերյալ, այդ մարմինները պետք է առանց խտրականության նույն տեղեկատվությունը հասանելի դարձնեն բո-լոր այն լրագրողների համար, որոնք նույն տեղեկատվության հա-մար արդեն դիմել են կամ դիմում են:

**Սկզբունք 5** - Լրատվամիջոցներին տեղեկատվություն տրամադրելու եղանակները

Երբ դատական եւ իրավապահ մարմինները իրենք են որոշել ընթացքի մեջ գտնվող քրեական գործի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել լրատվամիջոցներին, ապա այդպիսի տեղեկատվությունը պետք է տրամադրվի առանց խտրականության եւ, հնարավորության դեպքում, նման տեղեկատվությունը պետք է տրամադրվի մամուլի, մամլո ասուլիսների, լիազորված պաշտոնյայի կամ նման այլ միջոցներով:

**Սկզբունք 6** - Քրեական դատաքննության մասին պարբերաբար տրվող տեղեկատվություն

Հանրային հետաքրքրություն ներկայացնող կամ հանրության հատուկ ուշադրությանն արժանացած քրեական գործերի համատեքստում դատական եւ իրավապահ մարմինները պետք է լրատվամիջոցներին տեղյակ պահեն իրենց կողմից կատարված էական գործողությունների մասին, այնքանով որքանով որ դա չի վնասի քննության գաղտնիությանը, չի դանդաղեցնի կամ խաթարի քննության ելքը: Երկար ժամանակ ընթացող քրեական դատաքննությունների վերաբերյալ այդպիսի տեղեկատվություն պետք է տրվի պարբերաբար:

**Սկզբունք 7**- Տեղեկատվության շահագործման արգելք

Դատական եւ իրավապահ մարմինները չպետք է ընթացքի մեջ գտնվող քրեական գործով դատաքննության վերաբերյալ տեղեկատվությունը օգտագործեն կոմերցիոն նպատակների համար, կամ օրենքի կիրառման հետ չառնչվող այլ նպատակներով:

**Սկզբունք 8** - Մասնավոր կյանքի պաշտպանությունը ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի ենթատեքստում

Կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների, կամ քրեական գործի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկատվության մատուցումը պետք է կատարվի Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի պաշտպանության նկատմամբ հարգանքի դրսեւորմամբ: Հատուկ պաշտպանվածություն պետք է տրամադրվի անչափահասներին, կամ այլ խոցելի անձանց, ինչպես նաեւ տուժողներին, վկաներին, եւ կասկածյալների, մեղադրյալների ու դատապարտյալների ընտանիքներին: Բոլոր գոր-

ծերում, պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն վտանգավոր հետեւանքներին, որոնց կարող են ենթարկվել այս սկզբունքում հիշատակված անձինք տեղեկատվության բացահայտման հետեւանքով իրենց ինքնության հրապարակայնության դեպքում:

**Սկզբունք 9** - Ուղղում կամ հերքում պահանջելու իրավունք

Անկախ այլ միջոցների առկայությունից, ցանկացած ոք, ում հասցեին քրեական դատավարության ենթատեքստում ոչ հավաստի կամ զրպարտող նյութ է հրապարակվել լրատվամիջոցների միջոցով, պետք է ունենա տվյալ լրատվամիջոցից ուղղում կամ հերքում պահանջելու իրավունք: Ուղղում պահանջելու իրավունքը պետք է տրամադրվի նաեւ մամուլի այն հաղորդագրությունների առնչությամբ, որոնք դատական կամ իրավապահ մարմինների կողմից տրված ոչ ճշգրիտ տեղեկատվության արդյունք են:

**Սկզբունք 10** - Դատաքննության ընթացքի վրա վնասակար ազդեցության կանխումը

Քրեական դատավարության ենթատեքստում, մասնավորապես այն գործերում, որտեղ մասնակցում են երդվյալներ կամ ատենակալներ, դատական եւ իրավապահ մարմինները պետք է ձեռնպահ մնան այնպիսի տեղեկատվության հրապարակումից, որը կարող էապես ազդել արդար դատաքննության ընթացքի վրա:

**Սկզբունք 11**- Մինչդատավարական փուլի վերաբերյալ տեղեկատվություն

Եթե մեղադրյալը կարող է ցույց տալ, որ տեղեկատվության տրամադրումը կարող է ամենայն հավանականությամբ հանգեցնել կամ խախտել արդար դատավարության իր իրավունքը, ապա նրան պետք է տրամադրվի իրավական պաշտպանության արդյունավետ միջոց:

**Սկզբունք 12** - Լրագրողների ներկայությունը դատաքննությանը

Լրագրողներին պետք է թույլատրվի ներկա լինել բաց դատական լսումներին եւ դատավճիռների հրապարակային ընթերցմանը առանց խտրականության եւ առանց նախնական հավատարմագրի պահանջի: Նրանք չպետք է հեռացվեն դատական նիստերի դահլիճից. բացառությամբ կոնվենցիայի 6-րդ հոդվածով տրված դեպքերի:

**Սկզբունք 13** - Դատական նիստերի դահլիճների մատչելիությունը լրագրողների համար

Համապատասխան պաշտոնյաները, բացառությամբ միայն եթե դա միանգամայն անհնարին է իրագործել, պետք է դատական նիստերի դահլիճներում անհրաժեշտ քանակով նստելատեղեր տրամադրեն լրագրողներին համապատասխան պահանջի համաձայն. առանց այդպիսով սահմանափակելու հանրության ներկայությունը:

**Սկզբունք 14** -Դատական նիստերի նկարահանում եւ ուղիղ հեռարձակում դատական նիստերի դահլիճից

Ուղիղ հեռարձակումը եւ նկարահանումը լրատվամիջոցների կողմից դատական նիստերի դահլիճներում չպետք է թույլատրվի, բացառությամբ այն դեպքերից, երբ դա բացահայտորեն թույլատրված է օրենքով կամ համապատասխան պաշտոնյաների կողմից: Տեղեկատվության մատուցման այս եղանակը չպետք է թույլատրվի միայն այն դեպքերում երբ դա տուժողների, վկաների, քրեական դատավարության մասնակից կողմերի, երդվյալների կամ դատավորների վրա անցանկալի ազդեցության լուրջ վտանգ է ներկայացնում:

**Սկզբունք 15** - Լրատվամիջոցների կողմից տեղեկատվություն տրամադրելուն աջակցելը

Դատական նիստերի համար նշանակված օրերի, մեղադրական եզրակացությունների, կամ առաջադրված մեղադրանքի մասին հայտարարությունները եւ իրավական բնույթի այլ տեղեկատվություն լրագրողներին պետք է տրամադրվի համապատասխան իշխանությունների կողմից կատարված սովորական դիմումի հիման վրա եւ ճիշտ ժամանակին. բացառությամբ այն դեպքերից, երբ դա բացարձակապես անհնարին է: Լրագրողներին առանց խտրականության պետք է թույլատրվի ստանալ կամ պատրաստել հրապարակված դատավճիռների կրկնօրինակները: Նրանք պետք է հնարավորություն ունենան այդ դատավճիռները տարածել կամ այլ կերպ դրանք հանրությանը հասցնել:

**Սկզբունք 16** - Վկաների պաշտպանություն

Վկաների ինքնությունը չպետք է հրապարակայնացվի, բացառությամբ այն դեպքերի երբ՝ վկան նախապես տվել է իր համաձայնությունը, վկայի անձի հրապարակայնացումը հանրային կարեւորու-

թյուն ունի, կամ երբ վերջինս արդեն իսկ վկայություն է տվել հրապարակայնորեն: Վկաների անձը/ինքնությունը երբեք չպետք է հրապարակայնացվի, եթե դա վտանգում է նրանց կյանքը կամ անվտանգությունը: Պատշաճ կարեւորություն պետք է տրվի վկաների պաշտպանության ծրագրերին հատկապես կազմակերպված հանցագործության դեմ տարվող կամ ընտանիքի ներսում կատարված հանցագործությանն առնչվող քրեական դատավարություններում:

**Սկզբունք 17** - Դատական որոշումների կատարման լուսաբանումը լրատվամիջոցների կողմից

Լրագրողներին պետք է թույլատրվի հաղորդակցվել բանտերում իրենց դատապարտման ժամկետն անցկացնող անձանց հետ այնքանով, որքանով դա չի վնասի արդարադատության պատշաճ իրականացմանը, բանտարկյալների, բանտում ծառայողների/աշխատողների իրավունքները, բանտի ընդհանուր անվտանգությունը:

**Սկզբունք 18** - Ազատազրկության ժամկետն ավարտած անձանց վերաբերյալ լրատվություն հաղորդելը լրատվամիջոցների կողմից

Որպեսզի ազատազրկման ժամկետը սպառած անձը կարողանա ինտեգրացվել հասարակության մեջ, Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի պաշտպանության իրավունքը պետք է ընդգրկի նաեւ նման անձանց ինքնության հրապարակայնացումը կապված նախկին դատվածության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններն անձամբ եւ բացահայտորեն համաձայնություն են տվել նման հրապարակությամբ համար, կամ իրենց նախկին դատվածությունը հանրային հետաքրքրության առարկա է դարձել կամ կրկին դարձել է հանրային հետաքրքրության առարկա:

**օրինակելի ձեւ**

պատրաստվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից

## Տեղեկություն ստանալու հարցում

**Մարմնի, կազմակերպության անվանումը**
**Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն, ազգանունը**
**Դիմողի անուն, ազգանուն, հայրանունը**
**/Բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի հասցեն/**

Հարգելի պրն/տկն_________,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ ----- (հնարավորինս հստակ ձեւակերպեք անհրաժեշտ տեղեկությունը) մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

անուն, ազգանուն ստորագրություն

ամսաթիվ

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/32, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 250
Ք. Երևան, Ղ. Փարպեցի 26/26 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am